ԻԼԱՎԷԻ

ԸՆԾՄՈՒԱՅԸ ՀԱՎԱՏԻՍ

31 ՄԱՐՏ 1883

Պիգոր Նիկողոսեան Թարոփքնտան բէյտէրբէյ զա-
ըզու տէրմ օլուռնամադ լուզրէ կէօնտէրիլէն էրմէ։ Ան
Ի մուգաասալ պիր պէնտի, զաղէթ ասլարն ադրէք ատէմ-
միլու վէ կէրէք պէնտի մէգքիւրիւն էրմէնիճէ օլմասընա-
ղիւլթէրիէրիմիզին չօղունուն անլայանայանմաղը ճիհէթլէ,
էգիասան իլավէ սիւրէթիլլէ թասլ ու նէչր իլէմէյէ մէճ-
մուզումուզ, վէ պուռնատան պէօյլէ տավսի պու կիսլի ու-
էրմէնիճէ օլան պէնտէրի անճադ չու էօյտա նէչր
էճէյիմիզ խասսէթէն պէյան գելընը։

ԱՐՄԵՆԻԱՅԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԻԼԱՎԷԻ

ՄԷՋՄՈՒԱՅԸ ՀԱՎԱՏԻՍ

31 ՄԱՐՏ 1883

Պ. Գրիգոր Նիկողոսեան թարգմանեցաւ բնյտէրբէյ զաղէթանըզտա տէրճ օլունմաք իւզրէ կէօնտէրիլէն էրմէնիճէ վէ զայէթ մուգասասալ պիր պէնալ, զաղէթանըզըն կէրէք ատէմի թէհամիւլիւ վէ կէրէք պէնալ մէղքիւրիւն էրմէնիճէ օրմասընտան, միւշթէրիլէրիմիզին չօղունուն անլայամայաճաղը ճիհէթլէ, պիր տէֆասան իլավէ սիւրէթիյլէ թաղ ու նէշր իյլէմէյէ մէճպուր օլտուղումուզ, վէ պունտան պէօյլէ տասիլ պու կիպի ուզուն վէ էրմէնիճէ օլան պէնալէրի՝ անճագ չու հօյտա նէշր իտէպիլէճէյիմիզ խասսէթէն պէյան դէլիլտիր։

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

ՌԱԲԵԿԱՄԱԿԱՆ ԽՈՐՈՒՆ ՕԱՐԳԱՆՈՎ

ՁՕՆ.

ՄՇԱԿ ՕՐԱԳՐՈՒ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ՄԵԾԱՐԳԻՆ ՊԱՐՈՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՄՈՒՆԻՆ

Ակնիւ բարեկամ

Եօթը տարուան անդուլ ջանքերէ ետքը՝ Մշակին եւ նորա արծարծած գաղափարներին տածած համակրութիւնս մի գրաւական է, որով հաստատուած յարաբերութիւնները չեն կարող պայմանաւորուիլ եւ մի պարագայով։ Գաղափարակցութեան այդ անխզելի կապերն են, որոնց սեղմելը այս օր աւելի կարեւոր է, քանզի՝ որեւէ ուրիշ ճգնաժամին, որովհետեւ Լուսաւորչի ամիսոն ունեցած տաղնապից էլ աւելի ծանրակշիռը մը կարող է լինել հինգ միլիոն ազգի համար։ Իսկ եթէ ուշադրութեան առած ազգի չտնորեն, ինչպէս եւ մեր համերաշխութեան ուղղութեանը դէմ դարանները լարող քաջունները լեղէնը՝ որի մի ծայրը Պետերբուրգ է, մեւսը Թիֆլիս եւ Պոլիս, էլ հանկանալի է թէ որչափ մեծ պատասխանատուութիւն եւ միանգամայն զգուշաւորութիւն կայ մեզ վրայ՝ միաբան ուժերով պաշտպանելու այն դասը, որ աւանդեց Ստեփաննոս Նազարեանց եւ որ ձեռք առաք դուք, ազնիւ բարեկամ։ Այդ դասի վերջնական լուծումը էջմիածնի ներքին բարեկարգութիւնը եւ ամենայն Հայոց Կաթուղիկոսի ազատութիւնը այլեւ այլ ազգադաւ ենթադրեալ ճանկից՝ եթէ այս անգամ եւս չյաջողուեց, ել կարելի է ամենայն հաւատարիմ գործակցութեամբ անխոսելի անդունդը պարարտ է ազգի առաջ։

Ուրեմն, յանուն մեր բազմամեայ համերաշխական գործակցութեան, յանուն մեր անվնաս դիմակցութեան եւ միաբանութեան, թոյլ տուէք ձեզ ձօնել, թանկագին բարեկամ, եօթնամեայ հրապա-

ՍԿԱԴԵՄԻԱՅԻ

բակախօսութեան ընթացքում հրատարակած այս առաջին գրքոյկս. միանգամայն հաշիւ եւ բացատրութիւններ տալով ձեր միջոցաւ Ռուսահայ երիտասարդութեան Պօլսում ունեցած երկամեայ տաժան եւ փոթորկալից գործունէութեանս՝ մասին, թողնելով իր ժամանակին առանձին գրքով հրատարակելը տեղիս մամուլի մէջ գրածներս։

Երբ, ամփոփ հրատարակութեամբ, լոյս կ'ընծայվեն՝ այլ եւ այլ ազգային խնդիրների առթիւ յայտնածներս, այն ժամանակ ինքն ըստ ինքեան կ'գնահատվի այն խաբգար «գրագէտների» արժէքը, որոնք այսօր ոչինչ չ'կարողացան մէջ բերել երկու տարի իմ գրածներից, բացի միայն երկու տասնեակ «նախատական» կամ «հայհոյական» ասված բառերից, հինգ տասնեակ էլ հնարովի վերագիրներ կողքին կըպցրած։ Այդ ժամանակ կ'պարզվի թէ եղէրական խմբի վարձկանները, լուրջ ինդիրներին եւ բարոյական հիմունքներին որ աստիճան հետամուտ էակներ են։ Այդ ժամանակ կ'հասկացվի թէ՝ որչափ «անչահախնդիր», «ազնիւ» եւ «ազգօգուտ» շարժառիթներով են տնօրինվել դոքա իրանց ամբողջ կեանքում արած «ազգասիրական» պրօպագանդայի մէջ։ Այդ ժամանակ վայր կ'ընկնի այն դիմակը, որ կրել են դոքա իբր «կրօնասէրներ», լինելով մինչդեռ ամենավարժ խաչագողներ։ Ի միջի այլոց, քիչ հետաքրքրութիւն չ'ունէ առ այժմ յայտնելու, որ եղէրական դասի պարագլուխը Պօլսում, ինչպէս Արջոֆանէ այժմեան խայտառակ թղթակիցը այն Պօլսեցի ալեղարդ բժիշկ Պ. Տիգրան Փեշթիմալճեանն է, որը մի տարի առաջ, չ'գիտէր թէ ինչ գովեստներ շռայլէր, Մշակի դրած իր յօդուածների մէջ, ի նպաստ այն մարդու, որի գործունէութեան նոյնչափ արժանաւոր «քննադատ» է հանդիսանում նա հիմայ, որչափ զանազան խաբէբներ խմբագրական ասպարէզում։ Հէնց այս իրողութիւնը միայն արդեօք հերիք ապացոյց չէ՞ երկու տարի ասածներիս Պօլսի Հայ «գրագէտների» մասին։ «Բժիշկ–գրագէտը» դեռ օտ է, երեւակայեցէք՝ բժշկելու յատկութիւն չ'ունեցող «գրագէտների» բարոյականը եւ զարգացման աստիճանը....

Ինչեւիցէ, նախքան բուն խնդրին գալը, թոյլ տուէք մի քանի խօսք անել այն առարկութեանց առթիւ, որոնց պատասխանելու զանցառութիւնն եմ ունեցած մինչեւ հիմայ։

* * *

Այդ հակասական եւ տարօրինակ առարկութեանց գլխաւորները սոքա են։

Թէ «վաղուց արդէն չատերն են ջանքեր ստանձնել ծանօթացնելու Տաճկահայերին՝ Ռուսահայոց մէջ տիրապետող գործնական ուղղութեան, իրական գաղափարների, ձգտումների եւ տրամադրութեան հետ, նպաստելով ընդհանուր ազգային գիտակցութեան եւ համերաշխութեան. ուստի, պէտք չէ եղել որեւէ մէկի աշխատութիւնը այդ գործով պարապվելու համար։»

Թէ «Տաճկահայոց հասարակային այլեւայլ կարգ ու սարքերի եւ ձեռնարկութեանց քննադատելը, դէմ յանդիման եւ այնչափ խոսիւ, ոչ թէ նախանձախնդրութեան եւ փոխադարձ համերաշխութեան կ'ծառայէր, այլ վիճաբանութեան, պաղութեան եւ խորթացման։»

Թէ «ոեւէ մէկը իրաւունք չ'ունէր՝ ինքնայորդոր որոշմամբ գալ Պոլիս եւ առանց կանխասպէս արտօնագիր առնելու միլիոն ու կէս Ռուսահայերից եւ երկու էլ այնչափ Տաճկահայերից, զբաղվիլ սոցա գործերի քննադատութեամբ եւ ուղղութեամբ։»

Թէ «ամեն մարդու համար եւս դիւրին էր՝ գալ Պոլիս նստիլ ու ուղածը գրել, այլ լուրջ գործ տեսնողը պիտի գնար Հայաստան եւ այն տեղ գործէր։ ինչպէս գործեց Գարիբալդին։»

Որովհետեւ լեզվով երկնքից ագռաւ բռնելը եւ չաղակրատութեամբ մեծ մեծ գործեր չինելը եւ քիչ թէ շատ աշխատողին էլ չ'հաւանելը մեր մէջ մի անբուժելի սխալ է դառած, ուստի թոյլ տուէք քիչ աւելի խօսել՝ այդ առարկութեանց եւ առարկողների արժէքը պարզութեամբ ցոյց տալու համար։

---

1. Նախ եւ առաջ բացատրենք թէ ինչ եւ որոնք են, ոչ միայն Ռուսահայոց այլ եւ ընդհանուր Հայութեան մէջ տիրապետող «գործնական ուղղութիւնը, իրական ձգտումները, գաղափարները եւ տրամադրութիւնը։»

Ո՛չ ոք կարող է ժիտել, որ Ռուսահայոց եւ Տաճկահայոց փոխադարձ հետաքրքրութիւնը եւ ազգային գիտացութիւնը, բաւի բուն սումամբ, սկսվեց երեւիլ մեր Սան-Ստեփանոյի եւ Բերլինի դաշնադրութեանց օրից։ Իսկ մինչեւ այդ — եթէ ոչ դեռ նոյն իսկ հիմայ եւս — «Հայութիւն» եւ «Հայաստան» խօսքերը ոչ միայն երկու կողմի ազգայնոց մեծագոյն մասի համար էին սոսկ կրօնական, վերացական անհող եւ անիրական գաղափարներ, այլ նոյն իսկ Պոլսի եւ Թիֆլիսի դրչուոր եւ դրչաւոր «ազգասէրների» համար էլ։ Իրական եւ ներկայ Հայաստանի անուն ու գոյութիւնը այնչափ սլատոնական իմաստ են ունեցել մեզ համար, որ Վենետիկից սկսած մինչեւ Էջմիածին,

Մուրատեան վարժարանից եւ Լազարեան ճեմարանից մինչեւ Ներսիսեան դպրոցը, Հայութեան վրայ խօսողը, գրողը, հիացողը եւ ողբացողը այնպիսի օդային զգացում է տածել դէպի իր զբաղմանց եւ «սիրոյ» առարկան, ինչպէս Կանադայում եւ Մարօկկօյում ապրող Հրէան՝ կարդալով երբեմնապէս Սաղմոս եւ Աստուածաշունչ, յիշել է իր Հրէաստանը, Սիօնը եւ Աւետեաց երկիրը ... Մինչդեռ Հրէան կրել է սրտի մէջ իր վերացական հայրենիքը եւ սրբատեղիք, յիրաւի այլ եւս չունենալով նոցա աշխարհիս վրայ, իսկ Հայը երեւակայական եւ օդեղէն հայրենասիրութիւն է ունեցել, ունենալով նախահարց բնաղաւառները դեռ կանգուն, դեռ հայախօս, որոնց նա չէ ճանաչել սակայն, ապրելով նոյն իսկ հօրանց այդ հարազատ բնակավայրերում ...»

Այո, մինչեւ վերջին Ռուսա-Թիւրք պատերազմը «Հայաստանը» գոյութիւն է ունեցել ընդհանրապէս միայն անցեալ յիշողութեանց, բանաստեղծական գրութեանց եւ ոտանաւորների մէջ, այլ ոչ մեր գիտակցութեան եւ իսկութեան առաջ։ Թէ 150 տարուայ մէջ որչափ սլլատոնական, երեւակայական եւ ապարդիւն յարաբերութիւն է ունեցել Վենետիկի Մխիթարեան ուխտը դէպի կենդանի եւ ներկայ հայրենիքը, այդ մասին արդէն խօսած ենք անցեալ տարի Մանանդեան էֆէնդի էջերում, ուշադրութեան առնելով հարկաւ ամեն ինչ, որով որոշվել է Մխիթարեան վարդապետների մեծագարեան գործունէութիւնը։ Բայց հեռուն չգնանք. հէնց այս օրերն իսկ — եօթը տարուան բուռն եւ անընդհատ ցնցումներից յետոյ եւս — իրական Հայաստանի ճանաչողութիւնը դեռ չէ կորցրել իր սլլատոնական բնաւորութիւնը, որով դժուար կարող ենք ըմբռնել եւ իւրացնել թէ՝ այն հայրենիքը, որի վրայ խօսում ենք, նա մեր կշտին է, նաեւ մեր ոտի տակ։ Յայտնի «Հայաստանի» հարիւր կողմից դոռում-դոչումներ հանելով, յատուկ գրքեր, առանձնարիւթիւններ եւ պատգամներ տալով, փողոցը դուրս նետածին պէս, իսկոյն կորցնում ենք ամեն կարողութիւն՝ նորա կենդանի պատկերը ներկայացնող հարիւր հազար բնակիչները ուսումնասիրելու համար։ Մեր ազգային անգիտակցութիւնը այն տարապայման ծայրայեղութեան է հասնում, որ այդ հանմանների լեգէոնները մեր աչքի առաջ ունենալով, խելք չենք կարող հասցնել թէ՝ տառապող հայրենիքը մեզ հետ է եւ նորա դարմանը մեր ձեռքին. բայց չդդալով այդ, չարունակում ենք անտարբերութեամբ նայել նոցա Արեւին, ախուվախեր արձակել ու «Հայաստան» կրկնել։ Այսպիսի հակասութիւն նորանից չէ յառաջ դալիս

թէ՝ մենք անկարող ենք մեր սեփական միջոցներով մեծամեծ չարիք խաբանել եւ գործեր կատարել։ ոչ, այլ սա նորանիցն է։ որ մեզ համար պլատոնական եւ բնաղդական հայրենասիրութիւնը այնպիսի մի ախտալից ունակութիւն է դառել, որից չենք կարող ազատվել։ Ցոյց տանք մեր այս ունակութեան երկու հետեւեալ վկայութիւնները, մեր սեփական փորձով հաստատած։

Էրզրումի գաղթական շարժման ժամանակ, երբ ամբողջ նահանգի բնակութիւնը այլայլած եւ միմիանցով անցած, պատրաստվում էր դուրս խուժել, ազգային այդ ակներեւ կորստեան առաջ, մի »բազմահմուտ» Հայ գրագէտ ոչ միայն անտարբեր ու ծիծաղով կանգնած կ'մնար, այլ եւս ամեն միջոցներ դործ կ'դնէր հայրենիքի կորուստը յաջողեցնելու համար։ Մինչդեռ նոյն մարդը, դինու բաժակի առաջ եւ Հայ հանդէսների մէջ, «հայրենասիրական» արտասուքների հեղեղներ կ'թափէր . . . . Այս իրողութեան, փառք Աստուծոյ, վկայ է ամբողջ Էրզրումը։ Բայց ինչպէս բացատրած այսպիսի հրէշաւոր հակասութիւն, եթէ ոչ նորանով, որ ազգային գիտակցութիւնը մեր գրագէտների մէջ անգամ դեռ չէ ստացել իրական ձեւ եւ չօշափելի պատկեր։

Ահա եւ մի ուրիշ, աւելի թարմ օրինակ։ Պոլսի մէջ վարած մեր գործունէութեան ամենաջերմ դնահատողներից մի զարգացած գրագէտ երիտասարդ այսպէս է բացականչած շատերի մէջ։ «Նորա ամեն տաժանելի ճիգեր եւ ջանքեր աչքով տեսնելու հետ միատեղ։ անձնական շահերին, ասպարէզին եւ ապագային նորա տածած կատարեալ արհամարանքը վկայելու հետ միատեղ, չեմ կարող սակայն բնաւ խելք հասցնել թէ՝ ազգային գաղափարի համար ինչպէս կարելի է այդ զոհերը բերել։»

Բարեկամիս յայտնածը, հարկաւ, այնչափ բնական եւ ընդհանուր հայկական յատկութիւն է, որ ամենեւին չի կարելի նորան «այլանդակ բացառութիւն» ընդունել։ Եւ յիրաւի, չ'ունենալով ազգային ճշմարիտ գիտակցութիւն եւ իդէալ, այլ միայն դործնական, հաշվող եւ նիւթապաշտ, Հայ մարդը —լինի նա վարժապետ, վարդապետ, բժիշկ, բանաստեղծ — այսպէս է մտածում։ «ինչու մէջ է կեանքի նպատակը, եթէ ոչ շահի եւ շահի, որին պիտի նուիրվեն եւ սիրա, եւ միտք եւ հոգի։ Եթէ այդպէս է, հապա ուրեմն ինչ իմաստ ունէ այնպիսի «գաղափարական» ասվող ձեռնարկութիւն, որի շարժառիթը շահ չէ, այլ ժամանակի կորուստ, անձի անհանգստութիւն եւ նաեւ կեանքի վտանգ։ Իսկ

եթէ բարի անուն եւ համարում վաստակելն է զոհաբերութեանց չարժառիթը, այդ աւելի եւս անհասկանալի բան. որովհետեւ իր տեղը հանգիստ նստած, իր արդիւնաւոր զբաղմանց եւ ասպարէզի մէջ մնալով, կարելի է շատ հրաբորբոք հայրենասիրական զեղումներ յայտնել թղթի վրայ եւ, տպագրութեան տալով, աւելի անձնազոհ եւ գաղափարի մարդու տեղ անցնել, ընթերցող հասարակութեան առաջ, քանթէ տասնեակ տարիներ ազգի համար օրերը սեւցրած ամենայայտնի մարդիկ անգամ ....» Սա է Հայի ազգային զգացման եւ պլատոնական հայրենասիրութեան իսկ եւ իսկ պատկերը։

Ամեն օր հարիւրաւոր Եւրոպացիների անուններ կարդալով, որոնք տուն եւ տեղ ձգած, կ'երթան վայրի եւ հեռաւոր երկիրներ, նպատակ դնելով որեւէ մի գեղի ակերը հետազօտելը կամթէ այս ինչ լճի խորութիւնը չափելը. ամեն օր տասնեակ զոհերի անցքերը կարդալով, դաղափարի եւ հայրենեաց համար, Հայը մինչդեռ քնաւ չի կարող ըմբռնել որ՝ հերթը Հային դալով, Հայն էլ կարող է թոյլ տալ իրան մտածելու թէ՝ առանց անձնական շահի կարելի է որեւէ մի զոհաբերութիւն անել։ Զոհաբերութեանց եւ դաղափարի մասին Հայի համոզումը այնչափ բաձարձակ ժխտողական է, որ քնաւ չի կարող իրան ներել հաւատալու թէ՝ մարդկային յառաջադիմութեան համար զոհ եղած մարդիկ, զոհվել են առանց անձնական շահի, թէպէտ խիստ պարզ է, որ մի մարդ մահը աչքի տակ առնելուց եւ մեռնելուց յետ, աշխարհի դանձն էլ իրան տան, դարձեալ չի կարող նորանից շահվիլ։

Ազգային ոգեւորութեան նուիրած ամենաչնչին ղրկանք չ'հասկանալու հետ միատեղ, Հայը շատ լաւ կարող է սակայն հասկանալ եւ դնահատել, երբ անձնական շահի, վաճառականութեան, դողութեան եւ այլ այդպիսի «մարդավայել» եւ «առաքինի» ձգտումներով մէկը կ'երթայ աշխարհի ամենահեռաւոր ծայրն անդամ, Ամերիկա, Աֆրիկա, Հնդկաստան կամ այլուր։ Ուստի մեծ հիացմամբ եւ երկրպագութեամբ կ'վերաբերվի այդպիսի մի թափառաշրջիկ բաղտախնդրին, լինի նա հարիւր անդամ գող, աւազակ եւ մարդասպան։ Ահա, սիրելի քարեկամ, որչափ կրաւորական է, խաբուսիկ եւ դարդակ մեր ազգային զգացումը եւ դիտակցութիւնը. արդեօք այսպիսի ազգ կարող է ապագայ ունենալ.... Մեր այս յատկութեամբ միայն կարելի է բացատրել այն բոլոր անհեթեթ երեւոյթները, որ տեսնում ենք Տաճկահայոց եւ Ռուսահայոց մէջ։

Այսպէս օրինակ՝ Պոլսի «ազգային ժողովի»՝ սահմանադրութիւնը,

որ 22 տարուան կեանք ունէ, իր 140 երեսփոխաններից 100 նշանակել է միայն Պոլսի Հայոց ներկայացուցիչ, իսկ դէթ խորհուրդը «Հայաստան» ասվող երկրի, ինկատի ունենալով ինարկէ, որ սա այն Հայաստանը չէ, որի անունը ամեն օր կ'կրկնենք։ Այդ դեռ քիչ է. 22 տարուայ ընթացքում չէ պատահել գրեթէ ոչ մի օրինակ, որ հայրենիքի անունով այդ խորհրդի մէջ նստողներից հէնց մի հատը իսկապէս հայրենիքից լինէր, կամ թէ իր ներկայացնող գաւառը պրստած, նորան ուսումնասիրելու յատուկ նպատակաւ։ Նոյն քառորդ դարեան գոյութեան ընթացքում, հարիւրաւոր մարդիկ մտնելով դուրս գալով ժողովի մէջ, այնչափ հատոր արձանագրութիւններ, տեղեկագրեր, զեկուցումներ կազմելով — անտարակոյս, միշտ յանուն Հայաստանի — այդ մարդիկ միայն երկու տարի առաջ մտածեցին թէ «Հայաստանին ուսումնարաններ են պէտք» ուստի յանձնարարեցին իրանցից մէկին՝ մի ծրագիր չինել։ Եւ Պ. Հ. Խիեքչեան (1) «չինեց», բայց ոչ Բոսֆորի ասիական կողմը անցնելով — այն տեղի պէտք ու պահանջները, կարդ ու սարքերը, տնտեսական կեանքի եւ կարեաց որպիսութիւնները հետազօտելու համար — այլ ուղեւորվելով ուղղակի դէպի Գերմանիա, Բելգիա եւ Զվիցերիա, նոցա ունեցած հասարակային պահանջների եւ պայմանների համաձայն, Պոլսի եւ Հայաստանի համար «յարմարաւոր» ուսումնարանների ծրագիր կազմելու դիտաւորութեամբ (2)։

Նոյն անգիտակցական յարաբերութիւնը դէպի «ազգային» ասված ամեն մի գործ, կարելի է տեսնել եւս Պոլսի այլեւայլ ընկերութեանց մէջ. սոցա հիմնադիրների, տնօրէն եւ ընդհանուր ժողովների անդամների մէջ չ'կայ գրեթէ եւ ոչ մէկը, որն անձամբ տեսած եւ ուսումնասիրած լինէր Հայաստանի դէթ մի կտորը. ուստի, չ'ունենալով ոչ մի որչափ եւ իցէ նպաստակայարմար ուղղութիւն ու պրո-

---

(1) Գաբր՝ Այվազովսքու նախկին գրաշար եւ առանց որեւէ ձեռնհասութեան «մանկավարժ» դեր ստանձնածը Պոլսում, ուր 15 տարի շարլատանութիւն է ունեցել «մասնագէտ-մանկավարժ» ցոյց տալ իրան, վերջերս նա յայտնի եղաւ Պոլսում Պ. Գ. Եղոյի աղգասնենդ խմբակի նպատակներին ծառայելու ստորագրյն սպասարկութեամբ։

(2) Մ-ոնը-ոէ եւ Մ-ոէ մէջ սակայն ենք առիթ ունեցել խօսելու այս շարլատանական «ծրագրի» վրայ, որի հեղինակը Թիֆլիս գնալով. Եվ-էնէրէ խորհրդի մէջ անգամ ընդունելութիւն չ'գտաւ։ Մինչդեռ այս տողերը դրած վայրկենին թերահաւատութեամբ կ'լսենք, որ Պոլսի ազգային ժողովի «ուսումնական խորհրդի ատենապետ» է ընտրվել։ Ներկայացնում ենք այս իրողութիւնը Ռուսահայոց ուշադրութեան՝ մեր ամենագրածները դատելու համար։

դամ, մինչեւ հիմայ դեռ (յուսով ենք՝ եւ միշտ) «լոյս» եւ «յոյս» բառերով են որոշուում իրանց ստանձնած գաստիարակութեան ծաւալումը։ Թէ որչափ դժուար եղաւ մեզ միայն Միացեալ ընկ. պրոդրամի խնդիրը որոշել տալ, այդ արդէն ձեզ շատ լաւ է յայտնի, Տաճկահայ եւ Ռուսահայ թերթերի մէջ ունեցած բորբոքայոյզ պայքարներից։ Մինչդեռ յամառելու, վիճելու եւ գլուխ ցաւեցնելու ոչինչ չ'կար, երբ անհրաժեշտ էր երկու բառով որոշապէս ասել թէ՝ ինչ է ընկերութեան նպատակը եւ ինչու մէջ է կայանում «լոյս» բառը։ Տարրական խնդիրների այսպիսի դժուար ընբռնումը եւ լուծումը յառաջ է գալիս նախ՝ գիտակցական հայրենասիրութեան պակասութիւնից, եռութեան եւ բծախնդրութեան տիրապետութիւնից. նոյնպէս աղգային զգացման վերացական եւ երեւակայական բնաւորութիւնից. ըստ որում խմաստակի մէկը, մէջ բերելով Վիկտոր-Հիւգոյի բանաստեղծութեանց տողերից մինը, ճարտատուն եւ անորոշ խմաստով, կ'սկսէր նորա վրայ ամբողջ ամիսներ դարդակաբանել, ունենալով իր հետ «համակարծիք Հիւգոյականների» մի ստուար դաս։ Եւ որքան հասկացնես այստեղ թէ՝ ուրիշ բան է Հայ գիւղացիի պէտք ու պահանջները, այլ բան է Ֆրանսիական կամ Իսպանական մի բանաստեղծութիւն...։

Հայաստանը ոչքով տեսնելու եւ ձեռնհասութեամբ ուսումնասիրելու նպատակով՝ շատերի պատասխանը սա է եղել թէ՝ Ինչ պէտք կայ նորան անձամբ այցելելու, երբ դրքերից, լրագիրներից եւ երթեւեկողներից կարելի է ամեն ինչ տեղեկանալ։ Բայց ուր. մինչեւ հիմայ դեռ չ'կայ ոչ մի դրքեր եւ աշխատութիւն, որն ներկայացնէր, Հայաստանի յատուկ եւ մասնագիտական ուսումնասիրութիւնը։ Իսկ երեք–չորս տարեգրքերի տխուր-խնդերով լցրած արտադրութիւնները լուրջ հայեացքի առջեւ չեն արժան։ Եւ մինչ դիւրին բան է մի ժողովրդի ներքին կեանքի արանքները մտնել ու կոպիտ երեւոյթով ծածկված նորա հնադարեան քաղաքակրթութեան բեկորները հետազօտել, գտել ու մի որոշ դրութեան եւ հետեւանքի վերածել։ Այդպիսի ձեռնարկութեան մէջ յաջողելու համար, նախ՝ պէտք է ժողովրդի զաւակ լինել. երկրորդ՝ զարգացած եւ կարող մասնագէտ, որն ընդունակ լինի այնչափ անկախ քննադատական ուժ ունենալ, որ առանց կուրօրէն հետեւելու եւրոպական տեսակէտերին, լուսաբանէ իր աղգի կենաց առանձնայատկութիւնները ուրոյն եւ ինքնակաց ուղղութեամբ։ Առանց այս պայմանների, այլ սոսկ դարդակ երեւակայութեան հրով բորբոքված, կամ թէ եւրոպական նա-

խոպանչարմունքներով զբաղված, կարելի է տարիներով Հայաստանում ընակվիլ, հարիւր անգամ նորա ամեն կողմը պտտել, ոչինչ ուշ բրիչ բան չ'գիտելով սակայն, բայց միայն պէսպէս տպաւորական անարժէք բաներ։ Թէ որչափ իրաւացի է ասածս, օրինակ կ'բերեմ Տաճկահայոց մէջ յայտնի երեք գրագէտներ, ինչպէս՝ Պ. Գ. Մարկ. Աղաբէկեան, Յով. Շիշմանեան (Վերենց) եւ Երզրումի։ այժմեան առաջնորդ Օրմանեան վարդապետը։ Երկու առաջիններից ամեն մէկին պատահել է Հայաստանում լինել, բայց այդ այցելութիւնից այնչափ «հետազօտական» տեղեկութիւններ» ձեռք բերան, որ Պ. Յով. Շիշմանեան Վանայ ճանապարհորդութիւնից վերադառնալով, դասախօսած էր Պոլսում, ուրիշ բան չ'կարողանալով հաղորդել, բացի պէսպէս տպաւորական միջադէպեր, որոնց նմանները ինը տարեկան երեխայք միայն կարող էին պատմել։ Իսկ Պ. Աղաբէկեան, որն անկասկած առաջնից ամեն բանով շատ աւելի լուրջ եւ պատկառելի մարդ է, նա եւս զերծ չ'մնաց Պ. Շիշմանեանի թերութիւնից, Հայաստանի ուսումնասիրութեան նկատմամբ, ինչպէս որ այդ տեսնելու առիթը ունեցանք նորա յայտնած մտքերից՝ անցեալ տարիներ մեր ունեցած լանակութիւնների մէջ։ Պ. Աղաբէկեանը, օրինակ, տեսած լինելով, որ Հայ կանայք եւս երեսները կ'ծածկեն տղամարդիկներից՝ էլ առանց խորը թափանցելու, առանց քննելու եւ ուսումնասիրելու Հայուհու ներքին կեանքը եւ բարեմասնութիւնները, ուղղակի հաւատար էր արած նորան Տաճիկ եւ Քիւրդ կնկան։ Պալով Օրմանեան վարդապետին՝ երկու–երեք տարի Երզրումում ապրելով, նա չ'կարողացաւ իրանից կէս ժամ հեռատեսութիւն ունեցող գիւղերի ներքին տնտեսական կարգ ու սարքերը եւ մասնայատկութիւնները ուսուցել, ինչպէս որ իր ժամանակ աւելի մանրամասնօրէն պարզեցինք այդ Մանչո–մէջ մէջ։ Ուրեմն, նոյն իսկ Հայաստան գնալով եւս բաւական ուշիմութիւն եւ նախապատրաստութիւն է պէտք օրինաւոր տեղեկութիւններ ստանալու եւ դաղափար կազմելու համար ժողովրդին տալիք ուղղութեան վրայ, էլ ուր մնաց ամեն ինչ միայն գրքերից եւ լրագիրներից իմանալուն . . .

Պալով լրագիրներից Հայաստանի տնտեսական ներկայի ու անցեալի, առօրեայ պէտքերի ու պահանջների վրայ դաղափար կազմելու կարելիութեան, այդ մասին խօսելն անդամ աւելորդ է, երբ մեր բանասիրների գլխաւոր շարժառիթներից մին՝ Պոլսի հայ մամուլի սիրալ ու վնասարար ուղղութիւնն է եղել, որով միանակ Հայաստանի ամենօրեայ կեանքով ու էական խնդիրներով զբաղվելու, նա պարապ-

վել է կամ Աֆրիկայի եւ Ավստրալիայի դործերով, կամ թէ լցրել է իր էջերը՝ մի խումբ դարդակամիտների անվերջանալի ծանծաղախօսութիւններով։ Շատ ժամանակ չէ դեռ, որ այդ վայրաբանները հեռացան ասպարէզից, թողնելով իրանց մորոտոռանութեանց տեղը դաւառներից եկող այլ եւ այլ մտապարար եւ կենդանի թղթակցութիւններին։

Ինչ կ'վերաբերվի երթեւեկողների միջոցաւ Հայաստանը ճանաչելուն, դա եթէ հնարին էլ լինէր բացառիկ ընդունակութեանց տէր մարդիկների համար, այսուամենայնիւ այդպիսի հետաքրքրութիւն ունեցողների թիւը այնչափ չատ է, որ երկու տարի Պոլսի մէջ ապրելով, չ'լսեցի եւ չ'տեսայ հէնց մի օրինակ, որով մի հատ Պոլսեցի «աղդային մարդ», մատիտը ձեռին դնար նստէր բեռնակրի կամ նորեկ վաճառականի մօտ ու հարց ու փորձ անելով, տեղեկութիւններ կազմէր նորան մաչող բիւր ցաւերի վրայ։ Այս զարմանալի անտարբերութեան մասին, վկայած են մեզ նոյնչիսկ Հայաստանից եկած այն վաճառականները, որ կ'բնակվեն Պոլսի այլեւայլ խաների մէջ, ապրանքներ բերելով կամ տանելով Վան, Էրզրում, Բաղէշ, Գիւրիւն, Եւդոկիա, Ակն, Մալաթիա, Ամասիա, Կեսարիա, Գաղատիա (Անդօրա), Հալէբ եւ այլն։ Ինչու՞ հեռու դնացած, երբ տասնեակ անդամներ է պատահել մեզ՝ վկայ լինելու, որ ամբողջ տարի Ռուսաստան գաղթելու պատրաստվող ժողովրդի շարժմանց հետաքրքիր եւ տեղեակ չեն եղել՝ ոչ միայն Պոլսի պատրիարքարանը եւ «աղդային մարդիկ», այլ եւս նոյն իսկ այն դաւառի առաջնորդը, որի քթի տակ տեղի է ունեցել հոսանքը։

Ինչ կարելի է տեսնել Պոլսի աղդայնոց մէջ, նոյնը եւ Թիֆլիսի, դեռ գուցէ աւելի եւս ծայրայեղ եւ դատապարտելի պլատոնականութեամբ։ Այդ պլատոնականութիւնը Ռուսահայերի մէջ այնչափ աչքի զարնող յատկութիւն է ճանաչված, որ նոյն իսկ ինքը ժողովուրդը առանձին խօսքով որոշում է տուած նորան «ինիսիա աղդասիրութիւն» կոչելով։ Ինչպէս Պոլսի «աղդային մարդիկ», այնպէս եւ Թիֆլիսի «գործիչներից» եւ «աղդութիւն» քարոզողներից ոչ մինը ոչ թէ Հայաստանը չէ տեսած, այլ եւս նոյն իսկ Կովկասեան դաւառների երեսն անդամ։ Նոքա եւս մնծանալով չորս պատի մէջ, հայութիւնը ուսած են միայն երդարանների եւ քերականութեան միջից, հարկաւ, աւելի վատթար պարագաների մէջ, քան Պոլսեցի Հայը։ Այս վերջինը, Հայաստանը եւ նորա կենդանի պատկերը չ'տեսնելու եւ ձայնը չ'լսելու հետ միատեղ, դոնէ իր մօրից, դայեակից եւ ա-

ղախնից է լսում այդ նուիրական ձայնը, մինչդեռ Թիֆլիսի Հայը (գէթ մինչեւ վերջին սերունդը) այդ բարիքից էլ զուրկ է. նա ծծում է բիրտ Օս կնկայ կաթը, խօսում է Վրացի կամ Ռուս աղախնի լեզուն, իսկ յետոյ միայն — այն էլ նշմարելի եւ հաղուադէպ բացառութեամբ — արժան է համարում իր լեզուն ուսանիլ։ Այս կերպով ձեռք բերած «Հայութեան» մէջ ինչ հոգի, ինչ սիրտ եւ ինչ դիտակցութիւն կարող է լինել... Եւ թէ՝ ոչինչ գործնական դարմաններ եւ խորհուրդներ կարող չեն ծնիլ այսպիսիների մտքից, իրական Հայաստանի վերաբերմամբ, այդ կարելի է տեսնել նորանով, որ Բերլինի դաշնադրութեան օրից մինչեւ հիմայ, իբր թէ Հայաստանով զբաղվող թերթերի մէջ տպվող եւ հայրենիքից ստացվող թղթակցութեանց հարիւրին իննուսունը ինը մասը ուրիշ բովանդակութիւն չ'ունէ, բացի միայն «Փիւրդերի կողոպուտները եւ միւդիրների անիրաւութիւնները»։ Մինչդեռ յայտնի է, որ այդպիսի դանգատներ, Հայոց թերթերի էջերում, օդի մէջ ջուր մաղելու չափ կարեւորութիւն չ'ունեցող բաներ են. որովհետեւ նախ՝ այդ դեղծմանց դէմ ոչինչ չ'կայ անելու ընթերցող հասարակութեան ձեռքին. երկրորդ՝ Փիւրդերից եւ միւդիրներից ոչ նուազ անարատութեամբ Հայ ժողովուրդը կեղեքողները նոյն իսկ բազմաթիւ Հայ վաչխառուներն են, որոնց չարչեաց դէմ խիստ դիւրութեամբ կարող էին դարման տանել Ռուսահայոց «աղդասէրները» եթէ նոցա քարոզած «աղդասիրութիւնը» դէթ ժամանակ անցնելու կամ անձնաչահ նպատակներին հասնելու միջոցներ չլինէին։

Օրինակ, Աբյոգանէ խմբագրի պէս մի մարդ, որն ընտանեկան այլեւայլ միջոցներով կարողացել է ղդալի կարողութեան տէր մարդ եւ մի մանաւոր դրամատան տնօրէն դառնալ։ Եթէ նորա հրատարակող թերթի նպատակը «աղդին ծառայելն» է իսկապէս, այդ ժամանակ շատ աւելի մեծ ծառայութիւն կ'մատուցանէր աղդին Պ. Ա. Յովհաննէսեան, եթէ թողնէր իր սուտուսիութ քարոզները եւ կեղծ ու պատիր, նպատակաւոր երկրպագութիւնը Լուսաւորչի փոխանորդի «սուրբ Օծութեան» առաջ ու վեր կենար դնար Հայաստան, իր դրամատէրութիւնը այնտեղ անելու. եւս առաւել որ ամենայն վտանգներից եւ կամայականութիւններից ապահով մնալու համար, նա այնպիսի պատուական առիթ ունէ Վանայ մէջ... Մինչդեռ եթէ նորա վիրն անդամ սպառնաս կտրել, Թիֆլիսից երկու քայլ դէն չի անիլ, որովհետեւ նորա նպատակը «աղդին ծառայել» չէ, այլ «աղդի» անունով իր եւ իր խմբակի փորին...։ Այսպէս էլ շատերը ուրիշ «աղ-

դասէրներից» · այսպէս էլ միլիոնուկէս ժողովրդի ուժեղ եւ զարգացած մասը , ինչպէս որ այս տեսանք սովի եւ Պոլսի այլ եւ այլ ընկերութեանց օգտին հանգանակութեան հրաւէրներ կարդալու միջոցին , Յայտնի է ձեզ թէ՝ որչափ քանակութեամբ եւ ինչ ուժով էին գրվում այդ յորդորները , որոնցից— լրագիրների ստացած թղթակցութեանց համաձայն— կարդացողներից շատերը արտասուքը «առուի պէս» էր թափվում · · · բայց ինչ դուրս եկաւ միլիոն ու կէս ժողովրդի տարտասվագին հանակրութիւնից» · հաղիւ հաղ այնչափ , որչափ տուաւ միայն Պոլիսը : Մինչդեռ Ռուսահայերի մէջ հազարներով կարելի է հաշվել այնպիսի մարդիկ , որոնց կարողութիւնը Պոլսի կէսը կ'պատէ :

Որչափ հին եւ չ'զարգացած սերունդն է «Ինիսիա ազդասէր» , շատ աւելի եւս թարմ ու զարգացածը · օրինակ՝ ուսանողութիւնը , որը ժամանակ եւ առիթ կ'գտնէ , բաղմաստորագիր հայհոյալից բողոքներ ստորագրել ճշմարտախօս Հայ մտրակողների դէմ · որը ժամանակ կ'գտնէ օրերով թղթախաղի , լրտեսութեան , ցոփութեան եւ ամէն տեսակ անառակութեանց ու անպատուութեանց գործով զբաղվելու համար , բայց բնաւ միջոց չի գտնիլ իր ազգային առօրեայ չարն ու բարիքով հետաքրքրվելու , եւ Հայի պատիւը օտար վիրաւորիչների դէմ գրչով պաշտպանելու համար · · ·

Ուրեմն , եթէ ոչ մի կողմի ազդայնոց մէջ դեռ մինչեւ հիմայ իսկ չ'կայ ազգային դիտակցութիւն եւ ընդհանուր շահերի ճանաչողութիւն , բաւի իսկական իմաստով , հապա էլ ինչով կարելի է վկայել թէ «վաղուց արդէն այդ դիտակցութեան վրայ տքնող մարդիկ են եղել · · · » ·

Եթէ եղել են , հապա ուր է այդ հասարակային արտայայտութիւնը ներկայի մէջ , երբ «ազգային դիտակցութիւն» ասված · բառերն անգամ չեն կարող ըմբռնել Ռուսահայ հրապարակախօսութեան մէջ ամենքից բարձրաձայն պոռոտացողները · Այս իրողութիւնը , փառք Աստուծոյ , հէնց այս օրերս միայն դարձեալ մեր սովիական վորձով ստուգեցինք · Ռուսահայ «դրաքէտներից» մէկի հրապարակաւ արած դիտողութեամբ թէ՝ «ինչ օգուտ կայ ժողովրդի համար , երբ նորան կ'զբաղեցնեն օրուայ այլեւայլ խնդիրներով · » Իսկ թէ ինչ բաներով պիտի զբաղեցնեն ժողովուրդը խմբագիրները եւ թղթակիցները— հասարակութեան հետաքրքրութեան եւ դիտակցութեան դոհացում տալու համար — դորա մի չարք օրինակները , հանդիսաւոր խրոխտանքով , տուաւ ինքը այդպիսի դիտողութիւն անողը նկարագրելով , Պոլսի իր թղթակցութեանց մէջ , այսանվի մղկիթ-

ները, բուրդերը, ծովային եւ քնութեան տեսարանները, պա-
լատները եւ այլն «ժողովրդին դիտակցութիւն տվող» շատ այս
տեսակ բաներ։

Բայց այդպիսի մտամտանկ գաղափար յայտնողը բնաւ խեղկա-
տակ եւ հրէշաւոր բացառութիւն չէ, այլ նորա հասկացողութիւնը
ազգային գիտակցութեան վրայ ցոյց են տալիս նոյնպէս եւ նորա պոպ-
բն գործակիցները եւս, լցնելով իրանց թերթերը Զանգիբարից եւ
Կոխինխինից ստացված «խիստ ազդոզուտ» եւ հետաքրքիր նորու-
թիւններով։» Սորա վրայ մանաւորապէս խօսելու առիթ ունեցանք
Արեւելեան Մամուլի անցեալ երկու թիւերի մէջ, ուստի աւե-
լորդ արանութիւնը ապարդիւն ենք համարում։ Միայն կուզենք ա-
սել թէ՝ երբ մեր խօսքը Պոլսում ունենալի այնպիսի գործունէու-
թեան վրայ է, որի նպատակը եւ արդասիքը ազգային գիտակցութեան
եւ ընդհանուր՝ համերաշխութեան սիրտ վերարերվին, հապա ովքեր
են եղել «շատերը», որոնք «վաղուց հետէ դրդվել են» այս գործով։
Մղկիթների եւ ճրագալոյցների ամեն ցինզ եւ անբովանդակ նկարա-
գրութիւնները՝ երկու կողմ. ազդայնոց դիտակցութեան եւ փոխա-
դարձ ծանօթութեան վերաբերվող բաներ են միթէ, երբ նոյն իսկ
կրօնական, քերականական, լեզուաբանական, տասուադարձական,
հնախօսական եւ այլն այդպիսի գիտութիւն եւ մեռեալ հարցեր եւս բնաւ
չօշափող առարկաներ չեն ազգային կենդանի կեանքի, իրական ներ-
կայի ու ապագայի էական պահանջները։

Այս ամենը ցոյց տալուց յետո, յուսում եմ՝ չէք վարանիլ ճանա-
չելու հետեւեալ եզրակացութեանցս բանաւորութիւնը։

Ա. Ազգային գործնական ուղղութիւն, իրական գաղափարներ եւ
ձգտում ոչ միայն վաղուց հետէ չէին գիրաբեգոմ Ռուսահայոց մէջ,
այլ եւս դեռ լեռվին պակասում է այդ՝ նոյն իսկ նոցա ինտելիգենցիային։

Բ. Որոշեալ ամեն մի ազգի իսկական գոյութիւնը սկսվում է
միայն նորա մէջ հասարակային ինքնուրոյնութիւն մտնելու օրից,
եւ որոշեալ այդ ինքնուրոյնութիւնը հաղիւ միայն նոր կազմա-
ւորվելու վրայ է մեր մէջ, ուստի այս նպատակին նուիրած մեր
երկամեայ ջանքերը Պոլսում ոչ թէ. «աւելորդ էին», այլ խիստ
կենսական կարեւորութիւն եւ անհրաժեշտ ապիրազականութիւն ու-
նեցող եւ կարօտ դեռ բազմամեայ ճիգերի, նոյն ճանապարհի վրայ։

Գ. Որոշեալ իսկական համերաշխութիւնը եւ փոխադարձ ծա-
նօթութիւնը ու դիտակցութիւնը կարող են հաստատվիլ, երկու կող-

մի ազգայնոց մէջ, գէթ նոցա իրական հարցերի եւ կենսական պահանջների վերաբերեալ պրոպագանդայով ու մտքերի փոխանակութեամբ, ուստի այդպիսի մի նպատակին հետեւելու ժամանակ, մեզ պէտք էր դանց անել ամեն քաղաքական, կրօնական բանաստեղծական, դեղադրական եւ վերացական առարկաները, զբաղվելով միայն եւ միայն նորանով, ինչ եղաւ մեր ընտրած պրոգրամը, որի մասին յետոյ։

Հիմայ տեսնենք թէ՝ Ռուսահայ ինտելլիգէնտներից ովքեր եղան մեզնից առաջ Պոլիս եկողները եւ ինչով զբաղվեցան։ Հանրածանօթ Կարապետ վարդապետ Շահնազարեանը եղաւ այստեղ ամենից շատ ջանքեր թափող, բոլոր իր ժամանակիցների մէջ։ Բայց ինչպէս կրօնական գրագէտ, նորա ամենաթարմ եւ եռանդագին ուժերը նուիրվեցան կրօնական բանակռիւներին Վենետիկցոց հետ, որ դարձեալ գրեթէ ոչինչ վերաբերութիւն չունէին ազգի ամենօրեայ պէտք ու պահանջներին եւ կենդանի շահերին։ Այո, նորան են պարտական Պոլսեցիները իրանց վարժարաններից լաւագոյնի հաստատութիւնը. բայց սորա հետ միատեղ չի կարելի ասել թէ՝ յիշեալ վարդապետի հրապարակախօսական պրոպագանդան այս տեղ դլխաւոր նիւթ ունեցաւ Հայաստանի մէջ ապրող ժողովրդի շահերի պաշտպանութիւնը կամ այս ու այն կողմի Հայոց տնտեսական զարգացման եւ բարօրութեան խնդիրները։ Եւ սորա մէջ, հարկաւ, սոմնեալին չէր կարելի մեղադրել տաղանդաւոր Սիւնեցի վարդապետին. որովհետեւ, ոչ միայն նորա ժամանակները, այլ եւս մեր ժամանակներն իսկ դեռ չենք ազատված տիրացուական եւ կոսմոպոլիտական «խնդիրների» ձեռքից։

Շահնազարեանից յետոյ եկողն եղաւ հանդուցեալ Միքայէլ Նալբանդեանը, որը հազիւ մէկ-երկու ամիս մնալով Պոլսում, դարձեալ զբաղվեցաւ կրօնական բանակռիւներով Վենետիկցոց եւ Այվազովսքու հետ։ Այդ վիճաբանութիւնները մնացած են նորա փոքրիկ գրութեան մէջ Երկու Տող վերնագրով։ Այո, բոլորովին այլ հարց է թէ նորա ունեցած գործունէութիւնը Ռուսահայոց մէջ, կրօնական խնդիրներին վերաբերվելու հետ միատեղ, չօչափել է եւս ժողովրդի կենսական պահանջներից մէնը, որ կենդանի եւ հայկական յատկանիշեր ունեցող լեզուն է։ Այո, այդ լեզվի դաղանիքը թափանցողը եւ ֆորմուլներ գտնողը գրեթէ աւելի նա եղաւ, քանի թէ Նալբանդեանը, բայց այսուհանդերձ Նալբանդեանը, այլ եւ այլ պատճառներով, նոյն իսկ Ռուսաստան եւս կարող չ'եղաւ պարապվելու Հայ ժողովրդի տնտեսական եւ հասարակային պայմանների հեռաղօսութեամբ։

Գրելով իր համբաւաւոր Երկրագործութիւնը, նա հետեւեց աւելի եւրոպական ընկերավարականաց տեսական եւ միայն Եւրոպայի պայմաններից յառաջ եկած վարդապետութեան, քանի՞ քննելով Հայ ժողովրդի չորս հազարամեայ գոյութեան գաղնիքը եւ պայմանները։ Դա է պատճառը, որ մինչեւ հիմայ դեռ, հանգուցեալի այդ աշխատութիւնը յայտնի է երկու կողմի աղգայնոց աւելի իր «կորստաբերութեամբ» որոշված անուան չնորհիւ, քանի՞ մարսելի եւ Հայի սրտին մօտիկ լինելու։ Պօլիս գտնված ժամանակ, մեր անմոռանալի նախորդը, ինչպէս ազգայուն մարդ եւ Հայ, աննկատ չ'թողեց բեռնակիրների թշուառ վիճակն այս տեղ, նուիրելով նոցա մէկ գեղեցիկ յօդուած։ Զենք կարող տարակուսիլ սակայն, եթէ լուսաւորի գրագէտը Պօլսում երկար մնալու լինէր, անպատճառ ինչպէս սրտահայեաց մարդ, օրուայ անհրաժեշտ խնդիրներ կ'չլինէր Հայաստանի շատ հանապազօրեայ պէտքեր ու կենդանի պահանջներ։

Նալբանդեանցից յետոյ եկան Պ. Պ. Միքայէլ Միանսարեանց, Պետրոս Մադաթեան (Սէյեադ), Ամերիկեան, Աբր. Ամիրխանեանց, Զիգեանեան եւայլն։ Ինչ կ'վերաբերվի սոցանից առաջնին, աղնուագոյն հայութեան այդ ընտիր տիպարին, նախ՝ գրագիտութիւնը իբր մասնաւոր պարապմունք նա դէթ իր կեանքի վերջերում ունեցաւ։ Երկրորդ՝ Պօլիս գալով՝ այնչափ քիչ մնաց այս տեղ, որ հաղիւ կարողացաւ մի քանի բերանացի բանակցիներ ունենալ մի դաս իր բարեկամների հետ, որոնք միշտ հիացմամբ կ'յիշեն աղնուամիտ եւ վսեմատես ղինուորական հայրենասէրի պատկերը։ Մնացածների դերը վերոյիշեալներից այնչափ կրաւորական է եղած եւ սահմանաւոր, որ գրեթէ չի թողել որչափ եւ իցէ զգալի հետք Պօլսի աղգայնոց գրականական կամ հասարակական կեանքի մէջ։

Վերջապէս երեւեցան Պօլսում այն անձինք եւս, որոնք ճանաչված են Ռուսահայոց մէջ ազիերիստական «աղգասիրութեան» ամենաստորին յատկութիւններով։ Դրա էին՝ Պ. Պ. Կարապ. Եղով, Ալէք. Երիցով, Աբգար Յովհաննիսեանի, Յուրոյ եւ այլն։ Թէ ինչ գործ պիտի կատարէին դոքա այստեղ, աղգային գիտակցութեան եւ համերաշխութեան նկատմամբ, այդ կարելի է դատել նոցա ունեցած կեղծ ու եղծ, ուղղութիւնից, նոյն իսկ Ռուսահայոց մէջ։ Մէկը այդ անձնաչան բաղտախնդիրներից ձգտել է ժողովրդականութիւն փաստակել, ինկատի ունենալով մի ժամանակուայ աղգանունգ թեկնածութիւնը Էջմիածնի կաթուղիկոսութեան աթոռին։ Միւսը ով գիտէ որ աղգային ձեռնարկութեանց փորձեր է փորձել, յարաբերու-

թեանց մանելով այս ու այն դեսպանատան հետ։ Մի երրորդը՝ չոյել է, կեղծել, խաբել ամենքին, պարծեցել նոցա առաջ իր հարստութեամբ եւ արդիւնաշահ գործակալութիւններով եւ այլն։ Վերջապէս մի այլը, ինչպէս օրինակ, Ցարոյ մականուանվող, դեռ մինչեւ հիմայ ծածկանուան տակ մնացած անձը, եկել է՝ ստանձնելով ամենաստորին կարգի հացկատակի դեր, որը կատարել է, յիսուն բուրլ ամսական ստանալով իրան դրած ածող պատրոն Պ. Աբգ. Ցովհաննէսեանից, որի պատուէրով նորա գրասէր լաքէյը երեք ամսվայ մէջ երկու անգամ Պօլիս եկաւ գնաց, թէպէտ չ'յաջողելով իր ստացած բաղտախնդրական ու ամարդ յանձնարարութեանց մէջ։ Պօլիս հասածին պէս, այդ անձը չի յապաղեց դիմել ձրի համարում վաստակելու ամեն միջոցներին, դատապարտելով հասած տեղը — ի հարկէ ընդհանուր՝ եւ անորոշ բառերով — եւ Մշակի խմբի եւ Գորձի խմբագրութեան ամեն աղնիւ ձգտումները, ինչպէս հարկաւ եւ մեր այս տեղ արած երկամեայ պրոպագանդան, ասելով օրինակ. «զինուորական մարդը ինչպէս կարող է դրագէտ եւ հայրենասէր լինել.» «նորան մենք լնաւ իրաւունք չենք տուել ձեզ հետ բանակցիւներ բանալու.» «ինչ ասել է՝ ներքին հարցերով զբաղվիլ, երբ նորա երկու տարուան գրածներից չ'կարողացայ հասկանալ թէ՝ ինչ կերպարանք ունի Պօլիսը. որչափ փողոցներ, թաղեր, մզկիթներ, եկեղեցիք» եւ այլն եւ այլն։

Վերջին տարիներս Ռուսահայոց կողմից մի քանի երիտասարդներ գնացին Վան եւ Երզրում վարժապետութեան գործով։ Որչափ էլ աւելի բարոյական նիւթական պայմաններից դրդված լինեն նոքա, քան թէ իդէալականութիւնից, այսուամենայնիւ խիստ արդիւնաւոր գործունէութիւն կարող են ունենալ նոքա, եթէ միայն աղղայնի դիտակցութեան վրայ նոցա ունեցած գաղափարը նոյնչափ խիստակայն չէ, որչափ Ցարոյի նման տիրացուների։

Այս տեղ ի դէպ ենք համարում յիշել եւս նոցա անունները, որոնք Հայկական հարցի ծագումից յետոյ մանաւանդ, անձնական առընչութեամբ թէ գրաւոր, մեծապէս նպաստեցին Ռուսահայոց ծանօթութեան Տաճկահայոց իրական կեանքի եւ պահանջների հետ։ Դոցանից առաջինը, մեր մեծարգի բարեկամ Պ. Ցարութիւն Քէչքէկեանն է, որը մնալով ամեն բարեմասնութիւններով գաղափարի մարդու ճշդիւն տիպար լինելու հետ միատեղ, իր մասնաւոր՝ համեստ, զսպված եւ ներփակեալ յատկութիւններով էլ նոյնն է նա։ Ջ'պիտի վարանիմ խոստովանելու, որ երկու տարի Պօլսի մէջ ապ-

ռելով, բազմաթիւ բարեկամներ եւ չարակամներ վաստակելով — ամեն դասի, կարգի, հասակի, զարգացման եւ պարապմանց պատկանող—չ'պատահեցի մի ուրիշը, որն այնչափ ուրոյն, խոր եւ լայն աշխարհայեցողութիւն ունենար մեր ազգային յատկանիշերի եւ գիտակցութեան վրայ, մեր պատմական անցեալի, առանձնայատկութեանց եւ խորհրդի վրայ, մեր ուրոյն զարգացման պայմանների վրայ, որչափ յիշեալ մեր բարեկամը։ Լինելով բնիկ Հայաստանցի (Կեսարացի) Կեսարական յատուկ ըմբռնողութեամբ, ինչպէս կ'երեւայ դեռ մանկական հասակում խիստ խոր տպաւորութիւն են գործած նորա վրայ Տաւրոսեան եւ Առջիհան լեռան վեհ տեսարանները։ Շնորհիւ միայն փոքր Հայաստանի բնութեան այսպիսի զօրեղ ազդեցութեան կարող էր պատահիլ, որ տասնեակ տարիներ անցնելով Եւրոպայում, ուսմանց եւ գիտութեանց նուիրած, Հայութեան այդ աննկուն տիպարը բնաւ չ'աղաւաղվեց, չ'արատաւորվեց Եւրոպական քաղաքակրթութեան արատաքին ազդեցութեան տակ, ինչպէս նորան ենթարկվել են այնչափ դիւրութեամբ արդի դրեթէ բոլոր մեր ստրկաբարոյ եւ օտարամոլ երիտասարդները։ Հիացմամբ կանգնելով այդ քաղաքակրթութեան ամեն մի մեծավայել արտադրութեան առաջ Պ. Փէչքէկեան, ոչ միայն կոյր խոնարհութեամբ երկրպագութեան չէ ինկել, այլ Հայկական պատուազդացումը չարժված, միշտ այսպէս է մնացել։ «Մարդկային մտաց այս ամեն ղարդացման եւ բարձրութեան գործի մէջ, արդեօք անհնա է եղել չորս հազար տարուան մի ազգ Արեւելքում, «վեհագոյն յանուրց հիւսիսականաց» կոչված։ կամ թէ արդեօք դեռ չեն պահված այդ ազգի մէջ այն ուրոյն տարրերք քաղաքակրթութեան, որով կարելի լինի արդի Եւրոպականութիւնը ընդունել, առանց Հայկական յատկանիշերը կորցնելու, առանց այլադունվելու, կերպարանաղուրկ եւ բնաղուրկ լինելու։» Այս մշտական հարցումը եղել է նորա ձեռքում մի լաստեր, որով նա վնտրել է, մութ լաբիւրինթոսի խորխորատներում, քառասուն դարեան ազգի մեծահրաշ կեանքի գաղտնիքը եւ այժմեան քաղաքակրթութեան հետ ունեցած առնչութիւնը։ Այսպիսի անդուլ հետամտութեամբ նա մշակել է իր մէջ մի ամբողջ կողեր նոր տեսակէտերի, Հայկական ապագայ գոյութեան պայմանների վրայ, թէ ուրոյն ղարգացման մէջ եւ թէ տիրապետող ազգի զօրեղ քաղաքակրթութեան հետ ընդհարվելու ժամանակ։

Կեանքիս մեծագոյն մասը անցնելով ժողովրդի հարազատ խաւերի մէջ, իսկ միւս մասը քաղաքակրթութեան կտուրի տակ։ տարիներ-

րի ընթացքում՝ մի ոտով Կովկասեան գաւառների եւ գաւառական Հայ շրջանների ու ընտանեայ մէջ. միւսով Ռուս, Լեհացի, Գերմանացի եւ Ֆրանսացի գերդաստանների, Հայու բնազդական օտարամոլութիւնը ունենալու հետ միատեղ, ներքին համարումս սակայն թեքվել է միշտ աւելի Հայոց ունեցած հոգեկան բարեմասնութեանց եւ բնածին բարձրութեան, ինչպէս եւ աւանդական կատարելութեանց կողմը, քանթէ «քաղաքակրթութեան» փայլով սրբված ու կոկված օտարների։ Ուստի, ներքին զօրեղ հակակրութիւն եմ տածած՝ միշտ դէպի այն Հայ ընտանիք եւ մարդիկ, որոնք Հայկական յատկանիշերը արհամարելով — գէթ նոյա կոպիտ երեւոյթի համար — փնացել են կուրօրէն օտար վարք ու բարքեր եւ նախապաշարմունք իւրացրել։ Կովկասեան գաւառահայոց կեանքից անցնելով Տաճկահայոց գիւղական եւ քաղաքական կենաց ուսումնասիրութեան — էրզրումի գրաւման ժամանակ — այլ եւս անկարելի եղաւ զսպել տարբերներով կուրծքիս մէջ ամբարված բուքը, որով որոշեցի ձեռնարկել հրապարակային բացարձակ պրոպագանդային, Հայաստանցի մարդու եւ գերդաստանի ներշնչած վսեմ ազդեցութեամբ, Հայկական առաձնայատկութեանց այդ անսպասման նուիրումից յետ, կրկին վերադառնալով Եւրոպական լուսաֆայլերի շրջանը, էլ բոլորովին անհնարին եղաւ՝ որեւէ հաշտութիւն պահել Ռուսահայ կոյր եւ բթամիտ «ազգային առաջնորդների» ուղղութեան հետ։ Այդ ուղղութիւնը դատապարտելի էր ոչ նորա համար, որ նա Եւրոպական էր, այլ նորա համար, որ ներմուծվում էր Հայոց մէջ բնաւ չ'համակերպվելով եւ չ'պատուաստվելով մեր ազգի արտաքին եւ ներքին յատկանիշերին, որոց չնորհիւ՝ Եւրոպական բուն քաղաքակրթութեան հոգին եւ իմաստը չ'ըմբռնելով, պլիտի եղծենք, աղաւաղենք չորս հազար տարի մեզ պահած առանձնայատկութիւնները, անդառնալի կերպով այլասերվենք ու մեր ձեռքով մեր գոյութեան դերեզմանը փորենք։ . . .

Սորանով առաջնորդված, բողոք բարձանք Մշէկի էջերում, Ախալցխայից գրված մի շարք խմբագրական յօդուածների մէջ՝ Պրոգրամի Խնդիր վերնագրով։ Այդ գրութեանց մէջ աշխատեցինք պարզել այն թէ՝ ոչ միայն Ռուսահայոց օրիորդաց եւ տղայոց դպրոցների պրոգրամը անպէտք է Հայ ժողովրդի պէտք ու պահանջներին, այլ եւս Ռուսահայ «մանկավարժները» հասկացողութիւն անգամ չ'ունեն Հայ կնկայ եւ տղամարդի աւանդական արժանայատկութեանց վրայ։

Այս ուղղութիւնը յառաջ տանելու անյողդողդ որոշման մէջ էր,

որ մի տարի յետոյ սկէտը եկաւ Պօլիս գալ, նոյն ուղղութեան պրօպագանդան աւելի բուռն եւ զօրաւոր կերպով այս տեղի աղգայնոց մէջ եւս անելու համար։ Որովհետեւ, Հայաստանը չ'տեսնելով բայց նորան «լոյս» տալու պաշտօնը ստանձնելով, Պօլսի մեր աղգայինները կարող էին աւելի վնաս հասցնել Հայ ժողովրդին, քան թէ օգուտ։

Ահա այս դժուար ձեռնարկութեան մէջ էր, որ բարեբաղտութիւն ունեցանք հանդիպել Պ. Ցարութիւն Քէշքէկեանին, որի մէջ, անտարակոյս, շատ աւելի լայն եւ գիտակցական կերպով էր ձեւակերպված Եւրոպականութեան պատասխանի հարցը։ Մեր ուղղութեան պատճառաւ ունեցած բանակռիւների յաջողութեան եւ Մանչեսթէր Էֆէնտիի մէջ արած խորհրդածութեանց համար, սեպուհ պարտք կ'համարենք խորին շնորհակալութիւն յայտնել յիշեալ մեր բարեկամին (1), որն այնչափ զօրաւոր դաղափարակից եւ նեցուկ եղաւ մեզ այդ պրոպագանդայի մէջ, որի ընթացքում, սկզբունքի վէճերից դուրս ստիպված էինք մաքառիլ Ռուսահայ եւ Տաճկահայ մի քանի վատերի եւ քսուների կողմից եկած բիւր հարուածների դէմ եւս։ Մեր արած ամէն գրաւոր արծարծումներ, ինչպէս սկզբում ասեցինք, կ'տպագրվեն առանձին գրքոյկով։

Աղգային ինքնաճանաչութեան վրայ այդպիսի մի մեծ հմտութիւն ունեցող, Հայաստանի դաւառները ու կեանքը կրկին եւ կրկին ուսումնասիրած, այդ համակրելի Հայ-Եւրոպացին էր, որն մի տարուայ չափ բնակվելով Ռուսահայոց մէջ — Գաբրիել եպիսկոպոս Այվազովսքու յատուկ հրաւիրանքը Էջմիածնի ձեռնարկում ուսուցչապետութեան պաշտօն վարելու համար— Պ. Քէշքէկեանը օգուտ էր քաղած առիթից՝ շատ բաներ ներշնչելու Ռուսահայ երիտասարդութեան,

---

(1) Ինչպէս որ Պօլսի աղգայնոց վրայ ստացած տեղեկութիւնների համար երախտապարտ ենք բժ. Տիգրան Փեշթիմալճեանին, որն ինքը աւելի խիստ լեցվով է քննադատած իրան քաջածանօթ համաքաղաքացիների թերութիւնները, նախ՝ Փարս Հայաստանի պատ. հանդէսի մէջ, իսկ յետոյ Մշակի եւ միանգամայն զարմանալի է տեսնել, որ հիմայ Թիֆլիսի Արյոֆոնդ դաւեշտական շաբաթաթերթին թղթակցելով, տարիների ընթացքում իր հրատարակած լիուլի տեղեկութիւնների համար, չ'դիտենք ինչու աշխատում է՝ մի տեսակ քրէական յանցաւոր կացուցանել մեզ Պօլսի աղգայնոց աւաջ։ Մի հասարակութեան թերութիւնները մերկացնելը եւ պարսաւելը միթէ յանցա՞նք է մեր Պօլսեցի բժշկի համոզմամբ, կամթէ չէ խաթեր եւ շահու համար ուզածին պէս դարձնելու մի բա՞ն, ինչպէս որ այդ կանէ եւ քանիցս էլ արած է մեր «բարոյախօս» բժիշկը։

իր սիրած ազգային ուղղութեան եւ դաղափարների վերաբերմամբ, որով, անկասկած մեծ ծառայութիւն է տրած ընդհանուր ազգային համերաշխութեան եւ գիտակցութեան գործին։ Կասկածիլ անդամ չի կարելի հարկաւ, որ նորանից օգտված Ռուսահայ շատ մտաւանակ «ուսեալներ» ամենեւին չեն խոստովանիլ որեւէ աղգուտ փոխարինութեան մէջ, Պ. Յարութիւն Քէչքէկեանից ստացած, բայց մենք փաստեր ի ձեռին կ'ապացուցանենք, որ ոմանց վայելած «հեղինակութեան» անունն անդամ միայն եւ եթէ Պ. Քէչքէկեանի անձնուէր գաղափարասիրութեան եւ համեստութեան արդիւնքն է . . . ։

Գրաւոր առնչութեամբ Ռուսահայոց եւ Տաճկահայոց փոխադարձ հետաքրքրութեան եւ ծանօթութեան մեծապէս նպաստած եռանդոտ եւ տոկուն անձը, այդ Մշակ եօթը տարուան թղթակից Պ. Հայկակն է։ Այդչափ տարիների ընթացքում ձրիաբար թղթակցութիւններ գրելով Մշակին, նա արծարձել է Ռուսահայոց մէջ մանրամասն եւ առատ տեղեկութիւններ այս կողմի ազգայնոց քաղաքական եւ հասարակային կեանքի ամենօրեայ երեւոյթների եւ անցուդարձերի վրայ, որով կարողացել է միշտ թարմ եւ կենդանի պահել, Ռուսահայոց մէջ բուռն հետաքրքրութիւնը դէպի իրանց Տաճկահայ եղբայրները։ Բացի այդ, եթէ Պոլսի մէջ վերջերս հաստատված (մանաւանդ Արարատեան) ընկերութեանց օգտին Մշակի մէջ այնչափ արդիւնաւոր պրոպագանդա եղաւ, այդ լիովին Պ. Հայկակի տուած առաջին նշանների շնորհիւն էր, ինչպէս պէտք է վկայենք այդ, երբ մեր ստորագրութեամբ, Հայկակի արած առաջարկութեանց համեմատ, այնչափ հարիւր լրագրական յորդորներ ու հրաւէրներ են ուղղված Ռուսահայոց Մշակի էջերում։ Իսկ եթէ վերջերս միայն Պ. Հայկակի թղթակցութեանց նիւթերը սկսեցին աւելի սեղմիլ ու սահմանաւորվիլ Պոլսի Հայոց, կամ քաղաքականութեան վերաբերեալ հարցերով, դորա պատճառն էլ !տեղիս այլ եւ այլ ճառախօս «դորձիչների» վատութիւնն եւ ապերախտութիւնն է, որով մեծապէս կ'ցաւվի անխոնջ գրագէտի եռանդը, իւր հանդէպ հանած պէսպէս բարոյական եւ նիւթական արդելքներով։ Քաջ տիրապետելով Հայոց լեզուն, գրելու այնչափ աշխոյժ ու ախորժելի ձեւով Պ. Հայկակը, անշուշտ, խիստ օգտաւէտ է դտնվել զարգացած ազգային լեզվի բարակութիւնները Ռուսահայ երիտասարդութեան մէջ սիրելով եւ ընտելացնելով նորան միեւնոյն ժամանակ Տաճկահայոց բարբառին։ որ հաներաշխութեան գործի մէջ վերջին տեղը չէ բռնում։

Գալով Պ. Միքայէլ Փորթուգալեանին, որն հայկական հարցի

մէջ, մի խիստ կարեւոր եւ վճռողական ճգնաժամին, Թիֆլիս էր գտնվում, դժուար կ'լինի ցոյց տալ, երկու կողմի մեծախօս «աղգասէրների» մէջ, մի երկրորդ անձ, որի հայրենասիրութիւնը այն գիտակցութեան եւ կատարելութեան հասած լինէր եւ որի մէջ գործը այնչափ զօրաւոր կերպով տիրապետէր խօսքի վրայ, որչափ յիշեալ անձնուրաց (այլ ոչ մեր աֆերիստ «աղգասէրների» նման՝ աղգուրաց «անձնուրացութեան» դիմակի տակ) աշխատաւորի։ Անտարակոյս ենք, որ մեր այս վկայութեան ամենքիս՝ շատ կ'մասնակցի Պ. Գրիգոր Արծրունին, որի, ղատեհ ժամանակին, մատուցած ծառայութիւնները հայկական հարցին, ականատես եւ . . . է եղել Պ. Փորթուգալեան, թէպէտեւ այս մեծագին ծառայութիւնները դատապարտված լինեն Եղովի «աղգասիրական» խմբից «աղգալեսա ձեռնարկութեան» անունով։ Հարկաւ, եթէ այդ ձեռնարկութեանց սկսողները իրանք, այդ Հայ եղէգականները լինէին, այն ժամանակ, անշուշտ, նոյն ձեռնարկութիւնը, հարիւրաւոր Հայ եւ օտար թերթերի մէջ, խիստ «աղգասիրկարար» կ'հռչակվեր։ Բայց այդ խումբը այնչափ փորձառու է, որ փորձանքներին կ'ձեռնարկէ այն ժամանակ միայն, երբ նոցանից չօշափելի օգուտ կայ իրանց սեփական անձի եւ ասպարէզի համար . . . (2)

Պ. Միքայէլ Փորթուգալեան մինչեւ հիմայ դեռ ցվերջին շունչը մաքառելով նիսիս աղգասէրների ամեն տեսակ անտարբերութեան եւ վատութեան դէմ, հոգով եւ մարմնով նուիրած է իրան Վանայ մատաղ սերունդի զարդացման գործին, բնաւ արյոգան չ'գտնելով սակայն Թիֆլիսի մի քանի չարլատան ֆորսող եւ ֆոբյոդ «աղգասէրների» իրական համակրութեան մէջ։

Ինչ կ'վերաբերվի մնացած այցելուներին, նոցանից մեծագոյն մասը կարելի է նկատել ինչպէս պարզ ուխտաւորներ, իսկ միւս մասը

---

(2) Սան-Ստեֆանոյի դաշնագրութիւնից առաջ, երբ Պ. Գրիգոր Արծրունին ձեռնարկեց, Թիֆլիսի ազգայինների մէջ, հանրական ուղերձին՝ հանգուցեալ Ալէքսանդր կայսեր գթութիւնը հայցելու համար Արեւելեան քրիստոնէից մէջ, նոյնպէս եւ Հայոց վրայ, այդ ժամանակ Պ. կար. Եղովի բարեհոգի դասակիցները «Ռուսաց գործիք եւ ինքնակոչ ներկայացուցիչ» հռչակեցին նորան։ Իսկ երբ ոչինչ կարիք չ'կար որեւէ մի ուղերձին, սորանից մի երկու տարի առաջ, նոյն խմբակի գլխաւորները, Պ. Եղովի առաջնորդութեամբ, գնացին ուրյանուն հինգ միլիոն ազգի կոմ ի—եվին շնորհակալութեան ուղերձ ներկայացրին։ Հարկաւ, այստեղ իրանք խիստ «աղգասիրկարար» էին, մանաւանդ որ անձնական ասպարեզները պիտի բոլորովին փրկվեր։

զուտ աֆերիստական ու այլ եւ այլ մութ եւ սնձնաչահ նպատակներով միայն Թիֆլիսեաց այլուր դեգերող բաղտախնդիրներ, որոնց վերջին տխուր ներկայացուցիչը «անձնուրաց» Պ. Հ. Խիեքչեանը եղաւ, ինչպէս որ Պոլսահայոց վերաբերմամբ եղան զանազան Ցարոներ եւ այլ այդպիսի հայկատակ տիրացուներ։ Վերոյիշեալ աֆերիստներից մի քանիսը դնուցած են Կովկաս յատկապէս Մանկունի չնորհաղարդ եպիսկոպոսի վարձով, նորա եւ Պ. Եղոյի կեղտոտ լաթերը աղգային թերթերի մէջ լուանալու համար, նոյնպէս Պ. Կար. Եղոյի ասլագայ չարանենգ միտումների օգտին ոլրօպագանդա անելու նպատակաւ, Ռուսահայ եւ Տաճկահայ թերթերի մէջ։ Այդ ստոր վարձկանների թւում յայտնի է Պ. Ն. Թիւլպէնտչեանց, որի ունեցած գործունէութիւնը Պոլսի եւ վերջերս էլ Էջմիածնի մէջ, մի անսրբելի սրատ է Տաճկահայ զրագէտների անուան եւ սլատուի վրայ։ . . . Պարզ լինի Պ. Եղոյի երեսը, որ այսպիսի վարձկանների ձեռքով է միշտ իր «աղգասիրական» ստորերկրեայ գործերը վարած։

Ռուսահայերին նորերս այդպիսիների թւում, չ'պիտի մոռացած առանձին համակրութեամբ յայտնել Պ. Յովհ. Շահնազարեանին, որը Ռուսահայոց մէջ խիստ կարճ մնալու հետ միատեղ, շատ նպաստաւոր դաղափար կազմել ուուսաց Տաճկահայ արդի երիտասարդութեան վրայ։

Իսկ դալով նոցա, որոնք եղել են եւ աղնուաբար աշխատել Ռուսահայոց մէջ, Բերլինի վեհաժողից դեռ շատ առաջ, այդպիսիների թւում, պարծանքով պիտի յիշած. Պ. Մարկոս Աղաբէկեանին։ Սա եւս Աբովեանցի, Նալբանդեանցի, Նալբանդեանցի ու Միանսարեանցի նման հաղուագիւտ աղգասիրութեան տէր մի սլատկառելի անձ է համարված մեզ համար միշտ (3)։ Բայց սորա հետ միատեղ, առնելով նորա վարած գործունէութիւնը, դորա մէջ նա եւս դլխաւորաբար կրօնական խնդիրների չրջաններում է սլտտած, թէպէտ, տարակոյս չ'կայ, որ նորա ժամանակ այդ հարցերը առաջնակարդ եւ կենսական կարեւորութիւն ունեցող բաներ են եղել, Ռուսահայոց եւ Տաճկահայոց համար։

---

(3) Այս տողերը դրած միջոցին, երբ ասլադայ կաթուղիկոսին, Գէորգ Դի նման, փալանելու եւ իրանց անձնաչահ միտումներին դործիք չինելու ջանքեր կ'թափեն Պոլսում Պ. Եղոյի հլու դործակատարները, զարմացմամբ եւ դրեթէ բոլորովին թերահաւատութեամբ կ'լսենք, որ Պ. Մարկոս Աղաբէկեան, ինչպէս եւ մի ուրիշ պատկառելի անձ նոյնպէս այդ ջանադիրների մէջ են։

Ինչ կ'վերաբերվի երկու մեծանուն կրօնական գրագէտների թափած աշխատանաց, Ռուսահայոց եւ Տաճկահայոց փոխադարձ մօտացման վերաբերմամբ, ինչպէս եղան՝ հանգ. Գաբր. Այվազովսքին եւ Խորէն Նարբէյ Լուսինեան, նոյա գործունէութիւնը Ռուսիայում, ունենալով ամբողջ մի պատմութիւն, հարիւր ու մէկ միջադէպերով, շատ աւելի բարձր է, քանթէ մեր անելիք հակիրճ գնահատութիւնը։

---

2. Հիմայ գանք երկրորդ կէտին, թէ «Տաճկահայոց հասարակային այլ եւ այլ կարգ ու սարքերը եւ ձեռնարկութիւնները քննադատելով, դէմ յանդիման եւ այնչափ խստութեամբ, ոչ թէ նախանձախնդրութեան եւ փոխադարձ համերաշխութեան գործին կ'նպաստէինք, այլ պաղութեան, վհատութեան եւ խորթացման։»

Այս եւ այսպիսի տիրացուական շատ առարկութեանց վրայ չ'արժէ էլ երկարաբանել, երբ պարզ են յետագայ իրողութիւնները։ Նախ՝ խիստ անհաստատ, փխրուն եւ քայքայուն հողի վրայ պիտի կանգնած լինի մի հաստատութիւն, որը կարող է երերալ եւ փլչիլ մի շնչով եւ դրչի մի հարուածով։ Երկրորդ՝ եթէ այդչափ խախուտ են եղել եւ քննադատութեան այդչափ ենթակայ Տաճկահայ գործավարների ձեռնարկութիւնները, հապա ոչ միայն «խիստ» եւ «կծու» քննադատութեանց են արժան եղել, այլ շատ աւելին։ Երրորդ՝ ես քննադատում էի եւ բանակռիւներ վարում դլխաւորապէս միայն երկու լրագրայ մէջ, այն է, Մանր-մեղ Էֆ-էֆ-ի եւ Մշակի, իսկ ընդդիմախօսներս ունէին իրանց ձեռքին մնացեալ ամբողջ եօթ-ութ Տաճկահայ եւ Ռուսահայ թերթեր, որոնք սիրով էին տպում միշտ նաեւ այն գրութիւնները, որոնք բնաւ վերաբերութիւն չ'ունենալով յարուցած խնդիրներին, ծայրէ 'ի ծայր պարունակում էին միայն եւ եթ հայհոյութիւններ, ուղղած սոսկ անձնանձնութեանս դէմ։

Ուրեմն՝ եթէ մենակ մի մարդ ես չէի վհատվում, հապա ինչ օգուտից եւ դարդակ «մարդիք» պիտի լինէին բաղմաթիւ հակառակորդներս, որոնք «կարող էին վհատիլ» իրանց վարած գործունէութեան մէջ։ Իսկ թէ խօսքը հասարակութեան վրայ է, որի շահերի եւ բարեաց պաշտպանութիւնն էր դէմ բոլոր բանակռիւներիս շարժառիթը եւ առարկան, այդ հասարակութիւնը ոչ միայն գժգոհ չէր ինձնից, այլ այնչափ գոհ եւ համամիտ, որ իր բացարձակ եւ բուռն համակրութեան նշաններով էր վարձատրում ամեն անգամ

նորա հետ բերանացի խօսած ժամանակը։ Եւ եթէ որեւէ գրութիւն որչափ եւ լոյէ «դժգոհութիւն» պատճառէր այդ պաշտելի հասարակութեան, հապա մինչեւ նա մի գրչից վիճաւող հասարակութիւն է, երբ չորս հազար տարուան արեան հեղեղատներից չ'վիճաւեց։

Զորրորդ՝ դէմ յանդիման արած քննադատութիւններս ոչ միայն կարող չէին փոխադարձ «պաղութիւն եւ խորթութիւն» յառաջ բերել, այլ ընդհակառակը՝ ուղղակի «էր, էաղէաբաց ֆոխանակոնիէ» եւ համերաշխոնիէ», որոնք պիտի ծնէին նորանից, որով երկու կողմի ազգայնոց առաջաւորները կարողանում էին միմիանց կողմը երես դարձնել եւ գէթ ինձ պարսաւելու համար միմիանց հետ խօսել ու բարեկամանալ։

Ուրեմն էլ որն է այստեղ «պաղութիւն-մաղութիւն», «վիճաւութիւն-մնատութիւն» ասված բանը։

Գանք հիմայ երրորդին։

---

3. Թէ «որեւէ մէկը իրաւունք չ'ունէր ինքնայորդոր որոշմամբ գալ Պոլիս եւ առանց ամբողջ Հայ ազգից արտօնագիր ունենալու, զբաղվիլ երկու կողմի Հայոց ներքին կենսական խնդիրներով....»

Այս առարկութիւնը ֆոյոլ եւ ֆոբոոլ օրգանների մէջ շատ կարդալուց էլ՝ զահլաներս գնաց, ուստի չ'զլանանք քիչ աւելի բաց խօսել այս մասին։ Ցիշեալ էֆոնտիկոյէն ապուշ դիտողութիւնները, բնական է՝, որ պիտի լինէին մի կարգ այն մարդկանց կողմից, որոնց համար վաղուց հետէ արդէն յատուկ մենաշնորհութիւն էր եղած Էջմիածնի եւ արդիւնաբեր ուսումնարանների հոգաբարձութեանց «շահերի պաշտպանութիւնը», ինչպէս եւ Վանայ, Էրզրումի առաջնորդների ու կսթուղիկոսական աթոռի Պոլսի ու միւս թեկնածուների հետ «ազգասիրական յարաբերութիւններ» պահպանելը։ Էջմիածնի ամեն անօրինութիւնը իրանց ձեռքը առած, ազգի տունը մի տեսակ լրբանոց էլին չինել դոքա իրանց անխիղճ կեղեքմանց համար, ուստի ոչ միայն Գէորգ Դ. ը թամբելով չէին կարող բաւականանալ, այլ եւս նորա ապագայ յաջորդացուների հետ եւս կ'աշխատէին «էլէ-էէլէ անել ու միլիոնուկէս Ռուսահայոց «օրինաւոր եւ աստուածընտիր ներկայացուցիչները» ցոյց տալ իրանց։ Ուստի, դոցանից մէկը Պետերբուրգ նստած, մի այլը Մոսկվա եւ քանիսն էլ Թիֆլիս, էլ քոլորովին իրանց «անբռնաբարելի իրաւունքներն» էին համարում՝ կառավարել եւ վճռել ազգի բաղդը իրանց շահերի եւ հաճոյից համաձայն։

Լէնց սոցա համար էր անհասկանալի եւ անմարսելի, հէնց սոցա քունն էր վրդում, «առանց իրանցից հարցնելու եւ արտօնագիր առնելու» իմ Պօլիս գալս։ Եւ այդ հինգ–վեց բաղտախնդիրների (Պ. Կարապետովի քրմապետական դահերէցութեամբ) համարումը իրանց «համազգային ներկայացուցչութեան» վրայ այնչափ հրապարակային է, որ այս տարուան Աբյոփանէ մէջ, թիւ 29, մի խմբագրական յօդուածով, յիշեալ թերթը յանուն Թոռոսեան հաղար թիֆլիսաբնակ ազգայինների «հանդիսաբար» ողջունում էր Թիֆլիսի ուսուցչական ժողովը, մինչդեռ նոյն թերթի մէջ — ինչպէս եւ Պօլսից իմ մասին գրված եւ յետադայ բոլոր չնորհալի գրութեանց — ամենայն խնամքով կ'կրկնվէր միշտ իմ՝ յանուն հայութեան, որեւէ ազգային խնդրի վրայ խօսելու իրաւունքին յաւակնելը իմ կողմից՝ «ինքնակոչութիւն է։» Մինչդեռ յայտնի է, որ յանուն «քառասուն հազարի» բացարձակապէս խօսողը Թոռոսեան կամաւոր ընթերցող ունէ կամ չունէ նոցա մէջ (4)։ Իսկ գալով ինձ, Ես բնաւ չեմ խօսած ոչ մի անգամ ոչ մի թուանշանների անունով, այլ սոսկ իմ սեփական համոզմանս, զգացմանս եւ անցեալիս վստահանալով։

Այդ անցեալը, ինչպէս գիտէք, հէնց դպրոցի նստարանից՝ ամբողջապէս ազգի յաւերժի մտածութեանց ու նորա այլ եւ այլ ծառայութեանց է նուիրած եղել, մեծամեծ անձնական զոհաբերութեանց գնով ունեցած ասպարէզիս ու շահերի վերաբերմամբ։

Ուրեմն, եթէ մեր ապահովութեան միակ միջոցը եւ գոյութեան խնդիրն անգամ վտանգի ենթարկելով, ձեռքից եկածը արել ենք եւ Երզրումի դաղթականութեան ժամանակ, եւ սովի, եւ այլ ճգնաժամերի, ինչպէս եւ մի տարուայ աշխատութեամբ Պետերբուրգի

---

(4) Բանը նորանումն է, որ յիշեալ լրագրի «խմբագրութիւնը» միայն մեզ չէ «զլանում» հրապարակային խօսքի եւ գործունէութեան իրաւունքը, այլ եւ տանն մեկին, ինչպէս օրինակ՝ հարցնում է նա, Աբյոփանէ թիւ 45ի մէջ, թէ «ո՞վ է իրաւունք տուել Մեղրէ թաղթակցին մեր հոգեւորականութեան վրայ խօսելու։» Արդարեւ, մի տ'բեւէ անպատկառ ապօրինածին, մի լրագրական խաչադող, մի խաբդար Յովհաննէսեանց միայն ընդունակ է այսչափ հրապարակային անդդամութեան հասնել։ Մեկը հարցնէ՝ հապա ո՞ր իրաւունքով կամ շարժառիթով յառաջ է եկած նա ինքը Հայ քահանաների եւ վարդապետների փաստաբանը կանգնելու։ Որեւէ մի թոկից փախած լկտված կինտս իւր թէ «կրոնական զգացում» ունէ կամ թէ «եկեղեցու շահերի գիտակցութիւն»։ շատ լաւ գիտէ մինչդեռ ամենոք թէ ի'նչ խաբեբայական նպատակների մէջ է կայանում նորա եւ նորա հոգեակալ պատրոնների այդ «գիտակցութիւնը»։

Ռուս մամուլի մէջ Հայոց չահերին արդիւնաւոր պրոպագանդա անելու ջանքերով, եթէ մենք էլ իրաւունք չունենանք, Պոլիս լինելով կամ այլուր, ազգային խնդիրների վրայ խօսելու, հապա ոմ ունէ. Գ. Գ. Կար. Եղովի, Աբգար Յովհաննէսեանի եւ ընկ. նման ոգեւորիստները, որոնք «Էջմիածին», «Լրօն», «Եկեղեցի», «Ազգութիւն» եւ այլ այսպիսի նուիրական խնդիրներ գէթ խաղալիք եւ չահագործութեան աղբիւր են դարձրած իրանց համար։ Հապա այսպիսի անարգ բաղտախնդիրներ իրաւունք ունեն միայն «յանուն հայութեան» խօսելու, այն խնդիր հայութեան, որի անունը եւ արիւնաքամ վերքերը սոսկ իրանց անյագուրդ ագահութիւնը գոհացնելու միջոց են շինած, ինչպէս անսիրտ վամպիրներ, նենդ եւ մարած խղճի տէր վերջին դարաչիներ . . . Դոքա իրաւունք ունեն միայն «յանուն հայութեան» խօսելու, այդ ամօթաղուրկ լիրբերը։ Բայց որչափ ծայրայեղ անկման են հասցրել «ազգային» ասված սուրբ գործունէութեան պատիւը այդ հրէշաւոր էակները. Ռուսահայ գրականութեան մէջ Լրաբերական պոծաբնիւ-Ինը առաջին անգամ մտցնողը դոքա են եղել, վարձովի մարդիկ բռնելով Նաղարեանցի գերեզմանի եւ ստուերի վրայ անգամ ցեխ դցելու համար եւ ամեն մի մեռած ու կենդանի գործիչներին՝ պժգալի ու անպատիւ դրութիւններով արատաւորելու։

Այդ երկու-երեք մշտապատրաստ պոծաբնիներէ (թուլումբաչի, ընկած վարք ունեցող) անունները եւ գործերը արդէն ձեզ յայտնի են. մէկը դոցանից, ծխական դպրոցից մի «վարժապետապայել սիրուն արարքի» համար, քաղաքավարի վայտակոծութեամբ ճանապարհ դրված (ինչպէս ասում են չար լեզուները) Հաւլաբարցի սիրացու Յարութիւնեանցն է (Յարոյ մականուանվող)։ Երեք ամսուան ընթացքում երկու անգամ բիճոյական յանձնարարութիւններով Պոլիս ուղակված իրան վարձող պատրոնների կողմից, յայտ ու աշկարայ իր սրհեան էր վարում այստեղ իր անբաժան ընկեր Գ. Հ. Խիկաչեանի հետ (ազգային երեւելիոխան . . .), ամեն տեսակ ցեխոտ բաներ տարածելով Գ. Գրիգոր Արծրունու, Գործէ խմբագրի եւ ինձ վրայ (1)։

---

(1) Թէ ինչ տեսակ բարոյաղուրկ արբանեակեր են գործ ածում Գ. Գ. Կար. Եղով, Յովհան. եւ ընկ. կարելի է տեսնել Մոսկ մէջ տիրացու Յարոյի արած մի հանդիսաւոր յայտարարութիւնից, որի մէջ «ինքնակոչ» էր հռչակում ամեն մի Ռուսահայ, որը Պոլիս է գալիս ազգային գործերով զբաղվելու առանց իր պատրոնների կաւասը լինելու։ Այսպիսիներն են Արծրունի խմբագրի հետ այդ թերթի մէջ «ակզբունքներ» քարոզողը եւ «Եկեղեցու» ու «Աստուծոյ չահերը» պաշտպանողը . . .

Ահա, աղնիւ բարեկամ, թէ ինչ տիղմի մէջ է թաթախվել Ռուսահայ այն մուտաղ դրականութիւնը, որի համար այնչափ սիրտ եւ հոգի են մաշել Արովեաններ, Նազարեանց եւ Նալբանդեանց. այդ մարդկանց սկսած վեհ գործը պոֆոբինէրի ղբաղմունք է դառել հիմայ։ Այսչափ ասպականիչ աղդեցութիւն է ունեցել Պ. Կար. Եղոյի խումբը Ռուսահայոց դաստիարակութեան առսարէզի վրայ, որի մէջ խեղճ Հայ մանուկների համար վարժապետները, խրախոյս գտնելով անբարոյականացող պատրոնների կողմից, դառել են մի մի սրիկայ եւ քահանա։ Ո՛, ժամանակ...։

Բայց որն է աւելի մեծ լրբութիւնը. իբր թէ դոքա էլ այս տեղի աղդայնոց շահերին եւ «պատուոյ խնդրին» հետամուտ մարդիկ են. ըստ որում, օգուտ քաղելով իմ արած աղատ ու անկեղծ քննադատութեանց դործած մի քանի ծանր տպաւորութիւնից, ձրի համարում վատաբկելու լաւ առիթ են գտել իրանց համար. ուստի՝ վատաբար կեղծելով ու շոյելով ամեն ուրեք Պոլսի մէջ, պարսաւելով եւ դատապարտելով խստութեամբ յայտնած իմ մտքերը, ջանադիր են նպաստաւոր պրօպաղանդա կատարելու իրանց վարձած «աստուածընտիր» պատրոնների մուտ ու խարդախ նպատակների համար։ Բայց բարեբաղդաբար խիստ դիւրաւ դնահատվելով սրատես Տաճկահայ աղդայիններից, հաղիւ մի շաբաթ ժպտալուց յետ, մերկապարանոց եղած, խայտառակութեամբ մերժվեցան սոնն պատուաւոր շրջաններից, ապատանելով դէթ փէշթիմալի տակ գլուխը ծածկած մի ջաղուբաղ բժիշկի անանուն օդնութեան... Թող պատժվեն սուտ սրտացաւները եւ Գիկորդիլոսի արտասուք թափող պատժարկիները, որոնք լքտի կանանց լրբութեամբ ծիծաղում են եւ հաճերաշխութիւն տալած բառի վրայ, եւ գաղտագր, եւ անկեղծ աչքաթերութիւն, եւ սմեն այսպիսի սուրբ ու փրկարար հնչումների։ Դոցա համար մի նպատակ եւ մի միջոց կայ միայն. սմեն կերոյ վատութիւններով տապալել իրանց դէմ եկող խոչնդոտները, որ յետոյ անարդել ու անխուսով պարեն Էջմիածնի բարոյական եւ նիւթական կործանման վրայ, արհամարելով՝ եւ հասարակաց ատելութիւն, եւ ժողովրդի սրտունջ, եւ ասպադայի բողոք, եւ պատմութեան դատանիք։ Այսպիսիների համար է դէթ «ինքնակոչ ներկայացուցչութիւն» Պոլսում ունեցած իմ երկամեայ տաժանելի ու փչոտ գործունէութիւնը։

Երկու խօսք էլ վերջին առարկութեան մասին։

---

4. Թէ «ամեն մարդու համար եւս դիւրին էր՝ դալ Պօլիս նստիլ ու ուղածը գրել, այլ լուրջ գործ տեսնողը պիտի գնար Հայաստան ու այն տեղ գործէր, ինչպէս գործեց Գարիբալդին . . . »

Այսպէս խօսողները այն մարդիկ են գլխաւորապէս, որոնք 60 աստի կեանք վարելով աշխարհում, սոմենամեծ «ազգասիրութիւնը» որ արած են, այդ եղել է՝ Թիֆլիսի բուլվարներում մերթ ընդ մերթ Հայերէն խօսելու «պատիւը։» Իսկ դուք քաջ գիտէք՝ Հայերիս լաքէյական տրկաբարոյութիւնը, ըստ որում կարեւորութիւն չեն տալ այն մարդկանց, որոնք տասնեակ հատորներ են գրել Հայերէն, այլ կ'հիանան, երբ վատացած եւ այլասերված «մեծի» մէկը «արժան կ'համարէ» երբէմն Հայերէն խօսելու։ Այնպէս որ՝ Պ. Դերասիմ Նզովը խիստ լաւ է հասկացել Հայերիս (մանաւանդ Տաճկահայոց) տկար կողմը, որոյ համաձայն քացայայտ կերպով քնաւ չ'խոստովանելով եւ ցոյց չ'տալով իր «Հայութիւնը», երբէմն միայն ձեռքի տակից եւ ծածկագրերով սորան-նորան նամակներ կ'գրէ ու իր «բռնադատեալ ազգասիրական գաղտնապահութեան» վրայ կ'ցաւէ։ Ամենքս էլ մինչդեռ լաւ գիտենք, որ այսպիսի «բռնադատութեան» ոչինչ շարժառիթ չ'կայ, բայց Պ. Նզովը եւս շատ լաւ գիտէ, որ այսպիսի օրինաւորութիւններից էլ աւելի գործնական եւ ձեռնտու միջոց չի կարելի գտնել՝ համ իր ասալարէզի մէջ հաճելի լինելու ու յառաջանալու համար, հտմ էլ լաքէյաբարոյ Հայերիս մէջ «ազգասէրի» տեղ անցնելու։ Ինչեւիցէ, խօսքը մէկի կամ երկուսի վրայ չէ. Պ. Նզովը մի քանի օրինակներից դէթ մինն է. մեր ասելիքը այն է, որ պատրաստ եւ դիւրին դատավճիռներ տվողները, մեր կամ այլ Հայ աշխատաւորների գործունէութեան, հէնց այսպիսի մարդիկ են՝ էլ չեմ խօսում հարկաւ, դրականական պատարնիների մասին, որոնց յատուկ պաշտօնը սոսկ ցեխ եւ մուր քսելն է՝ ազգային ասալարէզում քիչ թէ շատ անկեղծութեամբ գործողների վրայ։

Եթէ «Պօլիս դալը եւ ուղածը գրելը» այդչափ դիւրին բան է եղել, հապա ինչու, առանց Պօլիս դալու, նոյն իսկ իրանց տեղերը փափուկ նստած, նոքա ոչինչ չեն գրում հրատարակում անլոյծ դատված այնչափ կենսական ազգային խնդիրների մասին. մանաւանդ, որ իրանք ինչպէս «մասնագէտներ», շատ աւելի «ձեռնհաս» կարող են լինել, քանթէ որեւէ մի «ինքնաբոյս դրագէտ։»

Բայց, ոչ. այսպիսի բացասական դատավճիռ նոքա կ'տան միշտ միայն ուրիշների ջանքերը երկու-բառով «անպէտք» հրատարակելու համար, իսկ երբ իրանք կ'դան Պօլիս, ոչ միայն անկեղծաբար ոչ

մի դիտողութիւն չ'են անիլ, այլ ամեն ինչ իրանց համողմանց եւ տրամադրութեան դէմ խօսելով, իրանց բաղտախնդրական նպատակների համար, գէթ ձրի ժողովրդականութիւն վաստակելու յետեւից կ'ընկնեն։

Մի մարդ, որը իր ուժերը ներածին չափ, կարող է ծառայել ազգին միայն գրիչ դործ ածելով, հետաքրքիր է իմանալ՝ նորան ինչ ասպարէզ կայ Հայաստանում, ուր չէ կարող ոչ վարժապետութեան դործով զբաղվելու — այն պարզ պատճառաւ, որ չ'դիտէ այդ դործը — ոչ արհեստով պարապվելու։ Գալով «Գարիբալդու նման դործելուն...», ողորմելի պոռոտախօսներ եւ բանտեր նետելու չափ խաբեբաներ... իբր թէ դուք էլ յիրաւի այդպիսի դործերին էք հետամուտ... Եթէ հէնց մի քիչ հետաքրքիր լինէիք եւ սրտի առնէիք հայրենիքին վերաբերեալ այդպիսի դործեր — թէպէտ աննպատակ եւ ծիծաղելի — նախ՝ դուք հէնց մի քիչ պատացաւ կ'լինէիք այն մարդկանց կրած վիճակին, որոնց վրայ նաեւ Գարիբալդու չափ յոյսեր էք կարողանում դնել։ Եթէ այդպիսի անձնազոհական ձեռնարկութեանց որեւէ համակրութիւն յայտնելու առաքինութեան նշոյլ կայ ձեր մէջ, հապա ինչու մի օր էլ դուք ձեր դայրոյթը չ'յայտնեցիք այն Եղկէ վաստերի դէմ, որոնք, մինչեւ իմ Պոլիս հասնելս, պաշարեցին ինձ ամենկողմեան լարերով եւ մատնութիւններով։ Տակաւ առաջ — Պետերբուրգից իրանց համարհեստ բարեկամներին դրած նամակների մէջ — ինձ ամբաստանեցին, իբր թէ ես պիտի «Հայաստան դնում ապստամբութեան դրօշակը պարզելու։» Ռուսաց առաջ ցոյց տուան իբր «չարադրգիտ Հայ քարոզիչ», իսկ Հայոց առաջ «իբր Ռուսաց դործիք։» Այս անտանելի կայութիւնս հարիւր անդամ լսելով, հապա ինչու մի օր էլ բողոք չ'բարձաք այսպիսի դժոխային մեքենայութեանց դէմ այն մարդու վերաբերմամբ, որի վերայ այնչափ համարում էք ցոյց տալիս, որ նաեւ Գարիբալդու չափ ժողովրդական եւ անձնազոհ հայրենասէրի անուն էք ընդունում... Բայց միթէ ձեզ պէս աղբերի բերանին վայել բան է՝ հայրենի՛, գործո՛ւ եւ հայրենաւոր բառերի դործածութիւնը։ Ձեր հայրենասիրութիւնը կարող է հանիլ միայն մինչեւ չան պէս քծնելը օտարի առաջ, իսկ խնդա Հայերի մօտ մեծ մեծ բաներ բրդելը։ Եւ այնչափ քաջ էք դուք, որ մի օր էլ չ'տեսանք, որ Հայի պատիւը օտար լրագիրների մէջ անդամ վիրաւորված ժամանակ, գէթ ծածկանունով ծպտուալ դրիչ առնէիք ու ձեր սեփական արժանապատուութիւնը պաշտպանէիք։ Ծածկանունով անդամ Հայ երեւալու համար, արիութիւն չ'ունէք դուք, հիմայ վեր

էք կացել «Հայոց Գարիբալդիներ» էք ստեղծում ձեր լեսկած երեւակայութեան մէջ։

Թող չ'զարմանցնէ ձեզ, թանկագին բարեկամ, իմ այսպիսի վերդովմունքը յեչեալ կարգի մարդկանց առարկութեան դէմ։ Ախր դոքա համալսարանական մարդիկ են անուանուում իրանց. ախր դոքա ոչ ոքին չ'են հաւանուում, բացի իրանցից. ախր դոքա իրանց են կարծուում միայն «ամենն լաւն հասկացող Հայ։» Բայց դոցա «հասկացողութիւնը» Հայութեան մէջ այնչափ է, որ առանց հետաքրքրվելու նաեւ թէ՝ Հայաստանի հողի վրայ կանգնած Հայը իր երկրի եւ սեփական տունուն անդամ չ'գիտէ, մեր ծաղրածուները «Գարիբալդիի դերի» վրայ են մտածում եւ Հայաստանի մէջ «լրջաբար գործելու» մասին են յանդգնում խօսել։ Եթէ այդչափ դիւրին բան է այդ, էլ ինչ են ձեռքերը ծալած նստել. ինչու իրանք չ'են գնում, երբ դորա մէջ «լուրջ գործ» են տեսնում։

Մեր աղքի բանը, բարեկամ, նման է ճչդիւ Պարսից մի ժամանակվայ զօրքերի քաջութեան. ամեն մէկը նոցանից յոխորտալով կ'խօսէր իր դէմը եկող թշնամուն «ջարդուփշուր» անելու վրայ, բայց հէնց որ բանը իրականութեան կ'հասնէր, ամենքն էլ մկան ծակերը մտած, կ'ասէին, լեղունները փորը ընկած. «Թող առաջ Մէշէդի-Մամէդը գնայ, յետոյ ես։» Մենք նման ենք այդ «քաջաղէն» Մէշէդիներին, այն տարբերութեամբ միայն, որ մեզնից առաջ ընկնող մէկին ոչ թէ չ'են հետեւիլ, այլ յետեւից քարեր թափելով, կ'ուզեն կործանել նորան...։

Վերը մէջ բերած առարկութեանց թւում մուռացայ յիշել եւս մի բաւական ստէպ կրկնվողը նոյն ազիերիստ «աղդասէրների» կողմից. դա նա է թէ՝ ես պաղարիւնութեամբ չեմ կարող խօսել. թէ՝ կ'հայհոյեմ. թէ՝ հրապարակախօսական միջոցով ժողովրդի վրայ աղել ուզողը պէտք է մեղմութեամբ եւ չոյելով խօսէ, այլ ոչ ոմբակոծելով եւ ամենքի ջղերը տակնուվրայ անելով եւ այլն։

Նախ՝ գիտէք թէ ովքեր են այսպէս խօսողները. — նոքա, որոնք դրիչ կ'բռնեն միայն վարձով կամ անձնասէր նպատակով սորա-նորա վրայ անձնական կեղտոտ բաներ գրելու համար — հարկաւ միշտ ծածկանունի տակ. — երկրորդ՝ այն մարդիկ են, որոնք հազար ու մէկ ցնխոտ սարքներով ծածկված — ի հարկէ միշտ «յանուն աղդասիրութեան» — հրապարակային մերկացումներից աւելի կ'սարսեն, քան

թէ դեռևի տակից յանկարծ դուրս եկած եօթը պոչաւոր սատանայից, Երրորդ՝ նոքա են, որոնք բոլորովին անտարբեր լինելով ազգային ամենայաւելին, ոչ իրանք են կարողանում յուզել օրուան կարևոր եւ ծանր խնդիրները, ոչ էլ կ'ուզեն, որ ուրիշները անեն այդ։

Առաջին եւ երկրորդ կարգի լրագրական եւ հասարակային պաժարները(2) նման են ճիշդ այն կողակ քահանային, որը կանուխ առաւօտից մի չոմֆ օղի կոնծած, կ'գայ եկեղեցին ու պատարագը մատուցանելուց յետ կրօնի եւ բարոյականութեան վրայ այսպէս կ'խօսէ։» գիտէք, չան ծնունդներ, թէ ինչ է ասում մեր Ամենաբարի Փրկիչը։ Նա ասում է՝ մի հայհոյել, մի պրպարտել եւ այլն։ լսեցէք հիմայ, չան որդիք։ իմացէք այսուհետեւ, որ եթէ մի միանց հայհոյելու լինէք, ես ձեր։։։» Ահա մեր «համեստախօսների» պատկերը։ Ամբողջ տասներկու տարի դուք մարանչել էք, մերկայրել ու դատապարտել այդ «համեստախօսների» դրսեւոր գործունէութիւնը, ուստի դուք չատ աւելի լաւ կարող էք վկայել այս, քանի թէ ես, զինակցելով ձեզ դէմ ձեր հասարակային տապարէդի կէսից 'ի վեր։

Ունենալով իր հանդէպ այսպիսիների վաղանդ եւ ոգեւորված բուռն ազգային զգայմամբ, ինչ ընթացք պիտի ընտրէ արդեօք մի հրապարակախօս, խօսելով հասարակային այլ եւ այլ լուրջ կարեւոր վրայ։ Մինթ ամենքի հետ էլ միեւնոյն լեզուով եւ ձեւով պիտի խօսէ. եթէ այդպէս վարվի, եթէ ամեն լուսանքների դէմ միայն «մարգարէական վեհ ներշնչմամբ» ու լրջութեամբ խօսէ, հաւատացէք, որ հում հում կ'ուտեն նորա միսը, հազար կողմից հազար անձնական յարձակումներ ու կինտոյութիւններ անելով։ Հարկաւ, ուրիշ հարց է եթէ մեզ մօտ հասարակաց կարծիք եւ դատաստան լինէր։ այդ ժամանակ անձնականութեան դէմ խուժողները, ոչ միայն չէին կարող գործին վնասել, այլ եւս կ'նպաստէին։ բայց երբ մեր հասարակութիւնը այնչափ է հատած դաղափարաց համերաշխութեան, որ սկանդալներով միշտ աւելի է հետաքրքիր, քան լուսաւոր խնդիրներով, կարելի է արդեօք այսպիսի պայմանների մէջ «առաքելական համեստութիւն» պահպանել։ Ահա մեր աչքի առաջ Նազարեանցի եւ Պ. Գրիգոր Արծրունու նման հրապարակախօսներ։ որն է եղել եւ որն է

---

(2) Ինչպէս օրինակ՝ Յարոններ, Ինֆեքչեաններ, եւ Աբդ-էն-Ռէֆ Պօլսից թղթակցող. փեշթիմալով ծածկված 58 տարեկան բժիշկներ, որոնք այս տեղ խայտառակված, աչքերը տնկել են հիմայ Լուսաւորչայոց վրայ, որ դնան այն տեղ՝ առանց դիպլոմի «բժշկական հրաշքներ» գործեն։

հոգա քաշածը. փառք Աստուծոյ, Պ. Շահ-Ազիզի Զայն Հրապարակախոսը մեռնելի մի գիրք չէ, որ մոռանանք թէ՝ որչափ դիւրիւն բան է մեզ մօտ, որուէ մի դրականական պաժարնիի համար, գրչի մի հարուածով իսպառ ցեխը թափ-տալ կեանքը աղդի բարեաց համար զոհած ամէն մի երախտաչատ վաստակաւորի՝ ամբողջ գործունէութիւնը։

Ուշադրութեան առնելով այս ամէնը, պէտք է միշտ աւելի հաստատակրել Մանը-Դէ Էֆէնդի արդիւնաւոր խմբագիր Պ. Կարապետ Փանոսեանի (3) եւ մասամբ էլ հանդուցեալ Միք. Նալբանդեանցի բնուած ընթացքին, քանթէ Նաղարեանցի։ Վերոյիշեալ երկու կողմի հրապարակախօսների նման՝ մի ձեռքով պէտք է պաշտպանել կեղեքվող ժողովրդի շահերը եւ վերկութեան հարցը, իսկ միւս ձեռքով կրակ ու չանթ տեղացնել կեղծախօս եւ ենդգամիտ հակառակորդների գլխին։ Ցա է միակ ելքը՝ սկսած գործը յառաջ քշելու եւ ձայնը կոկորդի մէջ խեղդված չ'թողելու համար... Իսկ. ինչ կ'վերաբերվի «ժողովրդի վրայ աղդելու» հարցին, որին իբր թէ «մտրակողական ձեւով ոչինչ չի կարելի անել», դա այնչափ անհեթեթ մի առարկութիւն է, որ այդ մտրակը բնաւ խեղճ ժողովրդին չէ վերաբերվում, այլ – ինչպէս արդէն առեցինք, —նորա շահերի անունով գէթ իրանց անձնականին ծառայող վատերին։ Եւ Հայ ժողովրդի բնաղդական դնահատութիւնը ու արդարադատութիւնը այնչափ մեծ է եւ արտաշարժ, որ մեր սեփական փորձով ենք բարեբաղդութիւն ունեցել բիւր շնորհակալեաց արտայայտութիւն տեսնել ժողովրդի մէջ գտնվող մարդիկներից, մինչեւ նոյն ժամանակ, երբ խաբեբայ դրչաւորները ամէն կողմից դժգոհութեան բողոք եւ աղաղակ են բարձրացրել մեր դրածների դէմ. սորա օրինակները տեսել ենք եւ Ռուսաստան եղած ժամանակ եւ այստեղ։

Այս բոլոր սլարագաների հետ միատեղ չ'սլիտի մոռացած եւս մի տարաբաղդ հանդամանք՝ այն է, մեր հասարակութեան մեծագոյն մասի անտարբերութիւնը դէպի ամէն կենսական խնդիրներ, նոյն իսկ իրան վերաբերվող։ Եսականութիւնը հասել է Հայի մէջ այն

---

(3) Յիշատակելի է այստեղ Պ. Փանոսեանի պատասխանը իր հակառակորդներին. «լաւ, համաձայն եմ, որ նախատական շատ բաներ գործ կ'ածեմ; բայց երբ յուզած խնդրի եւ արտայայտած մտքերի լրջութիւնը կ'ճանաչէք, ենթադրեցէք դուք էլ, որ այդ մտքերը մի արժէքաւոր մետաղ է, որ աղրի մէջ կը գտնէք. եթէ այդ աղրը իմ հայհոյանքներս են, մետաղն էլ մնացած բառերով արտայայտածներն են. սրբեցէք աղրից, միթէ նոյն մետաղը չի՞ մնալ։»

ծայրայեղութեան, որ յանուն ընդհանուր ազգային ցաւերի խօսած ժամանակ, նա չի կարող քնաւ ընդունել, որ այդ ցաւերի մէջ մաս ունի նոյնպէս եւ ինքը, այլ Հայը կ'ղգայ գէթ այն դէպքում, երբ յականէ յանուանէ կ'տաս նորա անունը՝ «տօ, անպիտան Մարկոս. տօ անարժան Կիրակոս. տօ, ստախօս Պետրոս» կանչելով։ Ուրեմն ինչ միջոցին պիտի դիմէ հրապարակախօսը, իր սրտին մօտիկ հանրօգուտ մի խնդրի վրայ հասարակութեան ուշադրութիւնը դարձնելու համար. հարկաւ, նա ստիպված է դիմել մի որեւէ նպատակայարմար արուեստական միջոցին։ Այդ միջոցը միայն նա է, որ նախ՝ գրութիւնը խիստ կորովով եւ ղգայնամբ գրված լինի, կարդացողի սրտի վրայ ազդելու համար. երկրորդ՝ երկու–երեք հազար խօսքերով յայտնած գաղափարը պարարել երկու–երեք այնպիսի բառերով, որոնք կամայ ակամայ առիթ դառնան ամբողջ գրուածքի ընթերցման։ (Թէպէտ եւ Աբյոփանէ թղթակից Պ. Տ. Փ. հայիւ տալով իմ երկամեայ գրականական գործունէութեան վրայ, հարկաւոր համարեց, գոնէ կէս միլիոն ուրիշ բառերի մէջ, գէթ մի երկու տասնեակ նախատական բառեր ցոյց տալ, հարիւրն էլ գրպանից աւելացնելով։ Այսպիսի «բարոյական ուղղութեամբ եւ ճշմարտութեամբ» է վարում երեւի յիշեալ բժիշկ թղթակիցը նոյնպէս իր «արուեստը եւ ազգային գործունէութիւնը» Պօլսում։ Իսկ գալով Աբյոփանէն, այդպիսի չարլատանական վարմունք արդէն նորա բուն պրոգրամն է «Էջմիածնի չահերի պաշտպանութեամբ» ծածկված . . . .)

Անցեալ տարի Մանչեստրի Էֆէսբէ մէջ վարած բանակռիւներիս մէջ ճշգրութեամբ հետեւած եմ այդ ընթացքին, հազար ու մէկ քաղաքական լուրերով գլուխները լցրած Պօլսի ազգայիններին ուշադրութիւնը ներքին այլ եւ այլ խնդիրների վրայ դարձնելու համար։ Երկու–երեք կծու բառերը խմբագրելու ժամանակ, լրագրական պաժարները, անդիտակցաբար մեծապէս նպաստել են լուրջ յօդուածների ծայրէ՝ի ծայր ընթերցման, որոյ համար ընդհանրապէս շատ էլ գլուխ չ'ունեն այս տեղի մեր լրատու արիւնակիցները։ Միայն, տարակոյս չ'կայ, որ այսպիսի միջոցներին դիմողը պիտի կռնակը պատրաստ պահէ ամենն տեսակ հայհոյանքների եւ վատութեանց համար. հարկաւ, այդպէս է. բայց առանց որեւէ անձնական զոհաբերութեան ինչ կարող է լինել . . . (1)

---

(1) Իսկ եթէ յիշեալ կծու բառերը կ'վերաբերվեն մի որեւէ անհատականութիւն ցնցելու եւ իր ազդին աւելի արդիւնաւոր անելու նպատակին, այդ նոյն-

Ահա այս պարագաների մէջ եւ այս ընթացքով է անցել, յարգի բարեկամ, մեր երկաւոնեայ գործունէութիւնը այստեղ, որի արդեանց վրայ կ'ուզեմ գէթ երկու խօսքով հաշիւ տալ ձեզ եւ բոլոր համակիրներին։

* * *

Գալով Գալիս, ունենալով նախատրոշ նպատակ եւ պրոգրամ, ուրեմն պարզ էր, որ չ'պիտի պարապվէի՝ ոչ Բոսֆորի եւ Դարդանելի նկարագրութիւններով, ոչ էլ խնջոյքների մէջ եւ «լուսատու» կանանց առաջ փոխադարձ կոմպլիմենտներ շռայլելով, այլ ոտս Գալիս դրածին պէս, հետամուտ պիտի լինէի յետագայ հարցերին։

Ո՞ր տեղ են լինում Գալի ազգային ժողովի նիստերը։ Որո՞նք են նորա օրակարգի մէջ մտած–եղած ու ներկայումս նշանակված հարցերը։ Ի՞նչ խնդիրներով եւ ինչպէս են պարապվում այս տեղի ազգապետները, երբ Ռուսահայոց մտքերը եւ տրամադրութիւնը այն ինչ խընդիրների վրայ են։ Ո՞ւր է Միացեալ Ընկերութեան գրասենեակը։ Ո՞րն է նորա տնօրէն ժողովի պրոգրամը, որի մասին ոչինչ չեն ասել մեզ (մանաւանդ որ Պ. Գրիգոր Արծրունու աջակցութեամբ միակ աշխատողները լինելով Ռուսահայոց մէջ այդ ընկերութեան օգտին, պարտաւոր էինք գէթ մասնաւոր կերպով մի բան իմանալ)։ Ի՞նչպէս է վերաբերվել յիշեալ ընկերութիւնը Հայաստանի մէջ ունեցած իր գործունէութեան։ Ի՞նչ միջոցներով է երաշխաւորած նա ժողովրդի համակրութիւնը եւ վստահութիւնը իր վրայ։ Ինչու՞ զատ զատ եւ միմիանց վրայ գէթ բերան ծռելով են աշխատում կանանց ընկերութիւնները։ Ո՞րն է նոցա պրոգրամը եւ գործավարութեան եղանակը։ Որո՞նք են նոցա ղեկավարները եւ որչափ են ձեռնհաս իրանց ստանձնած գործին։ Ի՞նչ է շինում Սուվելոց Մասնաժողովը։ Ինչ կապ եւ յարակցութիւն կայ նորա ու Միացեալ Ընկերութեան մէջ։ Ինչու՞ նա հաշիւ չէ տալիս, երբ Հայաստանի սովը վերջացած են ասում։ Գանի՞ Հայ լրագիր կայ այս տեղ։ որն է նոցա ուղղութիւնը եւ ինչպէս են վերաբերվում նոքա Հայաստանի ուսումնասիրութեան — գոնէ օրինաւոր թղթակցութեանց միջոցաւ — երբ աշխարհի ամեն ծայրի Հայերի սիրտը եւ միտքը մեր իրական եւ կենդանի հայրենիքը ճանաչելու վրայ

չափ ինաբակար էյարձակվողի շահերին եւ անձին, որչափ օգտաւէտ է ընդհանրութեան գործին, աւելի ազգօգուտ նախանձախնդրութիւն յառաջ բերելով պնդիչի մարդկանց մէջ։ օրինակ, ինչպէս Պ. Յով. Այվազովսկի եւ այլն։

է եւ երբ այս գործի մէջ ամենքից մեծ դեր կատարողը պարբերական մամուլը կարող է լինել։ Ո՞ր աստիճան են հետամուտ մամուլը եւ գործիչները բեռնակրութեան կենսական հարցին, նոյնպէս Ռուսահայոց, Պարսկահայոց, Բուլգարիայի, Բոլգարիայի եւ Տրանսիլվանիայի Հայոց կեանքին, նիւթական եւ բարոյական զարգացման, ազգային դիտակցութեան, յառաջադիմութեան, եռանդին, ուղղութեան եւ այլն։ Այս ամենից յետ միայն պիտի հետաքրքիր լինէի հետեւեալ հարցերին, դէթ ինչպէս երկրորդական եւ երրորդական կարեւորութիւն ունեցողներին պանարմենիզմական շահերի վերաբերմամբ։ Այդ հարցերը սոքա էին։

Ի՞նչպէս է Պոլսի հայկական դաղթականութեան դրութիւնը։ Ո՞րչափ է նորա բաղմանալու եւ յառաջադիմելու աստիճանը։ Ո՞րն է նորա ուսումնարանների յառաջադիմութիւնը, պրոգրամը, դործնական արդիւնքը, վարժապետների ձեռնհասութիւնը։ Ի՞նչ զանազանութիւն կայ Հայոց եւ Յունաց ունեցած ուղղութեան եւ յառաջադիմութեան մէջ, երբ Հայոց լնակութեան թիւը Յոյներից դերակշռող է։ Ի՞նչ դեր ունեն Հայերը եւ Յոյները Թիւրքիայի մայրաքաղաքի տնտեսական, մտաւոր եւ բարոյական անօրինութեան ու շարժման մէջ։ Որո՞նք են այստեղի Հայոց հանրական եւ բարեդործական հաստատութիւնները, որոնց նիւթական կարեւոր վրայ անհրաժեշտ է հրաւիրել Ռուսահայոց ուշադրութիւնը եւ այլն եւ այլն։

Այս հարցերը պիտի զբաղեցնէին, կարծում ենք, մի մարդուն, որը չէր եկած Պոլիս ոչ կաթուղիկոսական թեկնածութեան մութ դործերով պարապվելու, ոչ անձնական ասպարէզ փնտուելու, ոչ ձրի անուն վաստակելու եւ ոչ էլ որեւէ մի լրագրին վճարեալ թղթակցութեան պաշտօն ստանձնելու։ Եթէ այդ լինէր մեր փափագը, յիմարութեան ծայրը պիտի հասած լինէինք, որ մեր մինչեւ հիմայ ունեցած նախանձելի ասպարէզը ընդհատելով, վեր կենայինք՝ դայինք՝ հարիւրաւոր թափառաշրջիկ թղթակիցների «պատիւը վայելելու։» Այո, մեզ պէտք էր ունենալ Ռուս լրագրին թղթակցութիւն անել, մեր նիւթական ապահովութիւնը երաշխաւորելու համար, իսկ ինչ կ'վերաբերվի Հայ թերթերին, նոքա մեզ համար միջոց պիտի լինէին դէթ մեր հանդիսային պրոպագանդան անելու համար։

Իսկ թէ «ինչ իրաւունքով, որի արտօնութեամբ ու հրամանաւ» էի ստանձնած ես այդ դործը, դորա պատասխան ունէի եւ ունեմ հետեւեալը։ — հապա «որի իրաւունքով եւ արտօնութեամբ» եմ ձեռնարկել ինքնաբերաբար եւ ինքնօգնութեամբ Հայերէն լեզվի ու-

սումնասիրութեան դեռ գիմնազիայի երրորդ դասարանից, երբ ոչ կենսական պէտք ունէի անձնական ասպարէզիս համար Հայերէն սովորելու, ոչ վարչական ստիպմունք եւ ոչ էլ գլխիս կանգնած հայկաբան։ Հապա «որի արտօնութեամբ եւ իրաւունքով» եմ պարապված, դեռ ինչպէս գիմնազիստ, աղգային կեանքի ուսումնասիրութեամբ, երբ դորան ոչինչ պէտք չ'ունէի, ոչ գիմնազիական պարտաւորութեանց համար եւ ոչ էլ ապագայ պաշտօնավարութեանց։ Հապա «որի հրամանաւ եւ արտօնութեամբ» նոյն ուղղութեան մէջ կ'աշխատէի նոյն իսկ զինուորական դպրոցում եւս, երբ այդտեղ ոչ միայն այպանելի էր աղգային ուղղութեան հետամուտ լինելը, այլ եւս արգիլեալ։ Հապա «որի հրամանաւ եւ արտօնութեամբ» դպրոցից ելնելուց յետ շարունակած եմ ամեն եռանդով մեր արդի գրականութեան նուիրվիլ, հրապարակախօսական ասպարէզը լցնիլ եւ պատերազմի ռումբներն էլ մոռանալով, եւ հարիւր ու մէկ պաշտօնական արգելքներն էլ, եւ անձնական բոլոր շահերս էլ։ Հապա «որի հրամանաւ եւ արտօնութեամբ» եմ վտանգաբեր ընդդիմադրութիւններ սրել այլ եւ աղգանենդ Հայ եւ օտար բարձրագիր պաշտօնեաներին, Էրզրումի գաղթականական հոսանքը կասեցնելու համար, երբ ոչ մի պարագայ չէր ներում ինձ այդպիսի ոչ-օֆիցերական գործերին միջամտելու։ Հապա «որի հրամանաւ եւ արտօնութեամբ» էի թղթակցում այդ տեղից Մշէն, Ռուսահայոց մէջ ազգային էկոնոմիան ծառայելու համար, երբ բնաւ իմ կոչմանս եւ պաշտօններիս վայել բան չ'էր «որեւէ մի Հայ թերթի» կամաւոր թղթակցի անունը կրել։ Հապա «որի հրամանաւ եւ արտօնութեամբ՝» բաւարէի հանդէսների մէջ, եւ նորա տեղից տեղ թափառելու, եւ ամենակարեւոր զբաղմանց ժամանակ։ Մինչոց եմ գտած Մշէի մէջ հարիւրաւոր յորդորներ կարդալ Ռուսահայոց, Արարատեան եւ Միացեալ ընկերութեանց օգնելու համար։ Հապա «որի հրամանաւ եւ արտօնութեամբ» ամբողջ հայատեաց բրիգադի դէմ Ախալցխայում մաքառելիս, — իմ անմոռանալի բարեկամ Պ. Յով. Գեղամեանցի տանը եօթը օրուան տնային արգելման մէջ նստած — երբ միւս կողմից Ռուէական անկարգութիւններն էին աւելի վատթար վիճակի մէջ դրած հարազատ եղբայրներս ու նոցա դեռափթիթ զաւակները, հապա «որի հրամանաւ» էի այդ ժամանակ ամեն բան մոռացած ու ձեղ հետ միասին միայն Հայաստանի սովի պրոպագանդայով զբաղված։

Հապա «որի հրամանաւ եւ արտօնութեամբ» կայքս դոյքս վաճառի դնելով, ճանապարհի ծախք ունենալու համար, վեր կացայ գնա-

ցի թողամաշ հիւսիս՝ դէթ օտար մամուլի միջոցաւ ազգային զգացում ներշնչելու օտարամոլ եւ օտարախօս Ռուսահայերին։ Այս միամնայ աշխատութեան մեծագործուն ազդեցութիւնը Կովկասի ազգայիններ վրայ, միառք Աստուծոյ դեռ չատ տարիներ չեն մոռացվիլ։

Ո՞վ, հապա ո՞վ «հրաման եւ արտօնութիւն» տուաւ մեզ այս ուղղութեան եւ ձերնարկութեանց մէջ աշխատելու։ Ահա թէ ով. — բարեբաղտաբար թէ դժբաղտաբար մեզ աշխարհ բերած հարազատի նուիրական պատուէրը՝ նախ ազգի ցաւը զգալ, յետոյ իր. նախ՝ հայութեամբ հետաքրքրվիլ, յետոյ իր անձով. մեր ծնողի կտակած միայն այս պատուէրը, ուրիշ ոչինչ։ Ահա թէ ով է. եղել մեր ամեն մտածմանց, արարքների եւ որոշմանց տնօրինողը, շարժողը եւ հրամայողը։ Ցուսով ենք, որ դէթ հիմայ ձեռք կ'քաշեն մեզնից այն մարդիկ, որոնց համար «ազգասիրութիւնը» միայն պատրուակ է իրանց անձնական նպատակները յառաջ քշելու մէջ. որոնց ձեռքի բռնած գրիչը միայն միջոց է իրանց վատ եւ պժգալի արարքները «ազգային» դոյնի տակ ծածկելու. որոնց ամեն մի քայլը եւ գործը տնօրինված է վարձով եւ կաշառով...։

Միթէ մենք չ'գիտենք եւ չենք տեսնում այդ բոլոր փարիսեցիների եւ խաբեբաների ներքին պատկերը, խեղճ ազգի անունով եւ կեղծ սրտացաւութեամբ դիմակաւորված։ Միթէ չ'տեսանք Եղոմներ, Յովհաննիսեանցներ ու նոցա վարձած այլ եւ այլ լաքէյներ դէս ու դէն վազելիս ու իրանց աղաների «մեծութեան» անունով նաեւ լրագիրների մէջ յոխորտալիս եւ լրագիրներ կաշառելիս։ Միթէ չ'տեսանք 58 տարեկան փնչթիմալածածկ Պոլսեցի բժիշկներ, որոնք գրիչ գործածելու որոշում էին առած՝ կամ կաթուղիկոսացու եպիսկոպոսներին չոյելու, խնկարկելու եւ նոցա միջոցաւ Ռուսաստան դնալու համար. կամ երկու կառավարութեանց միատեղ լրտեսութիւն անելով, նոցա ձեռքով նոյն բաղտամոյ բաղձանքին հասնելու նպատակաւ. կամ թէ չէ՝ սորա–նորա մասնաւոր կեանքը եւ պատիւը արատաւորելու, որեւէ մի ընկած էակին, մի կոկսին հաճելի անցնելու համար։ Չ'տեսանք եւ չենք տեսնում այս ամեն կեղտ ու աղբը, այս վարձովի լաքէյների, չարլատանների եւ սրիկաների խմբակները՝, միշտ «ազգասիրական» դրօշակի տակ։ Չ'գիտենք միթէ՝ որչափ մեծ զոհաբերութիւն է իւրաքանչիւր մի պատուազգաց անհատի համար՝ սուրբ ազգասէրքով եւ անարատ սրտով նուիրվիլը այն «ազգային» ասված ասպարէզին, որի վրայ ոչ սեւը կայ որոշ, ոչ սպիտակը. ոչ մատնիչը ճանաչող, ոչ մատնվողը. ոչ կեղծը տարբերող, ոչ անկեղծը. ոչ ձրիա-

խօսը դատապարտող, ոչ գործ կատարողը դնահատող, ոչ աղնիւը պատուող, ոչ վարձկան լաքէյները վրնդող։ Միթէ մեզ յայտնի չէր, թէ ինչ քաօսի, Բաբիլոնի եւ Սոդոմ ու Գոմորի մէջ պիտի ընկնէ ամեն մի անհատ, որը պիտի հալատակի իր ոգեւորութեան, սրտի ու պարտականութեան ձայնին, պարտականութեան, որի անունը ամեն տեղ է, բայց ինքը գրեթէ եւ ոչ մի տեղ. միթէ չ'գիտէինք կանխաւ այս ամենը... Շատ լաւ գիտէինք ու գիտենալով եկանք Պոլիս, ուր ամեն վերեւ յայտնած հարցերը լռելեայն, երեք–չորս ամիս ուսումնասիրելուց յետ, եկանք այն եզրակացութեան, որ՝ կամ պէտք է թքել ամեն աղբոյէն կոչված խնդիրների վրայ եւ շատ «խոհեմ ու փորձառուների» նման ամեն ինչ գովել–գովաբանել ու յետ գնալ, կամ արհամարել ամեն խոչնդոտներ, գէշ մարդ լինել ամենքի համար, արհամարվիլ, դատապարվիլ, նախատվիլ, մատնվիլ, բայց ամեն ինչ անկեղծութամբ եւ հրապարակաւ ասել։ Անտարակոյս, չ'լինելով թշնամնաց երկրում, այլ մեր սրտին միշտ մօտիկ մեր անբաժան հարազատների մէջ, աւելի հաճութեամբ պատրաստ էինք Բոսֆորի ջրերը ընկնիլ խեղդվիլ, քանթէ ամեն ինչ տմարդաբար սրտի մէջ թաղդրած յետ գնալ, ասելով շատ «խելօքների» նման. «էհ, աշխարհի դարտը խօմ ինձ չէ եկել, ես չեմ առաջինը, ես չեմ վերջինը, ինձ ինչ դործ, որ ամենքի տեղ ես լինեմ էշի մարտիրոսը։»

Այս վճռողական ու տագնապալից կացութեան մէջ էր, որ մի ծանր եւ ճնշող վայրկեան որոշեց ձեռնոց նետել Պոլսի բոլոր գործիչներին՝ մեծից սկսած մինչեւ վերջինը։ Այսպէս սկսվեց այն լրագրական հակատամարտը, որի արձագանքը այնչափ սիրով եւ համակրութեամբ ձայնեց Հայաստանի զսնաղան կէտերում, որ տեղից համերաշխական եւ ազաչապանողական յոդուածներ ծարներով էին թափվում Մանչեսթէր Էֆէէրէ խմբագրատունը, որի մէջ էր գրականական կուռ գլխաւոր մարտկոցը։ Խեղճ Հայաստանցիների սրտի մէջ, երեւում էր, որ վաղուց էր դիզվել թոյնը՝ Պոլսի գործավարների ապիրատութեանց դէմ։ Բայց պայքարի առաջին ազդարարութիւնը եղաւ Մասիսի մէջ զետեղված մի քանի դրուխիններով, որոնք այնչափ «անաւոր եւ ծանր» եկան մեր փափկասուն ազդայիններին սրտին, այնչափ յուղեցին եւ դայթակղեցին նորանց, որ, ինչպէս իմացայ, խստագոյն սպառնալիքներով Մասիսին փակել տուան նորա եղբերը իմ յոդուածների առաջ։ Պրօպագանդայի համար ամենահասուն վայրկենին՝ մտքի եւ զգացմանց այսպիսի արդեւք թէ որչափ դժուարատար էր, էլ հասկանալի է։

Այս ժամանակ էր, որ բարեբաղտութիւն ունեցայ պատահիլ Մանչեսթէրի խմբագիր մեծարգի եւ երախտաչաս Պ. Կարապետ Փանոսեանին։ Զ'նայելով նորա ունեցած նեղ պարագաներին, նա սիրով բացեց սակայն Մանչեսթէրի էջերը ինձ համար. նա արժանի գտնվեցաւ իր մեծահամբաւ անուան. Պօլսի հրապարակախօսութեան ասպարէզում նա ամենքից աւելի արի եւ քաջամարտիկ վեսերանն էր. նա վերջապէս Պօլսեցի չէր. նորա սրտի մէջ Հայաստանցի մարդու կորով կար եւ կեսարացու հաստատամտութիւն։ Մանչեսթէրի էջերում պատսպարված, մերթ յարձակողական, մերթ պաշտպանողական դրութեամբ. մի օր մենամարտութեան դործով ընդմիջելով քննադատական պարապմունքներս, միւս օր դեսպանատուն բացատրութեան գնալով. մի օր այս լայրչ անձնական յարձակումները յետ մղելով, միւս օր ամեն կողմից տեղացող դաւերի եւ մասնութիւնների դէմ մաքառելով, կարողացայ դէթ այնչափը յայտնել մի անընդհատ կապով կապված խնդիրների վրայ, որչափ Կարեւոր Խորհրդածութեանց մէջ Մանչեսթէրում։

Որովհետեւ բոլոր յուղելի հարցերը պիտի ամփոփվէին երեք գլխաւոր փաստերների մէջ, ուստի եւ դոցա շուրջը պտտեցան յիշեալ Խորհրդածութեանց՝ նոյնպէս եւ ուրիշ բանակռիւների մէջ յայտնուածները։ Մամուլ, ընկերութիւններ եւ ազգային ազգութիւնը եղան մեր քննադատութեանց գլխաւոր առարկաները, նայելով իւրաքանչիւրի վրայ, հարկաւ, անշուշտ ընդհանուր ազգային դիտակցութեան եւ համերաշխութեան տեսակէտերով։

Մամուլի մասին խօսածներս, որ յայտնի են Մասիսի հետ ունեցած բանակռիւներից, այն իմաստն են ունեցել, որ Հայ մամուլը (2) չունէ այն ուղղութիւնը, որով ազգի դիտակցութեան եւ համերաշխական նպատակներին որեւէ զգալի ծառայութիւն մատուցանվէր։ Հայ մամուլի ընթացքը համարած ենք, ամեն պարագաներով, դէթ կոյր հետեւումն եւրոպական արտաքին ձեւերին եւ սլրօդրամին, այլ ոչ դոհացում տվող Հայաստանցի եւ ընդհանրապէս ամեն տեղի Հայոց մեծագոյն մասի սրտին, մտքին, կենսական ու առօրեայ շահերին

---

(2) Պօլսի դրագէտները եւ դրասէրները մի զարմանալի նախապաշարմունք են ունեցած միշտ դէպի մեզ, այն է, որ երբ մենք խօսել ենք մի որեւէ խնդրի վրայ, այնպէս են կարծել, թէ քննադատելով նորան Տաճկահայոց մէջ, կ'ուզենք նոյն առարկայի Ռուսահայոց մէջ ունեցած գերազանցութիւնը ցոյց տալ. մինչդեռ մենք բնաւ երբեք ո'րեւէ այդպիսի համեմատութիւն չենք արած։

պէտք ու պահանջներին, դիտակցութեան ու համերաշխութեան գործին,

Խօսելով այլ եւ այլ պաշտօնական ու անպաշտօն ընկերութիւնց մասին (3), աշխատած ենք ցոյց տալ թէ դրքա աւելի նման են Ֆրանսերէն լեզուով ներկայացրած մի Զինական կատակերգութեան, քան թէ Հայ ժողովրդի կեանքից առած իրողութեանց վրայ հիմնված եւ նոցանով անօրինվող մի գործին։ Քննադատելով ազգային ժողովի (որն նոյն ընկերութիւններից մէկն է, հարկաւ) ուղղութիւնը, յիշած ենք, որ նորա ունեցած ընթացքը նման է գէթ այն բժիշկի ունեցածին, որով նա կ'ձեռնարկէ գեղագիտեր դրել հիւանդներին, ոչ քննելով նոցա առողջութեան վիճակը, այլ միայն դրքի մէջ նայելով։ Հաչիւ պահանջելով Միացեալ ընկ. եւ Սովետոց Մասնաժողովից, ի նպատի ենք ունեցել ոչ թէ պարզ հաչուատեսի հետաքրքրութիւն, պարտաւորութիւն կամ իրաւունք, այլ ընդհանուր համերաշխութեան զարգացումը եւ ահա ինչպէս. հարիւր տարիների մէջ գէթ մի անգամ հիմնված համազգային ընկերութիւն՝ որքա՞ն կերպով հաչիւ ներկայացնելով ազգին, պատուած կ'լինէր ընդհանուր ազգային համերաշխութեան բնական պահանջներն ու իրաւունքները եւ այսպիսով հիմք կ'դնէր այն նոր դարաշրջին մեր մէջ, որով դիտակցական եւ անխախտ համերաշխութեան ու փոխադարձ օգնութեան պարտքը կ'լինէր Հայերիս նշանաբանը, փոխանակ աւանդական անմիաբանութեան ու եսութեան, որ մեր ազգի ճակատին դրոշմված պատմական նախատինքներից ամենածանրն է եւ կորստաբերը։

Բայց ինչ. ունենալով մի տեսնադպիր, որը մեր ազգի պատմութեան եւ դրականութեան այնչափ քաջահմուտ մարդու անունն էր վայելում, այդ Մասնաժողովը չ'հասկացաւ թէ, իր նեղհայեաց վաճառականական եսականութեամբ ու յամառութեամբ, որչափ մահաբեր ազդեցութիւն հասցրեց մեր ընդհանուր համերաշխութեան դատին։ Նոյնը եւ Միացեալ ու այլ ընկերութիւնները, որոնց գործին մենք նայեցինք միայն այդ դիտակցութեան եւ համերաշխութեան պաղատիւն ու անաչառ հայեացքով։ Մենք առաջնորդվեցանք այն մտածութեամբ թէ՝ Հայ ժողովուրդը ըստ ինքեան ամենեւին ժլատ եւ քարասիրտ ժողովուրդ չէ, միայն պէտք է, որ մի անգամ ընդ միշտ խիստ կանոն դրվի՝ հաչիւ տալու նորան, դրամական թէ բարոյական. մանաւանդ որ Հայերս մեր լաւ յատկութեանց հետ միատեղ,

---

(3) Պօլսի մեր ազգայինները շատ կ'սիրեն՝ երկու ու կէս մարդու մէջ կայացած համաձայնութիւնն անգամ «պաշտօնական» անունով միրտել։

խիստ գործնական եւ կասկածոտ մարդիկ ենք, ուստի ամեն մի տուած բանի արդիւնքը կ'ուզենք անպատճառ չափելի կերպով տեսնել։ Մեր այդպիսի բնաւորութեան հակառակ գնալը, կ'նշանակէր ջրի հոսանքը զարիվայրից զարիվեր տանել։ Մեր ուղած արդիւնաբեր փորձերը ուղեցինք տեսնել Միացեալ ընկ. եւ Սովելոց Մասնաժողովի կողմից ձեռնարկած, մինչդեռ ոչ մինը դոցանից իր կոչման եւ անունին արժանի չ'գտնվեցաւ, այլ ամեն մէկը նոցանից խօսեց մեզ հետ գէթ անհատական իրաւունքի անունով, գէթ իբր մասնաւոր մարդ, այլ ոչ միաբանութեան ու համերաշխութեան հոգով տոգորված Հայ։

Խօսելով ՈՒՈՒՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՊՐՕՊԱԳԱՆԴԱՅ Վրայ, յայտնած ենք, որ Հայոց ուսումնարանները 150 տարուան մէջ ոչ այլ ինչ են եղած, ժողովրդի իրական կեանքի եւ զարդացման համար, եթէ ոչ Տաճկայ Դերբէնդերը։ Մինչդեռ Ցոյները եւ Բոլդարները Հայերից շատ աւելի ուշ մնացած եւ քիչ ուսումնարաններ ունենալով, հարիւրապատիկ աւելի մեծ արդիւնք են քաղած։

Այս ուղղութեամբ եւ այս նիւթերի վրայ է եղել, այնիւ բարեկամ, մեր երկամեայ գրաւոր գործունէութիւնը այս տեղ։ Տարակոյս չ'կայ, որ ամեն մի առարկայի վրայ մենք խօսել ենք գէթ ինչպէս հրապարակախօս, միայն ազգային յատկանիշների նախանձախնդրութեամբ, այլ ոչ մասնագիտական մանրակրկիտ յաւակնութիւններով։ Ուստի մեր արածը եղել է սոսկ ընդհանուր ցուցմունք եւ նախաշաւիղ՝ իրական կեանքի, ազգային գիտակցութեան եւ համերաշխութեան զարդացման տեսակէտերով, որոնց հետաղօտութիւնը մինչեւ հիմայ դեռ կատարեալ արհամարանքի մէջ է։ Հիմայ տեսնենք թէ ինչ հետեւանք կարող էր յառաջ գալ այսչափ խօսելուց, պոռալուց, կռուելուց ու հաշտվելուց։

Նախ՝ գաղափարաց ուժգին փոխանակութեամբ յուզած խնդիրների առթիւ եղած բանակռիւներով — Ռուսահայոց եւ Տաճկահայոց մ.ջ — երկու կողմի ազգայինների փոխադարձ ծանօթութիւնը եւ համերաշխութիւնը զորաւոր զարկ ստացաւ։

Երկրորդ՝ համածաւալ եւ շրջապտոյտ բանակռիւները, Տաճկահայ եւ Ռուսահայ թերթերի մէջ, երես առ երես կանգնեցնելով գաւառահայոց կողմից խօսողներին Պոլսի եւ Թիֆլիսի ինտելլիդէնցիայի հետ, ինքնավստահութեան հոգի եւ ինքնօգնութեան համոզում յառաջ բերան գաւառների մէջ, ուր տարածվում էր ընդհանուր պրոպագանդան 400–500 օրաթերթերի բաժանորդագրութեամբ։

Երրորդ՝ Ռուսահայերն էլ իրանց վրայ անդրադառնալու աւելի

ուժգին զարկեր ստացան, Տաճկահայ գործիչների ապիրատութեանց քննադատութեամբ· ըստ որում սոցա գործունէութեան թերութիւնների ընդարձակ մերկացմամբ, աւելի լայն միջոց ունեցան իրանց սեփական պարտաղանցութիւնները եւս ճանաչելու նոյն հայրենիքին օգնելու վերաբերմամբ։

Չորրորդ՝ զգալի հարուած ստացաւ Պոլսի գործողների վիպական եւ երեւակայական ուղղութիւնը, ամիսուելով նոցա ուշադրութիւնը ժողովրդի իրական եւ տնտեսական պահանջների վրայ։ Այդ պահանջները, հարկաւ, լաւ էին զգացած Ներսէս պատրիարքը եւ ուրիշներ, բայց գործավարների մեծամասնութիւնը այնչափ տոգորված էր բոմանտիք ուղղութեամբ եւ Ֆրանսիական ազդեցութեան վատ կողմերով, որ «տնտեսական», «առօրեայ պահանջի», «հացի» եւ այլն խնդիրների անուն տալիս, ամենքն էլ խորշում էին, ինչպէս «անլոյս», «անեւրոպական», «կոպիտ» եւ «խմբուլական» նիւթերից (1)։

Նոյն հարուածը եղաւ եւ Պոլսի հրապարակախօսաց ու գրագիտաց թիւր եւ միանգամայն ինքասաբեր ուղղութեան, որով նոքա հակամէտ էին զբաղեցնել ժողովուրդը աւելի քաղաքական լուրերով եւ ինտրիգաներով, Վիկտոր Հիւգոյի ու Լիտրէի վրայ յայտնած այլ եւ այլ ճաշակ փչացնող ծանծաղաբանութիւններով, քանի՞ Հայաստանի եւ Ռուսահայերի կեանքով ու կացութիւնով։ Եւ այս հարուածը այնչափ շօշափելի է, որ հրապարակը բոլորովին մաքրվեց — գոնէ առ ժամանակապէս — եւ «լուսատու» կանանց դարդակախօսութիւններից եւ Ֆրանսամոլ բոմանտիքներից։ Պարբերական մամուլի մէջ տեղի ունեցած յեղաշրջումը նոյնպէս խիստ նկատելի է։ (2)

Վերջապէս, վիճաբանութեանց այս ահագին հոսանքի մէջ, Զմիւռնիայի, Պոլսի եւ Թիֆլիսի հրապարակախօսները առիթ ունեցան բախվիլ միմիանց հետ շատ դործնական եւ օգտաւէտ մտքերի արտայայտութեամբ, որն եւ տարածվեց ընթերցող հասարակութեան մէջ, զարկ տալով նորա ճանաչողութեան իրական Հայաստանի, ներ-

---

(1) Այլ խնդիր է հարկաւ, որ սթափումը կ'ունենար գեթ բոպէական ու վաղանցուկ բնաւորութիւն, բայց այսչափից աւելին՝ դժուար կարելի է պահանջել մամուլի ազդեցութիւնից։

(2) Իրական կեանքի եւ դործնական խնդիրների պրոպադանդան, անտարակոյս, միշտ տրած էր Մանչեսթէր Էֆէրը, բայց նորա միայնակ ձայնը հաւաքական ընդդիմադրութեամբ խեղդվելով այլ եւս գրեթէ անլսելի էր դառած· միւս կողմից էլ՝ նորեկ եւ անկախ մարդու խօսքերը, ամենայն հաւանականութեամբ, աւելի պիտի ուշադրութիւն գրաւէին։

կայի ու ապագայի։ Հարկաւ, դեռ մինչեւ հիմայ իսկ ոտանաւորական «ազդասիրութիւնը», Հայկ Դիւցազնի, Վիրգիլիոսի եւ առհասարակ սիւոլատիկ ուղղութեան ազդեցութիւնը ներքնապէս չէ խորտակվել տակաւին Պոլսի Հայ ինտելլիդէնցիայի մէջ։

Այսչափն ենք կարծում, յարգի բարեկամ, այն գործունէութեան արդիւնքը, որին, հաղարաւոր համակիլների թւում, դուք այնչափ եռանդալից արձագանք տուաք, ինչպէս եւ հետեւեալ անձինք, որոնց մեծապէս երախտապարտ եմ, նոցա տուած գրաւոր թէ բերանացի խրախոյանների համար։ Ծերունի Գաբրիէլ Պատկանեան. Պրոֆ. Ռեբուլբէ Պատկանեան. Պրոֆ. Մկրտիչ Էմին. Պ. Սմբատ Շահ-Ազիզ. Պ. Մելքոն Փանեանց. Պ. Գասպար Եաղուբեան։ Ներսէս Ֆ. Եսայի պատրիարքները. Խրիմեան եւ Խորէն Նարբէյ սրբազանները։ Գեր. Էնֆիէճեան եւ գերեր. Ազարեան։ Հայր Ցոլ. Մկրեան. Էրզրումի նախկին առաջնորդ Ցարութիւն եպիսկոպոս. Էրզրումի Հայ-կաթոլիկների առաջնորդ եւ մեր վաղեմի յարգի բարեկամ Մելքիսեդեկ եպիսկոպոս։ Պ. Պ. Գրիգոր Արծրունի. Ռաֆֆի. Լեւոն Տիգրանեան. Կոնա. Կամսարական. Մկրտիչ Փորթուգալեան. Ցարութիւն Քէշքէկեան. Արիփար Արիփարեան. Յովսէփ Ալնասուր. Ցակ. Պարոնեան։ Պ. Պ. Մատթէոս Մամուրեան. Գուշար. Միրզա Մսերեան (Զմիւռնիացիք)։ Պ. Պ. Ցարութիւն Զաքրեան. Ա. Մուրատեան (Փարէզ լրագրի նախկին խմբագիր). Կ. Փանոսեան. Մեղբուրեան. Բերբերեան Մինաս եւ Դաս. Ձերազներ. Գուրգէն. Դելիլեան. Փիլոյեան եւ այլն եւ այլն... (3)։

Ներկայացնելով ձեզ, խառնուչիոթ կերպով, ինտելլիդէնտ բարեկամներիս այս դասը, որի մէջ Պետերբուրգից սկսած մինչեւ Երուսաղէմ, Զմիւռնիա, Էրզրում, Վան, Թիֆլիս, Երեւան, Կեսարիա, Զէյթուն, Մոսկվայ եւ Պոլիս գտնված գաղափարային մարդիկ եղբայրանում են եւ հաւատարվում, առանց կրօնի, հասակի, կարգի, կոչման, պարապմանց ու անուան խտրութեան, կուզեմ որ ինձ ուրախակից լինեք, տեսնելով որչափ էլ Հայերս միանցից հեռու, խորթ եւ բաժան ապրելիս լինենք, այսուհանդերձ, հայրենիքին վերաբերեալ գործունէութեան մէջ, ամենքն էլ ընդունակ ենք ձեռք ձեռքի տալ, միանալ ու եղբայրական վիճաբանութեանց, հայրական յորդոր-

---

(3) Վերոյիշեալ անձինքներից շատերի հասարակային դերերը ընդարձակ տեսութեանց եւ անողոք քննադատութեանց առարկայ պիտի լինեն, երբ Տաճկահայ գործիչների վրայ խօսելու հերթը կ'հասնի, մեր Ցիշատակների մասերում,

ների ու խրատների միջոցաւ դաղափարաց հաշտութիւն հաստատել այն խնդրի մէջ, որը վերաբերվում է ընդհանուր ազդային գիտակցութեան ու հայրենիքի բարօրութեան։

Որովհետեւ մեր հրապարակախօսական դժուարին ջանքերի յաջողութեան համար, անհրաժեշտապէս պէտք է եղել ունեցել օտարութեան մէջ եւ հարազատ մօր, եւ սիրեցեալ եղբարց ու քոյրերի գորովալից փայփայանքը, ուստի այդ կողմից՝ անմոռանալի երախտագիտութիւն ունենք երկու բարեկամների առաքինաղարդ գերդաստաններին։ Դոցանից առաջինը Պ. Յովակիմ Գեղամեանցի տունը եղաւ Ախալցխայում, որը, այնչափ ծանր մաքառմանց ժամանակ մի ամբողջ հայանենգ բրիգադի հետ, բարոյական արիութեան ապաստան եղաւ ինձ, կաղդուրելով հօրական եւ մօրական ամեն խանդաղալից գգուանքներով։ Երկրորդը, բարոյական կեանքի աւելի զօրաւոր բոյնը եղաւ ազդային տաղանդաւոր նկարիչ Պ. Պետրոս Սրաբեանի տունը Պօլսում։ Բայց Հայկական ընտանիքի առաքինութեանց եւ հիւրասիրութեան այս երկու տիպարներին կ'ուղղենք մեր ամեն ասելիք միայն ձեռնարկած աշխատութեան հետեւեալ մասերում։

Պօլսում ունեցած մեր դառնալից ժամերի մոռացման առթիւ միշտ հաճութեամբ պիտի յիշենք նոյնպէս Պ. Պ. Քէչքէկեանների, Մանիկեանների, Յով. Սակըղեանի, Թով. Թերզեանի, Փոլատեանի, Մինաս Ձերազի եւ մի քանի այլ դերդաստաններ, ուր բարոյական հանգիստ առնելու տեղ ենք ունեցել, բանակռիւներից յուզված եւ մարդկանց վատութիւններից վրդովված վայրկեաններում։

Հաճեցէք ընդունել, ազնիւ բարեկամ, մի անկեղծ եւ մշտական յարգանաց հաւաստիքը,

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Յ. Գ. Ձեզ տուած այս հաշիւս մէջ չեմ յիշատակած, հարկաւ, օտար մամուլի միջոցաւ ունեցած եւ ունենալի գործունէութիւնս, նոյնպէս ազդային շահերին վերաբերեալ։

Որովհետեւ Պօլսում ունեցած երկամեայ գործունէութիւնս՝ պրոգրամիս դէթ մի մասի իրագործումն է, այն է՝ քննադատական մասի, ուստի կ'մնայ հիմայ երկրորդ քայլառութիւնը անել, այդ կողմի Հայութիւնը այս կողմին ծանօթացնելու վերաբերմամբ։ Աշխատութեանս այս մասը պիտի ամփոփէ իր մէջ Կովկասեան Հայերի եւ մի քանի ուրիշ ժողովրդների բաղդատական նկարագրութիւնները։ նոյնպէս պատերազմի ժամանակ ունեցած տպաւորութիւններս

եւ առնչութիւններս. Հայաստանի գաղթականական անցքերի մանրամասնութիւնները եւ այլն։ Բայց այս ամենն գրութեանց մէջ, որովհետեւ շատ տեղ պիտի յիշատակվին Հայ զօրավարների անունները, ուստի Ցիշատակներիս երեք առաջին մասերը նոցա կ'նուիրեմ։

Ամբողջ ձեռնարկութիւնը գուցէ շատ մասեր կազմէ եւ մէկ կամ երկու տարի էլ ժամանակ պահանջէ՝ ինձնից. միայն չէ՝ անցնելի կեանքս եւ ասպարէզս, միառք Աստուածոյ, յետեւիս չէ, այլ առաջիս, որով երեք–չորս տարի յետ կամ առաջ անձնական պաշտօնավարութեանս մէջ մտնելը ու յառաջանալը բնաւ առնչութիւն չ'ունէ ընդհանուր ազգային շահերի հետ։ Ուստի, ամենն բարոյական եւ նիւթական զրկանք աչքիս տակ առնելով, պիտի մնամ Պոլիս մինչեւ նպատակիս լիուլի իրագործումը։ Իսկ եթէ դարման տերեւների հետ Քարպատների բարձրութեանց վրայ բացվելի որոտումները... ընդհատեցին աշխատութիւններս ու դուրս քաշեցին Պոլսից, դորա մէջ ոչ իրմիս առաջ մեղասարտ կ'համարեմ ինձ, ոչ էլ ազգային պարտականութեանս։

Նախնթաց բացատրութիւնների դէմ ուղղած պատասխանների համար, շատ ամօթ ապարտ պիտի համարէինք մեզ Ռուսահայերի առաջ, եթէ միայն, շնորհիւ Աբյաֆանէի, նոքա գաղափար կազմած չ'լինէին ամբողջ երկու տարի Պոլսի «գրագէտներից» մեր ստացած «քննադատական ընդդիմադարձութիւնների» վրայ... Իսկ քանի որ նոքա կարդացին նոյն իսկ Պոլսեցի «բժիշկ — երեսփոխան — գրագէտ — բարոյագէտ — քաղաքագէտ» անձի գրվածները Աբյաֆանէի փառաւոր էջերում «պարտուպատչաճ եւ պանծալի պատասխան» մեզ (ըստ Մաֆէի հանդիսաւոր վկայութեան)։ քանի որ մեր փոխարէն ուրիշները կորցրին համբերութիւնները այդ «պանծալի պատասխաններից» եւ կրակը, կամ ուրիշ տեղ... դյուլու պէտք դտան նոցա մէջ (4), էլ յուսով ենք, որ դորանից յետ Ռուսահայերը բոլորովին ներողամիտ կ'դանվին դէպի մեզ այն անհամեստութեանց համար, որ քանիցս ունեցանք վերոյիշեալ բացատրութեանց մէջ, խօսելով մեր անձի, շարժառիթների, զգացումների եւ ունեցած գրականական ձեռնարկութիւնների վրայ։

Ամբողջ երկու տարի, «բարոյախօս» բժիշկ է եղել մեր դէմ խօս-

---

(4) Պ–ի. 1883 թ. 22 Յունվարի.

սողը, թէ ալեզարդ խմբագիր, թէ «դիտնական» վեղարակիր կամ «լուսասէր» գրագիր, դեռ ոչ մէկին մէջ չ'տեսանք հէնց մի բացառութիւն, որով փոխանակ մեր անձնականութեան վրայ համեստաբար խուժելու, փոխանակ զատ զատ բառեր ու տողեր խծբծելու, վեր կենար մէկը ու ուղղակի մեր գրածների էութեան պատասխաներ։ Ռեռնակիրների հարց է դա թէ պրոգրամի եւ այլ խնդիր. համեստաշխութեան վրայ է խօսքը թէ Էջմիածնի ներքին գործերի մերկացման. Հայաստանցի մարդու շահերին են նուիրած գրութիւններդ թէ ընդհանուր ազգային՝ ամեն անգամ, ամեն դէպքում՝ փոխանակ բուն խնդրի վրայ խօսելու, փոխանակ միայն հիմնական մտքերին ու փաստերին պատասխանելու, այնպէս կ'պատասխանեն մեզ, ինչպէս «պանծալի օրինակներով» ցոյց տուաւ եւ կ'տայ Աբյոփանէ մէջ Պոլսեցի «բժիշկ — երեսփոխան — բարոյախօս — գրագէտ» Պ. Տիգրան Փեշթիմալչեան, դեռ եւս նորանից էլ աւելի վարնոց, աւելի զազիր եւ աւելի պոռնիկական կերպով։ Թէպէտեւ, հաւատի ենք, որ յիշեալ «պարոնի» «պանծալի գրութիւններից» էլ աւելի վարնոց բան գժուար կարող է երեւակայել Ռուսահայ մարդը իր համբաւաւոր պաժարնների մէջ անգամ. Պոլսեցի սպիտակահեր բժիշկ Պ. Տիգրան Փեշթիմալչեանի գաղտագողի վատութեանց օրինակը ոչ միայն Ռուսահայոց գրագիտական աշխարհի մէջ չի կարող տեղի ունենալ, այլ եւս նոյն իսկ այն շրջանների, որոնց պարապմունքը մարդկային պատուի առեւտուրն է միայն։ Այնչափ գոհ ենք, որ կարողանում ենք մեզնով առիթ տալ Ռուսահայերին՝ կատարեալ գաղափար կազմելու համար Պոլսեցի այն մարդկանց վրայ, որոնք սոցա մէջ «պատկառելիներն» են համարվում, էլ կարելի է անպատկառների բարոյական յատկութիւնները ներկայացնել իրան. խնդճ Պոլսեցի ժողովուրդ, որի մանկանց դաստիարակութիւնը ու սպադան այսպիսիների ձեռքին է։

Ուրեմն, երբ մեր դէմ խօսողները հէնց այսպիսի «պանծալի» արածներ են եղած, երբ ազիայէն ինդէր ասված բանը բնաւ երբէք անձնականից չեն կարող զատել. երբ հրապարակային դողութիւններով յայտնի «խմբագիրներ» յանուն «իրաւունքի եւ արտօնութեան» են խօսել մեզ հետ. երբ հարիւրաւոր զարհուրելի ոճիրներով յայտնի «մանաղէտներ», թոյնով եւ Խրլատների դանակով գործ տեսնող «հասարակային գործիչներ» միայն յանուն «բարոյականի եւ ճշմարտասիրութեան» են յոխորտացել, արդեօք ներելի չէ՞ մեզ՝ գէթ մի անգամ հրաւէր կարդալ նոցա, ասելով. «վատեր, եթէ յանուն Հայութեան խօսելու իմ իրաւունքս ու արտօնութիւններս կ'ուզէք

իմանալ, ահա իմ արածները, որ կ' յայտնեմ հանդէպ համայն Հայ աշխարհի. դէ՛, հիմայ էլ, կեղծ համեստասիրութիւնը եւ ծածկանունը մի կողմ դրած, դուք հրապարակ եկէք ասելու թէ՝ հապա յանուն որ գործերի, որ անցեալի ու ներկայի, որ շարժառիթների եւ նպատակների դատաւոր եւ քննիչ կ'կանգնէք ամեն մէկի ազգային ջանքերին...» Արդեօք ներելի չէ՞ մեզ հէնց մի անգամ հպարտ, խրոխտ եւ անձնապաստան լեզու գործածել, մեր անձի վերաբերմամբ, այն մարդկանց դէմ, որոնք իրանց անունով հրապարակում երեւալու յանդգնութիւն չ'ունենալու հետ միասեղ, երեսները գիմակաւորած կ'գան ու «համեստութեան», «ճշմարտութեան» եւ աշխարհի ամեն առաքինութեանց անունով՝ վիրաւորանք, լուսանք ու յանդիմանք կ'տեղացնեն մեր անձնականութեան վրայ։ Արդեօք՝ «պարծենկոտութիւն» եւ «անձնագովութիւն» կ'լինի սա մեր կողմից. արդեօք արժանապատուութեան եւ պատուաճանաչութեան դէմ վարված կ'լինենք, եթէ հէնց մի անգամ երկու տարուան մէջ ուղղակի պատասխան տանք այն անձնական յարձակումներին, որոնց առաջ մինչեւ վերջը լուելը՝ ով գիտէ ինչպէս բացատրեն մեր անցեալի հետ անծանօթ Տաճկահայերը։

Երբ՝ ազգային գործավարութիւնը յաստուկ պաշտօն, պարտք եւ ասպարէզ ունենալով, այլ եւ այլ եպիսկոպոսներ, վարդապետներ, վարժապետներ եւ խմբագիրներ, իրանց սեպուհ պարտաւորութեան հալիւ մի փոքրագոյն մասը լցուցանելով, էլ փառաբանական խօսքեր չի մնալ, որ շռայլել չ'տան իրանց «աղգասիրութեան», «անձնազոհութեան», «նահատակութեան» եւ այլ «սխրագործութեանց» համար, հապա միթէ յանցանք կ'լինի մեզ, եթէ մի անգամ էլ մենք քերան քանանք մեր մասին, գէթ դէմ եկող վիրաւորանքները յետ մղելու համար։ Միթէ «անձնագովութիւն» կ'լինի, եթէ մի կամաւոր զօրական, ի պատասխան ազգագրուժ դասալիքների կողմից եկող բիւր նախատանաց, մերկայնէ կուծքը նոցա առաջ ասելով. «ահա այն զրկանաց վէրքերը, որ ստացել եմ ազգիս սիրոյ համար, հապա հիմայ էլ դուք ցոյց տուէք ձեր ապացոյցները, երբ այդչափ անձնավստահութեամբ կ'պարսաւէք ինձ...» Միթէ յանցանք կ'լինի համեստութեան օրինաց դէմ՞ բայ ճակատով տուած այսպիսի մի պատասխան այն վատերին, որոնք յանուն համեստութեան կ'խօսեն սոսկ իրանց գարշելի գործերը վարագուրելու համար... Եթէ յանցանք կ'լինի, հապա մինչեւ Երբ լռած...»

Ուշադրութեան առնելով այս ամենը, վայոյս ենք, որ Ռուսաս-

հայ մեր հանախուհներն ու բարեկամները ներող կ'լինեն՝ Զօնի մէջ յառաջ բերած այն առարկութեանց համար, որ մեր անձին կ'վերաբերվեն։ Երբ Քրիստոս անգամ հանքերութիւնը կորցնելով իր՝ հակառակորդներին անուղղակի կերպով խոչէր անուանեց, ինչ զարմանալի բան, որ մի չնչիւ մահկանացու հէնց մի անգամ աւելի զայրոյթ յայտնէ՝ նախանձախնդիր կանգնելով իր սեփական պատուի, անձի ու իրաւունքի անհրաժեշտ պահանջներին . . . .

Գր. Նիկ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ցիշատակները, հաւաստի եմ, պէտք է գրաւեն ընթերցողի ուշադրութիւնը նոյնչափ նիւթերի հետաքրքրութեամբ, որչափ եւ նոցա փափկութեամբ։ Ուստի, քաջ ըմբռնելով, ընտրած առարկաների վրայ որ եւ է ռազմագիտական կամ կուսակցական տեսակէտով խօսելու անյարմարութիւնը, ամենայն խնամքով զանց կ'անենք ներկայացած խնդիրների փափուկ կողմերը, ի նկատի ունենալով մանաւանդ, որ այն վէրքերը, որոնցմով պատեց շատերի մարմինը վերջին Ռուսա-Թիւրք պատերազմը, այդ վէրքերը ոչ միայն չեն բուժված, այլ նոցանից դեռ եւս ծոր ծոր արիւն է կաթում։ Վասնորոյ մեր սկսած գործի պարունակութիւնը կ'սահմանաւորենք սոսկ այն անցքերի եւ տպաւորութիւնների նկարագրութեամբ, որոնք չունեն [illegible] է առնչութիւն այս ու այն կողմի ազգային եւ զինուորական [illegible] ազդածութեան հետ։ Այս տեսակ ձեռնարկութեանց մէջ ըստ կարելոյն, զգոյշ եւ խնայող դանվելու վերաբերմամբ, պատկառանքով կ'յիշենք Իսմայիլ Հագգի փաշայի յայտնած կարծիքը, երբ մնաք բարեւ ասելով Նորան Էրզրումում —պատերազմից մօտ չորս ամիս վերջը— փոխադարձ մտերմական յանձնարարութիւններ խնդրեցինք ի պատասխան Լազարեվի ուղարկածների։ Նախքան փաշայի խօսքերը մէջ բերելը, թոյլ կ'տանք մեզ փոքր ինչ շեղվիլ առարկայից հետեւեալ լուսաբանութիւններով, որոնք անմիջական յարակցութիւն ունեն մեր նկարների հետ։

Լազարեվի եւ փաշայի բանակցութիւնները վերաբերվում էին Էրզրումի նահանգի եւ Բագրեւանդայ գաւառի (Ալաշկերտ) Հայերի կենաց ու կայքի ապահովութեան, վայրագ ցեղերի յարձակումներից։ Գաղթականութիւնը զսպելու մասին, Էրզրումից Ղարս գրած մասնաւոր նամակներիս մէջ (*) ցոյց տուած ամեն միջոցները, որով-

(*) Այս նամակների մեծագոյն մասը, նախ քան ըստ պատկանելոյն ուղարկելը, կարդացած եմ մի քանի մտերիմ պաշտօնակցաց Էրզրումում, ինչպէս՝ գօկ. Լեւոն Տիգրանեանին. Պ. Կոնստ. Կամսարականին· հարիւրապետ Ալէք. Ալահվերդեանին. Պ. Վարդկես Զիլինկիրեանին եւայլն։

հետեւ հաճած էր Լազարեվը ուշադրութեան առնելու եւ գործադրելու, վասնորոյ երբ եկայ Ղարս (15 Օգոստ. 1878 թ.), հանգուցեալը յետագայ խօսքերով ընդունեց, գեներալ Ֆրանկլինի ներկայութեամբ. «Սիրով կ'գրկեմ ազգասիրութեանդ համար, բայց ուզելով քեզ աւելի եւս գոհ անել, կ'յանձնարարեմ, որ մի քանի օր հանգիստ առնես ու կրկին վերադառնաս Երզրուում, յետ տանելով մեր կողմերը Ալաշկերտից գաղթած Հայերին, Իսմայիլ-փաշայի օգնութեամբ իրանց տեղերը վերահաստատելու համար։ Չ'գիտեմ թէ Տէր-Ղուկասովը ինչու պատճառ եղաւ մի ամբողջ գաւառի աւերման, խրախուսելով նորա բնակչաց գաղթականական հակումները։ Գեներալ Կոմարովին (որն այդ ժամանակ Ղարզմանի կողմերն էր) եւ Երեւանի նահանգապետ Ռոսլավլեվին վճռողապէս առաջարկած եմ համոզել գաղթականներին հայրենիք վերադառնալու, բայց գիտեմ, որ դորանով բան չի լինիլ, ուստի հրաման եմ ուղարկած Ղարսի նահանգը, որ թափառական մնացած այդ խեղճ Տաճկահայերը պատուիրակներ ուղարկեն մօտս, իրանց վիճակի կարգադրութեան տեղեկանալու համար։ Քաջայայտ է ինձ, որ իրանք եւս տրամադիր են վերադառնալու, բայց փոքր ինչ քաշվում են Իսմայիլ-փաշայից, այս կողմերը անցնելու համար։ Ես անձամբ կ'վստահացնեմ նորանց, որ ոչնչից չ'վախենան եւ կ'ասեմ փաշայի մօտ, յատկապէս իրանց համար, մարդ ուղարկելս. իսկ դու չ'մոռանաս յիշեցնել Իսմայիլ-փաշային, որ նա չ'ղլանայ իր կողմից մի սիրալիր յորդոր ուղարկել այդ գաղթականներին, իրանց բնակավայրերը վերադառնալու հրաւէրով։»

— Եթէ Ալաշկերտի Հայոց քարուքանդ եղած բնակարաններն էլ չի յաջողվի վերաշինել, գոնէ այն էլ շատ բան է, որ գէթ Երզրուումի նահանգը չ'աւերվեց. ասեցի այս տեղ մարդասէր հրամանատարին։ Իրաւ է, որ այդ նահանգի գիւղական մասն առ այժմ չի կարող գնահատել այն եղբայրական կարեկցութիւնը, որով բռնի միջոցներ գործ դրվեցան նոցա գաղթելու դէմ. սակայն չի կարելի բնաւ տարակուսիլ, որ քիչ ժամանակից յետ նոքա եւս կ'հասկանան, Երզրուումցոց պէս, իրանց նախնեաց օջախի մօտ ստիպմամբ պահվելու բարիքը։

— Խեղճերն էլ մեղաւոր չ'են զանազան պատուհասներից այդչափ վախենալու համար, գիտեց Լազարեվը հայրական գթածութեամբ. տարաբաղտները երկու փորձանքի մէջ են մնացել. մեզ հետ յարաբերութիւն կ'ունենան՝ Թիւրքերի առաջ կասկածելի կ'երեւան. Թիւրքերին կ'մոտենան՝ մեր աչքից կ'ընկնեն. էլ ինչ հող տան գլխներին։

— Հարկաւ, այդ ամենը բոլորովին իրաւացի է, բայց կրքերը դեռ եւս այնչափ բորբոքված են, որ նահանգի Մահմետականաց մեծագոյն մասը ընդունակ չէ պաղարիւնութեամբ խորհելու. ասեցի, ամեն ինչ իր տեղը ստուգած լինելով։

— Լաւ, ուրեմն գնա վաղը շրջէ (դիւանատուն սպայակոյտի) գեներալ Բարանովի մօտ եւ ասա, որ պատրաստէ քեզ հարկաւոր թղթերը, որոնց մասին արդէն յանձնած եմ. իսկ դու պատրաստ կաց ճանապարհ ընկնելու, հէնց որ փոխարքան եկաւ. Ղարս։ որովհետեւ որչափ որ Էրզրումը մօտ լինի հիմայ մեզ, այսու ամենայնիւ ինքնաբերաբար արած այդպիսի անօրինութիւն պատասխանատուութեան տեղիք կարող է տալ. . . (*)

Այս բոլոր խօսակցութիւնը ռուսերէն էր, բացի սկզբում Լազարեւի ասած «ազիզոսէր» բառը, որով իսկոյն հարցրեց նենգ ակնածանօք այդ բառի նշանակութիւնը Լազարեւից, իր հայատեցութեամբ յայտնի Ֆրանկլինին։ Խրոխտ, բայց հանդարտ կլիսահայացք ձգելով հարցնողի վրայ, ասեց Լազարեւը իր սովորական պատրաստամտութեամբ. «ազիզոսէր ասվում են հայոց մէջ այն երիտասարդները, որոնք դժգոհ մնացին Բերլինի վեհաժողովի որոշումից հայոց մասին»։

Հետեւեալ օրը, երբ հարցրի Լազարեւին թէ՝ ինչու այդ տեսակ չեղեալ մեկնութիւն տուաւ յիշեալ բառին, նա նկատեց. «Բա, միթէ չիմացար թէ ինչ մտքով հարցրեց այն չ... տղան. նա շատ լաւ գիտէր հարցրած բառի նշանակութիւնը, բայց իրան չհասկացնող ձեւացնելով, ուզեց հայերի ազգասիրութիւնը ծաղրել։ Ես էլ գիտեմ սարուձոր պատասխան տուայ, զգացնելով միանգամայն, որ մեր ազգը այնչափ իրան ճանաչած է, որ ինքնավստահութիւն ունի նաեւ Եւրոպայի զանցառութեան դէմ խոժոռելուց։ Զարմացայ դիւցազնի այդչափ նուրբ պատուազգացման վրայ, մանաւանդ որ այնչափ ստրկահոգի վատեր էի տեսած, որոնք օտարից օրը տասն անգամ «ազիզոսէր» բառը լսելով, տասն երկուսն էլ իրանք են աւելացրել, հայ անունը եւ պատկերը մի անսրբելի նախատինք համարելով իրանց համար։ Արդարեւ, վայրաքարշ ինքնասիրացման ընդունակ են լաքէյութիւնից միայն յառաջ եկած վնասները (քաղաքական պաշտօն-

(*) Այս ամեն մանրամասնութիւններ, ինչպէս և շատ ուրիշ որսկութիւններ դաղթականական շարժումը զսպելու ջանքերին վերաբերեալ թղթակցութեանց ձեւով, իր ժամանակ հրատարակվել են Մշոյ մէջ, գրվելով անմիջական և թարմ տպաւորութեանց տակ։ Ն

եայ), որոնցմով այնչափ հարուստ են մանաւանդ Կովկասի գաւառական քաղաքները, էլ չ'եմ ասում այլասերված եւ նոյն իսկ դեռ մօր յարգանդի մէջ պղծված Աստրախանը եւ նորա նմանները...»

Խօսքս Իսմայիլ փաշայի վրայ էր։ Մի քանի օր չարունակ շատ մարդասիրական ձեռնարկութեանց փորձերը տալուց յետ, ալաշկերտցոց անդորրութեան մասին, հետեւեալ խօսքերով եւ աւանդով մնաս բարեաւ ասեց փաշան Էրզրումում։ «Տալիս եմ ձեզ իմ վերջին լուսանկարները, որոնցից մինը ձեզ եմ նուիրում, իսկ այս, իմ յատուկ նուիրագրով, խնդրեմ յանձնէք իմ աւագ եղբայր Լազարեվին, ասելով թէ՝ ես մեծ պատիւ եմ հաճարած, պատերազմի դաշտում նորա նման էֆէդ ախոյեան ունենալ, իսկ մեր սուրերը պատեան դնելուց յետ ես բարեբաղդ կ'լինեմ՝ այնպիսի բարեկամ եւ եղբայր վաստակել։ Թէպէտ մեծ եռանդով կռվեցինք, բայց երբ կայացաւ մեր մէջ հաշտութեան խոստումը, պէտք է որ այլ ես հաւատարմութեամբ պահենք այդ խոստումը, ինչպէս մարդ եւ էֆէդ զօրական։ Իսկ գալով մեր ռազմագիտական գործերի քննադատութեան, ինչպէս եւ իրաւունքի ու պատուի բաշխման, այդ խնդիրներով թող զբաղվեն պատմաբանները եւ դիւանագէտները։ Մեր պարտաւորութիւնն է միայն՝ քաջաբար կռվիլ՝ երբ կ'հրամայեն, լիառատ սրտով դրկվիլ՝ երբ խաղաղութեան փողը կ'հնչէ...» Թարգմանը ռուսաց լեզուին հմուտ մի լեզգի էր, բայց երբ խօսում էի կլիցկտուր տաճկերէնով, փաշան ասում էր հաճութեամբ. «փէք ալէ, փէք ալէ, սէօյլէ, սէօյլէ, էյի սէօյլէրսին։»

Քաջամարտիկ տաճիկ զօրավարի խօսքերը Լազարեվի մասին, խիստ ախորժելի տպաւորութիւն գործեցին Միւնեայ յովաղի վրայ, որը շարժելով ոգեւորութեամբ, առիւծի քաշի նման թաւ եւ գանգուր մազերով գլուխը, յարեց՝. «Ես իմ Աստուած, իսկ իմ ուղած մարդն է»։ Բայց աւելի ես զդացվեցաւ նա, երբ ասեցի թէ՝ ծերունի փաշան ջերմ փափաք յայտնեց՝ անձամբ գալ դրկվիլ Լազարեվի հետ, նորա ծանր կորուստը, կնոջ մահը մխիթարելու համար։ Ամեն բարեմասնութեամբ հարազատ հայի տիպար էր Լազարեվը, մանաւանդ ընտանեսիրութեան մէջ։ Բովանդակ կեանքը արեան ասպարէզում անցրած մի մարդ, այնչափ փափուկ սէր կ'տածէր դէպի իր գերդաստանը, որ, ամուսնի մահից յետ, ասում էր ամենքին մարդարէաբար. «Էլ ժամերս հաշուած են Անանիայի (Անանա) մօտ գնալու համար»։ Արդարեւ, տարի ես չտեւեց, որ նա աւանդեց հոգին իր սիրելի զաւակի դրկում, Թաթարստանի անասլատի մէջ, ու-

սելով. «Ալէքսանդր, եռ մեռնում եմ. ասան, ինձ Աննայի մոտ կը թաղես»։

Երկուսն էլ, այր եւ կին, քով առ քով են այժմ Թիֆլիսի Մայր եկեղեցու գաւիթում, ուր տիկին Լազարեվի մարմինը Վերայի հանդըստարանից տեղափոխելու ժամանակ, հեթանոսական խժդժութիւններ յարուցեց Հայ եկեղեցու «անմոռանալի բարերար» Մանկունին, որի հրամանաւ կ'ուզէին աւազակաբար պոլոկել Լազարեվի խեղճ յուսահատ որբերին, ահագին գումար պահանջելով՝ առաքինի կնոջ իր սիրեցեալ ամուսնի կողքին դէթ մի բուռ հող տալու համար։ Բայց երբ պատուաճանաչ դինուորական մի խումբ պժդանքով մերժեց Հայ կղերի անյաղ պահանջը, այդ ժամանակ խստասրտի հրաման եկաւ Էջմիածնից՝ արգելել անդերեզման մնացած հանգուցեալի թաղումը։ Ուրիշ ճար չունենալով, վեր առանք մեր ձեռքով վանքի մէջ դրած դագաղը ու առանց քահանայի յանձնեցինք երկրորդ յաւիտենական բնակարին։ Եւ գուցէ մեր սրտաբուղխ «Հայր մերը» աւելի ընդունելի եղաւ Աստուծուն, քանթէ կղերից վարձած անդիտակցական աղօթքը . . .։ Մեր ջերմեռանդ մաղթանքին ձայնակցեցին, անշուք հանդէսին մասնակցող, հետեւեալ անձինք միայն. երկու աւլեւոր դերեզմանափորեր, որոնք շարունակ լաց էին լինում՝ Ղարսի դիւցազնին այնչափ անխղճութեամբ հասցրած անարգանքի համար. հանգուցեալի երկու որդիք՝ Ալէքսանդր եւ Պետրոս. երկու օրիորդներ՝ Նինա եւ Թամարա. Լազարեվի եղբայր դնդապետ Ցակոբ–բէկ. հանգուցեալի հայրենակից եւ մտերիմ՝ դնդապետ Առաքել–բէկ Խանդամիրեան. Պ. Ալէք. Անանեան, որը սակայն դողդողալով էր բըռնում դագաղի ծայրից (վախենալով երեւի, որ չ'լինի թէ յանկարծ կորցնէ Մանկունիից վայելած քնքոյշ սէրը)։

Դեռատիպ Թամարան, ինանմեայ մի չքնաղ մանուկ, չ'տեսնելով գերեզմանի մոտ խաչ եւ քահանայ, հեծկլտալով այսպէս բացականչեց. «սպասա, վիր կայ տես թէ ինչպէս են անարդում իմ նաղելի մամային. քեզ միշտ յաճախող քահանաներից եւ ոչ մինը չէ ուզում հիմայ նորա վրայ աղօթելու»։ Ամենքի աչքից արտասուքը առուի պէս վազեց, լսելով մանկան բողոքը նորա անմեղ զդացումը բռնաբարող «հոգեւոր հայրերի» դէմ։ Բայց Թամարան շարունակում էր խօսել իր անմռունչ ծնողաց հետ. նա շարունակում էր կսկծալից տրտունջ յայտնել այն հօրը, որի առաջ երկնամերձ ժայռերն են խոնարհվել, բայց որի աչքից միշտ արտասուք է ցայտել, տեսնելով վերջին Հայի անբաղտութիւնը։ Մինչդեռ այդ մարդուն մի անվրդով

դերեզման անգամ զլացաւ տալ կղերի քարացած սիրտը . . . . . :

Այս սրտամիլիկ տեսարանից յետ էր, որ կ'դժկամակէր փոքրիկ Թամարան հայերէն աղօթելու, երբ նորան կ'պատուիրէր այդ իր անմխիթար հօրաքոյրը : — Լաւ, դու ինձ միշտ կը կրկնես, որ հայերէն աղօթեմ, հապա ինչու այդ լեզվով չ'ուզեցին Հայ քահանաները մամայիս վրայ աղօթելու — : Ահա ուր է, մեծ մասամբ, շարժառիթը բողոքականութեան եւ ամեն ուրիշ պառակտումների մեր մէջ . էլ զուր տեղը ոչ սորան-նորան մեղադրենք, ոչ էլ եղուիտներին անիծենք . ամենից աւելի վտանգաւոր եղուիտները նոյն իսկ մեր մէջն են . . . :

Այսպէս ուրեմն, կ'կրկնենք թէ՝ ձեռնարկելով մեր Ցիշատակների գրութեան, կ'հետեւենք մեծարելի Խամչիլ վարչայի մտքին, այն է՝ բոլորովին մի կողմ կ'թողենք քաղաքական եւ ուրիշ անպատեհ առարկաների վրայ խօսելը, ներկայացնելով ընթերցողներին սոսկ այն՝ որի անհրաժեշտ պայմանը կ'լինի ԲԱՐԵՄՏՈՒԹԻՒՆ եւ ՕՐԻՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ դէպի այն կառավարութիւնները, որոնց հպատակած է Հայ ազգը եւ այնչափ բացառիկ հաւատարմութեամբ դարերէ ի վեր ծառայած :

ԻՇԽԱՆ ՌՈՒՍՏԱՄ ՄԱԴԱԹԵԱՆ

Իշխան Մադաթեան Պարսկաստան պատերազմում։ Հայաբնակ նահանգները Կովկասում։ Ղարաբաղի իշխանները եւ Մեծն Պետրոս։ Գեներալ Երմոլով։ Վրաց Ալէքսանդր իշխանի պարտութիւնը Մադաթովից։ Ամիր-խան Սերդարի պարտութիւնը Մադաթովից։ Պասկեւիչ։ Մադաթեան եւ զինուորական խորհուրդ։ Աբբաս-Միրզայի ջարդը Գանձակի հանդէպ։ Մադաթեանի ծագումը եւ Պետերբուրգ ընկնելը։ Իշխան Ցիցիանովի արարքը հայ ազնուականութեան հետ։ Մադաթեանը փարիզում։ Զօր. Արթիւն եւ նորա պատմածը։ Մադաթեանի վերադարձը Կովկաս եւ ստացած պաշտօնը։ Մադաթեանի պատուերը Սէլիմ-խանին։ Մադաթովի արարքը հայ Մելիքների հետ։ Նորա կրօնափոխութիւնը, անկումը եւ զղջումը։ Տաճկա-Ռուս պատերազմը Դունայի ափերում։ Մադաթովի յաղթութիւնը եւ մահը։ Նիկողայոս կայսեր արդարադատութիւնը։ Մադաթեանի անունը Պարսկաստանում եւ նորա առած հարուածը այս երկրին։ Նորա յիշատակը կայսեր պալատում։ Մադաթեանը ժողովրդի յիշողութեան մէջ։ Մադաթեանի արդի ազգակիցները։

Իշխան (կնեազ) Ռուստամ Մադաթեանը Պարսկա-Ռուս պատերազմի (1826 թ.) առաջաւոր դիւցազն էր Կովկասում։ Այդ ժամանակ հազիւ քառասուն ու հինգ տարեկան մարդ էր նա, գեներալ-մայորի (լիվա) աստիճանաւ։ Պարսից գահաժառանգ Աբբաս-Միրզան հարիւր քսան հազար զօրքով արշաւել էր Կովկասի վրայ, պաշարել Ղարաբաղը եւ տիրել գրեթէ ամբողջ Գանձակի նահանգը։ Նա շտապում էր դէպի Թիֆլիս, որն առնելով պիտի լիովին տիրանար Անդրկովկասին, ուր նոր էին հաստատուած Ռուսները մեծամեծ զոհերով։ Վտանգը մեծ էր Ռուսաց համար, նոյնպէս եւ Կովկասի հայութեան, որով բնակուած էին Ղարաբաղի, Գանձակի, Շաքուայ, Շիրվանի եւ Երեւանի ընդարձակ նահանգները։ Նոյն նահանգների մէջ կային եւս մօտ մի միլիոն մահմետական, որոնք հէնց Աբբաս-Միրզային էին սպասում, քրիստոնէից ընդհանուր կոտորածը կատարելու համար։ Հայերի դէմ կատաղած էին նոքա՝ մեր կողմից Ռուսներին ցոյց տուած համակրութեան եւ օգնութեան պատճառաւ։

Ցայտնի է, որ վերոյիշեալ հինգ նահանգներից չորս առաջիններն

եւ Հայաստանի հարազատ եւ անբաժան մասերն էին կազմում, Արցախ, Սիւնիք եւ Ուտիք կոչվելով։ Մեր հայրենիքի անկումից յետոյ, Մելիք կոչվող հայ իշխանների անընկճելի քաջութեան շնորհիւ, այդ նահանգներից մանաւանդ Ղարաբաղինը կարողացաւ պահել իր կատարեալ ինքնօրէնութիւնը մինչեւ 1800 թուականները։ Իր հինգ Մելիքների առաջնորդութեամբ Ղարաբաղը կարողանում էր հանել պատերազմի դաշտը 60–70 հազար զօրք, որով պաշտպանում էր արիաբար իր ինքնիշխանութեան իրաւունքները, երկաթեայ օղի պէս չորս կողմից սխմող զօրաւոր թշնամիների դէմ, ինչպէս էին Պարսիկները, Վրացիք եւ այլ լեռնական վայրագ ցեղեր։ Իսկ եթէ յաղթահարվում էին Մելիքները գերազանց ուժերից, այդ էլ հաղիւ թէ հասնում էր մինչեւ Պարսից աւագիշխանութիւնը իրանց վրայ ճանաչելը, ընդունելով իրանց մէջ նոցա ներկայացուցիչ խաներին, ինչպէս մի ժամանակ հայոց նախարարները նոյն պետութեան մարզպաններին։

1822 թուին Ռուսաց կայսր Մեծն Պետրոս Դերբենտ գալով, խոստացաւ հայոց Մելիքներին՝ վերադառնալ շատ զօրքերով Կովկաս, մի քանի յեղափոխութիւններ կատարելու համար, որոնց մէջ, իբր թէ, առաջինը պիտի լինէր՝ հայոց հինգ նահանգներից մի անկախ պետութիւն կազմելու գործը, Ռուսաց հովանաւորութեան ներքոյ։ Պարզ դիւանագիտական խաղ էր այսպիսի յուսադրութիւն թէ ռուսական անհրաժեշտ հաշիւների հետ կապված խոստում — Աստուած դիտէ. իրողութիւնը միայն այն է, որ կայսեր մահը վրայ հասնելով, խափանեց նորա վերադարձը եւ Մելիքների պլանները։ Չնայելով սորա, Ղարաբաղի քաջերը մինչեւ վերջին շունչը կռվում էին շրջապատող թշնամիների դէմ, ինչպէս պողպատեայ վանդակի մէջ փակված առիւծ ամեն կողմից սուր մխաղների հետ։ Սոցա սխրագործութեանց պատմութիւնը միայն այս օրերս լոյս ընծայեց ռուսահայ բեղմնաւոր հեղինակ, մեր յարգի բարեկամ Պ. Ռաֆֆին։

Լինելով ընդհակ Ղարաբաղցի, Մադաթովը գործ ունէր հիմայ այն թշնամեաց հետ, որոնց դէմ այնչափ անձնուիրաբար մաքառել էին Մելիքները եւ բիւր փայլուն աւանդութիւններ թողել նորա մտքում։ Այդ աւանդութիւններով էր զօրացած Մադաթովի հոգին, որը՝ Ղարաբաղցի կամաւորներով եւ մի բուռը Ռուսական զօրաց մասնակցութեամբ, դուրս եկաւ Թիֆլիսից Արքաս–Միրզայի ստուար բանակի դէմ։ Ռուս զօրաց ընդհանուր հրամանատարը Կովկասում գեներալ Երմոլովն էր, Նիկողայոս կայսեր աչքից ընկած մի յայտնի զօրավար,

որն իր սահմանադրական ուղղութեան համար, աքսորված էր Կովկաս, անդուսպ տարրերի նուաճմամբ «իր մեղքը քաւելու։» Չ'նայելով մինչդեռ իր յեղափոխական ազատախոհութեան, Երմոլովը յայտնի է Կովկասեան ազգերի մէջ իբր տիպար դաժան եւ խստապահանջ զօրականի։ Խիստ հաղուագէպ կ'երեւար նա ժողովրդի աչքին, իսկ երեւալիս էլ միշտ լուրջ եւ խոժոռած կ'պահէր իրան։ Այս չինծու ընթացքը ընտրած էր նա, ասում են, Մադաթովի խորհրդով, որն ի մօտոյ ճանաչելով Ասիական սորկային յատկութիւնները —ըստ որում քաղցր վարք եւ սիրալիր յարաբերութիւն սոսկ տկարութեան նշան են ճանաչվում— բարեկամաբար ազդարերել էր Երմոլովին՝ այնպէս վարել իրան, որ նուաստաբարոյ ժողովուրդը երես չառնէ, այլ միայն դահճի եւ վարազի տեղ ընդունէ նորան . . . ։

Լինելով ուրեմն Մադաթովի մտերիմ բարեկամը, բնական էր, որ Երմոլովը նորան սլիտի յանձնէր Աբբաս-Միրզայի հեղեղածաւալ արշաւանքը կասեցնելու պաշտօնը։ Բայց որչափ էր Մադաթովի զօրքը՝ թուով լինելու համար երկու ահռելի հակառակորդներին, որոնցից մինը Վրաստանի գահախնդիր եւ Ռուսաց անողոք թշնամի, արքայորդի Ալէքսանդրն էր (*), միւսը Ամիր-խան սերդարը։ Սոքա երկուսը աջակցած, սլանում էին Թիֆլիսի վրայ, ունենալով առաջապահ գունդերը Ալէքսանդրի եւ մի դաս Վրաց Ռոազնեբէ (աղնուական) ձեռքի տակ։ Մադաթովը ունէր միայն երեք վաշտ (բատալիոն) կանոնաւոր զօրք եւ չորս թնդանօթ. սլատահելով Ալէքսանդրին, Թիֆլիսից մի օր ճանապարհ հեռու, Մադաթովը ճակատամարտ բացեց նորա հետ եւ, առանց մեծ դժուարութեանց, ջարդուփշուր անելով, փախստական արեց շրջապատող անմատչելի լեռները։ Հերթը հասաւ Ամիր-խան սերդարին, որի հետ միացած էր եւ Աբբաս-Միրզայի որդին։

Սերդարը տասը հազարի չափ կանոնաւոր զօրք ունէր եւ մի այդչափ էլ կամաւորներ տեղացի մուսուլման ապստամբներից։ Թէպէտ

(*) Այս անվեհեր իշխանազն եւ անվհատ թագաւորդիրը, Վրաց պատմութեան այս ճշգրիտ Դօն-Կարլոսը, ամուսնացած էր Երեւանցի Մելիք Աղամալի աղջկայ հետ, որից ծնված արու զաւակ։ Իշխան Հերակլը, միայն երկու ամիս առաջ վտանգեցաւ, իսկ նորա հայ արիւն եւ հայախօս մայրը, Վրաց թագուհին դեռ կենդանի է։ Իր այդ մօր շնորհիւ, հանգուցեալ Հերակլ իշխանը շատ լաւ կ'խօսէր եւ կ'կարդար հայերէն, լինելով իր ժամանակ «Մասեաց Աղաւնու» եռանդուն բաժանորդը եւ ընթերցողը։ —

Մադաթովի անունը միայն հերիք վախ սիրտի ներշնչէր թշնամուն ու բարոյապէս լիովին ջլատէր նորան, բայց խոհեմութիւն էր՝ փոքր ինչ ստուարացնել իր երկու-երեք վաշտերի թիւը հայ կամաւորներով, իսկ սորա համար պէտք էր քիչ ժամանակ վաստակել։ Թէպէտ հայ զինուորների մի մասը մինչեւ Թիֆլիս էր ամապարել իրանց արիւնակցի աջակցութեան, բայց հիմայ, աւելի հանդիսաւոր ճգնաժամին, կամաւորները դունդագունդ էին խռնվում Մադաթովի շուրջը։ Մինչեւ որ ամեն կողմից նոքա վաղիվաղ խմբվելու վրայ էին, Մադաթովը դրած ածեց հետեւեալ հնարքը, Պարսիկների յարձակումը յետ պահելու համար։ Հաւաքել տալով մօտակայ գիւղերում գտնված բոլոր գրասաը՝ ձի, եզ, կով, խոզ, հորթ, գոմէշ եւ ոչխար, հրամայեց վաղեցնել այդ ամենը իր բանակի շուրջը ցերեկվայ չոր եղանակին (օգոստոս ամիս, 1826 թ.)։ Այս տարօրինակ դրաստարշաւից սարսափելի փոշի եւ աղմուկ բարձրացաւ, որը տեսնելով Պարսիկները մտածեցին թէ դա՝ անհամար զօրքեր են, որ իրանց արշաւով օգնութեան են գալիս Թիֆլիսից։ Այս համոզումը գոյացնելով, ոչ միայն յետաձգեցին յարձակումը Մադաթովի վրայ, այլ եւս բաւական շուարվեցան, չիմանալով թէ՝ ինչպէս դիմադրեն «ահագին զօրութեան»։»

Կամաւորներով բաւական ուժովանալուց յետ, անմիջապէս յարձակվեց Մադաթովը թշնամու վրայ, Շամքոր գետի ափում, ուր սարսափելի ջարդ տալով նորան, սպանեց Ամիր-խան սերդարին, իսկ մնացածներին ցիրուցան փախուստի դարձնելով, սկսեց հալածել, ամենեւին կանգ չառնելով մինչեւ Գանձակի սլատերը։ Գանձակում այդ ժամանակ երկու հազարի չափ բերդապահ զօրք կար, Պարսից մի խանի անօրինութեամբ։ Տեսնելով սարսափահար եղած իւրայիններին առանց գլխաւորի, սոքա եւս ամապարեցին փախչիլ, թողնելով Գանձակը Մադաթովի ձեռքին, առանց նաեւ մի գնտակ արձակելու։

Այս ժամանակ էր, որ եկաւ Գանձակ, հրամանատարութիւնը Մադաթովից առնելու համար, Նորա փառաց յայտնի նախանձորդ գեներալ Պասկեւիչը։ հայ կամաւորների արիւնով Մադաթովի եռած փլաւը Պասկեւիչը սիրախ ուտէր հիմայ, ձրի դամենիներ ժողովելով։ Բայց լսելով թէ՝ Աբբաս-միրզան դալիս է իր վրայ քառասուն հազար կատաղած զօրքով, Պասկեւիչը մնաց շուարված, որովհետեւ անհամեմատ աւելի քիչ զօրք ունենալով, չ'գիտէր թէ ինչպէս սիրտի դիմադրէր։ Մինչդեռ նորան ստորադրված Մադաթովը լաւ գիտէր,

որ պաշտպանողական դիրք առնել, կ'նշանակէր անիրկբայելի յաղթութիւն տալ Պարսից, որոնք, ինչպէս Ասիական ազգ, ընդհանրապէս դիւրաւ քաջալերվող են, չ'տեսնելով յարձակում եւ կախած սուր իրանց գլխին։ Մադաթովի ազդու առաջարկութեամբ, Պասկեւիչը սպայակոյտի խորհուրդ կազմեց, պաշտպանողականի եւ յարձակողականի խնդիրը ձայների մեծամասնութեամբ որոշելու համար։

Այս նշանաւոր ժողովումն էր, որ հանդիպելով անդադար շողոքորթ սպաների ընդդիմադարձութեան իրան եւ ձայնակցութեան Պասկեւիչին, գոռաց Մադաթովը համբերութիւնը կորցնելով. «լռեցէք, վատեր, չ'դիտէք, որ սերովբեների առաջ էշերը չ'պիտի ղռան»։ Զարաչար անարգանքի հետ սպայակոյտին, Մաշամովը շոյում է այսպիսով եւ Պասկեւիչի անձնասիրութիւնը, սերովբէների դասը շարելով նորան։ Մրրկալից վիճաբանութիւններից յետ, Պասկեւիչը հակվում է վերջապէս Մադաթովի կողմը, որով վճռում են ճակատել Աբբաս-Միրզայի դէմ, նորա վրայ յարձակելով։—

Ճակատամարտը տեղի ունեցաւ Գանձակի առաջ եւ նորա վախճանն այն եղաւ, որ արիւնահեղ կռուից յետ, տասնապատիկ աւելի զօրաւոր թշնամին սպառսպուռ ջախջախվելով, նոյնպէս փախուստի դարձաւ։ Իսկ փախչող զօրաց ջարդն էլ հասկանալի է. ձիաւոր Հայերը եւ Ռուս կօզակները ճանճի պէս կին կոտորում եւ բռնում ահաբեկ հալածականներին։ Թէ ինչ սոսկալի արհաւիր էր տիրել Աբբաս-Միրզայի փախչող զօրքերին, ահա ժողովրդի մէջ մնացած մի աւանդութիւն։ Պարսից թիկնահներից (ջանբազ) մի ղինւոր, յոգնեցնելով ձին, թողնում է նորան ու սկսում ոտով փախչիլ. փեշը ընկնում է յանկարծ մոչի (մորենի) մացառով, որին Ռուս կարծելով, էլ առանց դէպի յետ նայելու, խեղճ Պարսիկը թաղցնում է գլուխը մացառի մէջ ու սկսում դորսի պէս կռկռալ, ասելով. «աղտ սօղաթ, սէրվէզ տէ յիլ էմ, կուրլուղայ էմ, կուրլուղայ էմ։» Այս աւանդութիւնը շատ Ղարաբաղցիներից եմ լսած, ինչպէս եւ այն թէ գերի ընկած խաներից շատերին պատել տուաւ Մաթաթովը, ասելով. «դէ հիմայ իմացէք թէ Ղարաբաղի հողը կոխած ոտը, ինչպէս յետ կ'երթայ։» Շամքորի եւ Գանձակի յաղթութեամբ Մադաթովը ոչ միայն Թիֆլիսը ազատեց, այլ եւ Գանձակը, Ղարաբաղը եւ ամբողջ Անդրկովկասը, որը ձգելով, փախան Պարսիկները դէպի Ատրպատական։ Երասխից այս կողմը եղած բոլոր երկիրները մնացին Ռուսաց ձեռքին։

* * *

Իշխան Ռուստամ Մադաթեանը մի հասարակ գիւղացու զաւակ էր, Մելիք-Շահնազարեանների հպատակներից։ Մելիք-Շահնազարի որդի Մելիք-Ջիւմշիւդը եւ մի քանի ուրիշ Մելիքներ գնում են Պետերբուրգ-Պողոս կայսեր ժամանակ-իրանց հպատակութիւնը նորան անձամբ հաւաստելու համար։ Մադաթովը այդ ժամանակ 8-9 տարեկան երեխայ էր եւ մայրը Մելիք-Շահնազարանց հացթուխը։ Որովհետեւ Մելիքների կեանքը եւ նոցա յարաբերութիւնները իրանց հպատակների հետ պարզ, ազատ եւ նահապետական են եղած-այժմեան Զէրնօգօրցոց Իշխանի եւ վոյէվոդների պէս-ուստի տան ծառաները եւ ապասուհիք նկատված էին, ինչպէս գերդաստանի հարազատ անդամներ. մանաւանդ յարգի պիտի լինէր հացթուխը, որի գործը վերաբերվում էր տան մէջ սրբօրէն պաշտված լիւութեան՝ հացին։ Տեսնելով Ջիւմշիւդը, որ իրանց հացթուխի սիրեցեալ զաւակը լաց է լինում իր յետեւից, նորան եւս վեր առած տանում է Պետերբուրգ, ուր ընդունվում են հայ Մելիքները Իշխանավայել հիւրասիրութեամբ։ Արքունեաց մէջ կարծում են Ռուստամին հայ պատուիրակներից մէկի զաւակը, որով առաջարկում են նորան՝ մնալ Պետերբուրգում, ուսում առնելու համար։ Ռուստամը մնում է եւ ընդունվում կայսերական մանկլաւիկների (պաժ) վարժարանը, որը մինչեւ հիմայ դեռ կայ, նոյն անունը պահելով։ Որովհետեւ Մելիքներին Իշխան են ճանաչում, այդ պատճառաւ Մադաթովին էլ Կնեազի տիտղոս են տալի. հետեւապէս այդ ազնուապետական մենաշնորհը նա չէր առած պատերազմում, այլ գտած էր Մելիք-Ջիւմշիւդի շնորհիւ, որն ցոյց էր տուած նորան իբր իր ազգական։

Գ. Ռաֆֆին Խամսայի Մելիքութեանց մէջ, ուրիշ կերպ է պատմում Մադաթովի Պետերբուրգ ընկնելը։ Ըստ նորա՝ Մադաթովը Մելիք-Շահնազարանց Ջորեպանի տղան էր, որը 14 տարեկան հասակի մէջ, գլուխ վեր առած, փախչում է տանից։ Ռուսաստան գնալիս, երբ հասնում են Մելիքները Համտարխան, մէկ էլ տեսնում են, որ իրանց Ջորեպան Գիւքի (Գրիգոր) տղան այս տեղ է, ուր մի գինեվաճառի մօտ մնալով, բաւական ռուսերէն է սովորել։ Իրանք, Մելիքները, բնականաբար այդ լեզուն չիմանալով, վեր են առնում Ռուստամին հետները, ճանապարհին թարգմանի տեղ գործածելու նպատակաւ։ Այսպէս, Մելիքների աչքում հաղիւ մի մեծեղի չափ կշիռ ունեցող Գիւքի տղայ Ռուստամը, մնում է Պետերբուրգ եւ դառնում այն հռչակաւոր զօրավարը, որին արդէն տեսանք։ Ճիշդ նոյն ճանապարհով եւ նոյն Համտարխան քաղաքից է ընտրել բաղաը

Բոնապարտի անուանի օգնական ու Նէապոլիտանի թագաւոր իշխան Մուրատին, որի հայ լինելու մասին, Կովկասեան փոխարքայի առաջ Լազարեվի տուած վկայութիւնները մէջ կ'բերենք մի այլ առթիւ։

Ինչ եւ իցէ, բաւական այնպէս է տնօրինում Մադաթովի վիճակը, որ լինելով Մելիքների ջորեպանի կամ հացթուխի զաւակ, ճանաչվում է իշխան, իսկ Մելիքները, պաշտօնական վաւերացման ժամանակ, համարվում են պարզ ազնուականներ (դվորեանին), չնորհիւ հայատեաց վրացի իշխան Ցիցիանովի։ Լինելով կովկասեան զօրաց հրամանատար (1802–1806), իշխան Ցիցիանովը ձեռնարկում է երկրի ազնուականաց ցուցակի կազմութեան, բարձրագոյն հաստատութեան ներկայացնելու համար։ Այդ ցուցակի մէջ, հայոց Մելիքներին նա ներկայացնում է իբր դվորեանին–պարզ ազնուական, իսկ վրաց Ռաստոդներին, իբր կնեազներ։ Մինչդեռ յայտնի է, որ վրաց թագաւորների մեծագոյն մասը ազնուականութեան պատուանուն է ստացած իրան թագաւորներից, չլինելով որ եւ մի երկրի տէր, այլ սոսկ մի ձի, մի գերցրած խոյ, մի քանի տակառ կախեթի գինի իրանց դոբրոյմանդ խեմնեէին (առատասիրտ թագաւոր) ընծայելու փոխարէն. իսկ շատ անգամ էլ թագաւորի սեղանի մօտ, քէֆի ժամանակ, լաւ ղոռնա, ռաա, գոզ, էֆոմանչ եւ զենդ ածելու համար, կամ թէ չէ՝ բռնամարտութեան մէջ անուն հանելով։ Այդ բռնամարտութեան, կամ մուշտի կռիւ, աքաղաղային սովորութիւնը մինչեւ հիմայ եւս մնացած է Թիֆլիսում եւ Վրաստանի այլ քաղաքներում, ուր ընտիր մուշտի խփողը, հասարակութեան եւ իշխանների հիացման ու ոխանայի առարկան է լինում, որով բացվում է նորա առաջ իւրաքանչիւր վրացու գրպանը, մանաւանդ նորա մէջ մի քանի կոպէկ գտնվելու հազուադիւտ դէպքում...

Մելիքների այսպիսինուաստացման միջոցին, իշխանականխիտղոսը պահելով, Մադաթովը արդէն ուսումը աւարտելու վրայ է լինում մանկլաւիկների վարժարանում, ուր տեղից դուրս է դալիս նա սպայի առաջին աստիճանաւ, մտնելով կայսերական հուսեարների հեծալազօր գունդը։ Մի քանի տարից յետ նա կռւեց այս գունդի մէջ Նապոլէոն Բոնապարտի դէմ, զինակից ունենալով իր հետ Լազարեանների հռչակաւոր գերդաստանից մի քաջ երիտասարդ, որն սպանվեց թինդանօթի ռումբով Լայպցիգի մօտ եղած պատերազմում։ Իսկ Մադաթովը ողջ–առողջ մնում է փարիզ, Ռուսաց զօրաց հետ, արդէն հարիւրապետի աստիճանաւ։ Այս տեղ պատահում է նորան մի հետաքրքիր դէպք, որի պատմութիւնը բերված է Ղարաբաղ Մա-

դաթովի անբաժան ծառայ Ցարութիւնը, որն երկայնահասակութեան պատճառու, Զօլ (երկար) Արթիւն էր ասվում։ Զօլ Արթիւնի շատ պատմածներից Ղարաբաղում, հետեւեալ անցքը միայն մէջ կ'բերեմ։ Մադաթովի Ռուս ընկերները ձերնարկում են փարիզում, Ֆրանսիական մի դաս սպաների հետ, շաՀ ասվող թղթախաղի։ Այսպիսի խաղ, որ մեծաքանակ գումարներով է կատարվում, շատերի դրժբաղտութեան պատճառ դառնալով, պաշտօնապէս արգելված է այժմ Ռուսաստանում, թէպէտ քիչ չէ պատահում որ անարգել թալանեն միմիանց խաղացողները, ժողովարանների դռնիակ սենեակներում։ Խաղը սովորապէս երկար չէ տեւում եւ նշանակած գումարը կամ առձեռն պէտք է ունենալ կամ թէ վստահելի մէկի երաշխաւորութեամբ անդորրացրած։ Ունենալով, խաղին պայման դրած, մի քանի միլիոն ֆրանկ ոչ կանխիկ եւ ոչ երաշխաւորած ապառիկ, Ռուս սպաները դիմում են յետադայ մէջոցին։ Համաձայնեցնում են Մադաթովին, ինչպէս պատերազմական շատ վտանգներում բաղտաւորութեամբ փորձված մէկին, իր երաշխաւորթեան եւ անունի վրայ առնել մեծագումար խաղի վճարը։ Իսկ Ֆրանսիացի սպաների վստահութիւնը վաստակելու համար, յանձն են առնել տալիս Մադաթովին՝, ցոյց տալ իրան Ղարաբաղի սեփականատէր իշխան, որից յետո, քարտէզը բերելով, ամբողջ սպայական խմբի վկայութեամբ, գրաւ են են դնում Ղարաբաղի նահանգը։ Տեսնելով, որ բոլոր Ռուս սպաները Ղարաբաղի տէրն են ճանաչում Մադաթովին եւ պաշտօնական վկայաթուղթերով էլ իրօք նա իշխան է, Ֆրանսիացի ջէնտլմէններն էլ բնաւ կասկած չեն տանում ճշմարտութեան վրայ։ Մինչդեռ այսպիսի մի անվեհեր յանձնառութիւն բացորոշապէս դոյութեան եւ չդոյութեան խնդիր էր Մադաթովի համար. որովհետեւ՝ «Ֆիցերական պատուով երաշխաւորած մի խոստման դրժելը, ուրիշ ելք չէր կարող ունենալ իր վարչութեան առաջ, բացի աստիճանազրկութիւն, դուցէ եւ աւելին։—

Սոսկալի պատասխանատուութիւնը վրան առած, չուբուկը ղրղրացնելով, սառնասրտութեամբ նստում է Մադաթովը պատչդամի վրայ՝ երբ ընկերները սկսում են խաղալ նորա սնունով։ Վիճակը որոշելու համար երիու–երեք վայրկեան է մնում, խեղճ Զօլ Արթիւնը շուարված, չ'գիտէ թէ ինչ անէ, իսկ Մադաթովը՝ հանգստութեամբ չուբուկը ծխելով, ասում է. «Արթիւն, հէնց որ տեսար բանը բուրդ է, ասա, բայց չ'լինի թէ Ղարաբաղում իմանան թէ ինձ ջուրն եմ դցել. կ'ասես թէ սպանեցին։» Անվախ Ղարաբաղցին նստում է

Սենայ գետի գլխին այն վեհողական մոռադրութեամբ, որ բարձր պատչգամից իրան գոչ գետը, հէնց որ խաղի մէջ կորցրեց։ Ցանկարծ դոչում են. «ուրա, իշխան, տարար։» Այսպիսի մի տագնապալից վայրկեանի մէջ, երբ մահը հոգուն կպած է լինում, Մադաթովը այնչափ կամք եւ ինքնավստահութիւն է ունենում, որ յուզման մի նշոյլ անգամ ցոյց չ'տալով, դիտում է անհոգաբար, չուբուկը քաշելով. «ինչ անենք թէ տարայ. ինչ կայ այդ չափ այլայլվելու։»

Ռուսա-Ֆրանսական գործերը վերջանալուց յետ, Մադաթովը երկար չէ մնում Ռուսաստանում, այլ փոխադրվելով Կովկաս, կռվում է լեռնականաց եւ Պարսից խաների հետ, նախքան Աբբաս-Միրզային պատուհասի հասցնելը։ Խաները, լինելով Պարսից ներկայացուցիչները Շաքուայ, Շիրվանի, Գանձակի եւ Ղարաբաղի նահանգներում, հաստատված էին այդ տեղ երկար ժամանակ, ինչպէս պարսիկներից գրեթէ բոլորովին անկախ իշխաններ։ Ճնշելով եւ ջնջելով հետզհետէ հայ տարրը, մանաւանդ Շաքուայ (հին Սակաչէն) եւ Շիրվանի նահանգում (Աղուանից երկրի մի մասը), խաները մահմեդական պրոպագանդայի բոյն էին դրել այդ տեղ ամբողջ Կովկասի վերաբերմամբ։

Այս տեղ անցողակի կերպով ասենք թէ՝ Շաքուայ եւ Շիրվանի քրիստոնէից համար, Մադաթովը մի անմոռանալի դիւցազն է, որովհետեւ հայ անունը կրելով, մի հոգեհան դեւ է եղել նա այն խաների համար, որոնց աչքում հայ ասելը մինչեւ այդ՝ աւելի քիչ բան էր, քան թէ անվեհերութեամբ նոցա քթի վրայ երբեմն նստող ճանճը ու մոծակը։ Այդ մոծակների միջից դուրս է գալիս յանկարծ մի փիղ, որը, կնճիթի ամենաթեթեւ շարժումով, այնպէս է նետում խաներին իր գլխի վրայից, որ Շաքիից եւ Շիրվանից նոքա ընկնում են ուղղակի իրանց եկած տեղը, Պարսկաստան։ 1817 թուին, Աբբաս-Միրզայի հետ գործ ունենալուց գրեթէ տասը տարի առաջ, նշանակվելով Ղարաբաղի, Գանձակի, Շաքուայ եւ Շիրվանի խանութեանց ընդհանուր տնօրէն եւ կարգադրիչ, Մաթադովը վարվում էր այդ գաւառներում մնացած խաների եւ բէկերի հետ աւելի անողոք խստութեամբ, քանթէ նոքա վարված էին, դարերի ընթացքում, իրանց հպատակած չարաբաղտ քրիստոնէից հետ։ Գործ դնելով այսպիսի խստութիւն, Մաթադովը ուզում էր միանգամ ընդ

միշտ խորտակել այն աղդեցութիւնը, որ ունէին տիրապետող հաբստահարիչները ահաբեկ ժողովրդի վրայ։

Պատմում են, որ մի օր դարաբաղցի գեներալի խելքին փչում է հրաման ուղարկել Նուխուայ, կարծեմ Սելիմ-խանին որ՝ լոյս-ցերեկը ուղարկէ իրան իր աւագ կինը, նաժիշտներով շրջապատած։ Էլ հասկանալի է թէ ինչ հարուած էր ժողովրդի աչքում այսպիսի մի պատգամ մուսուլմանների խանին։ Չ'հնազանդելու դէպքում հաստատ մահը աչքի տակ ունենալով, ճարակտուր խանը դիմում է այսպիսի խորամանկութեան. զարդարել տալով աղախիններից մէկին եւ շրջապատելով նորան իր կնոջ վայել շքով, ուղարկում է Մադաթովին, միեւնոյն ժամանակ կինը եւ որդիքը վեր առած, գիշերը, պուկ է գալիս Պարսկաստան, էլ երբէք Մադաթովի երեսը չ'տեսնելու համար։ Այսպիսի տխուր ու զաւեշտական միջոցներով Մադաթովը մաքրում է իրան յանձնած խանութիւնները նոցա մէջ մնացած բոլոր քրիստոնէական «բարերարներից» ի մեծ մխիթարութիւն հայերի, որոնց աչքերը հարիւր ու մէկ երգեր հիւսելով, փոխարինում են Պարսից Գէօր-օղլին եւ Ռուստամ-Զայը հայոց Ռուստամով։ Այսպիսի քմահաճութեանց հետ միատեղ-իհարկէ զօրաւորների հետ- Մադաթովը մեծ բարիք է անում խաղաղ եւ ընկճված ժողովրդին, նոր կարգեր, ատեաններ եւ դատավարական օրէնքներ սահմանելով նոցա համար։ Սորանից յետ, այլ եւ այլ զինուորական եւ վարչական պաշտօններ վարելով, Մադաթովը ճակատում է վերջապէս Աբբաս-Միրզայի դէմ, որի մասին արդէն խօսեցինք։ —

Վերոյիշեալ խանութիւնները կառավարած ժամանակը, Մադաթովը մեծ հարստութեան է տիրանում, բազմաթիւ գիւղեր եւ կայքեր վաստակելով Ղարաբաղի նահանգում. այնպէս որ, այն կատակը, որն անում է Մադաթովը Փարիզում, անուանելով իրան Ղարաբաղի սեփականատէր իշխան, այդ կատակը, որ եւ է մի տասնեակ տարուայ մէջ, դրեթէ կատարեալ իրողութիւն է դառնում։ Այսպիսի հրաշանման փորձերն են գուցէ յառաջ բերել հայ ժողովրդի մէջ այն հաւատը թէ՝ մարդ, ինչ որ դնէ մտքումը, գործէ, աշխատէ ու համբերէ, Աստուած կ'յաջողէ այն, եթէ նպատակը բարի է եւ վաստակը արդար։ Սորանից էլ աւելի հրահանգիչ խրատ եւ միանգամայն անժխտելի ճշմարտութիւն ոչը կարող է լինել մեր անհատական եւ հասարակական կենաց ասպարիզում։ Բող այդ ճշմարտութիւնը ունենայ իրան քաջալեր իւրաքանչիւր հայ պատանին, որը, ծաղիկ հասակում, մթնաշնում է իր պայծառ օրերը ծանր աշխա-

տանքի եւ զրկանքների մէջ, հայրենիքի պարզ երես զաւակը դառնալու համար...»

«Առանց պակասութեան դեղեցկութիւն չի լինիլ» ասում է առակը, եւ արդարեւ. տիրանալով այնչափ հարստութեան, պատուի, անուան ու մեծութեան, Մադաթովը ոչ միայն մոռանում է Մելիք-Ջիւմշիւդի եւ իրան Պետերբուրգ տարած այլ Մելիքների երախտիքը, այլ եւս նա է լինում Մելիքներին զրկողը, նոցա կայքն ու գոյքը յափշտակողը եւ օտարներին բաժանողը։ Մադաթովը եղաւ նոյնպէս Ռուսաց բանակին այնչափ մեծ ծառայութիւններ մատուցած հայ կտրիճներին անտես անողը եւ նորանց տուած իր խոստումներին դրժողը։ Թէ՛տէտ Մադաթովը արդարացնելիս է եղել իրան, ասելով թէ՝ իր օգնն է հանում Մելիքներից, երեւայութեան ժամանակ իրանց պալատների համար մէջքով նորան քար կրել տալու փոխարէն, բայց այդպիսի արդարացում միայն տարդի եւ փոքրհոգի մարդուն վայելող վարք է, այլ ոչ Մադաթովի նման մի մեծահռչակ զօրավարին պատիւ բերող։ Իր այդ վարմունքով, Հայերի եւ Մելիքների հետ, Մադաթովը արդարացրեց միայն այն առածի ճշմարտութիւնը, որ ասում է. «Քոչայից փաչայ չի դառնալ։» Այսպէս չէին մինչդեռ Մադաթովից էլ գուցէ աւելի մեծ եւ անուանի հայ զօրավարներ ինչպէս՝ Արղութեան-Երկայնաբազուկ, Լազարեւ եւ Տէր-Ղուկասով, որոնց ասպետական մեծահոգութեանց օրինակները կ'բերինք, հերիք նոցա հասած ժամանակը։

Մադաթովի մի ուրիշ տգեղ արարքը՝ նորա կրօնափոխութիւնն է, որի համար ի զուր այնչափ զղջում կ'յայտնէր նա իր կենաց վերջերում։ Ո՛, Մադաթովի նման որչափ դժբաղտներ ենք տեսած Ռուսահայոց մէջ, որոնք դաստիարակվելով, մանկութեան ժամանակից, Ռուսաց կադետական (զինուորական վարժարան), ստանալով մի քանի կլոկտուր եւ չ'մարսած ազատական մտքեր, խորթանում են հօրից եւ մօրից, արհամարում են եւ անարգում նոցա արտասուքը եւ աղերսալից յորդորը ու չլանալով զանազան անուտի հրապոյրներից, դնում են ամուսնանում օտար աղջիկների հետ։ Անմխիթար ծնողաց կսկծալից խօսքերը նոցա համար հարկաւ այլ եւս «հին» եւ «խելքից ցընդած» մարդկանց բարբանջանք են երեւում. բայց չէ անցնում երկու-երեք տարի, ամուսնութեան ոսկեղօծ շրջանից էլ անճանաչելի է դառնում մեր «աղամիտ» եւ «ինքնասիրատենչ» հայրենիքը։ Խիղճը վրդովուած, միտքը մոլորված, սիրտը դատարկած, ոչ հայ, ոչ օտար, նա մնում է անվերջանալի մատաղջուխ[illegible] չատ ան-

գամ իսկ չ'կարողանալով տանել իր կարճամտութիւնից յառաջ եկած տաժանելի վիճակը, բարձի թողի է անում իրան, անձնատուր լինում թղթախաղին, խմիչքին եւ ուրիշ տեսակ ցոփութիւնոց ու վերջացնում կեանքը ամենաողորմելի կերպով։ Ահա սա է եղած մեր տեսածների գլուխ է ամենքի վիճակը։ դիւրին բան չէ, թուրը տատասկի հետ պատուաստելը։ Թէ որչափ զղջում եւ մտատանջութիւն է պատճառում Մադաթովին Ռուս աղջկայ հետ ամուսնանալը, այդ մասին մէջ կ'բերենք նորա յատուկ խօսքերը, իր մտերիմ ծառայ Արթիւնին յայտնած։ առ այժմ դեռ լրացնենք նորա գործերի պատմութիւնը։

Շամքորի եւ Գանձակի ջարդով դեռ չեն վհատվում Պարսիկները, այլ անցնելով Երասխից դէն եւ տեսնելով, որ Ռուսները չ'են գալիս յետեւներից, կրկին չունչ առած, պատրաստվում են կռիւը նորոգելու հետեւեալ գարնան։ Վասնորոյ, այս պատրաստութիւնները արգելելու համար, Երմոլովը յանձնարարում է Մադաթովին, մի անակնկալ ձմերային արշաւանք գործել Պարսկաստանի վրայ։ Պարսից ոխերիմ Մադաթովն էլ հէնց այսպիսի առթի էր սպասում. ունենալով հետը միայն մի վաշտ կանոնաւոր զօրք, նա կրկին հրաւէր է կարդում հայ կամաւորներին, որոնք նոյն անխնայ հաւատարմութեամբ ժողովվում են Մադաթովի շուրջը եւ չ'նայելով Պարսից ցոյց տուած ընդդիմադրութեան, ձիւն-ձմեռը ճեղքում են անցնում Երասխ գետը, տապալում իրանց դէմ դնող զօրութիւնները եւ կրկին աջ ու ձախ սարսափ տարածում։ Պարսկաստանի Հայերը, կարծելով թէ իրանց յաղթող արիւնակիցներն էլ չ'պիտի թողնեն գրաւած տեղերը, մեծ ոգեւորութեամբ միանում են նոցա հետ Մադաթովի դրօշակի տակ։ Բայց աւաղ խեղճերին. Մադաթովը հրաման է ստանում յանկարծ, բաւականանալ իր կատարածներով ու յետ դառնալ Պարսից հողից. անհեռատես Պարսկահայերը մնում են յուսահատութեան մէջ։ Որանից յետ է, որ տեղի է ունենում աղգաւեր շարժումը Պարսկաստանից, որով 40 հազար հայ ընտանիք ստիպված են լինում աղի արտասուքով թողնել իրանց լի եւ բարգաւաճ տները-տեղերը ու գաղթել Կովկաս, որ եւ է մի քանի տասնեակ տարիների ընթացքում, հայութիւնից խորթանալու ու իսպառ նորանից դուրս դալու համար... Մինչդեռ մնալով իրանց հայրաւանդ բնակավայրերում, 40 հազար հայերը մինչեւ հիմայ գոնէ եռապատիկ բազմանալով, կ'կազմէին Պարսկահայաստանի մէջ մի ահագին ամբոխ զօրութիւն, պահելով միանգամայն աղգային ամեն հարազատ բարեմասնութիւն-

ները։ Նոյն աղդագործան սխալը ունեցան եւ Տաճկահայերը, 90 հազար հոգու չափ հետեւելով Կարապետ եպիսկոպոսի անձնաշահ եւ աղդակործան յորդորներին 1828 թուին. նոյն չարաբաղտ վիճակին պիտի հանդիպէին եւ Երզրումի նահանգի հայերը, այս վերջին պատերազմի ժամանակ, եթէ յոյսը մնար Կ. Պոլսի պատրիարքարանի հոգատարութեան վրայ... բայց այս մասին իր տեղը... Մեր մէջ դեռ «հեղինակներ» կան, որոնք Կարապետ եպիսկոպոսին «հայոց Մովսէս» են կոչում...։

* * *

Հետեւեալ դարնան, այսինքն 1827 ին, նորոգվում է Պարսկա-Ռուս պատերազմը, բայց այս անգամ էլ առանց Մադաթովի մասնակցութեան։ Կովկասեան զօրաց ընդհանուր հրամանատարութեան մէջ Երմոլովին նոր փոխարինած Պասկեւիչը, պատեհ առթի սպասելով, իր բաղտաւոր ախոյանին հրապարակից վերցնելու համար, անմիջապէս հրաման է ուղարկում Մադաթովին՝ յանձնել զօրքերը անյայտ Ռուս գեներալ Պանկրատեւին ու դալ Թիֆլիս։ Թողնել պատերազմի դաշտը կռւի սաստիկ ժամանակ ու գնալ անգործունէութեան դատապարտվիլ, միեւնոյն էր Մադաթովի համար, ինչ մահուան վճիռ ստանալ։ Բայց հնազանդվիլը անխուսելի էր. Ջլատված ու խոցոտած Մադաթովը թողից կռւի բեմը եւ յետ դարձաւ Թիֆլիս. այստեղ հասածին պէս նա ստացաւ մի աւելի դժբաղտ եւ անսովորական հրաման, այն է, գնալ Պետերբուրգ Նիկողայոս կայսեր «գարհուր բացատրութիւններ տալու։»

Այս նոր կայծակնահար դարձուածի բացատրութիւնը ժամանակակիցների ասելով նոյնպէս Պասկեւիչի լարած ինտրիգաների մէջ է եղել։ Գաղտնի տեղեկագիր տալով կայսրին, նա ցոյց է տալիս Մադաթովին իբր «վնասակար մարդ Կովկասում», ասելով թէ՝ ամէն աղդեր այնչափ ճնշված են նորա անունով, որ դադարել են նաեւ կայսրին յիշել, չնորհիւ, իբր թէ, Մադաթովի դաղանի գործունէութեան։ Ի հաստատութիւն նորա «յանցապարտ միտումների», Պասկեւիչը վկայութիւն է բերում Մադաթովի կրօնափոխութիւնը, նպատակաւոր եւ կանխատրոշ հնար համարելով այդ, Կովկասեան զօրաց գլխաւոր եւ ազատ անօրինութիւնը գիւրաւ ձեռք ձգելու համար։ Թէպէտ պարզ ու աշխարայ էր այսպիսի տմարդի զրպարտութեան անհեթեթութիւնը, այսուամենայնիւ Պասկեւիչի կազմած ճարտար տեղեկագիրը ծանր տպաւորութիւն է գործում կայսեր վրայ, որը

մեծ հաւատ եւ կարեւորութիւն էր ընծայում Պասկեւիչի խօսքերին։ Նիկողայոս կայսեր կողմից վայելած համարմամբ, ասենք հարեւանցի, Պասկեւիչը նոյնն էր, ինչ եղաւ իշխան Բարեաթինսկին Ալէքսանդր Բ-ի համար։ Լինելով իշխան Վասիլ Բեհբութեանի ստորադրեալ սպաներից մինը, Բարեաթինսկին դառաւ սակայն նորա հրամանատարը եւ Կովկասեան փոխարքայ, չնորհիւ միայն այն սիրոյ, որ վայելում էր Բարեաթինսկին հանդուցեալ Ալէքսանդր կայսրից։ Սա եղաւ, ասում են, պատճառը Բեհբութեանի սրագահաս մահուան։ բայց Մադաթովը աւելի հաստատուն գտնվեցաւ, քանի թէ Բեհբութեանը։ թէպէտ խորին տխրութեամբ, բայց համբերութեամբ դիմացաւ նա Պասկեւիչի հարուածներին, որոնց չնորհիւ նորան վիճակվեց կանգնել կայսեր առաջ, ինչպէս կասկածելի եւ մեղապարտ մի անձ։—

Աւանդութիւնը ասում է թէ՝ երբ ներկայացաւ Մադաթովը Նիկողայոս կայսեր, ի միջի այլոց, հետեւեալ դառը խօսքերը լսեց։ «դու ինձ համար առաւել ուս յարդի էիր, քանի որ կրօնդ չէիր փոխել, իսկ հիմայ, որ ամեն կերպ կ'ուզես քեզ Ռուս ցոյց տալ, էլ քեզ պէս Ռուսներ շատ ունեմ։» Հասկանալի է ինքն ըստ ինքեան թէ ինչ սպանիչ ներգործութիւն պիտի անէին այս խօսքերը Մադաթովի վրայ։ Ունենալով ամենից աւելի իրան վշտակից իր հաւատարիմ Արթիւնը, գրեթէ ամեն օր այդ բոպէից յետ, կ'կանչէր Մադաթովը նորան ու կ'ասէր։ «Արթիւն, քանի որ հաւատս չէի փոխել եւ եաղ (օտար) կնիկ չէի առել, երաղի մէջ չարունակ մի ոսկեփայլ մերդաւ (ֆասան) կ'բռնէի։ այդ հաւը իմ բաղտս էր, որ կ'յաջողէր ինձ ամեն տեղ։ էլ այդ երաղը չեմ տեսնում, Արթիւն։ աղդի անէծքը ինձ բռնեց, է'լ կորաւ Մադաթովի աստղը։» Քանի սրատաշարժ է այսպիսի ներքին ալէկոծութեան եւ խղճատանջութեան արտայայտութիւն։։։ Մարդու իսկական պատկերը միայն անբաղտութեան մէջ կարելի է ճանաչել։ իր դժբաղտ օրերում Մադաթովը լիովին ապացուցեց, որ չ'նայելով Ռուսաստանում իր ստացած դաստիարակութեան եւ երկար կենակցութեան օտար չրջանների հետ, նորա սրտի եւ մտքի խորքում դեռ անջինջ էին մնացել Սիւնեաց երկրի յիշողութիւնները, որոնց հանդէպ Ռուս կնոջ պատկերը, ինչպէս քամնելի ուրուական, հալածում էր Ղարաբաղցի մարդու երեւակայութիւնը։։։ (*) ուստի եթէ մեր դատաստանից կախեալ լինէր

(*) Բոլոր սրտից կ'մաղթէինք, որ նոյն չարաբաղտ փոխճանին չ'հասնէր, մեր ճանաչածներից շատերի մէջ, զոնէ Լ.ապարեվի անդրանիկ որդի Ալէքսանդրը. որ

Մադաթովի արարքի վրայ վերջնական վճիռ՝ կայացնելու կարողութիւնը, դուցէ մենք բոլորովին կ'արդարացնէինք նորան, իր զգացած զղջման համար. բայց ինչ արած, որ Հայ ժողովուրդը խիստ անողոք է. նա նոյնչափ դժուար է մոռանում իր անհասների բարի գործերը, որչափ եւ դժուարաւ է ներում նոցա ունեցած ապիրատութիւնները...:

Կայսրի աչքից Մադաթովի ընկած միջոցին, Տաճկա-Ռուս պատերազմի սաստիկ ժամանակն էր Դունայի վրայ (1828 թ.): Կարդալով իր եղբայր Մեծ Դուքս Միքայէլի եւ Դիբիչի տեղեկագրերը Վարնայի անառիկութեան մասին, Նիկողայոս կայսրը, ինչպէս պատմում են, կանչում է իր մօտ պահեստի մէջ գտնված մի քանի գեներալներ ու ասում. «ով կ'գտնվի ձեր մէջ, որ անպայման խոստում տայ Վարնան առնելու. ես իմ կողմից կ'տամ նորան լիաղօր իրաւունք, ազատութիւն եւ առանց ոչ եւ է մէկից կախումն ունենալու, գործել:» Նեղասիրտ եւ խստաղահանջ կայսրը այս խօսքերի մէջ պարզապէս դժգոհութիւն է ցոյց տալիս դէպի Դիբիչը եւ իր եղբայրը: Ցառաջ է գալիս Մադաթովը ու ասում. «տէր արքայ, քո զօրքերի եւ Աստուծոյ օգնութեան առաջ ոչ տիրոջը կարող է յամառիլ. հրաման տուր ինձ քո կամքը կատարել»: Անմիջապէս բարեհաճութիւն է գտնում կայսեր կողմից, ստանալով առանձին գործող զօրաբաժնի հրամանատարութիւն, որով հետեւ առած իր անբաժան Արթիւնը, պատնում է անյապաղ պատերազմի դաշտը, ինչպէս վանդակից սլրծած արծիւ դէպի ազատ մթնոլորտ: Վարնայ հասնելուց երեք օր հաղիւ անցած, սուրհանդակ է ուղարկում կայսրին հետեւեալ աւետիքը տալով. «Ռուսաց կայսեր զօրքերը փառաւորում են իրանց սիրելեալ թագաւորի կեանքը Վարնայի ամրոցների մէջ:» Մի կողմ կ'թողնում Զօր Արթիւնի պատմածը դիշերային սարսափելի յարձակման մասին Վարնայի վրայ, այլ կ'յիշատակում սոսկ այն, որ մի չարաթ դեռ չ'անցած, փառաւոր յաղթանակը տանելուց յետ, անկողնի մէջ մերձ ի մահ պառկած յաղթութեան բաղտաւոր դիւցազնը, ասում է. «Արթիւն, ինձ դեղել են. մի թուղթ եւ գրիչ. տես որ թագաւորի ձեռքը հասնի:» Թաղման հանդէսը արքայավայել շուքով է կատարվում. քաղաքի մուսուլման եւ քրիստոնեայ բնակութիւնը միմիանց վրայ խառնված եւ ծառերի վրայ եկած ուզում է տեսնել այն մարդու երեսը, որին մի երկու օր յառաջ ոչ ոք

չ'ճանաչով իր հօրաքրոջ որդուսուսաթոր ազերսին եւ բարեկամաց խորհրդին՝ յաւերժաշնչատակ հօրը մահիցյետ, դեռաց նայնպէս օտարի հետ ամուսնացաւ:

չէր կարող մահկանացու համարել։

Ոչ մեռած, ոչ կենդան Արթիւնը գնում է սուրհանդակի հետ Պետերբուրգ եւ մնում այն տեղ մինչեւ պատերազմի վերջը, որից յետոյ գալիս է Ղարաբաղ հետեւեալը պատմելով։ Երբ գեներալները եկան Պետերբուրգ, անարկու, բայց արդարասէր կայսրը ամենը ինչ ստուգելով, կանչեց մեղաւորներին եւ իր առաջ կանգնեցրած, հրամայեց հերթով պարպել մի մի բաժակ, որի մէջ դատան խմողները մի մի կախաղան։ «Դէ, առէք ձեր վարձատրութիւնը» ասեց կայսրը, սառնասրտութեամբ նայելով հոգեվարքի մէջ չարչարվող զօրապետներին։ Սա Արթիւնի պատմածն է, որի մէջ ոչ զարմանալի եւ ոչ տարակուսելի ինչ կարելի է տեսնել, եթէ միայն մոռացած թէ ինչ մարդ էր Նիկողայոս Պաւլովիչը, որի համար, մի վայրկենի մէջ, զօրապետից զինուոր չինելը, կոմսից ճորտ, շնչողից դիակ, խիստ սովորական բան էր։ Օրինակների թւում, ահա Կովկասի փոխարքայ բարոն Ռոզէն՝ եւ Պետերբուրգի զօրաց հրամանատար կոմս Բենկենդորֆի, որոնց կուրծքից եւ ուսերից հրապարակապէս իր ձեռքով պատուանշանները պոկելով, ոտով քշեց նոցա ուղղակի Սիբերիայի հանքերը, վերջին մահապարտների հետ այն տեղ ստիպելով աշխատանք վարելու։

Ահա այսպէս վերջացրեց այն հայթուլիի դաւակը, որի անունը եթէ Հայերն էլ, Ռուսներն էլ մոռացել մոռանան, բայց նորան չի մոռանալ Պարսից աղգը եւ պատմութիւնը, ինչպէս որ վկայում է այդ Ռուս ճանապարհորդ պ. Շապիրո։ Մի երեք տարի սորանից առաջ, պտտելով Պարսկաստան պ. Շապիրոն վերադարձաւ Կովկաս ու դասախօսեց իր շրջագայութեան վրայ, որը մասամբ հրատարակվեց յետոյ պաշտօնական «Կաւկաս» թերթի մէջ։ պ. Շապիրոյի վկայութեամբ, Դաւրէժի Պարսիկները մանաւանդ երբէք չեն մոռանալ Մադաթովի անունը, որի թողած սարսափը այնչափ խոր է եղել, որ մինչեւ հիմայ դեռ կենդանի համարելով իրանց այդ չար հրեշտակին, հարցնելիս են եղել Պարսիկները, աչքը վախած մարդու ապշութեամբ։ «Եթէ հիմայ էլ Ռուսների հետ կռիւ ունենանք, արդեօք ձեր փադիշահը էլի Մադաթովին կ'ուղարկէ մեզ վրայ։ Մեռա՜թ, օվ, ձեր այդ Մադաթովից։»

* * *

1876 թուականն էր։ Պաւլովեան զինուորական դպրոցում մեր ուսման ընթացքը աւարտելու օրերն էին։ Մի քանի Ռուս ընկերների

հետ դնացինք պատելու կայսերական ձմերային պալատը, որն այցելելու ոչինչ արգելք չկար, մանաւանդ պալատական օրապահ ծանօթ ազգի առաջնորդութեամբ։ Կայսեր օգոստափառ դերդաստանը եւ ամբողջ դուռը գնացած էին արտասահման եւ Պետերհոֆի ամառանոց։ Գահակալն դահլիճը անցնելուց յետոյ, ուր ընդունվում են օտար պետութեանց նորեկ դեսպանները, մտանք այն առանձնասենեակը, ուր դեռ չէր ժողովուած Դուքս Էդինբուրգի անկողինը, որի վրայ նա պառկել էր, ինչպէս նորապսակ ամուսին հանդուցեալ կայսեր միակ դուստր Մարիա Ալէքսանդրովնայի։ Զարաճճի ընկերներս սկսեցին սրախօսել ու կատակել. մէկը ասում էր. «ինչ լաւ անկողին է, ճշմարիտ մի երրորդի համար էլ տեղ կ'լինէր նորա վրայ։» Միւսը ասում էր. «աղբեր, ես էլ, որ ամուսնանամ, գոնէ մի օրուայ համար այսպիսի թագաւորական անկողին պիտի պատուիրեմ։» Մի երրորդը, անկողնի շուրջը գնտասեղներ եւ ժապաւէններ էր ժողովում, ի յիշատակ մի այսպիսի հաղուագէպ այցելութեան։ Գնացինք յետոյ պալատական թանգարանը, ուր մի ծեր եւ կուրծքը չքադրամներով (մէդալ) լիքը ղինուոր ցոյց տուաւ մեզ, ասպակեայ ծածկոցի վրայից, ամէն մարգարիտներ եւ գոհարներ, որոնցմով զարդարվում է թագուհին հանդիսաւոր օրերը. նա ցոյց տուաւ եւս այն աշխարհահռչակ գոհարը— մեծանուն Լազարեանների նախահօր ընծան— որը Ռուսաց դայլոնի ամենամեծ փայլն է կազմում, իբր երրորդ հրաչք աշխարհի ինքնակալների ունեցած գոհարների մէջ։ Յետոյ մտանք պատկերազարդ սենեակը, որի պատերի վրայ շարած էին այն բոլոր զօրապետների պատկերները, որոնք նշանաւոր են եղած Նապոլէոն Բօնապարտի դէմ վարած պատերազմներում։ Հետաքրքրութեամբ զննելով զիւցազների տիպերը եւ երեսի արտայայտութիւնները, աչքովս ընկաւ, ամենքի մէջ տեղը կար, մի թուխ եւ աղդու դծերով կերպարանք։ Սառորդրութիւնը կարդալով, որչափ բաւականութիւն զդայի, որ դա Հայ էր՝ զօրապետ Դեվեան, կարծեմ, հայր թէ հօր եղբայր Ռուսաց ազդային լուսաւորութեան այժմեան նախարար Յովհաննէս Դեվեանի։ Վերջապէս դուրս եկանք մարաջախտների եւ կենդանագրութեանց դահլիճը, ուր կախած էին մի կողմից մարաջախտների ամբողջահասակ պատկերները, միւս կողմից Ռուսաց Նորագոյն պատմութեան մէջ նշանաւոր համարված ճակատամարտերի մեծադիր եւ սքանչելի նկարները։ Մարաջախտների դասում, ամենքից աւելի զօրեղ տպաւորութիւն գործեց, գոնէ ինձ վրայ, կարճահասակ եւ հրաչեայ Դիբիչը, բայց սոցա մէջ չ'կար ոչ

մի Հայ, իսկ նկարների մէջ, թեև մօտ քսան հատ, տեսանք երկուսը, որոնք ներկայացնում էին այն պատերազմները, որոնց դիւցազները Հայերն են եղել. մէկը Բաշկադիքլարի հռչակաւոր ճակատամարտը, իշխան Վասիլ Բեհբութեանի հրամանատարութեամբ, իսկ միւսը Գանձակի մօտ Աբրաս-Միրզայի կրած ջարդը, իշխան Ռուստամ Մադաթեանի առաջնորդութեամբ։ Այդ օրից այսօր այն տեղ աւելացած կ'լինի, անշուշտ, Լօրիս-Մելիքովի, Լազարևի, Տէր-Ղուկասովի եւ ուրիշ նորագոյն Հայ հերոսների գործերի յիշատակը։ Այս օրերս միայն կարդացինք Մասիսի մէջ թէ՝ Մոսկվայի արուեստահանդէսի մէջ դրված են պ. Յովհաննէս Այվազովսքիի մի շարք նկարները, որոնցից մէկը ներկայացնում է Ղարսի առումը. արդեօք պարթեւանձը Լազարևը կ'ճանչի այդ նկարի վրայ, ինչպէս Ղարսի առման դիւցազը. Աստուած ոչ անէ. ինչպէս կարելի է, Հայ Հային յիշէ...։

Էլ մի կողմ թողած Վարնայի առման նշանակութիւնը Ռուսա-Թիւրքական պատերազմի արդեանց վրայ (1828 թ.), Շամքորի եւ Գանձակի յաղթութիւնները, բացի մեծամեծ հողային փաստակների, նշանաւոր գրամական օգուտ եւս տուան Ռուսներին, Պարսից վրայ դրած մեծաքանակ պատերազմական տուգանքով։ Այդ տուգանքի վերջին մնացորդը միայն մի քանի տարի առաջ ընծայեց Ռուսաց կառավարութիւնը այժմեան Նասր-Էդդին շահին, հետեւեալ առթիւ։ Մի օր որսի գնալով, Շահը հանդիպում է մի վիթխարի առիւծի, որի հետ կռվի է բռնվում ու սպանում, ուղեղի մէջ խրած յաջողակ գնդակով։ Բացի մեծ փառքից Շահի համար, այդ հաղթանակը որսը լինում է միանգամայն մի անփոխարինելի յաղթանակ։ Այսպիսի յաղթանակ, դեռ տաք տաք ընծայ է ուղարկում Շահը ուղղակի Ռուսաց այն ժամանակվայ գեսպան Թեհրանում պ. Գիրսին, որն իմաց տալով այդ մասին իր կառավարութեանը, հրաման է ստանում փոխարինել Շահի ցոյց տուած արտասովոր շնորհը, նորա վրայ մնացած մի քանի միլիոն ռուբլ պարտքի բաշխմամբ։

Այսպիսով Ղարաբաղի առիւծի տուած պատուհասը Պարսից սեւտութեան, ուրիշ կերպ կարելի չի լինում ողորմել, բացի միայն ինքնակալի ձեռքով առիւծի ղոհ բերելով Մադաթովի յիշատակին։

* * *

Գիշ առաջ ասեցի թէ՝ Հայ ժողովուրդը նոյնչափ անողոք է, աղի պատի դէմ իր որդոց գործած յանցանքը մոռանալու համար,

որչափ եւ աւանդապահ է նոցա սխրագործութիւնների եւ առաքինութեանց վերաբերմամբ։ Բերեմ սորա վկայութիւնը հէնց ինձ աւանդածից, ինչպէս մի անհաւոլ, որի նմանները, անտարակոյս, նոյնչափ բազմաթիւ են, որչափ ժողովրդի լեզվով խօսող եւ հոգով շընչող մայրերը, հայրերը եւ եղբայրները, որոնցից է ստանում հարցասէր հայ մանուկը իր սկզբնական խրատները եւ տեղեկութիւնները, նախքան այբենարանի երես տեսնելը, դպրոց գնալը եւ համալսարան աւարտելը, աղգի եսական, անտարբեր, վատ եւ զաղրեալի անդամ դառնալու համար։ . . . 1860 թուականն էր, երբ դեռ մանուկ, նոր էի խլված ուտէքանակ Վարդաշէնի հիւսքանչ լեռների գրկից եւ բերված Թիֆլիս ուսման համար։ Օտարութեան տխրութիւնս եւ սիրական քոյր Մահիլարի կարօտս վարատելու համար, իմ անդրանիկ Նիկոդայոս եղբայրս միշտ կ'պտտցնէր ինձ քաղաքի մէջ։ Մի օր տանելով Կուր գետի վրայ կառուցած Միքայէլեան բարձրադիր քարաշէն կամուրջը ցոյց տալու, կանգ առաւ եղբայրս կամուրջի դըլխին, մի կիսաւեր պալատի առաջ ու ասեց. «տես, սա իշխան Մադաթովի ապարանքն է եղած, որ անտէր եւ աւերակ է մնացել նորա համար, որ Մադաթովը ուրացաւ իր հաւատը, եւ անչծվելով Ներսէս կաթուղիկոսից, անզաւակ մնաց (*) ու այսպէս քանդվեց նորա տունը։»

Տխուր եւ մեծաշուք տեսարանի առաջ ազդուութեամբ արտասանած այսպիսի խօսքեր թէ ինչ խոր եւ անջնջելի տպաւորութիւն կ' թողնէին մի 8–9 տարեկան մանուկի մտքում, էլ հասկանալի է։ Դորանից յետո, ամեն անգամ յիշեալ կամուրջի վրայով անցնելիս, եղբօրս խօսքերը կարծես պատի վրայ փորագրված՝ աչքիս առաջ լինէին։ Այսպէս խիստ է եւ անողոք ժողովրդի սիրտը դէպի այն մարդիկ, որոնք մնած լինելով հայ կնկայ ստինքով, կ'երթան օտարի որդեգիր կ'դառնան, անարդելով մօր կաթը եւ հօրանց հաւատը . . . Այսպիսի նախանտինքով պիտի դրօշմվեն նոյնպէս այն վատարանց անունները, որոնց ձեռքերը ներկված են Աբովեանների եւ Նալ-

(*) Իրաք՝ Մադաթովը անզաւակ եր, որով եր վաստակած բոլոր գիւղերը եւ կալերը Ղարաբաղում, թողեց իր Ռուս կնոջ, իսկ սա էլ յոժար կամքով ընծայեց ամենը կառավարութեան. ստանալով դորա համար ցկեանս նշանակած թոշակ։ Յիշեալ ապարանքը Թիֆլիսում իր շրջակայ հողերով ծախվեց դանազան մարդկանց. կիսափուլ պալատը հիմքից վերցնելով, նորա տեղ շինել տուան ուրիշ շէնքեր։ որոնցից մինը «Ղօնդան» յայտնի հիւրանոցն է հիմայ։—

բանդեանցի անմեղ արիւնով։ Խօսքս բնաւ օտարների վրայ չէ, որոնք հազիւ թէ մեղապարտ լինեն, երբ նոյն իսկ մեր ազգի միջից են դուրս գալիս մատնիչները, չարժանանալով սոսկ իրանց անձնական շահերը եւ գծուծ կրքերը։ Բայց Գ. Պ. Ս. եւ երկու Ե... թող չ'պարծենան թէ իրանց գոհերը զգուշութեամբ եւ երրորդի միջոցաւ են բերված։ Հայ ժողովրդի սրահայեաց վրէժխնդրութիւնը ոչ կեղծ ազգասիրութեան խօսքերով կ'խաբվի եւ ոչ, ամեն օր նոցա թափող, կոկորդիլոսի արտասուքով կ'զգացվի...։

Մադաթովի կրօնասիրութեան հետ միատեղ նոյնչափ անմոռաց է ժողովրդի մտքում եւ նորա քաջազնական յիշատակը, որի անհատական վկայութիւնը ահա կրկին նոյն եղբօրս խօսքերից, միւնոյն ժամանակը, երբ Մադաթովի պալատից անցանք կամուրջի վրայ։ Առաջին կամարի ղլխին կանգնողի դէմ յանդիման է Մադաթովի պալատի պատը, որն ի՛նչում է, ամփիթեատրոնի ձեւով, Կուր գետի վրայ։ Կամարի նեղուութեան պատճառաւ, մանաւանդ ջրի վարարելու ժամանակ, Կուրի մի ճիւղը անցնում է այդ տեղից ահռելի մռնչիւնով։ Ուժգին շառաչմամբ դիպչելով կամարի կորովի սիւնին, սրնթաց գետը, նոյն ուժով յետ է պտտում այնպէս մռմռալով եւ կծիկ կծիկ լինելով, որ կարծես մի վիրաւորված վագր լինի զորաւոր թշնամու առաջ։ Կանգնելով այդ կամարի վրայ, դիտեց եղբայրս։ «Կ'տեսնես այդ դիմ (խենթ) եւ վրվրոն կոհակները։ Մադաթովի սիրած տեսարանն է եղել, ասում են, չուբուկը քաշելով նստել այդ ալիքների դիմաց իր սրահում ու հաճութեամբ նայել նոցա խռովայոյզ պտոյտներին։ Մադաթովի հոգին եւ բնաւորութիւնը դիմդ այդ ալիքների նման մտանչող էին։» Մի զորավարի եւ աշխարհակալի նկարագիրը չչափելի օրինակով ցոյց տալու համար, յիրաւի սորանից էլ աւելի բնական եւ սերտ համեմատութիւն դժվար թէ կարելի լինի գտնել։

Այսպէս, քանի որ կան եւ կ'մնան Կովկասի գետերը եւ լեռները Ղարաբաղից, Գանձակից, Նուխիից եւ Դաղստանից մինչեւ Ղարս եւ Էրզրում, Հայ ժողովուրդը միշտ կ'յիշէ նոցա վրայ իր քաջերի անունները, ինչպէս եւ յաւէտ անջնջելի կ'կարդայ այն փոսերի վրայ, որոնց մէջ ընկած կ'լինեն բազմաչարչար Հայ նահատակների դահիճները...

* * *

Մադաթովի կեանքը գրված է, նորա ինքնոյ հոգածութեամբ, զօրավարի Ռուս ստորագրեալներից մէկի ձեռքով։ Ինչպէս օտարի գործ հայի մասին, այդ աշխատութիւնը չունէ ոչ միայն որեւէ մէկը մեր մէջ բերած աւանդութիւններից, այլ եւս բացորոշապէս յիշատակած էլ չէ, թէ Մադաթովը Հայ էր։ Շարելով միայն համբաւաւոր հերոսի քաջագործութեանց պաշտօնական վկայութիւնները, Ռուս հեղինակը խօսում է սոսկ մի Ռուս գեներալ «Կնեազ Վալերեան Գրիգորեվիչ Մադաթովի» մասին. էլ ոչ Հայ, ոչ վայ... Իսկ Վալերեան՝ Մադաթովի երկրորդ մկրտութեան անունն է, Ռուսատամի փոխարէն։

Մի երկու դար մեզնից յետ, երբ կ'փոխվին սերունդները եւ կը կտրվի աւանդութեանց հեռաւոր կապը, կարդալով Մադաթովի կենսագրութիւնը Ռուսերէն, արդեօք ո՞ր խեղճ Հայը կ'յանդգնի վկայել օտարի առաջ թէ՝ նա Հայ էր։ Ո՛րչափ այսպիսի փառաւոր անձնաւորութիւններ են կորել հայութեան պատմութիւնից, չնորհիւ մեր ազգային աւանդական անտարբերութեան դրպիտական ասպարիզում, որը դարերէ հետէ միայն վարդապետների եւ տիրացուների մենաշնորհն է եղել։

* * *

Գեներալ Մադաթեանի հետ ազգակցութեամբ կապված եւ նորա անուան արժանի ներկայացուցիչներ բարեբաղտաբար այս վայրկեան եւս բաւական թիւով կան զինուորական ասպարէզի վրայ։ Դոցանից մինը Դերբենտի զինուորական նահանգապետ, թնդանօթաձիգ զօրաց գեներալ Ա. Մադաթեանն է, որի մասնագիտական համբաւը նոյնչափ փայլուն է, որչափ եւ նորա անհատական բարեմասնութիւնները, որոնց համար հաւասարապէս յարգված է նա, ինչպէս իրայիններին մէջ, այնպէս եւ Ռուսների ու Լէզգիների։ Ինչպէս Ղարաբաղցի քաջարարոյ եւ վեհանձն մարդ, յիշեալ գեներալ Մադաթեանը նոյնչափ փութաջան պաշտօնեայ է, որչափ եւ կրօնասէր ու ջերմեռանդ Հայ։

Միւս ներկայացուցիչը, որին անձնապէս ճանաչելու պատիւը ունեցայ Պետերբուրգում, երկու տարի սորանից առաջ, սպայակոյտից գնդապետ Պ. Դօլուխանովն է, իշխան Մադաթեանի հարազատ քեռորդին։ Վայելչահասակ, վեհատես, պարթեւանձն ու դրաւիչ, սիրելի Մեծ Դուք Նիկոլային եւ բոլոր բարձրագոյն Ռուս ռազմագէտներին, հրամայող կայսերական թիկնապահ գունդերից մէկին, բար-

ձրագոյն զինուորական գիտութիւններ ստացած եւ նոցա հմուտութեամբ հռչակված, յիշեալ երիտասարդ գնդապետ Դոլուխանեանի առաջ փառաւոր ասպարէզ է բացված, որի մէջ գուցէ նա կարողանայ մի ժամանակ իր մեծանուն մօր եղբօր տեղը սրմանասլէս բռնել։ Այսպիսի ապագայ նորան ի սրտէ բարեմաղթող կ'լինենք, մանաւանդ քաջ ճանաչելով նորա առնական եւ խրոխտ հոգին, որով հայութեան պատիւը միշտ անաղարտ պահած է նա ինչպէս խօսքով, այնպէս եւ գործով։

Թող բազմանայ այսպիսիների թիւը։

ԻՇԽԱՆ

ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ

Արղութեանի արհամարանաց դատապարտվիլը ու նորա տնակնկալ փայլիլը։ Նորա արձանը Դաղստանում։ Արղութեանը իր զօրաց առաջ։ Լէզգի Փիր-Մամմէդի պատմածը նորա մասին։ Լէզգիներ եւ Կովկասեան Թուրքեր։ Արղութեանի գնտակահարուիլը ու նորա խօսքերը։ Լէզգիների համարումը դէպի Արղութեանը։ Նորա անհատական բարեմասնութիւնները։ Իշխան Վ. Օրմնցովորդի եւ Կաուֆմանն Արղութեանի առաջ։ Արղութեանը Նիկոզայոս կայսեր մօտ։ Հազուադէպ անշահախնդրութիւն։ Վ. Օրմնցովի հակառակորդական դաւերը Արղութեանի դէմ։ Վ. Օրմնցով եւ Ներսէս Աշտարակեցի։ Պ. Ստեփան Ղամբարով Արղութեանի մասին։ Դոկտոր Անդրէյեվսկին եւ Հայ բանասարկուն։ Իրղրումի յիշողութիւն եւ ծերունի խաչատրեան։ Նորա պատմածը Արղութեանի մասին։ Արղութեան տոհմի արդի ներկայացուցիչները։

Իշխան Մովսէս Արղութեան-Երկայնաբազուկը մինչեւ քառասուն ու հինգ տարեկան հասակը նկատված էր ինչպէս մի «անշնորք եւ անպէտք» սպայ, ըստ որում ամենքից արհամարված, փսփսում էր մի մութ անկիւնում։ Պատահական մի յանձնարարութիւն վիճաված եւ ուժակտուր Հայ հաղարապետին, Կովկասեան լեռնականաց դէմ, այնպէս չողացրեց նորա ռազմագիտական հանճարը, որ մօտ տասը տարեայ ընթացքում, այդ օրից սկսած, նա եղաւ լեռների սարսափ ԱՐՂՈՒԹ զօրավարը, Դաղստանի Ռուսական զօրաց ընդհանուր հրամանատար եւ ընտրելագոյն հերոսը Կովկասեան բանակի։ Այդ բանակի բոլոր զօրավարների մէջ-որոնց թիւը, Կովկասի նուաճումը սկսած օրից, դուցէ հաղարից աւելի է եղել քան սպակաս-, միայն Վ. Օրմնցով փոխարքան եւ նորա ժամանակակից Իշխան Արղութեանն արժանացան փառաւոր արձանների։ մէկը Թիֆլիսում, երկրորդը՝ Դաղստանի լեռների մէջ, Թէյմուր-խան-Շուրայ (*) քաղաքում։

(*) Մի քանի ժամանակակից հնաբանների ասելով՝ յիշեալ քաղաքը Եղիշէի մէջ բերած «Դուռն Ճորան» է։ —

Ցանկանալով պատուել Երկայնաքաղուկի յիշատակը այնպէս, որով դիւրին լինի յետնորդներին՝ մէկ նայելով որոշել հռչակաւոր զօրավարի գործերի բնաւորութիւնը, Ռուսական կառավարութիւնը դնել է տուել արձանը մի անագին ժայռի վրայ, որը յատկապէս գլորված է քաղաքի կենտրոնը մնծամեծ ծախքերով։ Այդ բերովի ապառաժի վրայ կանգնած է հիմայ յաղթական կացուածքով Զաքար սպասալարի շառաւիղը, երեսը վեհաբար խոժոռած դէպի Դաղստանի ձիւնոտ եւ մառախլապատ լեռները։ Կարծես՝ նա ասում է տիրաբար այդ դոռող լեռներին. «որչափ անմատչելի եղան ձեր անդունդավէժ կատարները Կովկասը այցելած բոլոր աշխարհակալների համար, բայց բիւր անգամ իմ զօրքերով ձեր բարձրութեանց վրայ թռչելիս, դուք այնպէս էիք ընկճված իմ տակ, ինչպէս հաւի տակը ձագուկներ բազէի յարձակման։»

Ստուգիւ էլ. «Արղութինսկին մարդ չէր լեռների դլխին, այլ ճշդրիտ դեւ» ասում են կենդանի Ռուս վկաները։ Իսկ երբ նա կ'սլանար մի որեւէ ուղղութեամբ, շատերը իր մերձաւորներից կարծելով թէ՝ ոգեւորութիւն նա մոլար ճանապարհ է ընտրած, կ'հարցնէին նորան թէ՝ ուր կերթան։ — «Ուր չուբուկս ցոյց կ'տայ» կ'ասէր նա լակոնական ձեւով, միշտ ունենալով ձեռքին երկար կոմանի չուբուկը որ կ'ծիլէր անընդհատ ձիու վրայ եւս։ Մէկ էլ կ'տեսնէին հետեւողները, որ իրանց առաջնորդ «դեւը» երկու օրով յառաջ դրաւելով թշնամու անցնելի կիրճը, այնպէս պատնէշ դրաւ նորա շարժման դէմ, ինչպէս կատուն՝ մկան ծակը փակելով։

Թէ որչափ չանթահար ազդեցութիւն է ունեցած Արղութինսկու անունը լեռնականների երեւակայութեան վրայ, ահա բուն լեռնացու խօսքերը, որ կ'բերեմ իմ մանկութեան յիշողութիւններից։ Լէզգիական ընտիր ծագումից Փիր-Մամիէդ ասված մօտ 40 տարեկան մի կորովի տղամարդ, գերի առնվելով Ռուսներից, շատ վէրքերով ծածկվելուց յետ, ազատված էր մեր տուն ծառայի պաշտօնով։ Նկատելով նորա բնաւորութեան մէջ շատ ընտիր դծեր, հայրս դադարած էր ծառայի տեղ ընդունել նորան, այլ ամուսնացնելով տեղացի մի Լէզգուհու հետ, չինած էր մեր կայքերի կառավարիչ Վարդաշնուն։ Ի դէպ է այսպէս դիտել, որ Լէզգիների նման երախտագէտ, աշխատասէր, մեծահոգի եւ քաջ ցեղ չ'կայ Կովկասեան ոչ մի այլ ցեղերի մէջ։ Մի Լէզգի եթէ մէկի տանը երկու պատառ հաց կերաւ, էլ տոպրակներով ոսկի տաս, տան տիրոջ դէմ ոչինչ նենգութիւն չի անիլ։ Հայաստանը պղծած այնչափ լեռնական ցեղերի մէջ ասիս

որ գոնէ մի հարիւր տուն Լէզգի գաղթական չ'կայ։ Լէզգիների քաջութիւնը եւ դիւցազնաբարոյութիւնը ցոյց տալու համար, հերիք է ասել, որ ամբողջ վաթսուն տարի Ռուսաց կայսրութեան հետ դլուխ դլխի դէմ տուած կռուողները եւ բոլոր վինակ լեռնականաց պարագլուխները Լէզգիներն էին, որոնց թիւը հազիւ թէ երկու-երեք հարիւր հաղարի կ'հասնի։ Իսկ երբ յաղթվեցին եւ հաւատարմութեան երդում տուան Լէզգիները, այդ օրից, Կովկասի բոլոր ազգերի եւ ցեղերի մէջ, դոցանից էլ աւելի օրինասէր, խաղաղաբարոյ, ընկերասէր եւ արդար աշխատութեան նուիրված եւ ոչ մինը եղաւ։ —«Մացառների ետեւից նենդութեամբ մարդու վրայ յարձակվիլը, տմարդի դողութիւններով եւ սպանութիւններով պարսավվիլը մինթ էֆէնդի վայել բան է» ասում է Լէզգին, տեսնելով Կովկասեան դաշտարնակ այլեւայլ ասիական ցեղերի քստմնելի արարքները, [ինչպէս օրինակ՝ դողութիւն, աւազակութիւն, հրկիզութիւն, տիրանենք սպանութիւն եւ ամեն տեսակ քրէական յանցանքներ։ Ի դէպ է ասել, որ այնչափ անուղղելի է այս տափարաբնակ մուսուլմանների վարք ու բարքը, այնչափ ապականված, որ քիչ չ'են օրինակներ, որով Ռուսաց միջնակարգ դիմնազիոնների մէջ ուսման ընթացքը աւարտելուց յետ եւս, Դարվին, Բօկլ եւ Դրեպէր կարդալով հանդերձ, դարձեալ կ'երթան իրանց դիւղերը (Ղարաբաղի, Գանձակի Նուխուայ, Շամախուայ, Բագուայ եւ Երեւանի դաւառները) ղողերի եւ սրիկաների խմբեր առաջնորդելու։ Մինչդեռ Լէզգիները, ինչպէս ասեցինք, սոցա ամենանեղկակ հակապատկերն են, թէ իրանց բարոյական բարեմասնութիւններով եւ թէ մտաւոր յատկութիւններով։

Վերոյիշեալ մեր Լէզգի Փիր-Մամմէդը, լինելով խիստ ջերմեռանդ մուսուլման, մինչդեռ մեծ ղղուանքով կ'վերաբերվէր միշտ տափարաբնակ իր կրօնակիցներին «ջրո մողալ» (այլասերված մոնդօլ) անուանելով նոցա։ Ինչպէս իր Դաղստանը սիրող եւ նորա քաջ վերերան, Փիր-Մամմէդը հարիւր ու մէկ վայրկեան միջադէպեր կ'պատմեր Շամիլի, Հաջի-Մուրադի, Կիրիթ-Մահոմմայի եւ Դանիէլ-Սուլթանի գործերից Ռուսաց դէմ։ Եւ չ'նայելով, որ ինքը արդէն կենդանի օրինակ էր յաղթվածների, բայց ոչ մի վայրկեան նա իր ախոյեաններին չէր ուղում յաղթող ճանաչել, այլ խիստ մեծամտութեամբ էր խօսում միշտ անուանի Ռուս զօրավարների վրայ։ Մինչդեռ դալով Արդութինսկուն, ահա Փիր-Մամմէդից լսածներս։ — «Տասն ու հինգ հազար զօրքով հետզհետէ գրաւեց Դանիէլ-Սուլթանը այս ինչ այն

ինչ ամրոցները ու տնկեց վերջապէս Շամիլի դրօշակը Ախտի ասված անառիկ բերդում։ Ցանկարծ զինուորական երաժշտութեան ձայն բերաւ հովը հեռաստանից. սրեց ականջները Դանիէլ-խանը ու կանչելով իր մօտ մեր գլխաւորներին ասեց. տղերք, սա կոչն (1) Արղուութը ինքը պիտի լինի. ես գիտեմ Թիֆլիսցի այդ զուարճասէր թաւադի (իշխան) բնաւորութիւնը, որով կռիւ գնալիս եւ կռուի մէջ անգամ երաժշտութիւն ածել կ'տայ նա։ Եթէ սա այդ աղոչ (անհոգ, զուարճամոլ) Արղութն է, պէտք է պատրաստվենք վաղօրօք այս բերդը թողնելու, որի պարիսպների վրայ շատ էլ վստահութիւն չ'ունեմ, եթէ այդ կաքանը սկսեց նորան հրել։ «Եւ յիրաւի, տեղեկանալով լրտեսներից, որ եկողը Արղութինսկին է, յայտնի խան եւ նախկին Ռուս զօրապետ Դանիէլ-Սուլթանը անմիջապէս թողած է Ախտին, առանց դաշոյնի մի շարժում անդամ անելու։ Մինչդեռ քանի քանի զօրապետներ, նոյն բերդի վրայ յարձակելով, ամենքն էլ սպառապուռ սրամեռ եղած, թափվել են իրանց զօրքերով նորա 'պատկերի տակ բլուրների պէս դիզված։ Ահա թէ ինչ ասել էր Արղութեանը լեռնացոց համար։

Մօտ տասն ու հինգ տարի լինելով Դաղստանի զօրաց գլխաւոր հրամանատար (1835), Արղութեան Մուխէս իշխանը գրեթէ մի օր էլ դադար չէ ունեցել անընդհատ կռիւներից։ Բայց զարմանալին այն է, որ ոչ մի յարձակման դաշտից նա յետ չէ դառած, առանց նորան տիրանալու։ Հայ իշխանի հաստատամտութիւնը եւ յամառութիւնը այնչափ անդրդուելի է եղած միշտ, որ մի անգամ մի անմատչելի ամրոցի վրայ յարձակվելու ժամանակ մահառիթ վերք է ստացել, որով զընտակը վզի ջղերը պատռելով, անցել է միւս կողմից։ Արեան առուն վզից վաղելիս, երբ արիւնահոսութիւնը մի վայրկեան աւելի յետաձգելը կարող էր աներկբայելի վախճանին տանել, այդպիսի օրհասական տաղնապի մէջ, Արղութեանը ասում է իր աջակիցներին. «չատ հոգ մի տանէք որ ես կ' մեռնեմ, հոգացէք միայն չուտով ամրոցը առնելու, իսկ եթէ նորա սուման կենդանի չ'մնացի, անձամբ կարգադրութիւններ անելու համար, դրէք ինձ դագաղի մէջ ու տուէք զօրացս, որ անպատճառ ամրոց հասցնեն։» Մի քանի վայրկեան չփոթմունքից յետ, Արղութեանի զինակիցները այնպէս ոգեւորվում են

(1) Կոչ Լէզգերէն, ինչպէս և Ռուսերէն Վրաց ասել է։ Արղութինսկու վիզը եւ կողքը շատ հաստ ու հաւժգու լինելով, լեռնացիները կոչ էին ասում նորան։

իրանց պատչուած հրամանատարի խօսքերով, որ գլխաւէժ յարձակման մղվելով, տնկում են դրօշակը թշնամու դրաւած բարձրութեանց վրայ։ Արղութեանը արեան մէջ լողալով, երբ խմանում է այդ՝ ասում է. «Կ'հրամայեմ՝ անկողնու մէջ տեղավոխէք ինձ ամրոցը, որ զօրքերիս հետ միասին յաղթութիւնը տօնեմ այն տեղ։» Այս անօրինակ անձնազոհութեան համար նա ստանում է կայսեր գնդերապետութեան (եաւէրի, էքրէմ) աստիճանը, առաջինը բոլոր ռուսահայ զօրավարների մէջ։

Էջդիների մէջ Արղութեանի քաջաղնական յատկութիւնները նոյնչափ ահ եւ սարսուռ են տարածել, որչափ համարում ու յարգանք վաստակել. որովհետեւ Էջդիները իրանք լինելով ասպետական ընտանեաց տէր մարդիկ, իրանց նմաններին եւս պատուել են ըստ արժանոյն, թէկուզ նա լինէր իրանց սիրելիս հակառակորդը։ Շնորհիւ այսպիսի համարման դէպի Արղութեանը, ոչ չէ պատահել, որ գերի բռնված Էջդիները ներկայանալով իշխանին, երդուեալ թշնամիներից անպատճառ երկրպագուներ են դառել։ Իսկ չատ անգամ էլ էլ՝ պատուով պարտաւորելով այդպիսի գերիներին, Արղութեանը ազատութիւն է տուել նոցա, հաւատի լինելով, որ իր դէմ այլ եւս նրքա զէնք չեն բարձրացնիլ։ Կովկասեան վիճաբաններից (հին զօրական) մէկը հետեւեալն էր պատմում՝ ինչպէս անցքի մէջ մատնակից եւ վկայ եղած մարդ։ Մի օր յիսունէ չափ Էջդիներ, ձեռնամերձ կռւում, գերի էին ընկել. մի վաշտ. զօրքով շրջապատած, տանում էին նոցա բանտարկելու, մինչեւ ցնոր կարգադրութիւն։ Գերիները. զինաթափ չէին եղած, այլ սրերը բերանի մէջ ունէին, իսկ ձեռքերին պատրաստ ատրճանակ։ — «Ո՞ւր էք տանում մեզ, հարցրին քանիցս նոքա։» — «Ձեր իմանալիքը չէ այդ» դառաց վաշտի գլխաւորը, արհամարհելով պատչարած գերիների հարցասիրութիւնը։ Վերջապէս կանգ առնելով մի տեղ, ասեցին Էջդիները. «Եթէ մեզ Արղութի մօտ ի՛տանէք, սիրով կ'երթանք, եթէ ոչ՝ էլ շարժուելիք չունենք։» — «Կ'հրամայեմ ձեզ ուեւորդ դատողութիւն չ'տալ, դուք Արղութինակու երեսը չ'պիտի տեսնէք։» յայտարարեց վիճաբանը հարցասէրը։ Հազիւ իր խօսքերը արտասանած, մի ակնթարթի մէջ գերի Էջդիները կրակ ու չանթ կորվելով աջ եւ ձախ հարուածներ տալով, պատռեցին անցան վաշտը ու մօտաւոր ժայռի վրայ թռչելով սուլեցին. ծաղրարար. «զէ՛, քաջ մարդիկ, հիմայ տեսար թէ ինչ է ձեր արժէքը առանց Արղութի...» Եւ յիրաւի, Էջդիների համար Արղութեանին տեսնելը միայն այնչափ պատիւ էր, որ նորանից խոյս

տալը՝ իգ/դին չ'վայելող արարք էր եւ նոյն իսկ խնամ Շամիլի առաջ անարգելի վարմունք։ ուստի սպառազինեալ դերիները անմնատուր լինելու անպատուութիւնը կ'ուռանային, երբ նոցա դէմ դուրս կ'գար Արղութեանը ու անձամբ կ'հրամայէր զինաթափ լինել։

* * *

Բայց պատերազմական հոգուց եւ ռազմագիտական տաղանդից, Արղութեան Մովսէս Իշխանը օժտված է եղել նոյնպէս մարդկային քնաւորութեան ամենավսեմ յատկութիւններով։ Ուղղամիտ, բացախօս, արդարասէր, ողորմած, աղնուաբարոյ, անընչասէր— այս նշաններով կ'գծեն Հայ աղնուականութեան տիպարը, Արղութինսկու ձեռքի տակ եղած բազմաթիւ Ռուս զօրականները։ Իսկ եթէ մի տկար կողմ, մի տեսակ ախտ է ունեցած Արղութեանը, այդ նորա անողոք խստութիւնն է եղել դէպի կոմս, իշխան եւ նաեւ արքայազն սպաները եւ զօրապետները, որոնց համար Կովկասում ձրի դավինիներ ժողովելը արդէն վաղուց ժառանգական մենաշնորհութիւն էր եղած։ Դաղստանի զօրաց հրամանատարութիւնը Արղութեանին անցնելուց յետոյ, Ռուսաստանի մեղկացած արիստոկրատները մի տեսակ պատուհասի հանդիպեցին։ բոլորն էլ հաւատար կարգի մոտն իրանցից արհամարված հասարակ մահկանացուների հետ։ Եթէ ուշադրութեան առնենք այն թէ՝ կոմսերին եւ իշխաններին սովորական մարդիկներից անպայման կերպով տուելի վերդատելը, որչափ հասարակաց վարք ու բարք եւ նուիրագործված օրէնք էր այն ժամանակները, յիրաւի մի անբռնելի բան էր, մի անմիտ յեղափոխական յաւակնութիւն Արղութեանի կողմից, մէն ու միայնակ կուրծք տալ ամբողջ կայսրութեան մէջ ընդունված եւ արքագործված կարգ ու սարքերին։ Բայց մեր ահիպարանոց «կաբան» սպարապետի աչքը ոչ արտաքին թշնամիներից վախ ունէր, ոչ էլ աւելի վտանգաւոր ներքին դժգոհներից, որոնց նա պիտի վասակէր իր անյողդողդ հաւատարմութեամբ։ Ակնատես վկաներից մինը պատմում էր հետեւեալը։ մի օր ծառան տուաւ Արղութինսկուն մի թուղթ, որը կնքած էր փոխարքայ Վ.օրոնցովի կնիքով։ Դա փոխարքայի ինքնագիր նամակն էր, որի մէջ թախանձագին խնդրում էր նա իր եւ տիկնոջ կողմից, «պահպանել եւ հայրական խնամք տանել» այդ նամակով իր տրամադրութեան տակ ուղարկված միակ որդուն՝ երիտասարդ կոմս Վ.օրոնցովին, որ ժառանգ-սեփականատէր էր Ռուսաստանի մէջ ունեցած մի ամբողջ աշխարհի, տասնեակ հազար ճորտերով։ Կարդալով թուղթը

Արղութինակին դցում է նորան մի կողմ ու նստում նախաճաշի, որ գրեթէ միշտ միայնակ կ'անէր, ինչպէս եւ ճաշն ու ընթրիքը։ Այդ սովորութիւնը բացատրում էր Լազարեվը նորանով, որ նախ՝ Արղութինակին խիստ չափաւոր էր կերակուրի մէջ, որով չ'էր ուզում ծանրութիւն լինել իր բազմաթիւ աջակից սպաների (ադիւտանտներ) համար, մասնակից անելով նոցա իր անպաճոյճ սեղանին։ Երկրորդ՝ նա չ'էր ուզում իր հետ նստացնելով երես տալ զանազան չփացած կոմսերին եւ իշխաններին, որոնց ատում էր, մանաւանդ նոցա դարդակամութեան համար։

Ինչեւիցէ, նախաճաշը աւարտելուց յետոյ, կողքի վրայ ընկած իր պատմական բրդահիւս վերարկուի (եաւինջի) մէջ, սկսում է քաշել անվերջաբար իր ոչ նուազ պատմական չուբուկը։ Վերջապէս յուսահատվելով յիշեցնում է ծառան թէ՝ դուրսը, ձիւնի եւ փոխացնող սառի տակ կանգնած, կ'սպասէ փոխ-արքայի որդին։ «Յիմար, այսչափ տարի դեռ ինձ չ'ճանաչեցիր» ասում է մեղմութեամբ ծերուկ Հայ ծառային, որի հետ, չատերի վկայութեամբ, նա աւելի մտերիմ էր, քանթէ զօրապետներին։ Դորանով ուզում էր ասել ծառային թէ ինքը լաւ էր հասկանում իր արածը...

Դուրս գնալով վերջապէս, տեսնում է, որ երիտասարդ կոմսի հետ կանգնած է նոյնպէս եւ մի ուրիշ դեռահաս զօրական։ —«Սա ով է.» հարցնում է խոժո�ված։ — «Ես Ֆոն-Կաուֆման զօրավարի որդին եմ, փոխարքայի աջակից սպան, որ պատիւ կ'սեպեմ՝ ձեր ստորադրեալը լինել» ասում է երիտասարդ զօրականը։ — «Շատ բարի» դարձնում է Արղութինակին, «միայն զգուշացնում եմ ձեզ, պարոններ, եթէ հէնց մի վայրկեան մի որեւէ բանով ձեզ նուազ փութաջան նկատեմ, քանթէ իմ հասարակ ստորադրեալներս, քանչ իմացէք այն ժամանակ, որ ոռով յէ՞ դ'ԷԲՅՆԷՄ ձեզ այն պալատները։ որ տեղից եկած էք։»

Այդ երկու ստորադրեալներից մանաւանդ Կաուֆմանը միշտ երախտագիտութեամբ էր յիշում, ասում են, Արղութինակուց ստացած խստրմիներ դասերը, որոնց շնորհիւ նա կարող եղաւ յաղթել կեանքի մէջ հանդիպած հազար ու մէկ դժուարութիւններ ու հասնել ամենաբարձր զինուորական աստիճաններին, որոնց մէջ նա միայն նորերս մեռաւ։ Մինչեւ—Ասիայի Ռուսական նահանգների փոխարքայի պաշտօնը վարելով։

* * *

Իսկ Արղութինսկու անչափանդրութեան մի վկայութիւնը ահա հետեւեալ հետաքրքրական դէպքը։ Իր մահուանից մօտաւորապէս հինգ տարի առաջ, նա հրաւիրված է եղել Նիկողայոս կայսրից Պետերբուրգ։ Կայսեր մայրը թէ մօրաքոյրը — լաւ չեմ իմանում— խիստ զառամ ու ծանր հիւանդ պառկած է լինում մահուան անկողնում։ Ոչինչ չ'ասելով թէ՝ ուր է տանում, կայսրը առաջնորդում է Արղութինսկուն դէպի սենեակ։ Հիւանդի աչքերը արդէն վաղուց տեսութիւնը կորցրած են լինում. «մայր, կանչում է կայսրը, բերել եմ քեզ մօտ իմ զօրաց պատիւը, որ քո օրհնութիւնդ չնորհես նորան։» Խեղճ սպարապետը շուարված չոքում է հիւանդի առաջ, որը համբուրելով նորա ձակատը է, ասում է. «փառք Աստուծոյ, փա՜փաղս առայ. այնչափ անգամ քո գործերով հիացած կայսրը կ'դար կ'պատմէր ինձ քո մասին...»

Սորանից յետոյ, նախ քան Կովկաս վերադառնալը, հրաման է առնում Արղութինսկին Եւրոպայ գնալու համար, որ իր վէրքերը դարմանէ։ Ճանապարհ ընկնելուց առաջ, ներկայանում է Արղութեանին կայսրի համարող տպան, ունենալով հետը մի մեծ արկղ, կայսրից ուղարկած։ «Կաց կաց, ուրիշ բան չի լինի»—այսինքն՝ փող— ասում է Արղութեանը։ Բանալով արկղը՝ մնում է տարակուսված, չ'իմանալով թէ ինչպէս յետոյ տայ ուղարկած պարգեւը։ — «Ահա իմ բաժինս, այս էլ յատկապէս կայսեր սիրոյ համար, իսկ մնացին տէր չեմ կարող լինել։» Այս ասելով նա վերցնում է ոսկով լիքը արկղից միայն 23 իմպերիալ, իսկ մնացածը դարձնելով ըստ պատկանելոյն, շտապում է շուտով ճանապարհ ընկնել, երկրորդ անգամ արկղը ստիպողապէս յետ չ'տանալու համար։ Որչափ էլ երկաթեայ կարգապիրութիւն եւ անոյշութիւն պահանջէր ամարկու կայսրը, բայց այդ ամենը Արղութինսկու նկատմամբ տեղի չէր կարող ունենալ։ Սիրալիր կերպով ժպտում է միայն ինքնակալը, բայց չուզելով անկատար թողնել իր կամքը, հրաման է ուղարկում դեսպաններին՝ ընդունել ու մեծարել Արղութինսկուն, ինչպէս իր անձը։

Այս ամենը եւ սորա նման շատ ուրիշ բաներ, որոնց պատմութեամբ չենք ուզում ձանձրացնել ընթերցողին, լսած ենք հանգուցեալ Լազարեւից, որն Արղութինսկու մեծարած ձեռնասունն է եղել եւ հասարակ զինուորից մինչեւ զօրապետութեան աստիճանը, գրեթէ նորա ձեռքով յառաջացել (1)։ Թէ որչափ զմայլած է եղել

(1) Հանգուցեալ Լազարեւը երբեմնապէս հիացմամբ յիշելով իր վարպե-

Արղութինսկին Լազարեվի քաջութիւնով, յիշենք այստեղ, անցողաբար, նորա տուած պատասխանը յայտնի Էդդի զօրապետ Աղալար խանին, երբ սա մի անգամ հարցնում է մտերմաբար Արղութինսկուն թէ՝ նորապէս մի մարդ ինչու իրան անդաւակութեան է դատապարտում, հրաժարվելով ամուսնութիւնից։ Աղալար-խանը Ռուս զօրապետի ատելութեան ունէր. բայի այդ, Ավարի խանութեան թեկնածուն լինելով, Էդդիների օրինաւոր իշխանն էր համարվում։ Նա յայտնի էր շատ քաջաղնական գործերով, որոնց համար կ'երդվէր Դաղստանի աշըղներից։ Ինչուիցէ, մտերիմ կերպով Աղալար-խանի յայտնած հետաքրքրութեան, Արղութեանի պատասխանը այսպէս է եղել. «Ահ, եթէ խմանայի թէ այն ենթասպայ Լազարեվի նման քաջ որդիք կ'ունենամ, հէնց այս օր եւ եթ կ'ամուսնանայի, չնայելով արդէն զառամ տարիքիս։»

Խօսք անելով Արղութեանի անչահախնդրութեան վրայ, իդէպ է դիտել, որ այդ յատկութիւնը ընդհանրապէս Ռուսահայ զօրավարաց բնաւորութեան գլխաւորագոյն գծերից մինն է եղած միշտ. Լորիս-Մելիքով, Լազարեվ, Տէր-Ղուկասով եւ Շալիկովնիկով կարող են ասածիս ամենափայլուն օրինակները լինել։ Հասնելով այնչափ մեծ պաշտօնների եւ հրամանատարութեան, Տէր-Ղուկասովը մեռնելու ժամանակ միայն երեսուն ռուբլ դրամագլուխ էր թողել, ըստ որում թաղման ծախքը հոգացել են, մեծ դժուարութեամբ, նորա չափ չունեւոր ազգականները։ Մինչդեռ այնչափ միլլիոններ անցնելով իր ձեռքից, նա կարող էր գոնէ կէս միլլիոն ռուբլ յետ դցել, ինչպէս մի ուրիշ դումար։ Ասածիս ապացոյց անա հանրահռչակ ընկերվելը, որը միայն ժամանակաւորապէս փոխարինելով Տէր-Ղուկասովին Թուրքաստանում, չար լեղուների ատութեամբ, երկու ամսուայ մէջ կարողացաւ Էրէ+ ՄԷԼԷՈՆ ԲՈ-ԷԼ խնայել։ Իսկ Շալիկովնիկովը Տէր-Ղուկասովից էլ վատթար վիճակի մէջ մնաց, թէպէտ ամենքին ռուռով ոսկի բաժանողը ինքն էր Երզրումի պատերազմի ատեն։ Բայց չպիտի մոռանանք ազգասէր երախտագիտութեամբ յիշել Բաղդասար Հայոց մարդասիրական ընկերութեան Տէր-Ղուկասովի նուիրած հինգ հազար ռուբլու մասին, որ նա յետ էր ձգած իր ամուսկանոներից, երբ Ալեքսանդրապոլի հրամանատարն էր։ Տասը տարուայ չափ զօրավարելով յիշեալ գունդին, նա կարող էր մինչդեռ

տին եւ բարերարին կ'ասէր. «Արղութինսկու կեանքը դրելը իմ պարտքս է, իսկ իմն էլ դու կ'դրես»։

հարիւր հազարներ խնայել, ինչպէս որ արած են եւ կ'անեն ուրիշներ . . . Գալով Լաղարեվին, սա ամենքից էլ գէշ օրի մէջ կ'թողնէր իր որդիքը, եթէ մի բոլորովին պատահական դէպքը չ'հարստացնէր նորան, մահուանից մօտ երկու ամիս առաջ, երբ նա հրաւիրվեց կայսեր հրամանաւ Պետերբուրգ, Ս. Դէորդի սապէտների մեծ հանդէսին մասնակցելու։ Ցիշեալ դէպքը տեղի ունեցաւ այս հանդէսի մէջ, բայց դորա պատմութիւնը կ'թողնենք իր տեղին։

Լսելով այս ամենը հայ զօրավարների անշահախնդրութեան մասին, տարակոյս չ'ունենք, որ «փարա, փարա» սուրբ նշանաբանը պաշտող գծուծները պիտի դիտեն, գլուխները թափ տալով. «այդ ինչ տեսակ յիմարներ են եղել ձեր գսված գեներալները, որ ոսկեհոս դեռերի մէջ լողալով, ամենքն էլ սակայն զրկեթէ վերջին չ'քաւորութեան մէջ մեռան։» Այո, պարոններ, ուր էր, որ Աստուած հարիւրապատիկ բաղմացնէր մեր մէջ այդպիսի «յիմարների» թիւը, որով մեր ազգն էլ գուցէ մի կէս դարով աւելի կանուխ կ'թողթափէր այն նիւթամոլութեան անարդ լուծը, որի տակ այսօր ընկճված, ոչ Աստուծուն կարող է հաճելի լինել, ոչ մարդկանց։

Իսկ գալով Պօլսի օտարամոլ Հայ գրագիտաց, յուսով ենք, որ ուշնենալով աչքի առաջ հայ զօրավարների օրինակելի անընչասիրութիւնը, փոխանակ ասելու որեւէ մէկի համար թէ «նա անշահախնդիր էր, ինչպէս Արիստիդէս», այսուհետեւ աւելի մեծ պարծանքով եւս կ'ասեն թէ «նա անշահախնդիր էր, ինչպէս Արղութեան, ինչպէս հայ զօրավար։» Աւելցնենք այս տեղ եւ այն, որ Արղութեանը, այնչափ տարի լինելով Կովկասի զրեթէ կէս փոխ-արքան, վերջի վերջոյ մուրացկանութեան մէջ մեռաւ, ինչպէս Բելիսարիոս Պօլսի փողոցներում, բայց այս մասին դեռ քիչ յետոյ։

* * *

Իշխան Մովսէս Արղութեան-Երկայնաբազուկը, որի նախորդ սերունդի մէջ իրանից ոչ պակաս նշանաւոր զօրավարներ են եղել—մանաւանդ վրաց յայտնի աշխարհակալ Թամար թագուհու ժամանակ—Հայաստանի հին սեղերից սերված միակ ներկայացուցիչն էր։ Ժամանակակից հայ զօրավարների մէջ. ուստի նորա տոհմական զինանշանի վրայ ճնացած են հայկական խորհրդանշաններից մի բանիսը։ Սորա նախնիքների մէջ են եղել այն հռչակաւոր զօրավարները, որոնք Անիի մէջ նստելով, ժառանգական սպասալարի (սպարա-

պետ)՝ տիտղոսն են կրել, լինելով Շիրակայ եւ Այրարատայ գաւառների ինքնիշխան տէրերը, հարկատուութեամբ մերթ Պարսից եւ մերթ Վրաց։ Սոցա մէջ խիստ նշանաւոր էր Զաքար սպասալարը, որի անունը առանձին յարգանքով կ'յիշատակվի Արղութեան տոհմի մէջ, մկրտութեան կոչում ընդունելով նորածինների համար։ Այս պատճառաւ, մինչեւ հիմայ եւս ամենից աւելի տարածված անունը Արղութեանների մէջ Զաքարն է։ Նոյն իսկ իշխան Մովսէսի հօր անունն էլ Զաքար էր, ինչպէս եւ կոմս Լօրիս–Մելիքովի կրտսեր որդունը եւս, որը, մօր կողմից, գեներալ Արղութեան–Երկայնաբազուկի եղբօր թոռն է։

Իշխան Երկայնաբազուկի սերունդից մի իշխանուհի ամուսնանալով, տասն երկու երրորդ դարում, Մոսկովեան թագաւորներից (2) մինի հետ, որ Անդրէյ Բոգոլիւբսկին էր, կարծեմ, տուաւ նոցա «Երկայնաբազուկ»՝ տիտղոսը, որով փառաւորվում են մինչեւ հիմայ եւս Ռուս Դոլգորուկի իշխանները։ Դոլգորուկ կ'նշանակէ երկայնաբազուկ։ Ո՛րչափ այսպիսի փառաւոր հայկական տիտղոսներ են անցել արքեաց օտարներին, առանց տակայն մեր դիմանալու այսօր։ Նոյնպէս որչափ անուանի եւրոպական զօրավարներ եւ հռչակաւոր պետական մարդիկ ղուտ հայ արիւն են կրել։ Բօնապարտի «աջ ձեռք» իշխան Մուրատ։ հունգարական յեղափոխութեան հերոս եւ դիկտատոր գեներալ Գորդէ։ Լեհաստանի բաժանման շրջանում հայրենեաց չորս պաշտպաններից գլխաւորագոյն՝ Մալախովսկին (Մալխազեան) ազգ. եւ սոցա նմաններ որչափ թւով են խրատվել օտարներից, իրանց ազգային փառաց վրայ մի մի փայլուն գոհար աւելացնելու համար։ Բայց ով է մեր մէջ այդ մարդկանց կեանքի եւ ծագման հետազօտութեամբ պարապողը։ մեր «լեղուապէտ-ազգասէրները» դէթ հայ թերթերում եւ կանանց առաջ կ'պարծենան իրանց ֆրանսերէնով եւ գերմաներէնով, այլ ոչ օտարների, որ ամենից աւելի պէտք է եւ ստիպողականը մեր ազգային անարդված արժանապատուութիւնը վերականգնելու համար։ ։

«Երկայնաբազուկ» տիտղոսը ղուտ դիւնագրական պատուանուն է,

---

(2) Թէպէտ այդ ժամանակ Մոսկովի տէրերը դեռ չէին կրում պաշտօնապէս «թագաւորի» տիտղոսը, բայց պարզ իշխաններից որոշելու համար մենք այդպէս կոչեցինք նոցա եւս առաւել որ նոքա, ինչպէս եւ Ռուսաստանի ուրիշ տիրապետող իշխանները իրաք թագաւորի իրաւունքներ էին վայելում իրանց երկրի մէջ։ —

որ տուել են Պարսից թագաւորները Մովսէս իշխանի նախնիքներից մէկին այն պատճառաւ, որ իր սրընթաց շարժումներով նա կարողացել է ամէն տեղ հասնիլ ու յաղթող հանդիսանալ։ Հետեւաբար՝ «երկայնաբաղուկ» անունը փոխաբերական մտքով է, այլ ոչ բառացի իմաստով։

Մովսէս իշխանը իր ուսման ընթացքը աւարտած է եղել Ռուսաց զինուորական դպրոցներից մէկում։ Վերադառնալով Կովկաս, նա մնաց այս տեղ զինուորական ծառայութեան մէջ մինչեւ իր տաղանդի համար համապատասխան ասպարէզ գտնելը։ Նորա գլխաւոր եւ երկարատեւ գործունէութիւնը անցել է, ինչպէս ասեցինք, Դաղստանի դէմ կռուող զօրաբանակի հրամանատարութեան պաշտօնի մէջ։ Իսկ մի՞թէ ինչ ասել է Դաղստանի նուաճումը Ռուսաց համար, այդ կարելի է տեսնել միայն այն ծանր եւ բազմաթիւ հատորներից, որ գրված են Ռուս պատմագիտների ձեռքով, Կովկասեան պատերազմի աւթիւ։ Այդ նոր ծրագրի արշաւանքի մէջ եղել է Շամիլը փոխարինել է Հեկտորին, Աքիլլէսի տեղն էլ, ամենայն իրաւամբ, բռնել է իշխան Մովսէս Արղութեանը։ Հալա՛լ լինի նորան այն արձանը, որի վրայ նա կանգնած է. եւ թող այդ արձանի պատուանդանի չափ վիթխարի ժայռեր գլորվեն այն վատ Հայերի գլխին, որոնք մոռանալով իրանց ազգի եւ նախնեաց բիւր արժանիքը, կ'երթան կ'սողոսկեն սարկաւագ նորաբոյս օտարների ոտի տակ։

Իդէալական անձնասիրութեամբ կայսրին ծառայելու հետ միատեղ, Արղութեան զօրավարը երբէք չի մոռացել վարձատրելու ըստ արժանոյն եւ իր բազմաթիւ կամաւոր ազգայիններին ցոյց տուած քաջութիւնները։ Նա չէ նմանվել այն վատահոգի Հայ պաշտօնեաներին, որոնք իրանց անձնական յառաջադիմութիւնը տքնում են պայմանաւորել սոսկ իրանց ազգի անարգանքով օտարների առաջ։ Թիսա դիւրին մինչեւ՝ սողուններին վայել... Արղութեանը մինչեւ խրոխտութեամբ է նայել օտարների աչքին, վստահանալով նոյնչափ իր անհատական սիրագործութեանց վրայ, որչափ եւ պարծենալով իր ազգային հարազատ ծագմամբ ու պատուանունով։ Իր վեհ վարք ու բարքը նա կտակեց եւս իրան աշակերտած արժանալից հայազգի զօրավարներին, ինչպէս էին՝ գեն. Յովհան. Լազարեվ, Յովսէփ Ղորդանեան, Արշակ Տէր-Ղուկասով, իշխ. Թումանեաններ եւայլն։ Այս մեծանուն քաջերը հետեւելով Արղութեանի պանծալի օրինակին, պատերազմի դաշտում վաստակած բազմաթիւ յաղթանակները պրեմէ միշտ վերադրել են այն ռազմագիտական հմտութեանց, որոնց դա-

սերը աւանդել են իրենց Գայլ-Վահան, Սմբատ բաղմայաղթ, Ռուբէն, Դաւիթ եւ այլն։

Հիմայ ցոյց տանք այն սեւ օրերը, այն օրհասական վախճանը, որին յանգեց Արղութեանի կեանքը։ Գրեթէ մուրացկանութեամբ վերջացրեց այն հռչակաւոր զօրավարը, որին մահուանից յետ, արձան կանգնացնելը արժան դատեցին սակայն եւ հասարակաց կարծիքը, եւ ռազմադիտութեան երկրպագուները, եւ Հայը, եւ Վրացին, եւ Ռուսը, եւ Լէզգին։ Այսպէս են աշխարհիս բաները։ այն անհատներին, որոնց սիժանիքը ոսնակոխ է եղած նոցա կենդանի ժամանակ, դերեզման ինքնին պէս — երբ էլ տեղիք չէ մնացել նախանձի, չիամութեան եւ չարամտութեան — նոր են սկսել սխուվախ անել, ցաւել, համակրել եւ վարդեայ փունջեր սիրել նոյն դամբարանի վրայ, որի մէջ ննջողի գլուխը եւ մարմինը փուշերով եւ սուրերով են ծակծակել, քանի որ նորա բերանում դեռ շունչ կար եւ սրտում վեհ զգացման բաբախում։։։

* * *

Նիկողայոս կայսեր հետ Արղութեանի տեսակցիլը Պետերբուրգում եւ նորա կողմից առանձին շնորհ վայելելը, հարկաւ Ռուս արիստոկրատներից շատերի նախանձը պիտի շարժէր դէպի նա։ այդ պիսիներից առաջինը, անտարակոյս, Կովկասեան փոխարքայ իշխան Միքայէլ Վորոնցովը պէտք է լինէր։ Որչափ էլ լրջամիտ եւ խելացի մարդու համբաւ ունենար նա, որչափ էլ արդարասէր եւ առողջախոհ կառավարիչ լինէր, այսուամենայնիւ Վորոնցովը դատարակված էր Ռուս ազնուականութեան դիւրազգաց եւ ինքնահաւան վարք ու բարքի մէջ, որով բնական պիտի լինէր նորա համար՝ դիւրաւ չ'հաշտվիլ իր ստորադրեալի այնպիսի կացութեան հետ, որով նորա ունեցած հռչակը եւ վայելած փառքը շատ աւելի էր, քանիմ է իր պետինը։ Այս երեւոյթը այնչափ սովորական է մարդկային բնաւորութեան, ընդհանրապէս, որ Վորոնցովին դժուար կ'լինէր մեղադրել, ինչպէս եւ իշխան Մէլիքովին դեռ։ Լաղարեւի վերաբերմամբ, երբ առաջինը այս երկու վերջիններից Դաղստանի զօրաց հրամանատարութիւնը ստացաւ, Շամիլի ձերբակալմանից յետ, նոյն օրահական ընդհարումը եւ հետեւանքները, որ տեղի ունեցան վրացագն Մէլիքովի եւ նորա օգնական Լաղարեւի մէջ, նոյնը եղաւ եւ Վորոնցովի ու Արղութինսկու հետ, թէպէտ ինը տարի աքսոր

կրելուց յետ, Լազարեվին կրկին ժպտայ բաղտը, բանալով նորա առաջ այնպիսի վայլուն ասպարէզ, որի մէջ նա աւելօք վարձատրվեց տարապարտուց կրած երկարամեայ զրկանքների համար։ Լազարեվի մեծ վարպետը մինչդեռ իր աշակերտի բաղտը չ'սնեցաւ. մի անգամ գետին զարնվելով հայ աղնուապետը, էլ չ'կարողացաւ վերականգնել, այլ նորա նուրբ պատուազդացումը այնպիսի մահաբեր հարուած ստացաւ, որից կաթուածահար եղաւ նա եւ մնաց անդամալոյծ։ Այս վիճակի մէջ էր, որ ականաւոր իշխան-զօրավարը նմանվեց Բելիսարիոսին. ամենից մոռացված ու արհամարված, իր հաւատարիմ ծերուկ Հայ ծառայի օգնութեամբ, մերթ ընդ մերթ կ'զար կ'նստէր նա, ասում են, քարեայ նստարանի վրայ Թամանչեվի հրապարակի մէջ ու դլուխը եւ ձեռքը երերալով, դրեթէ խելակորոյս, ռազմագիտական պատուէրներ կ'տար, լինելով միեւնոյն ժամանակ շատ անգամ նաեւ մի կտոր հացի կարօտ։ Մարդկային վատութիւնը եւ ապերախտութիւնը այն տեղ հասաւ, որ Վ.օրոնցովի երկիւղից, նաեւ Արղութինսկու մօտաւոր ազդականները չէին համարձակվում վեր առնել նորան յայտնապէս իրանց խնամքի տակ։ Փողոցաշրջիկ երեխաներն էին սոսկ, որ շրջապատում էին թշուառ դիւցազնին, ղայրացնող ծաղր եւ կատակներ նորա դլխին տեղացնելու համար... Բայց ով եղաւ Վ.օրոնցովի եւ Արղութինսկու յարաբերութիւնները անմիջապէս խզող չար դեւը. նոցա մէջ փոխադարձ քէն եւ ատելութիւն դցող վատ բանսարկուն։ Դա դօկ. Անդրէյեվսկին եղաւ, Վ.օրոնցովի եւ նորա տիկնոջ անսահման հաւատարմութիւնը վայելող մի Լեհացի (1) բժիշկ։ Սա մասնաւոր կիրք ունէր Արղութեանի դէմ, որովհետեւ Հայ զօրավարը չու�բուկով խփել էր մի անդամ նորա դլխին, չ'դիտում որ զինուորական խորհուրդի մէջ խառնվելու ժամանակ։

Քանի որ Արղութեանը եւ Վ.օրոնցովը անբաժան մտերիմներ էին, Անդրէյեվսկին անդոր էր իր թշնամուն վնասելու համար. բայց հէնց որ պատեհ աւիթը եկաւ, հէնց որ Վ.օրոնցովի ճակատի վրայ հանդարտի եւ հակառակորդութեան սեւ խորշոմներ նկատեց նենդամիտ Լեհացին, խսկոյն թեւ առաւ ու սկսեց իր մեքենայութիւնները սարքել։ Այս թունալից ներշնչումների տակ, տակաւ առ տակաւ, Վ.օրոնցովը փոխվեց ոխերիմ թշնամու Արղութեանի վերաբերմամբ, ո-

(1) Վ.օրոնցովի կինը եւս ազգաւ Լեհացի էր, հռչակաւոր իշխան Զերտորիժսկիների տոհմից։

բով անդրդուելի նպատակ դրաւ Իրան՝ կամ բնաւ չ'լինել կամ Արզրուֆինակու դոյութիւնը ջնջել։ Հարկաւ, ինչպէս քաղաքագէտ մարդ, Վ.օրոնցովը չափից աւելի վեր պիտի լինէր, մանուածապատ ձեռնակութիւններ յաջողացնելու վերաբերմամբ, քանի՞ էր խստաբարոյ, բայց բացասիրտ ասպետ ախոյեանը։

Բաց ճանաչելով Նիկողայոս կայսեր սակաւ կողմերը, որոնց մէջ անողոք խստութիւնը դէպի մեծին ըմբոստ գանվողը՝ առաջին տեղն էր բռնում, Վ.օրոնցովը ոչ մի առիթ չէ փախցնում դանդաղելու կայսեր իր ստորադրեալ զօրավարի բուռն, ապերասան եւ անհանդուրժելի ընթացքի վրայ։ Երկար ժամանակ այդ ինտրիգանները չեն կարողանում դարձնել կայսեր սիրտը իր սիրած գեներալի դէմ, բայց Վ.օրոնցովի հաստատամտութիւնը յաղթող է յանդիսանում կայսեր բարեմտութեան վրայ։ Արզրուֆեանի անունը սկսում է վերջապէս անախորժ հնչել ինքնակալի ականջին, ըստ որում մի չարագուշակ օր Արզրուֆեանը ստանում է կայսեր ինքնագիր նամակը, լի չ'լսված եւ չ'սպասած կշտամբանքով։ Անմեղ զօրավարը չի կարողանում տակալ, այլ վստահանալով իր խղճին եւ իմանալով թէ ով է իր թշնամին, նստում է ու մի սոսկալի նամակ գրում կայսեր, գործածելով գրութեան մէջ դժոխային խօսքեր Վ.օրոնցովի մասին։ Սորանով նա աւելի եւս հաստատուֆիւն է տալիս իր հակառակորդից կանխապէս ներշնչած նախապաշարման։ Այսպիսով, մէկ–երկու ամիս եւս, մի երկու բորբոքված ընդդիմադարձութիւն եւս որոշում են Արզրուֆեանի բաղդը, պաշտօնազուրկ անելով նորան կայսեր հրամանաւ, որի մէջ պակաս չ'են լինում ամեն տեսակ յանդիմանք, նախատինք եւ անարգանք։ Արզրուֆեանը, որի համար թնդանօթների դղրդիւնը եւ սրերի շառաչիւնը ժայռերի վրայ մի զբօսանք եւ զուարճութիւն էր համարված միշտ, չ'կարողացաւ սակայն դիմադրել բարոյական հարուածներին, որ նիւթեց նորա դէմ Վ.օրոնցովի փափուկ եւ թաւիշեայ ձեռքերը։ Սորանից դժուար չէ տեսնել թէ աշխարհավարի ուժը որչափ աւելի կարող է զօրավարի սրից... Կայսեր չանթահար հրամանի ընթերցումը չ'աւարտած, կաթուած է իջնում Արզրուֆինակու վրայ, անարդար տեղը թշնամուց յաղթվելու համար։ Այս չարաբաղդ վիճակի մէջ հազիւ մի տարի կեանք է ունենում Արզրուֆեանը, որը դերեզմանն մտնելուց յետ սակայն փառաւոր պատուոյ փոխարինութիւն է ստանում իրան կանդնեցրած տրճանով։ Բայց ինչ մխիթարութիւն նորա սրտի համար։ «դնա մեռիր, ե՛կ սիրեմից» էլ դժնդակ նշանաբան կալող է արդեօք լինել, բայց ա-

ելի՞ եւս դժնդակը այն է, որ Արղութեանի անկման մէջ անօրինակ վատութեան եւ ստորութեան գործօն դերը կատարեց դարձեալ մի Հայ, որի մասին քիչ յետոյ։

* * *

Ցիչելով իշխան Միքայէլ Վ.օրոնցովին, չ'ղլանանք մի քանի ծանօթութիւններ տալ եզակի Ռուս աշխարհաշէնի եւ պետական մարդու վրայ։ Ուր որ պաշտօններ է վարել նա, ամենուրեք բարեկարգութիւն, հարստութիւն եւ պայծառութիւն է սփռել՝ նոր նոր քաղաքներ հիմնելով, ճանապարհներ բանալով, կամուրջներ շինելով եւ երկրի ներքին արդիւնագործութիւնը ու արուեստները զարգացնելով։ Այս օրուայ երկու հոյակապ քաղաքներ՝ Օդեսսա եւ Թիֆլիս իրանց դեղեցկութեամբ եւ բարեշինութեամբ լիովին իշխան Վ.օրոնցովին են պարտական։ Կովկասեան Հայերը եւ նոցա արդի նշանաւոր միլիոնատէրեր, ինչպէս՝ Միրզոյեան, Թամամշեան, Թայիրեան եւ ուրիշներ Վ.օրոնցովի վառած ճրագներն են։ Ցառաջ քաշելով Հայերին, Վ.օրոնցովը, ինչպէս հեռատես եւ նրբամիտ քաղաքագէտ, տքնել է հակակշիռ դնել Վրացոց ազդեցութեան երկրի մէջ, որով այնչափ յաջողել է, որ եթէ վեր կենար այսօր դերեզմանից ու տեսնէր Հայերի նիւթական ու բարոյական զգալի առաւելակշռութիւնը Կովկասում, գուցէ բացականչէր սրտատանջութեամբ. «ո՛, եթէ այսչափ աչալրջութիւն եւ ընդունակութիւններ կատկածէի իմ փայփայած Հայերի մէջ, չէի թերանալ խեղդել ագռաւը դեռ ձուից չ'ելած...»

Վ.օրոնցովի քաղաքականութիւնից Կովկասում, կարողանում է արժանապէս օգտուիլ նորա մի անմոռանալի եւ նոյնչափ տաղանդաւոր ժամանակակից՝ Աշտարակցի Ներսէս կաթողիկոսը։ Այս զօրավար–կրօնապետի յարաբերութիւնները Վ.օրոնցովի հետ այնչափ սերտ են եղել եւ մտերմալից, որ կախաղանի դատապարտված բաղմաթիւ Թուրք եւ Վրացի ոճրագործներ շնորհ են գտել փոխարքայի կողմից, արժանանալով կանխապէս Հայոց կաթուղիկոսի թողութեան։ Կովկասեան ազգերի երեւակայութիւնը գմայլելով Վ.օրոնցովի իմաստութեամբ եւ ժողովրդասիրութեամբ, նորա անունը յիշելիս, միշտ կցորդել է նորան եւ Ներսէսինը, ինչպէս եւ Թիֆլիսի այն ժամանակուայ ոստիկանապետ Լ.օրիս–Մէլիքովինը եւս, ասելով. «այնպիսի փոխարքայ, ինչպէս Վ.օրոնցովը. այնպիսի կաթուղիկոս, ինչպէս Ներսէսը, այնպիսի ոստիկանապետ, ինչպէս Լ.օրիս–Մէլիքովը

հօրեղբայր հռչակաւոր կոմսի) ոչ տեսել է Կովկասը եւ ոչ էլ կ'տեսնէ։ » Օր չի պատահել, որ Վ.օրոնցովն ու Ներսէսը միմիանց չ'տեսնէին— կամ առաջինը երկրորդին, կամ երկրորդը առաջինին դնալով։ Ներսէսը ոչ միայն խորհրդատու եւ ընկեր է եղել Վ.օրոնցովին, նորա ներքին աշխարհավարութեան մէջ, այլ եւս նա տնօրինել է փոխարքայի բոլոր անձնական գործերը, որ մի ամբողջ ընդարձակ երկիր կառավարելու չափ կարողութեան եւ մտահոգութեան են կարօտ եղել։ Մէկ խօսքով, Ներսէսը փոխարինել է Վ.օրոնցովի համար թիկունք եւ աջ ձեռք։ Նոցա ընկերական յարաբերութեանց մի վկայութիւնը կարելի է տեսնել ժողովրդի պահած հետեւեալ աւանդութեան մէջ. մի օր Վ.օրոնցովը դիմում է Ներսէսին, ասելով. «չատ բարի, հայր, ես համոզվեցայ լիովին, որ ձեր եկեղեցին նոյնչափ ուղղափառ է, որչափ եւ մերը. հիմայ մի բան եւս կ'աղաչեմ, որ բացատրես ինձ. ինչու մեր վարդապետները տափակ վեղար կ'կրեն, իսկ ձերինները սրածայր։ » — «Նորա համար, ասում է պատրաստարան եպիսկոպոսապետը, որ տեսնելով թէ տափակ վեղարը սատանան նստելու համար յարմարութիւն ունէ, մենք փոխեցինք ու սրածայր չինեցինք, որ այլ եւս այդ դիւրութիւնը նա չունենայ մեզ վերաբերմամբ։ »

Իշխան Միքայէլ Սիմոնովիչ Վ.օրոնցով—որի հայրը երկար տարիներ Ռուսաց կայսեր դեսպանի պաշտօն է վարած Անգլիայում— իր ստացած դաստիարակութեամբ, սովորութիւններով եւ ունեցած կացունիստով նման էղել աւելի զուտարիւն Անգլիայի լորդին, քանի թէ Ֆրանսաբարոյ Ռուս աղնուականին։ Նորա համակրութիւնը եւ յարաբերութիւնները դէպի Անգլիան այնչափ խոր են եղել եւ բացարձակ, որ նա բոլորովին դէմ է եղել վերջին Ռուս—Անգլիական պատերազմի հրատարակման, որով Նիկոլայոս կայսեր աչքից ընկնելով, նոյն իսկ Կովկասի մէջ եւս չ'ստացաւ նա առանձին գործօն դեր, պատերազմը յայտնված ժամանակ։ Այսպիսի արհամարհանաց փոխարէն Վ.օրոնցովը փառաւորապէս վարձատրվեց Անգլիացիներից, որոնք ոչ միայն չ'ոմբակոծեցին նորա մարմարաշէն կախարդական պալատները Ղրիմի ափերում (Եալտա, Իւրզուֆ, Ալուպկա), այլ եւս մանաւոր խնամք տարան նոցա ապահովութեան վրայ, Թուրքաց թնդանօթներից։ Կայսեր համարումը դէպի Վ.օրոնցովը քիչ չ'խախտեց եւս այն տարրի վարմունքը, որ նա ունեցաւ Արդութեանի վերաբերմամբ, որի լիուլի անմեղութիւնը ընդ երկար չ'ծածկվեց արքունական եւ ընդօն կայսրից։

Վ.օրոնցովի եւ Արղութեանի միջադէպերի մասին մեր ունեցած տեղեկութիւնները ստացած ենք Թիֆլիսարնակ պետական բարձրագոյն խորհրդական ծերունի Ստեփան Պաւլովիչ Գամբարեանից, որը ոչ միայն եղել է Արղութեանի մերձաւոր եւ հաւատարիմ բարեկամը՝ այլ եւ նա եղել է Վ.օրոնցովի հետ մօտիկ առընչութեանց մէջ գտնվող ատիճանաւորը, վարելով երկար ժամանակ Կովկասեան փոխարքայութեան գլխաւոր դատախազի բարձր պաշտօնը։ Այս համեստաբարոյ եւ առաքինազարդ ծերունին, որը երջանիկ է, վայելելով երկու սնուանի գիտնական որդոց հօր պատիւը (անդրանիկ որդի, Պօղոսը՝ Վարչաւեան համալսարանի նախկին ուսուցչապետն էր, իսկ կրտսեր՝ Գէորգը, հազիւ 28 տարեկան, Օդեսայի համալսարանի ելուզմական գիտութեանց այժմեան պրոֆեսօրն է) մի կենդանի պատմութիւն է Վ.օրոնցովի ժամանակուայ Կովկասի եւ նորա մէջ տեղի ունեցած անցքերի ու անձնաւորութիւնների։ Միայն կ'ցաւենք, որ մեր ունեցած ստէպ տեսութիւններից պատկառելի ծերունու հետ, փութաջան չ'գտնվեցանք նորա ամէն պատմածները ուշի ուշով լսելու եւ յիշելու համար։ Գուցէ դեռ կ'յաջողվի կրկին առիթ ունենալ մեր կրած այս կորուստը վարձատրելու . . . ։

Արղութեանի մեծադիր պատկերը, լայն վերարկուն անփութութեամբ ուսը նետած, միշտ կախ է Պ. Գամբարեանի անկողնի գլխին, ինչպէս որ նոյն տեղը կ'պահէր նորան եւ դեռ. Լաղարեվը, ամէն առաւօտ իր մեծ վարպետի եւ բարերարի առաջ երախտագիտութեան խոր զգայումները արտայայտելու համար . . . Հիմայ էլ երկու խօսք մի Հայ բանաստեղծի անարդ արարքների եւ դերի մասին, որ նա ստանձնեց իր անձնական գծուծ շահերի թելադրութեամբ՝ ծառայելով դօկ. Անդրէյեվսկուն ի վնաս Արղութեանի։

* * *

Դօկ. Անդրէյեվսկին որովհետեւ Կովկասի բժշկական վարչութեան գլխաւոր պետն էր, ուստի բնական է, որ նորա հաճութիւնից էր կախեալ իւրաքանչիւր ստորադրեալի յառաջմանալը, մանաւանդ կամայականութեանց այն չարալից ժամանակները։ Բայց աւաղ, ով կարող է Հայու չափ էլ ճկուն լինել, հաճոյանալու ամեն պարագաների մէջ՝ որչափ էլ անարդալից լինեն եւ ստորայնող այդ պարագաները, որչափ էլ հակամարդկային եւ հակազգային պահանջներով պայմանաւորված լինեն նոքա . . . Եւ ոչն է աւելի մեծ դժբաղդութիւնը՝ այսպիսի խայտառակ ստորադրեալների մէջ վայելողները գլխաւորապէս

բարձր ուսում եւ զարգացում ունեցող անհատներ են լինում, այլ ոչ «խաւարամիտ» կոչված խեղճուկները ... Գոնէ այնչափը լինի հայերիս միութիւնը, որ այդ բարձր ուսում ստացած «լուսամիտներին» թիւը դեռ շատ սահմանաւոր է մեր մէջ ....

Ահա այսպիսի «լուսամիտ» Հայ էակներից մէկը եղաւ յանձն առնող Անդրէյեվսկու լրտեսը եւ միանգամայն կաւատը լինել՝ Արղութեանի անարատ կեանքը մրոտելու համար։ Դիմակաւորվելով «Հայութեան» եւ «ազգասիրութեան» անունով, յիշեալ անարդ արարածը դիւրութեամբ կարողացաւ մտնել Արղութեանի բազմաթիւ բարեկամների, ինչպէս եւ թշնամիների շրջանը այն ջանքերով, որ զօրավարի մասին դեր եւ դէմ խօսվածները ժողովէ ու խեղաթիւրած կերպով հաղորդէ նորա ոխերիմ թշնամի Անդրէյեվսկուն։ Իսկ այս վերջինն էլ ամեն իր ստացած լպիրշ զրպարտութիւնները զսպելով եւ կատարելագործելով իր սեփական խարդաւանաց բովի մէջ, հասցնում էր իշխան Վ.օրոնցովին, օձը նորա ձեռքով բռնելու համար։

Այդչափ վատութիւնը կարծես դեռ հերիք չէր Հայ լրտեսի կողմից, այլ եւս, իր պետ Անդրէյեվսկու համակրութիւնը դլխովին իր անձնասէր դծուծ նպատակներին ծառայեցնելու համար, նա չ'վարանեց նաեւ նորա ազատ տրամադրութեան տակ դնել նոյնպէս իր ընտանեկան պատիւը, որը չորս հազար տարիների ընթացքում նոյնչափ թանկ է եղել եւ ամիսխարիների իւրաքանչիւր Հայի, ինչպէս եւ ամբողջ ազգի համար, որչափ մեր հայրենիքը, կրօնը եւ եկեղեցին։ Յիշեալ հրէշը մինչդեռ (որը տարաբաղդաբար այլ եւս միայնակը չէ մեր ապականված «լուսաւոր» ժամանակները ...), լինելով Հայաստանի մօտաւոր քաղաքների մէջ ապրած մէկը, այնչափ ցեխոտ դտնվեցաւ, որ համայն Թիֆլիսի հանդէպ թքեց եւ Հայի պատուին, եւ նախնեաց աւանդին, եւ ամուսնի խղճին, եւ հօր ու դերդաստանական առաքինութեան։ Նա սիրով ու ժպիտով զոհեց ամեն ինչ, նա անսպասելի լքութեամբ քայլեց անցաւ ամեն սրբութեան վրայով, դէթ իր նիւթական վիճակը բարեոքելու, դէթ դիւրութեամբ իր հարուստ ազգականներին ղրկելու ու նոցա կայքին ու ստացուածքին տիրանալու համար, զօրաւոր աջակցութեամբ «ամենակարող» դօկ. Անդրէյեվսկու։ Այսպիսով, այն ժամանակ, երբ զրեթէ բոլոր դակ Թիֆլիսի հայութիւնը ոխ եւ ատելութիւն էր տնչում դէպի Հայ զօրավարի անադորոյն հակառակորդ դօկ. Անդրէյեվսկին, այդ միջոցին մեր «ազգասէր» Հայ բժիշկը իր ընտանեաց պատիւը երկու ձեռքով էր նորա ոտի տակ դնում ....

Ահա որոնք են հիմայ Ռուսահայոց մէջ Էջմիածնի եւ ազգութեան շահերին «նախանձախնդրութիւն» ցոյց տվողները. ահա որի անունն է կրում գօկտոր Անդրէյեվկու չարանենդ պատկեր՝ նորա հարազատ այն դաւակը, որն այսօր այնչափ կեղծ ու պատիր փորձեր է փորձում Ռուսահայ գրականական հանդիսում, «ազգասիրութեան եւ բարոյականութեան տիպար» ուզելով ցոյց տալ իրան, գերդաստանական անջինջելի սեւ դրոշմը սքօղելու համար։ Այն դոյութիւնը, որ խմորված է մատնութեան, քսութեան, դաւաճանութեան եւ պոռնիկութեան տարրերքներով, մինթէ նա կարող է ուրիշ բնութիւն եւ ուրիշ յատկանիշեր ունենալ. որ բնական օրէնքից է հետեւում այդ։ Իսկ ապայուցանելու համար թէ իւրաքանչիւր դոյութիւն եւ ծնունդ որչափ անփոխոխութեամբ պիտի պահէ իր էութիւնը կազմած բարոյական տարրերի յատկութիւնները, հերիք է ի մօտոյ քննել վերոյիշեալ խմորով շաղախվածների հասարակային ամեն ցոյցերի ներքին շարժառիթները, համոզվելու համար, որ բոշայից բնաւ փաչայ չի կարող լինել, որչափ փորձանքներ էլ նա փորձէ։։։ Արդութեանը գերեզման մատաւ. նոյն «ազգասէր» ձիւաղներից Աստուած ազատէ դէթ կենդանի մնացած անմեղ զոհիներին։։։

* *

1878 երջանիկ թուականն էր, յուլիս ամիսը, երբ Էրզրումի նահանգի համար համազգային չ'տեսնված եւ չ'լսված ուրախութեանց օրեր էին. այդ ժամանակ Լազարեվը կոմս Լորիս-Մելիքովին նոր փոխարինելով գործող զօրաբաժնի հրամանատարութեան մէջ, հիւր էր եկել Բարձր Հայոց նախկին մայրաքաղաքը։ Հայ, Թուրք եւ Քիւրդ հաւասար զմայլման մէջ էին Լազարեվի գալուստից, բացի միայն, հարկաւ, երեք մահապարտներից, որոնք սնամիջատէս կախաղան բարձրացան, Լազարեվի Էրզրում մտնելու հետեւեալ օրը։ Հայերը հիացած էին Լազարեվի հայկական եւ հայրական գորովալի զգայմունքից. Թուրքերը՝ նորա ասպետական վեհ յատկութիւններից, իսկ Քիւրդերը՝ դիւցազնի վսեմ եւ ազդեցիկ կերպարանքից։ Ամբողջ տասնուհինգ օր Էրզրումի համար չ'տեսնված հանդէս էր. մեծ, փոքր, այր եւ կին Լազարեվի անունը միայն կ'հնչեցնէին, նորա գործերով միայն կ'զարթենային. իսկ Ռուս զինուորը եւ սորակարգ զօրականները զուարթ երգերով կ'թնդացնէին լայնատարած բանակը

փոռաբանելով անյաղթ առաջնորդին, որի ներկայությունը իրանց մեջ նոյնչափ դրական էր պանծալի սիրագործության, եթէ պատերազմը վերասկսէր, որչափ երաշխաւորություն էր դաժանաբարոյ սպանների եւ զօրապետների կամայական խստութեանց դէմ։ Լաղարեվը հռչակված էր զօրաց մէջ, ինչպէս պատուհաս զորաւորների եւ պաշտպան տկարների։

Վարելով Երզրումի ոստիկանապետի երկրորդի պաշտօնը, մեզ յանձնարարվեց միացնել այդ պաշտօնի հետ զինուորական դաւառապետինը եւս։ Լաղարեվը Հասան-Ղալա հասած, նահանգապետ գեներալ Դուխովսկոյի անօրինութեամբ եղանք նորան ընդ առաջ հարիւր ձիաւորով։ —«Հանդստութիւն է նահանգի մէջ» եղաւ Լաղարեվի առաջի հարցումը Հասան-Ղալայում, երբ չորս ժամ սրընթաց ձիարշաւից յետ, հասանք այդ տեղ ու ներկայացանք գլխաւոր հրամանատարին։ — «Այո, տաճիկների կողմից շատ հանդստութիւն է, իսկ մեր զօրաց արարքներից շարունակ գլխացաւանք» պատասխանեցի։ —«Ի՞նչպէս» բաշականչեց ահեղաձայն զօրավարը։ Մի ըստ միոջէ բացատրեցի թէ ինչպէս մեր զօրքերը եւ մանաւանդ հեծելազօր գունդերը (դրագոն) գիւղացիների արտերը եւ արօտատեղիք իրանց ձիաների տակ կ'անցնեն, առանց սակայն մտածելու որ եւէ վարձատրութիւն տալ խեղճ հայ եւ թուրք գիւղականներին, որոնց դրաստը սովից սլիսի կոտորվի գեռ մինչեւ ձմեռը չ'մտած։ Թէ ինչպէս շատ ուրիշ պարագաների մէջ այլ եւ այլ զրկանքներ եւ անիրաւութիւններ են թոյլ տալիս իրանց մի քանի բարձրաստիճան անձինք նահանգի բնակիչների հետ եւ այլն։ — «Լաւ, եթէ այդպէս է, ուրեմն այս վայրկենից քեզ կ'նշանակեմ անօրէն-կարգապահ նահանգի բնակութեան շահերի, ընդդէմ հարստահարողների, եւ կ'պատուիրեմ որ ամեն մի զրկողութեան համար անշուշտ զեկուցանես ինձ, եթէ քո կանխագոյն առաջադրութեամբ վաչառը կամ գունդը դրամապէս գոհացում չ'տայ բողոքարկու բնակիչներին։» ասեց Լաղարեվը, սրտի առնելով անպաշտպան գիւղացիների վիճակը։

Այդ կարգադրութեան եւ լիաղօր իրաւանց համաձայն, Լաղարեվի Երզրում հասնելուց յետ, պարտաւորութիւն համարեցինք՝ յատկապէս գիւղացոց գանգատներին բաւարարութիւն տալու նպատակաւ, պատել մեր մանաւոր հսկողութեան յանձնարարած Երզրումի դաւառը։ Այս շրջագայութիւնը, բացի բարեգործական հաճելի տպարէզից, մեր առաջ բացաւ եւ մի այլ տպարէզ, այն է, ծանօթանալու Հայաստանի գիւղացոց ներքին կեանքի, տնտեսական եւ

բարոյական որպիսութեանց, ազգային եւ մարդկային բարեմասնութեանց հետ։ Այս կողմից, գիւղերը պտտելը այնչափ հրապուրիչ թուեցաւ մեզ, որ շատ անգամ մի օր կատարելիք պաշտօնական գործը երկու–երեք օր էինք յետաձգում, դէթ գիւղացոց հետ աւելի տեսնվելու եւ մտերմաբար խօսելու համար։ Հարկաւ, հազուադէպ չէին եւ այնպիսի ժամեր, երբ հայրենիքի դարեւոր պահապաններից մեր կարօտը առնելու համար, դավոլ եւ զուռնա բերել տալով, գիւղական համադումար պար էինք բռնել տալիս, ինքներս էլ նորա մէջ։ Եւ ինչ անվոխարինելի բերկրութիւն էր՝ մեր կարօտաճաշ հարազատների հետ ձեռք ձեռքի տուած պարել այն նուիրական հողի վրայ, որը մի կողմից ուռոդում էր երծաթափայլ Եփրատը, միւս կողմից խոխոջաձայն Արաքս ... Ինքը Լազարեվը, 58 տարեկան գիւղացին, 40 հազար զօրաց սպարապետը ոչ նուազ զմայլմամբ կ'մասնակցէր Հայաստանի պարին, ինչպէս որ այդ օրինակը այնչափ մեծավայել ձեւերով ցոյց տուաւնա իր 15–20 ստորադրեալ զօրասպետներին, Պ. Պ. Բաստրմաչեանների տանը տեղի ունեցած վառաւոր հանդէսի մէջ ...։

Այսպիսի չրջադայութիւններից մէկի ժամանակ, իջած էինք Երզրումից մի ժամ ճանապարհ հեռու Զիֆտիկ գիւղում, ուր վերադառած էինք պտտելով Խլիջայի մօտակայ դաշտերը, որոնց վրայ ցեղեղված էր գրադուների Տվերեան գունդը։ Զիֆտիկի մէջ հիւրընկալեցին մեզ Երզրումաբնակ պատուաւոր վաճառական Պ. Պ. Խաչատրեանները, որոնք այդտեղ տներ եւ կայքեր ունէին։ Հայաստանի դեղջուկի ձեռքը պատրաստած համեղ կերակուրները ճաշակելուց յետ, ամբողջ գիւղը ելաւ հրապուրիչ դաւոլի ձայնով։ Կարմրայտ պատանի փեսացուները քով առ քով չարվեցան չնորհալի եւ զուարթաղէմ հարսնացուների հետ, ազգային օղաձեւ պարը բռնելու համար։ Այս ժամանակ յանկարծ երեւաց մօտաւոր սնակից, յենվելով ուժեղ ցուպի վրայ մի բարձրահասակ պատկառելի ծերունի մօտ 80 տարեկան։ Ընտանեկան մտերմութեամբ խռնված գիւղական դեռատի բազմութեան մէջ ալեզարդ ծերունին կարծես հայր Աբրահամն էր Աւետեաց երկրում։ Ներկայացրին ինձ նորան. դա Պ. Պ. Խաչատուրեանների պապն էր, ականատես վկայ 1828 թուականի Ռուսաստան–Թիւրք պատերազմական արհաւիրների եւ Հայաստանի աւերման, Կարապետ տէր-բայիչատակ եպիսկոպոսի առաջնորդութեամբ։ Մի կողմից ծերունին ունենալով կշտիս, միւս կողմից դեռատիթիթ բազմութիւնը, ներկայացնում էի ինձ անցեալ ու զառամ եւ ապագայ ու զուարթ

հայրենիքի պատկերը ... Ծերունու տեսութիւնը գրեթէ սպառած էր, բայց ազգու չեշտերով եւ բուռն ոգեւորութեամբ խօսելով, անցած-գնացած արկածների վրայ, նմանում էր նա Միլտոնին, կոբուսեալ Դրախտի ոգեղմայլ յանգերը արտասանելիս ...

Այս տեղ էր, որ ծերունի Խաչատուրեանը խօսեց իշխան Մովսէս Արղութեանի վրայ, երբ նա եկած էր Էրզրում, անցեալ պատերազմին, ինչպէս գլխաւոր հրամանատար Ռուսական զօրաց առաջապահ դունդերի։ «Ինչ որ Տէր-Ղուկասովն էր Էրզրումի առման մէջ, այս պատերազմում, ասեց ծերունին, նոյնը եղաւ Մովսէս իշխանը 1828 թուականին։ Երբ Թիւրքաց յաղթված ու լքեալ զօրքերը պատերազմի դաշտից Էրզրում խռնվեցան, ոչ ոքի բերանից չէր լսվում «Պասկեվիչ» անունը, այլ ամէն մի յուսահատ ձիչ «Արղութ դէլեօր» էր գուժում։ Ո՞վ էր այս զօրավարը, որի անունը դեռ չէինք լսած, ոչինչ չ'գիտէինք. մէկ էլ փայլակի արագութեամբ տարածվեց քաղաքի մէջ Հայոց առաջնորդարանից թէ՝ քաջակորով Թուրք զօրքերին ահաբեկ անողը մի Հայ իշխան է՝ Երկայնաբազուկ-Արղութեան հռչակով։ Երբ քաղաքի անձնատուր անելը անխուսելի եղաւ, մի օր մի գիշեր տեւած բուռն ռմբակոծութիւնից յետոյ, սերասկեր փաշան հրաման ուղարկեց Կարապետ առաջնորդին։ որ քաղաքի բանալին աղուհացի հետ Ռուսաց ներկայացնելու համար չտապէ Հայ պատուիրակներ ընտրել։ Խարերէ հետէ ինչ չ'տեսնված երաշ էր սոցա համար, երբ մեծայաղթ զօրաց գլուխը հայերէն խօսող եւ հայերէն աղօթող մի սպարապետ էր մինչև հասակով, ուժեղ կազմուածքով, զօրաւոր, ձայնով աչքերը խարտեաշ հայեացքը ազդու եւ տիրական։ «Որդիքս, ես էլ ձեր եղբայրն եմ, Լուսաւորչի զաւակ» ասեց նա պատուիրակներին այնպիսի եռանդագին խանդով, որ յուզմունքից եւ պատուիրակները արտասուեցին եւ զօրապետը։ Այս ժամանակ երկարօրէն խօսակցեց նա քաղաքի ներկայացուցիչների հետ, որոնք վերադառնալով Էրզրում, յայտնեցին առաջնորդին զօրավարի ամէն մտերմական պատուէրները, որոնց մէջ նորա առաջին խօսքերն հետեւեալներն են եղել. «որդիքս, չկարծէք որ մենք պիտի մնանք Էրզրումում. ոչ, մենք միայն ժամանակաւոր հիւր ենք ձեզ մօտ. ուստի աշխատեցէք առաջուայ պէս հաշտ ու համեստ վարվիլ ձեր իշխողների հետ, որ յետոյ տիրարեր հետեւանքներին չ'ենթարկէք ձեզ։» Իսկ երբ պատուիրակները պատասխանեցին Արղութեանին թէ՝ Ռուսաց զօրքերի հետ իրանք եւս կ'գոյութեն, իշխանը դարձրեց խստութեամբ. «ոչ, ոչ, զորանից էլ մեծ չարիք

չէք կարող հասցնել նախահօրց երկրին։ Եթէ ինձնից կախեալ լինի ձեզ արգելելը կամ թոյլատրելը, այլ ոչ իմ մեծի կամքից, որ Պասկևիչ զօրավարն է, ես ինչպէս Հայ՝ ոչ մէկին ձեզնից իրաւունք չեմ տալ ձեր տեղից շարժվելու։» Այս խօսքերը, որ բնաւ կարօտ չեն մեկնութեանց, կարող են լիովին ցոյց տալ Արղութեանի ունեցած ազգային եւ մարդկային հարազատ զգացումները։ Դա է պատճառը երեւի, որ Բիւրակնեան լեռների ծաղկագեղ բարձրութեանց վրայ ապրող խաժակն եւ ոսկեհեր արմենուհիք մինչեւ հիմայ դեռ հաւատարմաբար կ'աւանդեն իրանց թոռոմախօս մանկանց, ասելով. «մեծցէք, մեծցէք իմ սիրուն զաւակ, Արղութ իշխանից աղա դեղէյիդ թողած օրհնանքը թող պահէ քեզ։։։» Այդ օրհնանքին այսուհետեւ կ'միանայ անչուշտ եւ Լազարեվի, Տէր-Ղուկասովի, Շալկովնիկովի ու նոցա դասակից բոլոր Հայ սպաների աղօթքը։ Մեր ամենիս վրայ հայրենեաց հողը այնպէսի մի մոգական տպաւորութիւն եւ դիւթական ազդեցութիւն արեց, որ իւրաքանչիւրիս բաղձալի փափաղը եղաւ՝ գէթ Երզրումում թաղվիլ, այնտեղ, ուր եւ հողը, եւ օդը եւ ջուրը Հայութեան կորով են ներշնչում մարդուն, մոռացնել տալով նորան ամեն դեղալից աշխարհ, որի անունը չէ Արմէնիա։։։

* * *

Բնութեան պարգեւած մենաշնորը առաքինաբարոյ մարդկանց՝ դա նոցա երկարակեցութիւնն է։ Նոյնն է եւ մի առնմէ վերաբերմամբ։ Եթէ Արղութեան տոհմը, ամբողջ երկու-երեք դար տեւելով, այս օր եւս բազմասերունդ է, ինչպէս Աբրահամի տունը, դա ապացոյց է անշուշտ այդ վեհանուն պայազատական ցեղի արեան մաքուր եւ անապակ պահպանման։ Չ'կայ այժմ ոչ մի Ռուսահայ իշխանական տուն, որի անդամները այնչափ բազմաթիւ լինեն, որչափ իշխան Արղութեան-Երկայնաբազուկներինը։ Զորս-հինգ չնորհաւոր գնդապետներ։ տասնեակ զուարթադէմ եւ վառվռուն երիտասարդ սպաներ՝ հեծելազօր, հետեւակ եւ թնդանօթաձիգ դունդերի մէջ։ մի չարք դեռատի մասնագէտ-ուսումնականներ։ չատ ուրիշ պաշտօնեաներ Կովկասի վարչութեան այլեւայլ ճիւղերի մէջ-սոքա ամենքը խրոխտ ներկայացուցիչներ են Զաքար սպասալար եւ Մովսէս իշխան զօրավարների։

Ցիշեալ տոհմի ազգային աւանդութիւնները այնչափ փառաւոր են եւ հարազատ, որ այս բազմադլուխ դերդաստանի մէջ չ'կայ ոչ մի օրինակ օտարախառնութեան, ամուսնութեան միջոցաւ։ Եկա-

տերինէ կայսրուհու մերձաւոր բարեկամ մեծահամբաւ Յովսէփ արքեպիսկոպոս իշխան Արղութեան-Երկայնաբաղուկ, որն կաթողիկոսական աթոռը բաղմեց եւ յետոյ Վրաց թագաժառանգ իշխան Ալէքսանդրի պսակը կատարեց Երեւանցի Մէլիք-Աղամալեանների դուստր Մարիամի հետ։ Յովսէփ իշխանի անժառանգ հօրեղբայրը, որի կտակած մեծագումար դրամագլխով Շիրակի գաւառի Հայ օրիորդները այն բարեշէն դպրոցն ունեն այժմ Ալէքսանդրօպոլում (Գիւմրի), սոքա այն մարդիկն են, որոնց անունն իմանալը միայն հերիք է, որ այդ սերունդի ամեն մի թոռովախոս մանուկ իշխանը ոգեւորվի իր հայկական բարձր անունով եւ ազգային պատուաճանաչութեամբ։

Պատիւ ունենալով անձամբ ճանաչելու շատերին Արղութեաններից, առանձին սիրով կ'յիշեմ նոցանից միայն իշխան Ալէքսանդրին, որն կայսերական հեծելազօր թիկնապահաց մէջ գնդապետի աստիճան ունէ։ Թողնենք այն, որ հերիք է դէթ մի անգամ նայել նորա ազդու դծագրութեան, տեսքի, արտայայտութեան վրայ, ինչպէս եւ դիտել նորա կարուկ եւ արժանալից ձեւերը, դուշակելու համար, որ այդ մարդը դրակների մէջ տիրական արիւն է պտտում։ Այս արտաքին վսեմ նշանների լիովին հապատասխանում է եւ նոցա մէջ ամփոփուած հոգին։ բաւ է ասել, որ սա երրորդ անգամ է, որ այդ վեհարիւն իշխանը հասարակ զօրականից գնդապետի աստիճանին է հասած, ինչնելով երեք անգամ եւս իր այժմեան ունեցածից։ Երեք անգամ իր կեանքը ակնյայտ վտանգի է ենթարկած այդ քաջատոհմիկ սպայաղատը, նախանձախնդիր կանգնելով իր ազգային պատուին ու ապտակ ինչնելով այն Ռուս զօրապետներին, որոնք թէպէտ իր հետ խիստ սերտ բարեկամութիւն են ունեցած, բայց յանդգնած են նորա ներկայութեամբ արհեստ բառը արտասանել։ Եւ դրն է զարմանալին։ կրօնական եւ ազգային եռանդով լի այդ մարդը, ի մանկութենէ դաստիարակված լինելով Ռուսաստանում, հազիւ կարող է կիսկտուր հայերէն խօսել։ Մինչդեռ նորա սրտի մէջ շատ աւելի բուռն եւ վեհ զգացում կայ, քանթէ նոցա, որոնց լեզվի վրայ օրը տասն անգամ «ազգ», «հայրենիք» եւ «Հայաստան» բառերը կ'դառնան։ Սա ապացոյց է այն ասածիս, որ տոհմական աւանդութիւնները մեծ ազդեցութիւն ունեն Արղութեանների դաստիարակութեան եւ քնածին յատկանիշների պահպանման վրայ։

1875 թուականն էր։ Պաւլովեան դպրոցի բարձրագոյն կարգի մէջ երեք հոգի Հայեր էինք։ Իւրաքանչիւրը մեզնից խօսք էր տուած իրան՝ ամեն ջանք գործ դնել Հայի անունը զովելի անելու

իր օտարազգի ընկերների եւ ուսուցչապետների առաջ։ Դպրոցի տնօրէն գեներալ Պրիդօրովսկին առանձին համակրութեամբ կ'վերաբերվէր դէպի Հայերս, որոնց միշտ կ'չտապէր ներկայացնելու ամէն մի այցելու հիւրին՝ զինուորական պաշտօնեան կ'լինէր եկողը թէ՝ Ֆրանսիական կամ Տաճկական դեսպան։ Մի օր ներս մտաւ Պրիդօրովսկիի հետ խիստ մտերմաբար զրկված գեղեցկադէմ մի գնդապետ, թիկնապահ կօզակների հագուստով։ Բոլոր ուսանողները, ըստ սովորականին, պատուի կանգնեցին, ձեռքերը սրունքներին կախ, ճակատով ուղղակի դէպի տնօրէնը եւ հիւրը։ Երեք Հայերս էլ կանգնած էինք միմիանցից բաւական մեծ հեռաւորութեանց մէջ։ Դռնից ներս եկածին տեսէ, իսկոյն նկատեցին ամենքը, որ գնդապետը տնօրէնի հետ խիստ մտերիմ բարեկամ է, ըստ որում բարձր եւ մերթ հեգնական ձեւով նորան «դու» էր ասում։ —«Ո՛չ, ոչ, Հայեր կ'ուզեմ տեսնել Հայեր, Ռուսներից դերիք եղաւ» ասեց խնդալով գնդապետը զօրապետին։ —«Ո՛, նոր չէ, որ գիտեմ քո ազգամոլութիւնը» դարձրեց տնօրէնը, կանչելով Հայերին՝ իւրաքանչիւրին իր անունով։ — «Ահա այսպէս» դիտեց գնդապետը, խնդաղատանօք առնելով երեքիս էլ օրաձեւ բացած ալեայն գրկի մէջ. «ես իշխան Ալէքսանդր Արղութինսկին եմ, որ օգուտ քաղելով իմ սիրելի ընկերիս տնօրինութիւնից ձեզ, պարտաւորութիւն համարեցի՝ դալ տեղեկանալ ձեր վիճակին, բարեկամիս մանաւոր հոգածութեան յանձնարարելու համար։ Կրօնուսոյց Հայ քահանան ճշտութեամբ կ'յաճախէ ձեզ. ոսվորեցէք ձեր կրօնը եւ մանաւանդ լեզուն, որ ինձ պէս անբաղա չ'լինէք, ըստ որում չ'եմ կարող իմ մայրենի լեզուն վարժ խօսելու։» Այս սրտաքին յորդորները տալով իւրաքանչիւրիս, տուաւ իր այցեւտոմսը եւ հասցէն, որեւէ մի կարիք ունեցած ժամանակ իրան դիմելու համար։

Միւս օրը, երբ գեներալ Պրիդօրովսկին եկաւ դպրոց, յիշելով իր բարեմամի այցելութիւնը, ասեց մեզ. «գիտէք ով է Արղութինսկին. նոյն իսկ մեծ Դուքսերի հետ նա այնպէս մտերիմ է, ինչպէս ինձ հետ լինելով իմ դպրոցի ընկերս. ո՛, եթէ նա այդչափ տաք բնութեան տէր չ'լինէր, ով գիտէ որ աստիճանների մէջ կ'լինէր. կ'ցանկանայի ձեր ազգին այդպիսի աղնուաբարոյ մարդիկ աւելի ունենալ. իր ազգի պատուի համար երեք անգամ նա ասպարէզը եւ նոյն իսկ կեանքը վտանգի է ենթարկել ու աստիճանաղրկութեան եւ մեծամեծ զրկանքներին դատապարտվել։ Թէպէտ եւ այդչափ էլ դիւցազգացութիւնը արդէն ծայրայեղութիւն է, բայց՝ անշուշտ խիստ պատուս-

բեր է, որ մի անգամ Հայ անուանելով իրան, կանոն է դրել իր համար՝ ազգի անունը իր անունից չ'զատել։ Այդպիսի խնդիրներին անտարբեր մարդը եւս աւելի կ'յարգէ անտարակոյս այդպիսի բաց բնաւորութեան տէր անձանց, քանթէ իրանց եսական նպատակների համար ի վնաս ընդհանրութեան պատուին կեղծողներին։» Ո՛րչափ ազնիւ մարդ պիտի լինէր նոյն իսկ այսպիսի հանդուրժում յայտնող Ռուս զօրապետը...։

Ցիչելով այժմեան Արդութեաններին՝ ի դէպ է խօսք անել այստեղ եւ մի դնդապետի մասին, որ խնամացած է Պօլսի ազգայիններին, ամուսնանալով Դաղեանց օրիորդներից մէկի հետ։ Բայց նորա մասին միայն Պօլիս գալուց յետոյ տեղեկութիւն ստացանք. ճանաչողները մեծ գովեստներով են խօսում նորա ազգային դիրքի վրայ եւս։ Եւ սա է, գոնէ մեր աչքում, մարդուս գլխաւոր արժանիքը. աստիճաններ եւ շքանշաններ կրող չ'տեսներ շատ ունենք, որոնք Հայի անունը միայն առանձնական փոխուկով կ'տան, այն էլ դողի պէս վախկոտութեամբ չորս կողմը նայելով...։

ԻՇԽԱՆ ԲԱՐՍԵՂ ՌԵՀԲՈՒԹԵԱՆ

Իշխան Բարսեղ Ռեհբութեան եւ նորա յատկանիշները։ Նորա իշխանական ծագումը եւ Վրաստանի հայազն իշխաններ։ Նորա դաստիարակութիւնը ու յիշատակը Պաւլովեան դպրոցում։ Հայկական առանձնայատկութիւններ։ Ռեհբութեանը կայսեր երեկոյթին։ Նորա ժամասիրութիւնը եւ հիացումը դէպի Ներսէս Ե. Ռեհբութեանի դերը վերջընթեր Ռուսա-Թիւրք պատերազմում։ Հայկական հաստատամտութիւն։ Երկուլյաղթանակ եւ հրաշալի պարգեւադրութիւն։ Ռեհբութեանը զորաց հանդէսում։ Զաւեշտական թերթի սրամիտ գտումը եւ կարծիքը Ռեհբութովի վրայ։ Ռեհբութովի կրած վիրաւորանքը իր ստորադրեալի նշանակութեամբ։ Թագաժառանգը Կովկասում եւ Հաջի-Մուրատի արշաւանքը։ Կայսեր գոհունակութիւնը Ռեհբութովին եւ սորա իշխանուհու ստացած պարգեւը։ Վճռողական ճակատամարտը եւ Ռեհբութովի հանճարեղ վարպետութիւնը։ Նորա վաստակած յաղթութիւնը։ Ռեհբութեանի ժառանգը եւ տոհմակիցները։

Իշխան Բարսեղ (Վասիլ) Ռեհբութեան նոյն դերը ստանձնեց վերջընթեր Ռուսա-Թիւրք պատերազմին Կովկասում, ինչ նորա ամենընտիր ձեռնասուն կոմս Լորիս-Մելիքեանը անցեալ կռուին։ Ինչպէս որ Լորիս-Մելիքեանը հաւասար յաջողութեամբ վայելեցրեց իր տաղանդը եւ ռազմագիտութեան ասպարիզում եւ աշխարհավարական, նոյնն էր եւ նորա մեծահռչակ վարպետը, թէպէտեւ Ռեհբութեանին չ'վիճակվեց իր աշակերտի չափ լայն պետավարական գործունէութիւն ունենալ։ Իրանց բնաւորութեան եւ տաղանդի յատկանիշներով այս երկու հակայական տիպարները ներկայացնում են Վելինգտոնի իսկական տպագրութիւնները Ռուսաց պատմութեան մէջ։ Երկուսն էլ միշտ աւելի խորհող, կշռադատող, չրջանկատ, սրահայեաց եւ հեռատես, քանի է բուռն ոգեւորութեամբ եւ անձնատպաստան թեւաղրութեամբ վճռող ու ձեռնարկող։ Սորա վկայութեան կարող են ծառայել մի Ռուս գրողի հետեւեալ խօսքերը Ռեհբութեանի մասին. «պատերազմական գործունէութեան ասպարիզում մանաւանդ զգոն եւ նախատես Հայի տիպար էր Ռեհբութովը. եթէ նա կատարելապէս չէ վատահ գործի յաջողութեան վրայ, հաւատացէք, որ ոչ մի շարժում եւ ոստիւն չի անիլ թշնամու վրայ։» Ուրեմն յիշելով Վելինգ-

տոնին, մենք ուզեցինք ասել միայն թէ՝ հայկական հոգու եւ հանճարի առանձնայատկութիւնները սերտ կերպով չօշափում են Անգլիական հանճարի կողմերը, այն տարբերութեամբ դէթ, որ գուցէ Հայի մէջ զգուշութիւն աւելի զարգացած լինի, քանթէ Անգլիացու։ Եւ սա տեսնվում է հայկական մի նշանաւանի այն փոփոխութեամբ, որ նա առնում է Անգլիական թարգմանութեան մէջ։ «հարիւր անդամ չափիր մի անգամ կտրիր» ասում է Հայը. «ոչինչ չկայ անհնարին կատարելու համար, չափած թէ չ'չափած» ասում է Անգլիացին։» Այսպէս արագահաս եւ բաղմանիւթի խելքով, արթուն եւ գործնական մտքով, տրամաբանելու, ազդելու եւ համոզելու զօրաւոր կարողութեամբ, լեզուագիտական մանաւոր ընդունակութիւններով, մեծավայել եւ դիւթիչ ձեւերով Բեհբութիւնը այն գաղափարն է Ռուսահայ զօրավարների մէջ, որոնց կարգին պատկանում են Լօրու-Մելիքեան եւ Շալիմովիկեան։

Բեհբութեանի իշխանական պատուանունը Վրաց թագաւորների, մենաշնորհն է, որ տուել են Բարսեղ զօրավարի նախնիքը իրանց մատուցած նշանաւոր զինուորական եւ վարչական ծառայութիւնների համար։ Իշխան Ցիցիանով-որի դէպի Հայերը տածած հակակրութիւնը արդէն անուանք նորա արարքով Հայ Մելիքների հետ-իր ազգային մենաւանդութեան շնորհիւ, չ'ուզեց զրկել այն հայազն իշխաններին եւս, որոնք Վրացասանումն էին. Ցիցիանովի համար հերիք էր միայն, որ նոքա Հայ երկրի եւ ժողովրդի շահերին չ'նուիրած լինէին իրանց ուժերը, որ ամեն կերպով ընդունելի եւ յարգելի պայազատներ համարվէին... Ուստի՝ ներկայացնելով Ռուսաց կայսեր վաւերացման Վրաստանի ատուարաթիւ Ը-ՈՒ-ԴԵԲԷՆ (աղնուական) (1) իբր իշխանական մենաշնորհ ունեցողներ, Կովկասի վերոյիշեալ փոխարքան չդատեց եւս չորս-հինգ հայազն իշխանական տներ, ինչպէս էին՝ Բեհբութեաններ, Թումանեաններ, Բէկիմ-արէկեաններ, Խօջա-Մինասեաններ, Սեբաթեաններ եւ Ամատունիք։ Իսկ դալով Ջէնբաքուր (փառք Ճէնաց) Օրբելեաններին եւ Բագրատունիներին, որոնք հարկաւ Հայաստանից Կովկաս անցած հարազատ Հայ իշխաններն էին (թէպէտ օտար երկիրներից դարերէ հետ գաղթած), դոցա «հայութեան» մասին Ցիցիանովը եւ Ռուսները լսել անգամ չէին ուզում ճանաչելով նոցա միայն իբր «զուտարիւն» Վրացի թագաւորներ։

Չ'նայելով մինչեւ, որ Բեհբութեանները վաղուց հետէ իւրա-

(1) Սոցա մեծ մասը մինչեւ հիմայ եւս «Իշխանական հրամանատարութեան» տակ ունեն դեռ հարիւր եղ եւ այդչափ էլ գլուխ ոչխարներ։

ցրած են եղել Վրաց լեզուն եւ սովորութիւնները, բայց ազգային տաղանդը եւ ցեղային բարձր յատկանիշները միշտ անվթար են պահել նորա։ Վասնորոյ, երբ բացվել է աւելի լայն ասպարէզ, անհատական ձիրքերը փայլեցնելու համար, եւ ներկայացել է մրցման ընդարձակ հանդէս, այս ժամանակ է գոհարը ուլունքից որոշվել եւ Հայը Վրացուց տարբերվել։ այստեղ են յառաջ խաղացել սակաւաթիւ հայազն իշխաններ բաղմաքանակ Վրացի աղնուականների դասից, բարձրանալով Ռուսաց ամենամեծ աստիճաններին, զինուորական թէ քաղաքական պաշտօնների մէջ։ Հայութեան այսպիսի յաղթանակը տանող առաջի քաջարին եղաւ իշխան Բարսեղը։

Բեհբութեանի դաստիրակութիւնը—ինչպէս եւ նորա կրտսեր եղբօր, որ միայն չորս—հինգ տարի առաջ մեռաւ Վարշաւի բերդապահ զօրաց հրամանատարութեան պաշտօնի մէջ—կատարվել է Պետերբուրգ Պաւլովեան զինուորական դպրոցում։ Այդ տեղ, ուսանողաց ընթերցարանի պատի վրայ կախած են այն եղակի արանց կենդանագրերը, որոնք այդ դպրոցի մէջ աշակերտած լինելով, նշանաւոր դերեր խաղալու բաղտի են արժանացած։ Այդպիսիների թիւը տասից աւելի չէր։ Որչափ կ'զմայլվէր հոգիս, երբ մտնելով ամեն օր ընթերցարան՝ կ'տեսնէի մեր պանծալի հայրենակիցց, իշխան Բարսեղ Բեհբութեանին, ամենքից բարձր կախած իր սովորական հպարտ կացուածքով աջ ձեռքը կողքին, գլուխը ընձուղտի վայելչապանծութեամբ միւս կողմ դարձրած բարձրադիր ուսերի վրայից։

Զարմանալի է յիրաւի թէ որչափ առանձգական է Հայի բնաւորութիւնը։ համեստ, հնազանդ եւ մեղմահայեաց տեսքից նա ընդունակ է ստանալ այնպիսի վեհ, խրոխտ եւ աղդու վերաբերանք, որ կասես թէ՝ նորան ծնող մայրը առիւծի կաթով եւ արծուի սրտով է սնուցել։ Հէնց այս իրողութիւնը միայն կարող է բաւական ապացոյց լինել նորա, որ ստրկաբարոյութիւնը Հայի բնաւորութեան մէջ բնական գիծ չէ դարձած, չ'նայելով դարերի ճնշողական ջանքերին, այլ նա սոսկ արտաքին, արուստակեալ եւ չնչնու մի երեւոյթ է, որն իսկոյն կորչում է Հայի վրայից, երբ նորա անընկճելի հոգին ազատ ելք է գտնում ճնշող պայմաններից։ Մինչդեռ այսպէս չեն ստրկական յատկութիւններով խմորված բնաւորութեան նշանները։ որչափ ազատ եւ բարեյաջող որպիսութեանց մէջ էլ դտնվի այդպիսի մարդ, որչափ էլ զերծ մնայ նա արտաքին ճնշումներից, դարձեալ նորա հոգին եւ վերաբերանքը միշտ կաշկանդված եւ ազաւաղված կ'մնան, ինչպէս եւ միտքը սահմանաւոր ու կրաւորական, մինչեւ որ, ի հար-

կէ, երկարատեւ եւ նպաստաւոր պարագաների մէջ սերունդներ անցնելով, նա կ'վերականգնի հոգեպէս ու կ'թոթափէ ստրկային թերութիւնները։

* * *

Արտաքին տեսքով մի կոպիտ եւ խստաբարոյ Կովկասցի, դաստիարակութեամբ սակայն Բեհբութովը եղել է, ինչպէս նկատեցինք, մի նրբակիրթ եւ ուսեալ Եւրոպացի. Ֆրանսերէն, Գերմաներէն, Ռուսերէն եւ Լեհերէն նա լուսել է, ինչպէս իր հարազատ լեզուն, որին չատ լաւ հմտութիւն է ունեցել, ինչպէս եւ Թուրքերէնին, Պարսկերէնին ու Վրացերէնին։ Արտաքին երեւոյթի եւ նեղքին որպիսութեանց այնչափ զգալի տարբերութեանց առթիւ, ուշադրդ չենք համարում հետեւեալ դէպքը յիշել Բեհբութեանի կեանքից։ Ֆիւրեք-Դէրէի եւ Բաշկադիքլէրի ճակատամարտի փառաւոր յաղթանակները տանելով, պատերազմը վերջանալոց էր, Անդրէյ Նախավկայ թագաւորական չքանչանի ասպետը, հրաւիրված է եղել կայսրից Պետերբուրգ։ Ներկայանալով պալատական երեկոյթի, ամենի հետաքրքրութիւնն իր վրայ է ամփոփել ուղղի պէս յաղթանդամ եւ ջայլամի պէս երկար ու մեծաքիթ զօրավարը։ Կարծելով թէ՝ բացի օղդաթաբարբաւ Ռուսերէնից նա ուրիշ Եւրոպական լեզու չ'գիտէ, երեկոյթը զարդարող քաջատոհմիկ տիկիններ եւ օրիորդներ հաղար ու մէկ զուարճալի դիտողութիւններ եւ սրախօսութիւններ են ճարճատեցնում Կովկասեան հերոսի յետեւից, նիւթ ունենալով դլխաւորապէս նորա «զարհուրելի» քիթը։ Բայց Բեհբութովը ինքը խիստ զուարճախօս եւ պատրաստաբան մարդ է եղել. դէմ յանդիման գալով իր քթից «զարհուրող» մի զոյգի հետ, Բեհբութովը դիտում է բուն Ֆրանսիացու արտաքերութեամբ. «օրիորդներ, ասպահով անցէք, քիթս ձեզ էլ չի երեւում։» Այս ասելիս նա թաքցնում է ձեռքով քթի մի կողմը չուսարված օրիորդներից։ Երեկոյթի դիւցազնի հետ արած անքաղաքավարութեան համար ամօթահար եղած օրիորդները չտապում են կայսրուհու մօտ՝ իրանց յանցանքը յայտնելու։ Կայսրուհին դիտում է. «հապա կարծեցիք թէ՝ նա մի վայրի Կովկասցի է. ընդհակառակն, նա աւելի Եւրոպացի է, քանթէ որեւէ մէկը այս ամբողջ բազմութեան մէջ։» Այդ օրից այսօր Բեհբութովի հետաքրքրաշարժ քթի այդ պատմութիւնը մնացած է Կովկասցիների յիշողութեան մէջ. դուցէ նոյնպէս հէնց այդ օրից սկսած հեղնասէր Ռուսները այնչափ

մեծ ուշադրութեան եւ զբաղման առարկայ չինեցին «Հայի մեծ քիթը»։

Ազգային տեսակէտով, մանաւանդ, Բեհբութովը մի համակրելի մարդու տիպար է եղել. յարգելով երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսին մինչեւ նորա տաղանդին երկրպագելը, իշխան Բարսեղ Բեհբութովը շատ անգամ տիրացուների դասի մէջ կանգնած, Թիֆլիսի մայր եկեղեցու մէջ, բարձր ձայնով մասնակցելիս է եղել եկեղեցական երգեցողութեան, Ներսէսը կաթուղիկոսական ամբոի վրայ պատարագին բազմած ժամանակ։ Ուրիշի վեհ օրինակ մեր արդի չտեսս սերունդի համար այսպիսի դիւցազների հանդիսաւոր խոնարհութիւնը հայութեան առաջ։ Այս կողմից ժամանակակից Ռուսահայ զօրավարներն էլ մեծ հիացման արժանի են, ցոյց տալով իրանց ազգային աւանդութիւններին նոյն յարգանքը, ինչ Բեհբութովը։

Ուսման ընթացքը Պետերբուրգում աւարտելուց յետոյ, բաւական երկար ժամանակ ծառայում է Բեհբութովը Լեհաստանում, մասնակցելով իր եղբօր հետ, Ռուսաց այլ եւ այլ պատերազմներին Լեհաց դէմ։ Տեղափոխվելով յետոյ Կովկաս, մի քանի տարուց յետոյ ստացել է զօրապետի աստիճան, նշանակվելով գլխաւոր կառավարիչ Երեւանեան նահանգի, որն այդ ժամանակ պաշտօնապէս դեռ «հայկական նահանգ» էր կոչվում։ Դորանից յետոյ վրահասնելով վերջին թեր Ռուսա–Թիւրք պատերազմը, նա նշանակվեց առանձին զօրաբաժնի հրամանատար, որի մէջ գտնվող հազարաւոր սպաներից մէկն էլ այժմեան կոմս Լորիս–Մելիքեանն էր։ Ո՞վ կարող էր մտածել այն ժամանակ թէ, հազար Ռուս ընկերներից միակ այդ Հայ սպան պիտի փոխարինէր 25 տարից յետոյ Բեհբութեանին նորա հրամանատարական պաշտօնի մէջ։ Մինչդեռ քիչ չեն մարդիկ որոնք կարող են վկայել Լորիս–Մելիքեանի միշտ կրկնած հետեւեալ խօսքերը. «այն ես չ'լինեմ, որ մի ժամանակ կոչել չ'տամ ինձ հրամանատար եւ կոմս։»

Այս խօսքերը ասել է նա, շատերի ներկայութեամբ, երբ Թիֆլիսի թատրոնից եկնելով մի մութ եւ անձրեւոտ գիշեր, չէ կարողացել մասնաւոր կառք գտնել մինչեւ իր տուն դնալու համար։ Այդ ժամանակ հաղիւ հարիւրապետի աստիճանի մէջ, Լորիս–Մելիքեանը իշխան Վորոնցովի համհարզն էր։ Անձրեւի տակ թրջվելու վայրկենին է եղել, որ բացականչել է իր տաղանդի եւ աստղի վրայ հաւատ ունեցող երիտասարդ Հայ զօրականը, թէ «կ'դայ ժամանակ, երբ ես կ'դադարեմ լինել մութ գիշերը ոտով քայլող մի հասարակ ասպայ, այլ իմ երեւալիս՝ հարիւրաւոր մարդիկ կ'կոչեն. կոմսի կառքը դէպի յառաջ։»

Կարդալով Սամուէլ Սմայլսի հանրածանօթ աշխատութիւնը ինքնուգնոնրիան եւ հաստատամտութիւն մասին, Հայերս չ'գիտենք թէ ինչպէս հիանանք Անգլիական «զօրեղ կամքին եւ բնաւորութեան։» Մինչդեռ դրաւ կ'դնենք, որ եթէ Սամուէլ Սմայլսը տեղեակ լինէր թէ՝ մի յետնեալ Հայու տղայ մտքումը դրել է քաղաքամիջոցն եւ հղօր պետութեան առաջին պաշտօնէութեան աստիճանին հասնիլ եւ կատարել է իր խոստումը, դրաւ կ'դնենք, ասում ենք, որ Սմայլսը այդ «յետնեալ Հայ տղի» հաստատամտութիւնը շատ աւելի օրինակելի կ'համարէր, քանթէ Ուասինը, Սանֆենսինը եւ Ֆիլտոնինը։ (2)

Բայց մեր աղքի չտես եւ քծնող գրագէտները հակամիտ են երկրպագել դէթ նորան, ինչ «լուսաճաճանչ» Եւրոպայի մէջ կ'գտնվի ու Եւրոպացու բերանով կ'հաչակվի....

Մուրալեվի կրած մեծամեծ անյաջողութեանց միջոցին, երբ մի շաբաթուայ մէջ Ղարսի պատերը խլեցին նորանից 15 հազար զօրք, առանց սակայն սատանման նշոյլ ցոյց տալու, այս ժամանակ էր, որ Բեհբութովի երկու յաղթութիւնները Փիւրեք–Դերէի եւ Բաշ–Կադիքլերի տակ, այնպիսի ուժգին ուրախութեամբ ցնցեց բովանդակ պետութիւնը, որ Նիկողայոս կայսրն անգամ զարմացմամբ պաշարուած այսպէս բայականչեց Բեհբութովին. «դու պետութիւնը զարմացրիր, ես էլ քեզ կ'զարմացնեմ։» Այս խօսքերի հետ նա պարգեւեց անանման գիւղացուին, ինչպէս արդէն յիշատակեցինք, Անդրէաս Նախավկայի շքանշանը, որին չ'արժանացաւ դեռ ոչ մի ուրիշը վերջին երկու պատերազմների հերոսներից։ Ինչպէս ասեցինք՝ Ռուսաց այդ շքանշանը արքայական է համարվում, ուստի նորան տալիս են միայն օտար թագակիրներին, այն էլ խիստ հազուադէպ։

Բեհբութովի սպայակոյտի մէջ գանվածներից մինը պատմում էր հետեւեալը. «ստանալով կայսեր անտուիտ շնորհը, հրամանատարը հանդէսի հանեց իր զօրաբաժինը, որի առաջ կանգնած նա մի աղդու եւ ոգեւորիչ ատենաբանութիւն արեց զօրքին, որը որոտընդոստ ուրանալով թնդացնելով Արագած լեռան հովիտները՝ կ'գոչէր. «հայր–զօրավար, տար մեզ պատերազմ», տալով մեզ բարեբաղդութիւն քո ձեռքի տակ մեռնիլ։» Զօրաց ոգեւորութեան խօսքերից յուզված, արտասվեց հրամանատարը, ասելով. «եղբարք, ձեզ հետ

---

(2) Աւաջինը սոցանից ամեն սրդելքներ, յաղթելով հասաւ շրդեշարժ մեքենայի գլուխն. երկրորդը՝ երկաթուղաւ. երրորդը՝ շպենտալ։

միանելը ինձ համար աւելի եւս բարեբաղդութիւն է, եթէ միայն կ'ուզը՝ դրաման չնորհէ։»

Եւրոպայի զաւեշտական պատկերազարդ թերթերից մինը հետեւեալ կերպով էր որոշել Բեհբութովին մնացած Ռուս զօրավարների մէջ։ Մի էջի վրայ ներկայացրել էր ամենքին իրանց յատուկ անուններով, նոցա մէջ եւ Բեհբութովին։ Զօրավարները բոլորն էլ առանց գլխի էին կանգնած, մարմնի սոսկ մնացած մասը կրելով, իսկ Բեհբութովը դոցա մէջ ընդհակառակը՝ գլուխը միայն կ'կրէր, մնացածը ծածկելով։ Դորանով այն միտքը կուզէր յայտնել հնարագէտ հեղինակը թէ՝ այդ զօրավարների մէջ գլխատցութեամբ եւ տաղանդով գործ տեսնող միայն Բեհբութովն էր, իսկ մնացածները մեքենայաբար շարժվող արարածներ էին։ Սորանից էլ աւելի ճարտար եւ ճիշդ գնահատութիւն Բեհբութովի բարձրութեան հաղիւ թէ որեւէ մէկը կարող լինէր անել։

1853 թուականի պատերազմը վերջանալուց յետ վերջացաւ եւ Բեհբութովի բաղաը։ երկար տարիներ լինելով Կովկասեան ընդհանուր վարչութեան քաղաքական մասի գլխաւոր անդամ, որ երկրորդ փոխարքայ ասել էր։ կատարելով նոյնպէս այն սխրագործութիւնները, որոնց մասին արդէն խօսեցինք, Բեհբութեանը յանկարծ դալիս իր աջակից սպաներից մէկի ստորադրեալը։ Դա՝ իշխան Ալէքսանդր Բարեաթինսկին էր, հանդուցեալ կայսեր պատանեկութեան ընկերը եւ մտերիմը, որն Բաշկադիքլերի պատերազմին Բեհբութովի հրամանատարութեան տակ դտնվող բաղմաթիւ անյայտ զօրապետներից մէկն էր։ Երբ Նիկոդայոս կայսեր հետեւեց նորա որդին, Վ. օրենքով փոխարքայի մահից յետ, Բարեաթինսկին նշանակվեց նորա տեղ, ի մեծ վիրտուրանք եւ վնատութիւն նորա նախկին պետ Բեհբութովի, որն չ'կարողանալով տոկալ այս հարուածին, յանկարծամահ եղած մեռաւ։

Թիչ կարելի է տարակուսել, որ եթէ Նիկոդայոս կայսեր մահը չ'վրահասնէր, Բեհբութովը չէր զոհվիլ անձնական որեւէ համակրանաց, այլ անշուշտ ինքը կ'լինէր Կովկասեան փոխարքան։ Իսկ թէ որչափ մեծ համարում եւ վստահութիւն ունէր յիշեալ կայսրը Բեհբութովի վրայ, կարելի է տեսնել, ի միջի չատ հաւատիքների նոյնպէս նորանով, որ երբ Ալէքսանդր Բ., դեռ դահաժառանգ. յանկութիւն յայտնեց հօրը այցելել Կովկասը, նա թոյլտվութիւն ստացաւ հետեւեալ դրութեամբ Բեհբութովին։ «դահաժառանգի կենաց ապահովութիւնը կ'վստահեմ միայն քո երաշխաւորութեան։» Իսկ թէ ինչ մեծ վստանդ էր յիրաւի այդ ժամանակ Կովկասում պատելը, թէ-

կուլ ամբողջ գունդերի ուղեկցութեամբ, կարելի է դատել նորանից, որ Լէզգի հրոսախումբերը, հռչակաւոր Հաջի-Մուրադի առաջնորդութեամբ, երկրի՞մի ծայրից դէպի միւսը թռչելով, մարդիկ էին յափշտակում, մոռնելով շատ անգամ մինչեւ սպասկանոցները եւ զօրանոցները։ Այսպիսի դեւանման թշնամիներից ոչ միայն դժուար էր ուրիշի կեանքի ապահովութիւնը երաշխաւորել, այլ նոյն իսկ իր սեփական գլուխը։ Եւ իրօք, խեղճ ժառանգը դեռ Անդրկովկաս չ'մտած, լեռների մէջ ենթարկվեց Լէզգիների անակնկալ յարձակման, որի մէջ մաղ էր մնացել, որ գերի չ'ընկնէր։ Հասնելով վերջապէս Բեհբութովին, նա միամտանում է, ունենալով նորան ամենուրեք իր հետ կառքի մէջ։ Անղսալելի Հաջի-Մուրադը նկատելով, որ Բեհբութովի ճանկից դժուար պիտի լինի կորզել երկնառաք որսը, ժողովեց իր շուրջը մօտ երեք հազար ձիաւոր զօրք, որ տասնապատիկ աւելի զօրաւոր թշնամու վրայ յարձակելու բաւական մի ուժ էր։ Մեծանուն ասպատակողի համար։ Ինչպէս ասում են, Բեհբութովը կանխապէս տեղեկանալով ահարկու Լէզգիի ջանքերին եւ շարժումներին, օգոստոսիսա հիւրին ոչինչ չէ ասում մինչեւ, նորան անհանգստութիւն չ'տալու համար։ Իշեւանների մէկում թագաժառանգը ցանկութիւն է յայտնում նախաճաշ անել, բայց Բեհբութովը կարծես նախանշամութիւնից նեղչնչված, համոզում է նորան յետաձգել ճաշը հետեւեալ կայարանին։ Երկու ժամ չ'անցած այդ բոպէից, Հաջի-Մուրադը, անանցանելի լեռները ճեղքելով, երեւում է այն իշեւանի առաջ, ուր կայսերորդին հաճութիւն էր յայտնած հանգստանալու։ Իշեւանի մէջ գերի ընկած կազակները, փոխանակ ցոյց տալու Հաջի-Մուրադին ճանապարհի դէպի այն կողմը, ուր գնացած էր Սէլէքսանդրը, հակառակ ուղղութիւնն են յայտնում, որով միջոց են տալիս Բեհբութովին ժամանակ վատատակել թագաժառանգը փրկելու համար։ Սորա վրայ մեծապէս վարձատրվում է ոչ միայն ինքը Բեհբութովը, այլ եւ նորա կինը, ստանալով Ստանիսլաւի մեծ չքանշանը ժապաւէնի վրայ։

Խօսելով Բեհբութովի մասին, ինչպէս եւ ուրիշ Հայ զօրապետների, ոչ մասնաւոր ուշադրութիւն նուիրած լինելով իւրաքանչիւրի գործերի ուսումնասիրութեան, այլ օգտվելով սոսկ պարզ հարցասիրութեամբ ձեռք բերված տեղեկութիւններից, որ չնորհել են մեզ բարեյաջող պայմանները, խոստովանում ենք, որ մանաւանդ Բեհբութովի մասին դեռ շատ բան կայ ասելիք։ բայց այդ ամենի լիուլի նկարագրութիւնը կ'թողնենք ուրիշ առթի եւ ձեռնարկու-

թեան, որին դիմած ենք արդէն, պէտք եղած քայլառութիւնները անելով։ Իսկ այստեղ կ'վերջացնենք իշխան Բարսեղ Բեհբութեանի մասին, յիշատակելով եւս մի անցք նորա պատերազմական հնարամիտութիւններից։

Բաշկադիքլերի թէ Բիւրեք-Դերէի ճակատամարտից մի օր առաջ, երբ թուով ուժգնապէս գերակշռող հակառակորդները վայրկենից վայրկեան պատրաստ են եղել յարձակվելու Ռուսաց բանակի վրայ, Բեհբուդովը մեծ յուսահատութեան մէջ է գտնվել. եօթը հազար զօրքը քառասուն հազար է ունեցել իր դէմ։ Մի դիշեր եւս, եւ ահա յետեւից օգնութիւնը պիտի հասնէր. բայց լրտեսներից ճշդած էր Բեհբութովը, որ առաւօտեան արշալոյսը նշան պիտի լինէր Թիւրքաց մեծազօր բանակին Ռուսաց վրայ գրոհ տալու։ Նեղեալների Աստուածը ինչ պէտք էր անել, բայի սիայն մարդկանց թեւ տալու հրաշքը. իսկ հրաշքների էլ դարը վաղուց անցած էր։ Բայց Բեհբութովը, ինչպէս զինուորական մարդ, կատարեալ հաւատ ունէր այդ հրաշքներին եւ նա չ'սխալվեց. մի երկու ժամ վրանի մէջ առաձնանալով, յանկարծ դուրս է գալիս նա երեսը քաջալերութեան շողերով պայծառացած։ Հրաշքը Աստուած նորա խնդապատակի մէջ է կատարում։ Լրջաբարոյ զօրավարին տեսնողը մնում է ապշութեամբ պաչարված. «երեկոյին տեղի պիտի ունենայ արտասովոր իրախճան» ասում է նա ու հրաման տալիս մեծամեծ պատրաստութեանց։ Այս ինչ հանելուկ էր. էլ ոչ ոք կարող էր կասկածիլ թէ Բեհբութովը խիստ յուսատու աւետիս է ստացել օգնութեան եկող զօրաց մասին։ Հանդէսի պատրաստութեանց լուրը ելեկտրական շուտութեամբ տարածվեց չորս կողմը, որով մահմետական լրտեսներն չ'յապաղեցան տեղեկացնելու որոնց հարկն էր։ Բեհբութովի ուղած հաչիւն էլ հէնց սորա մէջ էր կայանում, բայց խմանալով լրտարների կասկածոտ ախտական բնաւորութիւնը, նա որոշեց ձեռնարկել ամեն թերահաւատութիւն վարատելու միջոցին. ուստի մութը կոխած իրօք տեղի ունեցաւ ընդհանուր ուրախութիւնը բանակի մէջ. երգ, պար, ճրագալոյց, երաժշտութիւն, հրախաղութիւն թնդացրին բոլոր տարածութիւնը։ Կերուխումի ժամանակ, յանկարծ սուրհանդակ է գալիս Բեհբութովին մի սեծ ծրար բերելով. հանդիսաւոր ընթեռնելով, հրամանատարը աւետում է ի լուր ամենեցուն այս խօսքերը. «ծրարը ձեր ձեռքը հասնելուց մի կամ երկու ժամ յետոյ ձեր տրամադրութեան տակ կ'լինեն չէոոն հազար սպառազինեալ եւ քաջարի մարդիկ։» Որոտաձայն ուրան ռումբի շառաչմամբ է հանում թշնամեաց բա-

հակը ու ահ ու սարսափ գցում նախքան լրտեսների աճապարելը։

Բայց ինչ։ ծրարը եւ սուրհանդակը Բեհբութովի սեփական հնարմունքն են լինում՝ իր ձեռքով միայն գրած ու պատուիրած։ Նպատակը փառաւոր յաջողութեամբ է պսակվում։ Բեհբութովի բանակը խիստ զօրացած կարծելով, ոչ միայն յետաձգում են յարձակումը հակառակ կողմից, այլ եւս բոլորովին լքանում են, որ արդէն պարտութեան կէտն է լինում։ Մինչեւ երեկոյանալը՝ օգնութեան սպասած միայն 7–8 հազար զօրքը կարողանում է հասնիլ ճարտարամիտ Հայ զօրավարին, որը միւս առաւօտ անմիջապէս յարձակման հրաման է տալիս։ Ցաղթութիւնը այնչափ կատարեալ է լինում, որ ախոյեան սպարապետը գերի է ընկնում 12 հազար անձնատուր եղած ստորադրեալների հետ, որով եւ վճռվում է վերջնականապէս պատերազմի վիճակը Հայաստանի դաշտերում։ Այս փառայիշատակ ճակատամարտի մէջ 16 հազարը 60 հազարի վրայ է դնում։ Այս պատճառաւ է ասում կայսրը Բեհբութովին այն պատմական խօսքերը թէ՝ «դու աշխարհը զարմացրիր, ես էլ քեզ կ'զարմացնեմ.»

* * *

Փիւրէր–Դերէլի զիւցազնի այժմեան ուղղակի ներկայացուցիչը նորա միակ զինուորական որդին է, որին բաղդը գուցէ նոյնչափ փայլուն ապագայ էր սահմանել, որչափ եւ իւր մեծափառ հօրը։ Փոյթեռանդ խնամքով դաստիարակված, ի բնէ աշխոյժ, զգօն, ազնիւ եւ վայելչագեղ, դեռ ծաղիկ հասակի մէջ հարիւրապետի աստիճանաւ, նա Կովկասեան փոխարքայ Մեծ Դուք Միքայէլի, բոլոր Ռուսահայ զինուորականների մէջ ընտրած, միակ սպակից սպան էր, նոյնչափ սիրելի Դուքսին, որչափ եւ Դքսուհուն։ Դեռ գիմնազիստ ժամանակներս քանիցս անցնելով պալատի առաջից, ուր խուռը բազմութիւնը ժողովուած փոխարքային դուրս ելանելուն էր սպասում, այդ տեղ կանգնած լսած ենք շատ անգամ Հայ ժողովրդից հետեւեալ խօսքերը, երբ Դուքսի հետ երեւացել է վառվռուն շարժուածքով եւ բոցավառ աչքերով նորա Հայ համհարզը։ «Ասասուած բախչէ քեզ մեր աղդինոր քո անմահ հօրը տեղը բռնես։» Սորանից դժուար չէ տեսնել թէ որչափ մեծ համակրութիւն է թողած իշխան Բարսեղ Բեհբութեանը Հայ ժողովրդի սրտի մէջ, որն աւանդաբար հրճվում է նորա կենդանի սատեր տեսնելով։ . . .

Դեռատի իշխանի այս յուսալից ասպարէզի մէջ ինչ վիշտ Հայերի խանդակաթ զգացմանն կաթուած իջնելով մեծ հոր անբաղդ ժառանգի վրայ, այնպէս ջլատեց նորա բոլոր ուժերը եւ միտումները, որ ամբողջ եօթը տարի անկողնի մէջ մնալով, հաղիւ կարողացաւ նա կազդուրուիլ մինչեւ կարողանալու մի քանի քայլ ինքնօգնութեամբ շարժիլ։ Այս ժամանակ էր, որ բոլանդակ Թիֆլիսը, Հայ Ռուս եւ Վրացի անխտիր, հիացած մնացին հիւանդի սիրասուն կողակցի անպայման անձնուիրութեան վրայ դէպի իր դժբաղդ ամուսինը ինչպէս նորա առաքինութեաց օրինակելի վարք ու բարքին։ Սպասաւորներով, նաժիշտներով եւ բժիշկներով շրջապատած իշխանին՝ ամենքի տեղ կ'խնամէր միայն նորա առաքինաղարդ ամուսինը, կատարելով միայն ինքը ամեն ինչ, որ պիտի անէին, նորա շուրջը սպասող բազմաթիւ կամակատարները։ Այս սրտաշարժ գգուանքը այնպիսի հիացում վաստակեց դէպի նազելի իշխանուհին, որ քանիցս, ինչպէս վկայ ենք եղած, Վրացի եւ Ռուս ընտանեաց մէջ նորա վրայ խօսած ժամանակը, լսպառ լռել է ազդային չ'կամութեան ամեն ղգացում, որը փոխարինվել է գէթ միաբերան եւ միահամուռ պատկառանքով դէպի Դադեանների տան ներկայացուցիչը Ռուսահայոց մէջ։

Պարտք ենք համարում դիտել այստեղ, որ եթէ Ռուսահայ երիտասարդներից շատերը առանձին համակրութիւն էին ոտացած դէպի Պոլսի հայուհեաց ընտանեկան բարեմասնութիւնները, այդ՝ սոսկ յիշեալ իշխանուհու վայելած բարի անուան շնորհիւն էր։ Բայց որչափ ծանր եղաւ մեր պատարանք, երբ գալով Պոլիս, տեսանք այստեղի ծանծաղաբարոյ «լոյս» եւ «այոյս» սիրողներին, որոնք հայուհու ամեն բարձր արժանայատկութիւններ, մոռանալով, արժանայատկութիւնք, որոնց առաջ երկրպագած են նոյն իսկ սրեւելագէտ Եւրոպայիք, հետամուտ են դտնվել միայն Ֆրանսիացուհու եւ Անգլիացուհու կապիկները լինելու։ Զենք վիճում, որ այսպիսիների թիւը գուցէ գէթ հինգ–վեց մատերի վրայ կարելի է հաշուել, բայց ինչ անես, որ եկողի աչքին ամենքից առաջ զարնողները միշտ այդ «լուսաբաշխ» զեվզեկուհիներն են, իրանց, չրջապատող զանազան «գրագէտ» եւ «գրասէր» մոլորակներով...

Արդէն ապաքինող յիշեալ իշխանը, դատապարտված լինելով երկարամեայ տնափակ կեանքին, իր պահապան հրեշտակի դորովալից ընկերակցութեամբ, ոչ միայն կարողացաւ յաջողիլ մայրենի լեզվի եւ գրականութեան կատարեալ ուսումնասիրութեան մէջ; այլ եւս կարողացաւ այնպիսի վառ խանդ ստանալ դէպի Հայութիւն, որ

այսօր նորա տունը բոլոր դռներով բաց է միշտ Հայ գրագէտների եւ այլուայլ գործակալների առաջ, որոնց վերաբերմամբ մեծանուն պա-յազատը կարողանում է արժանապէս կատարել դիւցազնական աւան-դավսօսի, նոյնպէս եւ մեկենասի վեհաշնորհ դերը։

Որովհետեւ Բեհբութեանների ցեղը նոյնչափ բազմաճիւղ է, որ-չափ եւ Արղութեանների, դժուար կ'լինի ներկայացնել այստեղ դէթ նոցա համառօտ անուանացուցակը։ ուստի թողնելով այդ ու-րիշ առթիւ, կ'յիշատակենք միայն երկու անձնաւորութիւն այդ տոհմի մէջ, թէպէտեւ նոցանից բաւականաչափ երիտասարդներ կան այժմ, որոնց հետ կամ դիմնազիական դասակիցներ ենք եղած, կամ պաշտօնակից զինուորական ծառայութեան մէջ, կամ թէ ծանօթու-թիւն ունեցած հասարակական գործոց շնորհիւ։ Վերոյիշեալ երկու ան-հատներից մէկը սպանվեց վերջին Ռուսա-Թիւրք պատերազմում, որին նա մասնակցած էր ինչպէս կամաւոր։ Դա միակն էր Բեհբութեան ընտանեաց մէջ իր ուրոյն կեանքով, բնաւորութեամբ եւ ժողովր-դային կենցաղասիրութեամբ։ Գուցէ նա մի անուղղելի ըմբոստ, անզուսպ արկածախնդիր եւ դուարճասէր լօխի համարվէր շատերից։ գուցէ նորա ունեցած կեանքը, վարքն ու բարքը եւ հասարակային հակումները մի վայրի ցոփութիւն համարվէին եւրոպական ջենտլմեն-ների դվսարկը եւ հաղուսաը փոխ առած մեր սուտ լուսաւորեալ-ների համար, բայց մենք այն կ'վկայենք միայն, որ այդ մարդու մէջ այնչափ բուռն կիրք եւ լայն ու խոր զգացում կար դէպի ժողովր-դային ազատ եւ ինքնագոյ սովորութիւնները, որ բարենպաստ պայ-մանների մէջ, նա նոյնպէս կարող էր յաջիտակել եւ առաջնորդել ժողովրդական ստորակարգ դասերը, ինչպէս մի Կարսա-Գէորգի, մի Բօյարիս եւ մի որեւէ կօնդօտիէր։ Զարմանալի սիրտ յիրաւի։ ամենաբնտիր աղնուասրտական ցեղից, մեծաքանակ հարստութեան ժառանգող։ հիասքանչ ասպետական տեսքով եւ դեղեցկութեամբ օժտված, հարիւրապետի աստիճանը դիւրաւ վաստակած եւ նոյն-չափ դիւրութեամբ ձգած մի երիտասարդ մարդ, բոլոր հոգով եւ զգացմամբ անձնատուր էր եղած ժողովրդի ամենայետնեալ դասերի ընկերակցութեան, որի մէջ նորա մի խօսքը սակայն անպայման վճիռ եւ օրէնք էր ամենքի համար։ Որեւէ մի մեծ ասնի հանդէս տեղի կ'ունենար թէ արուեստաւոր եւ մշակ դասի հաղարաւոր բազմու-թեան բորբոքայոյզ բռնամարտ, Թիֆլիսի բարձրութեանց վրայ, ամեն տեղ առաջնորդը եւ ափը լի ոսկով ոգեւորողը ու վարձա-տրողը, ձիու վրայ զօրավարական կայուածքով նստած, հանդարտանօթ

Դաթիկո (Դաւիթ) Բեհբութովն էր։ Նա սարսափ էր ընկնում դորձակատարներին զրկող խստասիրտ վաճառականների համար, կամ իրանց աստիճաններով եւ չքանշաններով յոխորտացող չտես սնապարծների, կամ թէ որեւէ մէկի ընտանեկան պատուին ուխտադրժաբար դիպչող քաղցրաժպիտ իգասիրի։ Քանի քանի անգամ է պատահել, որ այս եւ այն չ'ունեւոր ընտանիքից դրամով հրապուրած անմեղ զոհի համար, Դաթիկո Բեհբութովը եռանդագին միջամտութիւն է արել եւ ահարկու սպառնալիքով արտասուաթոր մօրն է դարձրել նորա աղջիկը, կորզելով ստորաբարոյ հարուստի ճանկից։ Միւս կողմից եւս հաղուագէպ չէ եղել, որ Դաթիկոն, կառապանի հաղուստի մէջ ծպտեալ, յարիշտակել է շատ մեծատունների աղջիկները ու եկեղեցին տարած բռնութեամբ ամուսնացրել այս ինչ այն ինչ զինագործ, կօշկակար կամ դլխարկ չինող երիտասարդ Հայ արհեստաւորի հետ։ Այո, այս անձը մի ինքնակաց տիպար էր, որի մէջ ամփոփուած էին բուն Ռուսահայ ժողովրդի հաւասարասէր, արդարապահանջ, ազատաբարոյ, աշխոյժ, եռանդոտ եւ արկածասէր յատկութիւնները։ Տարակոյս չ'կայ, որ այս ամեն հոգեկան որակութեանց մէջ մտքի եւ սրտի կորովը գլխաւոր տարրերից մինն է, ըստ որում եթէ Դաթիկո Բեհբութովը ընդունակ լինէր թեքվիլ եւ տոկալ զինւորական խստասահանջ կարգապահութեան, անչուշտ այդ ասպարէզի մէջ նա կ'լինէր մի նշանաւոր զօրավար, բերդեր տապալող մի յայտնի ասպետ–զօրական։

Միւսը, որին չ'ենք ուզիլ նոյնպէս անյիշատակ անցնել, դա մեր յարգի բարեկամ եւ իր ունեցած ամեն հակումներով մեր այժմեան ընթացքին ոգեւորութեամբ եւ մեղնից արդէն մի քանի տարով առաջ անձնատուր եղած՝ կորովամիտ իշխան Կոնստանտին Բեհբութովն է։ Զինւորական դպրոցում՝ իր ընթացքը աւարտելուց յետ, հաղիւ մի քանի տարի զինւորական պաշտօնի մէջ մնալով, ընդհատում է նորան ու սուրը գրչի փոխարինում։ Հիմնելով Թիֆլիսում «Աւետաբեր» անուն Ռուսախօս թերթը, որի անվեհեր եւ քաջամարտիկ խմբագիրն էր նա, իշխան Կոնստանտին Բեհբութեանը առաջին հրապարակախօսը եղաւ հաղարաւոր Ռուսահայ ստրկաբարոյ եւ վատահոգի Հայ համալսարանականների մէջ, որը արիութիւն ունեցաւ՝ իր հմտութիւնը Ռուսաց լեզուին ծառայեցնել իր ազգի պատուի եւ շահերի պաշտպանութեան, ընդդէմ բազմաթիւ բարձրաստիճան հայանենդների։ Մեր մեծայարգի բարեկամի կատարած այս գործը արժանի է ոչ միայն լուրջ ուշադրութեան, այլ եւս մեծ համակրութեան եւ երախտեաց,

մանաւանդ որ արհամարելով իրան բացայայտապէս սպասող փառաւոր դիւրաւորական ասպարէզը, մինչեւ հիմայ եւս նա չարունակում է ծառայել ազգին նոյն չաւղի վրայ, ապրելով Պետերբուրգում եւ դրիչ շարժելով մայրաքաղաքի Ռուս մամուլի մէջ սմեն մի պարագայում, երբ կարեւոր կ'լինի Հայոց եւ շատ անդամ էլ ամբողջ Կովկասի ոսնահարեալ շահերը ջատագովել։ Չ'նոք կարող չ'ցաւիլ միայն, որ յիշեալ անձնուրաց գործիչը մի երկու այնպիսի անձանց է նուիրել իր համամարումը, որոնք Հայ ազգի մէջ ճանաչված են, Նաղարեանցի եւ Նալբանդեանցի մահուան չարառիթ պատճառներ, նոյնպէս շատ ազդաւոր գործերի հեղինակ, թէպէտ «կրօնասիրութեան» կեղծ ու պատիր դիմակներով ծածկված։ Բայց դժբաղտաբար միամիտ որսորդների եւ բարեբաղտաբար ընդհանուր ազգի համար, այդ եղանկ եւ «սոսանեալ ղոյդը այլ եւս բոլորովին դիմակազուրկ եւ վարկակորոյս եղած ճիւաղներ են յայտնված Հայ ժողովրդի մէջ, թէպէտեւ դեռ Էջմիածնի դրամական գործերը քմահաճաբար տնօրինող...»

Այս տեղերը աւարտած վայրկենին ստացանք Գէորգ Դ. մահուան լուրը, ուստի սրբազան պարտաւորութիւն կ'համարենք այն ազդարարութիւն անել Էջմիածնի ամբոխի ապագայ Հայրապետին, որ եթէ նորա առաջին գործը պիտի լինի՝ խուսափիլ իր նախորդի ժողովրդականութեան այնչափ վնաս հասցրած բաղտախնդիր խորհրդատուների եւ դիկտատորների ընկերութիւնից, առաջինը գոյա մէջ աւելի վերոյիշեալ արատաբեր եւ ազդավնաս ղոյդը պիտի լինի, քանթ-է նաեւ Մանկունիի պէս տխուր հռչակ վայելով մի անձնաւորութիւն։ Գէորգ կաթուղիկոսի վարկը ցեխի մէջ թաթախողը եւ ամեն տեսակ մոլար քայլեր անել տվողները, ոչ ոքի համար է գաղտնիք, որ եղան Պետերբուրգի երկու անանուն «ֆեբէ»-ները Լրանց Թիֆլիսի արբանեակ-գործակիցներով։ Լուսաւորչի յաջորդը եւ աթոռը պիտի պատկանեն հինգ միլիոն ազգին, այլ ոչ մենաշնորհ լինեն չորս-հինգ խայտառակ գործերով ճանաչված անհատների, որոնք էլ լինի նոցա պաշտօնը եւ կարողութիւնը։ Մեզ հասած լուրը այնչափ կարեւորութիւն ունեցող մի բան է, որ յուսով ենք՝ ոչ ոք մեզ չի մեղադրիլ այս մի քանի տող դիտողութիւնները անելու համար, խօսելով բոլորովին տարբեր առարկայի վրայ։

ԳԵՆԵՐԱԼ ՅՈՎՍԷՓ ՂՈՐՂԱՆԵԱՆ

Որսաբուծի զեղում Ղորղանեանի յիշատակի առաջ։ Արդարութեանի համարումը Ղորղանեանի վրայ։ Սորա տպագետական արդարասիրութեան մի դէպք։ Մի ակնարկ Հաջի-Մուրադի ազդեցութեան վրայ։ Նուխուայ դաւառը եւ նոր տեղագրական պայմանները։ Ղորղանեանի պաշտօնը եւ գրած կարգերը Նուխուայ դաւառում։ Հաջի-Մուրադի յարձակումը Սուչինի եւ Ջալէթի վրայ։ Ջալէթեցի Հայերը եւ Հայուհիք ու նոցա յաղթութիւնը։ Հաջի-Մուրադի ենդ անձնատուութիւնը Կովկասեան փոխարքային։ Նորա վայելած պատիւը։ Հաջի-Մուրադի Նուխի տեղափոխիլը այն տեղ բնակութիւն հաստատելու պատրաստակաւ։ Հաջի-Մուրադի փախուստը, դիմադրութիւնը եւ ոպանվիլը։ Ղորղանեանի հրաժարականը ու նորա պատճառը։ Ղորղանեանի մահը. նորա արդի ներկայացուցիչները եւ ազգակիցները։

Քեզ պէս Հայերի ազգային եւ մարդկային առաքինութիւնները յիշելիս՝ ձեռքս դողում է ցուզմունքից, գրիչս վայր ընկնում, ո՛, վա՜հ դիւցազն։ Դու, որ՝ սրի ծայրով այնչափ փառաւոր դափնիներ ժողովեցիր, կուրծքդ, ուսերդ զարդարեցիր ճակատդ բոլորեցիր։ դու, որիդ անունը, ոգեսքը, խօսքը, սիրտը մոգական ուժով են կախարդել, յարգանք ու սարսափ հաւասարապէս ներշնչել եւ կատաղի Լէզգիին, եւ անդուսպ Թուրքին, եւ անպաշտպան Հային եւ ըմբոստ Ուսէացիին։ Դու, որիդ տեղը ամենից առաջն է եղել, քո ժամանակակից Ռուսահայ զօրապետների մէջ եւ Կովկասեան փոխարքայի դահլիճում, եւ ժողովրդի համարման մէջ, դու, ո՛ պայծառ սիրելի քաջն քաջ արանց, այդ ամենը սիրով ու հպարտութեամբ զոհեցիր, երբ հանդէպդ որոշում ելաւ՝ կամ... կամ եկեղեցու հաւատարիմ զաւակ մնալ։ Խրոխտաբար ու մեծ սրտով դու վերջինը նախընտրեցիր, չ՝ուզելով ոչ դանձ, ոչ փառք, ոչ ծերանի.... Մի համեստ ձկնորսի պարապմունք ու խրճիթը գիտակցաբար եւ յօժար կամքովդ պալատների կեանքից էլ վերդասեցիր, գէթ Լուսաւորչի հարազատ որդին մնալու համար։

Վեր կաց տես հիմայ, ո՛ անմահ դիւցազն թէ ինչ դարձաւ քո պաշտած Էջմիածինը, թէ ովքեր եղան Տրդատի եւ Լուսաւորչի

տաճարի ու ժողովրդի բաղաղը սնօրինողները. թէ ինչպէս պղծվեց, ստուար ու փչրվեց Ներսեհանդ Հայ ազգի աւանդական կրօնասիրութիւնը. թէ ինչպէս յուսակտուր եւ դասալիք եղած խեղճ Հայ եղբայրներդ, կրօնափոխութեան եւ աղդուրացութեան դիմեցին, նոյն իսկ հէնց Գրիգորի աթոռի պատուանդանի տակ։ Վ՚էր կաց տես, ո՛ ազնիւ Հայ, թէ քո սուրբ բարեպաշտութեան ժամանակները ինչպէս փոխվեցան, ակնյայտ կորստի եւ կործանումն պատապարտելով քառասուն դարեան ազգի գոյութիւնը։ Վ՚ե՛ր կաց տես թէ որոնք են Լուսաւորչի յաջորդի ընտրութեան համար պաք փչրող Լակներ, վարձված ծառաներ, սովալլուկ վարժապետներ, բաղտախնդիր բժիշկներ, աղդանենդ պաշտօնեաներ։ Վ՚ե՛ր տես այս ամենը. վեր, ո՛, արի եւ ազնիւ մարդ, որդ քո մեծութեան բարձրութիւնից գլուխն ի՛ փայր թեռար, երբ քո դիմաց ազդային պարտապանցութեան, խղճի եւ պատուի դրժման չարագէպ տեսիլ ներկայացաւ։

Օգնութիւնդ ենք կարօտ, օգնութիւնդ, ո՛ մեծահամբաւ զօրաստեղ, օգնութիւնդ, որով այս ծանր ճգնաժամին – Գրիգորի փոխանորդի ընտրութեան տաղնապալից վայրկենին – կարող լինենք վանել հրապարակից թափառաշրջիկ վարձկաններ, կաշառաւոր դարանագործներ, ազդակործան թեկնածուներ՝ Հայ Էջիդներ եւ Եղոյեդներ, որոնք Պետերբուրգից մինչեւ Էջմիածին, Թիֆլիս եւ Պոլիս ծիծաղում են անպատիժ, անարգում եւ կոկորդի մէջ խեղդում՝ եւ աղերս, եւ յորդոր, եւ համոզում, եւ սպառնալիք, եւ խօսք եւ ձայն Մի կամ երկու մարդ խիստ թոյլ են մամնայիս հովանաւորեալ ճիւաղային փաղանդը ջարդելու համար. մեզ դէմ կանգնած են դաւերի, մատնութեան, դրպարտութեանց եւ խաչաձեւ ամբաստանութեան ահարկու պատնէշներ. մեր առաջ գղրդալով են անցնում կեղտերի եւ աղբերի խոր ու լայն հեղեղներ. մեր երեսին կարկտի պէս են տեղում լիրբ հայհոյանքներ, ֆալիտ լուսանք, փողոցներում վախճած արիկաների լքտի յարձակմունք։ Մի թոյլ դրչով, մի անփորձ ձեռքով, դէթ սրտի եւ հոգու ուժով, կրօնի ու ազդի սիրոյ ոգեւորութեամբ ինչպէս յաղթող հանդիսանք, ինչպես տապալենք կեղծը, սուտը, չարը, դաւը, վատը, որ ձուլած են ոսկուց, հաստատված երկաթեայ սիւների վրայ ու յենված պողպատեայ նեցուկների. . . . Ո՛, թուլանում է մեր ձեռքը, ճկվում գրիչը ու սիրտներս անյուսութեամբ լիքը, մնում ենք չուարված, ինչպէս միայնակ զինուոր անհուն դաշտի վրայ. . . Ուստի, այս ջատիչ իրականութիւնը դէթ մի վայրկեան մոռանալու եւ անցեալի փառալից յիշողութիւններով

կազդուրվելու համար, թողնենք ներկան ու թողնենք երեւակայութեամբ մեղնից մի քառորդ դար, կամթէ քիչ առելի առաջ, երկու խօսք ասելու գեներալ Յովսէփ Ղորղանեանի մասին։

* * *

Գեներալ Յովսէփ Ղորղանեան նոյնպէս ինչպէս Լազարեվ, Տէր-Ղուկասով եւ Կովկասեան բանակի բոլոր ընտիր զօրավարները, պատկանում է իշխան Մովսէս Արղութեանի դպրոցին, այսինքն է, ծառայելով նորա ստորադրութեամբ, դաստիարակված է նորա խստապահանջ, արդարասէր, անչահախնդիր, եւ ասպետաբարոյ կանոններով։ Ցիշեալ հրամանատարի ձեռքի տակ ծառայել է Յովսէփ Ղորղանեանը մինչեւ դնդապետութեան աստիճանը։ Նորա հետ ծառայակից եղած դեռ կենդանի վկաների պատմելով, Արղութեանը այլապէս չէր կանչում Ղորղանեանին, բացի «Ջէ» անունով, որ Վրացերէն «ոգի» կամ «դէ» ասել է։ Եւ այսպէս նա կ'կանչէր, ասում են, այն դէպքերում, երբ պէտք էր որեւէիցէ վտանգաւոր յանձնարարութիւն տալու, որի համար դժուար էր աւելի վստահելի օրիցեր գտնել, քան Ղորղանեանը։ Իր բոյեարական տեսքի, ուժի եւ ձեւերի հետ Ղորղանը միացրել է աչքերի այնպիսի մի սարկու արտայայտութիւն, որից, խիստ չատերի ասելով, նա օգուտ է քաղել բազմիցս չարագործներին խոստովանեցնելու համար։ Հերիք է եղել Ղորղանեանին մի քանի վայրկեան աչքերը յառած նայել մեղաւորի աչքին, նորա վրայ ջղային ցնցում բերելու ու ամեն յանցանք իր խկութեամբ երեւան հանելու համար։ Իսկ նորա դերբնական ուժի մասին դեռ մինչեւ հիմայ եւս Սամիսոնի արարքների վրայ եղած առասպելների նման բաներ են պատմվում։ Դեռ մինչեւ հիմայ չէ մոռացված Նուխուայ գաւառում՝ յաղթանդամ Զէլիլ խուդաչիի (գիւղաւագ) վայրկենական մահը Ղորղանեանի միայն մի ապտակից։ Սորա հետ ազնուութիւնը եւ մեծահոգութիւնը նորա բնաւորութեան դլխաւոր դծերից մինն են եղած միշտ։ Բերենք հետեւեալ դէպքը։ Նուխուայ գաւառի մէջ իր ժամանակ յայտնի մի հայ ազնուական (որի անունը չ'տալու անձնական պատճառ ունինք) մաղձացաւից բռնված, կանչում է իր քրոջ ամուսնին ու ասում նորան։ «Վեսայ, ահա մեռնում եմ։ Երկու դեռատի որդոյս կեանքը եւ դաստիարակութիւնը քեզ եմ յանձնում։ պատուիդ վրայ երդում տալով քեզ, պարտական կ'անեմ առաջի Աստուծոյ՝ ինձ հաշիւ տալ։

Նա մեռնում է, իսկ նորա երկու որբերը անմիջապէս մտնում են պաշտպանի խնամակալութեան տակ։ Մօտ մէկ տարի անցած չ'անցած մեռնողի երիտասարդ եւ մեծահարուստ այրին, առանց խնամակալ աղգականին իմաց տալու, գնում է պսակվում մի ուրիշ հարուստի հետ։ Բնական էր, որ խնամակալը չ'պիտի համաձայնվէր յանձնել որբերին խորթ հօրը, որի վրայ այլեւայլ պատճառներով վստահութիւն չ'ունէր։ Հարուստ ամուսինը, քսակները ոսկով ու գոհարով լցրած, գնում է իսկոյն Ղորղանեանի մօտ, որ Նուխուայ գաւառի սարսափաբեր պետն էր։ Ղորղանեանը պահանջում է խնամակալին ու հրաման անում յետ տալ որբերին։ հրամանին կամակորիլը անհնարին էր, մանաւանդ այն ժամանակները, երբ գաւառապետները մահուան պատիժ տալու իրաւունք ունէին։ Ճարահատեալ պատմում է պաշտպանը Ղորղանեանին պատուոյ վրայ տուած իր երդումը ամեն միջադէպով։ Ինչ անակնկալ փոփոխութիւն։ Ղորղանեանը այնպէս զգացվում է իր դէմ կանգնածի պատմածից, որ ուսին բարեկամաբար խփելով, ասում է։ «ապրես, որ այդպէս Հայ ես։ քո մէկ խօսքիդ ազնուութիւնը ինչ համար տասը քսակ ոսկից աւելի կ'արժէ։ գնա, հանգիստ կաց։ որբերի պաշտպանը միայն դու չես այսուհետեւ, այլ եւ ես։» Բնական է, որ սա մասնաւոր անգք է, սակայն նորա մէջ երեւցած իրողութիւնը հայկական արդարադատութեան եւ վեհութեան ամենամեծ վկայութիւնը կարող է լինել։

Որովհետեւ Ղորղանեանի ամենամեծ գործունէութիւնը անցած է Նուխուայ գաւառի գլխաւոր կառավարութեան պաշտօնի մէջ, ուստի այդ գործունէութեան կարեւորութիւնը ճանաչելու համար, պէտք է ծանօթանալ այդ երկրի այն ժամանակ ունեցած արտաքսովոր հանգամանքների հետ։ Շամիլը գտնվում էր իր կարողութեան ամենաբարձր կէտի վրայ։ Լէզգի հրոսախումբերը լեռներից իջած, պատռում էին սահմանապահ Ռուս զօրաց կրկնակի շղթան ու կործանիչ հեղեղի նման տասալում հանդիպած գիւղեր եւ քաղաքներ, Ռուսներից գրաւած Անդրկովկասի մէջ։ Կատաղի մաքառման գործը Ռուսաց հետ սնօրինվում էր երկու անզուսպ առաջնորդներով։ Շամիլը լեռների մէջ էր առաջնորդում Լէզգի կամաւորներին, իսկ Հաջի-Մուրադը լեռներից դուրս, Ռուսաց սահմաններում։ Սեւ ծովից մինչեւ Կասպից։ լեռնաշղթայից մինչեւ Պարսից սահմանագլուխը։ Հայ, Թուրք, Վրացի եւ Ռուս ահի տակ ճնշված։ «ամեն Հաջի-Մուրադ» էին գոչում։ ժողովրդի երեւակայութեան համար նա մի

դեւ էր, որն ամեն վայրկեան ամեն տեղ էր. որի յետեւից ոչ ձի կ'հասնէր, ոչ գնտակ եւ ոչ կայծակ։ Նորա անունը այնչափ սարսափ էր բերում, որ շատ տեղեր աւաղակապետներ էին դուրս գալիս, որ տասը-քսան հոգով 100-200 մարդերից կազմված պահականոցներ էին դինաթափ անում, միայն Հաջի-Մուրադի անունը իրանց վրայ առնելով ու Լեզգերէն խօսելով։ Կիրիթ-Մահումա, Դանիէլ-Սուլթան, Բոհարչի եւ նաեւ Ղաղի-Մոլլա վաղուց արդէն մոռացված էին Հաջի-Մուրադի ահարկու անուամբ։

Այսպիսի ժամանակ լեռնաշղթայի ստորոտներում գտնված եւ քրիստոնեաներով բնակված գաւառների վիճակը խիստ դառն էր. ամեն վայրկեան ամառ թէ ձմեռ, խաղաղ ժողովրդի իւրաքանչիւր անհատը վէնքը ձեռին պատրաստ պիտի մնար. ցերեկը նոյնչափ դիւրութեամբ կարող էին Հաջի-Մուրադի յարձակման ենթարկվիլ, ինչպէս եւ գիշերը։ Այդ գաւառների մէջ ամենքից աւելի վտանգաւոր դիրքը մեր ծննդավայր Նուխուանն էր։ Թող այն, որ Դաղստանից ամենամօտ գտնվողը նա էր, այլ քրիստոնեաների կացութիւնը նորանով եւս կ'ծանրանար, որ շիշեալ գաւառի մէջ եղած մուսուլմանների թիւը շատ աւելի գերակշռող էր քրիստոնէից վրայ։ Այդ մուսուլմանները նախկին լուսաւորչական Ուտէացիք են, որոնք ընդունել են իսլամութիւնը Պարսից խաների զարեւոր ճնշման տակ։ Կրօնափոխութեան հետ միատեղ կորցրել են դոքա եւ լեզուն, որով բոլորովին հեռացել են ու խորթացել իրանց փոքրաթիւ քրիստոնեայ ցեղակիցներից. ուստի այս վերջինները ենթակայ լինելով մի կողմից Հաջի-Մուրադի յարձակմանց, միւս կողմից էլ երկու անգամ պիտի հանդիպէին նոյն իսկ իրանց բնակակից մուսուլմանների կատաղածելի եւ վտանգաբեր ընթացքի վրայ, որ չ'լինի թէ յանկարծ ընդհանուր կոտորածի զոհ դառնան մի օր։

Այսպէս էր պէտք մի այնպիսի հզօր մարդ, որը իր աղդեցութեամբ եւ ամեն յատկութիւններով կարողանար՝ ոչ միայն տեղացիների մէջ անդորրութիւնը ապահովացնել, այլ եւս դէմ դնէր Հաջի-Մուրադի պէս մի պատուհասին։ Ռուս մարդիկ շատ էին նշանակված Նուխուայ գաւառը կառավարելու համար, բայց նոքա չէին կարողացած նոյն իսկ քաղաքի հանգստութիւնը երաշխաւորել, էլ ուր մնաց ընդարձակ գաւառի, որն պատած էր խիստ անտառներով, անմատչելի լեռներով եւ մեծամեծ հեղեղատներով։ Հարիւր հազար զօրք անդամ ոչինչ չէր կարող անել այդ տեղ, ուր ամեն մի թուփի տակ սասնեակ մարդիկ կարող էին պատսպարիլ, անցնողների վրայ հրա-

ցան արձակելու համար։ Վերջապէս երկրի տեղագրութիւնը ամեն կերպ նպաստաւոր էր միայն կուսակցական կուռին. որին առաջնորդելու համար Ռուս մարդուն պակասում են գրեթէ ամեն յատկութիւնք։ Ինչպէս հարթ ու հաւասար երկրի բնակիչ եւ կանոնաւոր գործակարութեան սովոր, Ռուսը չուտով կարող էր գլուխը կորցնել ասիական դիւրաշարժ եւ զգօն ասպատակողների հետ։ Սորա դէմ ճիշդ իրանց պէս դեւ էր հարկաւոր. եւ նա գտնվեցաւ. դա իշխան Մոլսէս Արղութեանի թաջն էր. դա գնդապետ Յովսէփ Ղորղանեանն էր, որին նշանակեց Կովկասեան փոխարքան յիշեալ գաւառի լիազօր կառավարիչ, ասելով. «Կ'ուզես սպանիր, կուզես կախ տուր՝ որին որ արժան կ'դատես, այդ քո գիտենալիքն է. իմ պահանջս քեզնից այն է միայն, որ երկրի մէջ անդորրութիւն դցես։» Փոխարքան չ'սխալվեց իր ընտրութեան մէջ. Ղորղանովի Նուխի գալը ու նոր նոր կարգեր մի-միանց հետեւիլը՝ մէկ եղաւ. կարծես թէ նախապէս ամբողջ մի սպայակոյտ էր զբաղվել յատկապէս այլ եւ այլ վարչական յատակագծերի մշակութեամբ։ Ի միջի այլոց յիշատակենք սոսկ այն, որ անտառախիտ երկրի մէջ, պահապանների հսկողութեամբ եւ զէնսպէս ուղղութեամբ այնպիսի կարգեր էր սահմանել, որ ամեն տարածութեամբ գաւառը ներկայացնում էր մարդիկներից չինած հեռագրական թելեր, որոնց մի ծայրը Նուխի, Ղորղանեանի տանն էր, միւսը Դաղստանի ժայռերին կպած։ Հէնց որ մի կէտի վրայ Հաջի-Մուրադի անունը կ'լսվէր, փայլակի արագութեամբ կ'թռվէին նորա վրայ Հայ եւ Ուտէացի պահապաններ, որոնք կ'վարէին այդ պաշտօնը։ Ճիշդ նման էր դա՝ պտղատու այգիներից կապիկների մրդ թալանելու գործողութեան, որով նոցա ստուար խումբը մի դէմ վրայ շարվելով, գողութեան տեղից սկսած մինչեւ գլխաւոր որջը, մի ժամուայ մէջ կ'թալանէ ամբողջ այգին ու քաղած պտուղները միմիանց նետելով կ'ժողովէ այդիից անագին հեռաւորութեամբ գտնվող բոյնի մէջ։ Իսկ հէնց որ թշնամին երեւայ որեւէ մի ծայրում, նոյն վայրկենին միմիաց իմաց տալով, կ'սլանան այս ու այն ուղղութեամբ, նորա դէմ կռվելու կամ նորանից խոյս տալու համար։ Այսպէս էր եւս Ղորղանեանի պահապանների մէջ դրած կարգը, որի շնորհիւ՝ մէկ օրուայ ճանապարհ հեռու պատահած անցքը մի քանի ժամի մէջ յայտնի կ'լինէր գաւառապետին յիշեալ կապկային ճարպիկ գործողութիւններով։

Երկու անգամ երեւալով այդտեղ Հաջի-Մուրադը, երրորդ անդամ եկաւ գլուխը թողնելու։ Առաջի անգամ նա յարձակվեց Սու-

չիմ ասվող պահակաթռչի վրայ, որը թէպէտ յաջողեց տապալել, բայց մինչեւ յետ գնալը, տեսաւ իրան արդէն շրջապատած. քիչ մնաց որ կեանքը կորցնէր այստեղ յանդուգն Լեզգի ասպատակը։ Երկրորդ յարձակման փորձը նա ուզեց անել մեր հարազատ ծննդավայր՝ ուտէաբնակ Վարդաշէն գիւղաւանի վրայ, նորա անվեհեր բնակիչներից իր վրէժը լուծելու համար։ Բայց մինչեւ գիւղի ստորոտը հասնելը, նա գտաւ ճանապարհները ծառերով պատնէշած. ուստի ստիպվեցաւ դարձնել հրոսակը Վարդաշէնին կից Ջալէթ գիւղը։ Ջալէթը Աղուանից կաթուղիկոսների վերջին աթոռանիստն է. եւ առկայծող քրիստոնէութեան ապաստանարանը։ Այստեղ են աղուանից մի շարք կաթուղիկոսների գերեզմանները, հնացած եւ կիսաթեք ուռիներով պատապարուած. այս տեղ էր մի ժամանակ հարիւրաւոր Ուտէացի մանուկների կրօնական դաստիարակութեան մնդասատանը, քարոզիչ-կաթուղիկոսների անմիջական հսկողութեան տակ. այստեղ էր միայն հնչում զանգակը, այստեղ էր համարձակապէս փառաբանվում Գրիգորի անունը, երբ ամբողջ դաւառի մէջ «քրիստոնեայ եմ» ասողի լեզուն կտրել տալիս Պարսից խաները։ Այստեղ կանգուն է դեռ հոյակապ տաճարը, նոր Հայ ճարտարապետների մուրճով նորոգված (1). Ջալէթի վանքն է դեռ մինչեւ այսօր բովանդակ դաւառի կրօնասէր ժողովրդի գլխաւոր ուխտատեղին, ուր համախմբվելով հաղարաւոր Ուտէացի գերդաստաններ Վարդաշէնից, Նիժից, Վարդանլուից (հին Վարդանուշի) Ջօռլուից Սուլթան-Նուխիից եւ նաեւ շրջակայ մի քանի մուսուլմանացած գիւղերից՝ սիրոյ, միաբանութեան եւ իրանց դոյութիւնը հաւերաշխաբար պահելու երդում են տալիս միմեանց։ Վերուխումից յետ, այստեղ են մրցանակներ բաշխվում քաջալարժ հրացանաձիգ Ուտէացի պատանիներին. այստեղ են հարսնացուներ ընտրում այդ կայտառ կտրիճները այն օրիորդների մէջ, որոնց համբաւը հռչակված է, ինչպէս լաւ ձի հեծնող, քաջ անարար եւ իր պատիւը դաշոյնով ու հրացանով պաշտպանող քրիստոնէուհի։ Այստեղ են բնակվում երիու

---

(1) Պատիւ կ'համարենք մեզ յիշատակել, որ այդ վանքի նորոգութիւնը, ինչպէս եւ Վարդաշէնի մեծագիր եկեղեցու ու Սբ. Եղիշէ-Առաքեալի հռչակաւոր ուխտատեղիի մատուռը Վարդաշէնում, շինված են մեր պապի ծախքով, դա ՊՊ Առաքել Մուրատեանն է, մեր հանգուցեալ մոր հայրը, որի բարեգործութեանց մասին ստեղ յիշատակութիւններ կ'անէ Սարգիս Ջալալեանց իր Հայաստանի ճանապարհորդութեան գրքի մէջ։

երեք՝ հարիւր ծուխ հայացած Ուտէացիք, որոնց քաջութիւնը մասնաւոր համբաւ ունէ հինաւուրց ի վեր։ Լեռները եւ անտառները Լէզգի ու Թուրք աւազակներով լցված ժամանակ, Ջալէթեցի հայեր վարագի, այծեամների եւ եղջերուների յետեւիցն էին խոյանում լեռների վրայ, ուր շատ անգամ վարագի տեղ՝ առաջները դուրս եկած Լեզգի աւազակապետների դլուխներ էին բերում տուն, իրանց թոխովախօս ձագերի զուարճութեան համար։ Ահա այս գիւղի վրայ էր գալիս հիմայ Հաջի-Մուրադը երկու հարիւր ձիաւոր Լէզգիներով։ Ջալէթեցի տղամարդիկ հեռաւոր դաշտերը հունձի գնացած, գրեթէ բոլորն էլ բացակայ էին գիւղից, վստահ լինելով, որ դոնէ հարիւր մարդկանց յարձակման դէմ կանայք կարող կ'լինեն իրանց պատիւը եւ կայք ու դոյքը պաշտպանել։

Հաջի-Մուրադը, իմանալով գիւղացոց հնձի վրայ լինելը, մտնում է գիւղը Վարդաշէնի կողմի ճանապարհով, որը ծածկված է դաշտի վրայ գտնվող մարդկանց աչքից։ Բայց աստղատակների մուտքը գիւղի մէջ իմանում են Ջալէթեցիք հրացանների օրոտմամբ, որ արձակում են պատուհաններից կանայք Լէզգիների վրայ, դռների նիգը գցած։ Տղամարդիկ մանգաղները եւ դաշոյները ձեռքին անմիջապէս պանում են նուիրապան վանքի եւ գիւղի օգնութեան. բայց հէնց նոր հասած՝ տեսնում են, որ Հաջի-Մուրադը մի քանի գերի կանանցով եւ աղջիկներով, բաւական էլ կողոպուտ ձեռին, արդէն գիւղից հեռանալու վրայ է։ «Ափի զարկ» (ափի-եղբայր), նշանի վրայ սկսվում է կատաղի ձեռնամարտ կոտորածը. ձախ ձեռքերի մէջ հաստ փայտեր բռնած, ձիու վրայից եկող հարուածները յետ մղելու համար, աջ ձեռքում ունեցած դաշոյնով ձիաների փորը եւ ընկած Լեզգիի կողքը պատռելը՝ վայրկենի մէջ է կատարվում։ Հաջի-Մուրադը իր կողմից յուսահատաբար «եակղ» (խիիր) է կոչում։ Այս դժոխային խառնուշփոթի մէջ գերի բռնված կանայք եւ աղջիկներ պարապ չեն նստում, այլ անխնամ թողված կողոպուտները վեր առած փախչում են դէպի յետ։ Հաջի-Մուրադը իր մարդկանց կէսը կորցրած, կարողանում է սակայն ողջ առողջ պրծնել։ Ջալէթեցոց այդ քաջագործութիւնը խիստ մեծ աղմուկ է հանում Թիֆլիս. փոխարքան շատ պարգեւներ եւ դրամական օգնութիւն է ուղարկում գիւղացոց բաժանելու համար։ Իշխանուհի Վաղոնցովը ասպայ է ուղարկում Նուխի՝ Ջալէթեցի կանանց իր կողմից ընծաներ բաշխելու։ Հաջի-Մուրադը անհետանում է։

* * *

Կարծեմ 1852 թուականներին է լինում, որ Թիֆլիսում տեղի է ունենում մի մեծ հանդէս. բոլանդակ քաղաքը դուրս է գալիս տեսնելու Հաջի-Մուրադին, որն այս անգամ ինքն է եկել Թիֆլիս, փոխարքային անձնատուր լինելու։ Բազմաթիւ զօրքերի հանդէս, ժողովրդի ուրախութեան ձայներ, զուռնաների եւ թմբուկների դղրդոց քաղաքը թնդացնում են։ Հաջի-Մուրադը իր անակնկալ անձնատուութեան շարժառիթը Շամիլի հետ գժտիլին է ցոյց տալիս։ Զրեթէ ամենքն էլ հաւատում են ծածկամիտ Լեզգի պարագլխին։ Փող, չքանչաններ, պատիւ եւ յարգանք թափվում են հռչակաւոր տասպատակի գլխին։ Իշխան եւ իշխանուհի Վ.օրոնցովներ իրանց սեղանի եւ զբօսանքի մի տեսակ պատիւն են համարում Հաջի-Մուրադի մասնակցութիւնը, որի անձնատուր լինելը արդէն Շամիլի թեւերը կտրել ասել էր։ Պատկերահաններ, լուսանկարներ եւ ամեն տեսակ սպասարկու մարդիկ սպասում էին Հաջի-Մուրադն իջած տան առաջ նորա պատկերը հեռաքրքիր ժողովրդին ներկայացնելու համար։ Բայց մեայլ եւ ժանգոտ Լեզգին նայում էր ամբողջ քաղաքի զարմացման վրայ միայն իր բրդոտ գլխարկ տակից, ինչպէս մի երդուեալ մոլեռանդ իր թշնամիներին. ժպիտ, խնդում եւ թեթեւսոլիկ շարժուածք ոչ Հաջի-Մուրադի համար էր եւ ոչ նորան ընկերակցող մի խումբ Լեզգիների։ Իր այդ դասակիցների հետ երբեմն նա միայնակ շրջագայութիւն կ'անէր, բայց ուր կ'երթար. — կամ Թիֆլիսի շրջակայ ժայռերի եւ լեռների ճանապարհներում պտտելու կամ թէ Կուր գետը, զանազան ուղղութեամբ, ձիով ճեղքելու անցնելու, նորա խորութիւնները եւ հոսանքի ուժը չափելու համար։ Տասը-քսան օր հիւր մնալով փոխարքայի մօտ, Հաջի-Մուրադը վերադարձ յայտնեց բնակութեան տեղի ունենալ իրան որեւէ մի մուսուլմանաբնակ քաղաք։ Վ.օրոնցովը նորա կամքին ձգեց ընտրութիւնը։ Հաջի-Մուրադը ընտրեց այն քաղաքը, որի մէջ էր բնակվում դէպի ինքը արհամարանք ցոյց տված միակ մարդը. դա դնդապետ Ցուխէի Ղորղանեանն էր։ Բնաւ կասկած չ'տածելով Լեզգիի գաղտնի միտումների վրայ, իշխան Վ.օրոնցովը սիրով յօժարվեց, ուստի ընդարձակ պատուէրներ ուղարկեց Ղորղանեանին, ընդունել եւ հիւրընկալել Հաջի-Մուրադին, ինչպէս Դաղստանի օրինաւոր սիրոջ։

Հասնելով Նուխի Հաջի-Մուրադը, փառաւոր Ռուս դասակիցներով շրջապատուած, ընդունվեց հին խաների հոյակապ ապարանքի մէջ, որ Նուխուայ բերդի ներսումն է։ Մէկ թէ երկու շաբաթ պալատական կեանք վարելուց յետ, Հաջի-Մուրադը ասում է Ղոր-

դանեանին թէ՝ Դաղստանի Ներկայ վայել չէ այդպիսի կենսաբաշխ վիճակութեան մէջ ապրիլ, ուստի ցանկութիւն է յայտնում բերդից դուրս որեւէ մի պարզ խրճիթ ունենալ իր բնակարանը։ Ղորղանեանը առաջարկում է նորան իր հետ բնակվիլ կամ իրանից մօտ — «Չէ՞ասում Լեզգին, դիտես, որ քրիստոնեայի հետ այդպիսի կենակցութիւն խիստ դէշ տպաւորութիւն կ'գործէ դաւանակիցներիս եւ ընկերակցաց վրայ։» Ղորղանովը տալիս է նորան լիազօր իրաւունք իր ուզած տեղը եւ տունը ընտրելու։ Հաջի-Մուրադը ընտրում է քաղաքից մեկուսացած մի բնակութիւն, ուր տեղից ամեն օր պըտտելու է գնում մօտաւոր լեռները, ունենալով հետը տասը Լեզգի ընկերներ եւ մի խումբ էլ Դօնի կողակներ։

Մի օր Հաջի-Մուրադը հրաւիրում է Ղորղանեանին իր հետ զբօսանքի երթալ։ Ղորղանեանը օրով է համաձայնվում, բայց հէնց որ ձիերը եւ մարդիկ պատրաստ են լինում, մի զարմանալի եւ անակնկալ արգելք է պատահում նորան։ Պատճառաւոր կինը ընդդիմանում է ամուսնի որոշման իրագործութեան, պնդելով թէ «դէշ երազ է տեսել։» Զ'ուզելով վշտացնել հիւանդ կնոջ, Ղորղանեանը ներումն է խնդրում Հաջի-Մուրադից, խոստանալով մի ուրիշ անգամ նորա ցանկութիւնը կատարելու։ Խորամանկ Լեզգին բաւական կծու հեգնութիւններ է անում Ղորղանեանին համոզելու համար, բայց սա մնում է անդրդուելի։ Հաջի-Մուրադը գնում է ձիով շրջագայելու, ունենալով հետը քսան կողակ եւ Ղորղանեանի օգնական Խալիլ-Բէկը։

Քաղաքից մի երկու ժամ հանապարհ հեռացած, Հաջի-Մուրադը կանգնում է։ «Խալիլ-Բէկ, կուզեմ քեզ հետ ձիքշել» ասում է։ — «Հրամայեցէք, պատրաստ եմ» լինում է պատասխան։ Առաջ դու վազցուր» ասում է Հաջի-Մուրադը։ Հէնց որ շարժվում է տեղից Ղարաբաղի սիրուն նժոյգը, նորա վրայ նստածը խսկոյն դեւին է տապալվում Հաջի-Մուրադի ատրճանակի գնդակով։ Կողակներից միայն մինն է կարողանում ողջ սլրծնիլ ու լուր բերել Ղորղանեանին։ Ամեն բան պարզվում է այսպիսով։ Յայտնվում է որ Հաջի-Մուրադի ամեն գործողութիւններ՝ միայն մարդիկ եւ տեղեր ուսումնասիրելու նպատակի մէջ են կայացած եղել։ Դաղստան փախչելով, մնած հրամանքերով սլիտի յարձակվէր նա ոչ միայն Նուխուայ վրայ, այլ եւ նոյն իսկ Կովկասեան մայրաքաղաքի։

Իր քաջութիւնը ցոյց տալու համար Ղորղանովը լաւ առիթ է գտնում։ անմիջապէս ձի հեծնելով նա վազում է վախստականի յետեւից 100 վատահելի Հայ կամաւորներով, որոնց մէջ է լինում նոյն

ելնելու, Ղորղանեանի մեծանուն բարեկամութիւնը վայելող, հանդուցեալ մեր հայրը, նորա հետ եւ մի քանի ազգակիցներ։ Հասնելով եղեռնագործութեան տեղը, Ղորեանեանի երեք ուղղութեամբ մարդիկ է ցրում, դեռ նոր հետքերով Հաջի-Մուրադին հալածելու համար։ Բայց Լեզգին ամենքից էլ աւելի հնարամիտ է գտնվում. ոչ սովորական ճանապարհներով է գնում նա, ոչ անտառներով եւ ոչ էլ լեռներով, այլ բրինձի ցանքերի միջով։ Այս հնարամտութիւնը եւս չի կարողացաւ օգնել նորան. բրինձի ցանքերը արուեստական ճահիճներ լինելով, յոգնեցնում են Հաջի-Մուրադի ձին, որը թողնում է չուտով տիրոջը իր ստերի յուսով. այս վիճակի մէջ են վրահասնում նորան Ղորղանովի խուզարկութիւնները Իլիսուի մօտ։

Օրհասական ժամը հնչում է. Հաջի-Մուրադը իրան շրջապատած է տեսնում երկաթեայ կապերով. չտալով է յարմարաւոր գիրք ընտրելու, գէթ իր կեանքը իր անուանի դնով ծախելու համար։ Ցետեւի կողմից նա կրթնում է անանցնելի Ալազան գետին, իսկ առաջը բաւական զօրաւոր քարակոյտ պատուար չինելով, սպասում է իր դէմ եկողներին։ Պաշարող օղակը աւելի եւ աւելի է սխմվում. Հաջի-Մուրադին շրջապատողները արդէն բոլորովին մօտիկ հեռաւորութեան մէջ են գտնվում. բայց պատնէշի առաջից դժուար է լինում նորան վնասել։ Ղորղանեանը հրաւէր է տալիս Հայ կամաւորներին՝ մօտենալ պատնէշին երես առ երես կռվելու համար. մեր հոր աչքի առաջ 12 Շամախեցի վառվռուն հայ կտրիճներ մէկը միւսի յետեւից են դուրս գալիս. իւրաքանչիւրը ձիով բաղէի պէս սլանում է պատնէշի վրայ, ուղղահայեաց կերպով խրում գնտակը Հաջի-Մուրադի մարմինը, բայց ձին դարձրածին պէս, յետեւից եկող փոխադարձ գնտակից, թաւալգլոր գետին է տապալում։

Գերբնական մարդ է յայտնվում Հաջի-Մուրադը. միշտ հետը մի քանի հոխայ բամբակ ունենալով, նա գործ էր ածում հիմայ ամենմի կտորով մի քանի վայրկեան աւելի կեանք ունենալու համար. գնտակը մտած տեղը, ինքը իր ձեռքով էր բամբակ խցում վիթխարի գաղանը, արեան հոսանքը կասեցնելով։ Այսպէս, աւելի եւ աւելի չատանալով զոհված խեղճ Հայ կարիճների թիւը, հասցնում են Հաջի-Մուրադը վերջի տագնապին։ Վերջապէս վառոդը եւ գնտակները սպառած տեսնելով, ոտի տակ դրած երկու կտոր է անում Հաջի-Մուրադը իր եւ ընկերների սրերը գոչելով. . . . . Այս խօսքերի վրայ մօտենում է նորան մեր մի մօտաւոր ազգական, Ցարութիւն-Բէկ Մակէդոնսկին եւ գլուխը իշում մարմնից, որը ներկայացնելով

Ղորղանեանին, իսկոյն ստանում է նորանից Ս. Գէորգի չքանչանը։

Այս անցքի գործած աղմուկը թնդացնում է բովանդակ երկիրը. Հաջի-Մուրադի գլուխը փոխարքային տանողը նոյն Ցարուութիւն-Բէկ Մակէդոնսկին է լինում (1). Ղորղանովը սոյա վրայ օրուայ գիւցազն է դառնում եւ ստանում գեներալ-մայորի աստիճան ու Սբ. Գէորգի չքանչան։ Սորանից յետ, նա մնում է իր փափուկ եւ դժուար պաշտօնի մէջ մի քանի տարի եւս, որից յետ ուրիշ աւելի բարձր պաշտօնի է կոչվում Թիֆլիս, թողնելով Նուխուայ դաւառի Հայ, Թուրք եւ Ուտէացի բնակութեան յիշողութեան մէջ անմոռանալի անուն ՝ եւ արդարադատ ու անշահասէր կառավարչի։

Թիֆլիս կոչվելուց մի քանի տարի յետոյ նա ստանում է գեներալ-լէյտենանտի (ֆերիկ) աստիճան, դեռ հաղիւ յիսուն տարեկան։ Այդ ժամանակ Մատթէոս կաթուղիկոսի հետ ունենալիք մի բանակցութեան առթիւ, Ղորղանեանը հրաժարական է տալիս ու գնում Պալեան քաղաքը ձկնորսի անփառունակ գործով պարապվելու, վայելելով ժողովրդի անսահման սէրը եւ յարգանքը։ 1867 թուականներին կնքեց նա իր մահկանացուն, թաղվելով Թիֆլիսում Ջրաշէն եկեղեցու դաւթում, դագաղը զարդարած բազմաթիւ չքանչաններով, որ վաստակել էր նա իշխ. Արղութեանի ստորադրութեամբ Լեզգիների դէմ վարած կռիւներում։

* * *

Գեներալ Յովսէփ Ղորղանեանը դեռ այնչափ նոր մարդ է, որ նորա այրին դեռ հաղիւ յիսուն տարեկան մի կին է, երկու արու եւ չորս աղջիկ զաւակներով, որոնցից մի քանիսի հետ ստէպ տեսնվելու առիթ ենք ունեցած հանգուցեալ Լազարեվի դերդաստանի մէջ, բայց մեր վերը արած պատմութեան վրայ խօսելու պատեհութիւնը դըժբաղդաբար չենք ունեցած, այլեւայլ անյարմարութեանց պատճառաւ։ Այսուհանդերձ. հաղիւ թէ տիկին Ղորղանեանը աւելին կարողանար պատմել մեզ, քան թէ, գործին ականատես վկայ եղած մեր հօր թողած ընտանեկան աւանդութիւնը։

---

(1) Աւանդութիւնը վկայում է թէ Հաջի-Մուրադի սկաւառակը քննելիս, բժիշկները գտած են, որ նորա ծայրը, բաւական մեծութեամբ, որով տարած է լինում. Թրցրած կտորի տեղ ուրիշ կտոր է լինում միայն ծայրերով գլխի կաշին կպցրած։ Լեզգի վիրաբոյժների հմտութեան մասին կխօսենք Ցիշատակների չորրորդ, արդէն պատրաստ մասի մէջ։

Ղորղանեանի անդրանիկ Յովհաննէս որդին, մի բարեկիրթ եւ խիստ գեղանի երիտասարդ, Թիֆլիսի աղնուապետաց դասի մէջ փայլուն տեղ բռնողներից այնպիսի մէկն է, որ միակ բացառութիւնն է գրեթէ, որով մի բարձրադիր ու նշանաւոր օտարազգի մարդ, ինչպէս Թիֆլիսի հռչակաւոր նահանգապետ Օրլովսկին էր, ինքը եղաւ սաիսլողապէս թախանձողը՝ Յովհաննէս Ղորղանեանին իր փեսան ունենալու վերաբերմամբ։ Մեծանուն Հայ պայազատը իր հօր եւ ազգի անունը չ'ուզեց արատաւորել. որդիքը Լուսաւորչադաւան կնքելու պայմանաւ, նա ամուսնացաւ Լեհացի բարեծնունդ օրիորդի հետ, որի հետ կ'շարունակէ խիստ մեծ երջանկութեամբ կենակցիլ, ապրելով մեծ մասամբ Պետերբուրգ։

Ղորղանեանի ցեղը ընդհանրապէս Թիֆլիսի առաջաւոր եւ հնագոյն աղնուասլետական տոհմերից մինն է. իսկ թէ որ տեղիցն է նորա ծագումը եւ որ ժամանակից, այդ չենք կարող ճշդիւ ասել։ Պէտք է դիտած միայն այն, որ այդ ցեղի գլխաւոր բոլոր ներկայացուցիչները յայտնի են եղել, ինչպէս եւ ներկայում, իրանց անվեհեր, ձեռնարկող եւ վճռողական բնաւորութեամբ։ Պ. Պ. Անտոն եւ Ադամ Ղորղանեաններ սորա սմենափայլուն վկայութիւնները կարող են լինել. առաջինը, արդէն վաղուց հրաժարական տուած մի թնդանոթաձիգ ոստայ, Թիֆլիսի առաջնակարգ եւ պատուաւոր մեծատուններից մինն է, շատ ազդօգուտ գործերով յայտնի։ Երկուսի հետ էլ ի մօտոյ ծանօթ լինելու առիթը ունեցանք, տեսակցելով առաջնի հետ քանիցս հանդ. Գաբրիէլ Այվազովսկու մօտ, նոյնպէս հանդուցեալ Լազարեվի. իսկ երկրորդի՝ երիտասարդ գնդապետ Ադամ Ղորղանեանի հետ պաշտօնակից լինելով Լազարեվի ստորադրութեան տակ Էրզրումում։ Թնդանօթաձիգ զօրայ հարիւրապետ Պ. Յովհաննէս Ղորղանեան, եղբօրորդի Յովսէփ զորղանեանի, որի հայրը մեռաւ թնդանոթաձիգ զօրաց զօրապետի ստանձնաւ, նոյնպէս Թիֆլիսի ընտիր հասարակութեան անդամներից մինն է։

* *

Այսչափով բաւականանալով մեր յիշատակների առաջին մասի համար, անհրաժեշտ կ'համարենք դիտել որ վերոյիշեալ, ինչպէս եւ յառաջիկայ Հայ զօրապետների մասին, մեր ունեցած տեղեկութիւնները աշխատած ենք եւ կ'աշխատենք հաղորդել հայ հասարակութեան ոչ որեւէ ռազմագիտական կամ պաշտօնական տեսակէտներին եւ պահանջներին յարմարեցրած, այլ միայն այնպէս, ինչպէս պատմում

է ինքը Հայ ժողովուրդը եւ ինչպէս, որ մենք լսել ենք նորա այլ եւ այլ դասակարգերին պատկանող մարդկանցից։ Ուստի՝ հաւանական է, որ շատ տեղեր ժամանակագրական եւ անուանական անհամաձայնութիւններ եւ նաեւ սխալներ պատահեն. բնաւ փոյթ չէ մեզ այդ, իրողութիւնները, ճշդութիւնը եւ հետաքրքրութիւնը բնաւ կապ չ՝ունեն որեւէ մի թուականի կամ միջանկեալ անձնաւորութեան անունի հետ։ Եթէ գլխաւոր խնդիրը թուականների մէջ լինէր, այդպիսի կենսագրական պատմութիւն ամեն մէկն էլ կարող էր անել, դտնելով օրացոյցներ կամ հին լրագիրների համարներ, ինչպէս որ սովորաբար կ՝անէ մէկը Ռուսահայ «վիճակագիրներից։» Ինչ կ՝վերաբերվի մեզ, ոչ լրագիր—տրակիր պահոցներից ենք, ոչ էլ հին օրացոյցների կտորտանք ուտողներից։ Այդպիսի «գիտնականական հնասիրութեան» պատիւը լիովին թողնում՝ ենք Պ. Ալէք Երիցովի բաժին, ցանկանալով միայն, որ աւելի ազնիւ կերպով գործ ածէր նա իր հնաբասիրութիւնը, քանթէ վարվեց Ստ. Նազարեանցի կենսագրութեան հետ։

ՀԱՅԿ ՍՍՀ ... ՍՆԵՐԻ ... ՊՈՒՆԴԱՐԱՆ ... ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՆԿԱՏԵԼԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ԷՋ	ՏՈՂ.	ՍԽԱԼ.	ՈՒՂԻՂ.
Դ	28	Յայուն	Յանուն
Դ	29	յատագաղծեր	յատակաղծեր
Ե	2	խաբանել	խափանել
ԺԲ	6	շատերը	շատերի
ԺԷ	23	յանուրոյ	հանուրոյ
Ի	37	Միքայէլ Փոր . . .	Մկրտիչ Փորթ.
ԻԱ	20	Միքայէլ Փոր . . .	Մկրտիչ Փորթ.
ԻԷ	25	լքոի	լկոի
ԻԸ	28	գուծողների	գործողների
ԼԴ	5	ստախօս	ղրախօս
ԼԷ	32	սրիկաների	մրիկաների
ԽԴ	24	մի	իմ
ԽԵ	17	ՀԷՉ ՀԷ հակառակորդներէ բառերը, որ հետեւում են երկու սկզբնական բառերին, մոռացված են։	

8	16	1822 թ.	1722 թ.
14	4	ձերնարկում	ձեռնարկում
21	9	Վարնայի	Շումլայի
21	26	Վարնայի	Շումլայի
30	16	ոգեւորութիւն	ոգեւորութիւնից
32	15	պատկերի	պատերի
32	29	տանէք	անէք
52	1	նախահօրոյ	նահահարոյ
69	17	տեղերը	տողերը
69	24	վայելով	վայելող
70	14	ծերանի	ծիրանի
71	7	պատասպարտող	դատասպարտող
71	29	լքոի	լկոի
80	3	Ղորղանեանի	Ղորղանեանը
80	10	ստերի	ոտերի
80	11	խուղարկութիւնները	խուղարկուները
80	14	անուանի	անուան
80	37	Մակէդոնսին	Մակէդոնսկին
80	37	իշում	խլում
81	32	թրցրած	թռցրած

[404]

ЦЕНА
2 бал
840